ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԵԱԿԱՆ ՀՈԼՔՈՍՏ

ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ՓՈՐՁ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)
Մ 157

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. Ա. ԲԱԲՍԵՂՅԱՆ

Մ 157 Մաթոսյան Տիգրան – Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ - Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, 182 էջ:

Մ 0503020913 2005
0176 (01) - 2005

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-956-6-2
© ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005

Բովանդակություն

Ներածություն 4

Գլուխ առաջին. Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի հիմնական գործոնները 13

1. Ցեղասպանության պատմական նախադրյալները 13

2. Գաղափարախոսություն և ցեղասպանություն 38

3. Պատերազմ և ցեղասպանություն 69

Գլուխ երկրորդ. Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի գործադրումը 80

1. Հայոց և Հրեական ցեղասպանությունների ընթացքը .. 80

2. Հայերի և հրեաների զանգվածային ոչնչացման հիմնական իրագործողները 96

3. Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի իրականացման եղանակները և հատկանիշները 120

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 169

Summary 182

Ներածություն

XX դարի առաջին կեսին տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմներն աչքի ընկան ոչ միայն հսկայական զինվորական կորուստներով, այլև աղետաբեր եղան խաղաղ բնակչության համար: Այս իմաստով հատկապես տուժեցին հայերը և հրեաները. վերջիններիս գերակշռող զանգվածը ոչնչացվեց համապատասխանաբար Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան Թուրքիայում և Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի կողմից զավթված եվրոպական պետությունների տարածքում:

Մեծ եղեռնը (1915-1916) և հրեական Հոլոքոստը[1] *ցեղասպանություն* երևույթի առանձին բաղկացուցիչ մասերն են: Դրա մասին են, մասնավորապես, հուշում ոչ միայն երկու իրադարձությունների միջև գոյություն ունեցող և առաջին հայացքից ակնհայտ ընդհանրությունները, այլև ավելի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքները: XX դարի առաջին կեսի երկու մեծ ցեղասպանությունների համադրումը և քննական համեմատությունը կարող է գիտական լուրջ արդյունքներ ունենալ: Նախ, համեմատության կամ ցեղասպանագիտության ընդհանուր տեսական խնդիրների մշակման միջոցով հնարավոր է ավելի խորությամբ ու համակողմանիորեն հասկանալ ցեղասպանություն երևույթը: Միաժամանակ, նման ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում երկու պատմական իրադարձություններից յուրաքանչյուրի ինքնատիպության և առանձնահատկությունների բացահայտման համար: Երկու ցեղասպանությունների համատեղ դիտարկման ընթացքում կարելի է օգտագործել պատմաբանների շրջանում երբեմն կիրառվող՝ առավել բացահայտի միջոցով ավելի քիչ ակնհայտը վերհանելու և հասկանալու սկզբունքը (օրինակ՝ իրադարձություններից մեկին առնչվող այս կամ այն խնդրի վերաբերյալ եղած փաստերը և արդեն գոյություն ունեցող մեկնաբանությունները կարող են նպաստել իրադարձություններից մյուսի՝ նույն խնդրին վերաբերող մութ կողմերի վերհանմանը): Վերջին սկզբունքի օգտակարությունը հատկապես կարևորվում է այն հանգամանքի գիտակցմամբ, որ ցեղասպանությունը բացի պատմական երևույթ լինելուց, հանդիսանում է նաև մարդկության դեմ իրականացվող ամենամեծ հանցագործություններից մեկը, որի հեղինակներն ամեն կերպ փորձում են գործել առավել գաղտնիության պայմաններում, ուստի, շատ հարցեր մեզ համար մնում են չբացահայտված:

Բացի զուտ գիտական նշանակությունից՝ երկու ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրության փորձերը կարող են օժանդակել նաև պատմական արդարության վերականգնմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի կողմից գործ ունենք վաղուց համընդհանուր ճանաչման արժանացած Հոլոքոստի իսկ մյուս դեպքում՝ ճանաչման գործընթացում գտնվող Հայոց ցեղասպանության հետ, ապա երկուսի համադրումը և նրանց միջև գոյություն ունեցող անժխտելի ընդհանրությունների մատնանշումը (անշուշտ, առանց արհեստական և կանխակալ նույնացման) կարող է օժանդակել միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության փաստի ընդունման և դատապարտման գործընթացին: Ընդ որում, ընդհանրությունների շեշտադրման հետ մեկտեղ, հենց նույն նպատակով կարևորվում է նաև երկու իրադարձությունների միջև պատմական և իրավական կապերի առկայության մատնանշումը (խոսքը, մասնավորապես, վերաբերում է Հայոց ցեղասպանության անպատժելիության և Երկրորդ աշխարհամարտի ընթացքում նմանատիպ հանցագործության կրկնման փաստին):

Մեր աշխատանքը, նկատի ունենալով խնդրի վերաբերյալ արդեն հրատարակված ուսումնասիրությունները, նախ փորձել է զարգացնել և մանրամասնել դրանցում առաջ քաշված մի շարք դրույթներ: Միաժամանակ փորձ է արվել երկու իրադարձությունների համատեղ քննությամբ կանգ առնել այնպիսի հարցերի պարզաբանման վրա, որոնք նախկինում ուշա-

[1] Այս բառը ծագումով հունական է: Հին կտակարանի հունարեն տարբերակում եբրաերեն «օլահ» բառը թարգմանաբար ընդունել է «հոլոքաուստոն» ձևը, այստեղից էլ՝ Հոլոքոստ անվանումը: Վերջինս բառացի նշանակում է զոհաբերում Աստծոն ողջակիզման միջոցով:

դրության չեն արժանացել: Թեև աշխատանքը հիմնականում ծավալվում է ընդհանրությունների շուրջ, այնուամենայնիվ զուգահեռաբար անդրադարձ է կատարվում նաև երկու իրադարձությունների միջև եղած տարբերություններին, որոնք երևույթի ուսումնասիրման տեսանկյունից սկզբունքային բնույթ ունեն:

Մեր ուսումնասիրության համար հիմք հանդիսացած ողջ գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի հատվածների: Դրանցից առաջինն ընդգրկում է այն մենագրությունները և հոդվածները, որոնք ուղղակիորեն վերաբերում են Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի համեմատմանը: Փորձենք համառոտ ներկայացնել դրանց բովանդակությունը:

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի համեմատության բնագավառում ամենամեծ ներդրումը, թերևս, պատկանում է պրոֆ. Վահագն Դադրյանին, որը խնդրին փորձում է նայել տարբեր գիտական դիսցիպլինների (պատմագիտություն, սոցիոլոգիա, իրավունք) տեսանկյունից: 1998թ. լույս տեսավ նրա «Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի պատմական և իրավական աղերսները: Անպատժելիությունից՝ փոխհատուցման արդարադատություն» ընդգրկուն հոդվածը,[1] որտեղ հեղինակը, ի թիվս մի քանի այլ խնդիրների, դիմում է երկու ցեղասպանությունների միջև առկա ընդհանրությունների լուսաբանմանը: Հեղինակը նախ նշում է, որ դարերի պատմության ընթացքում մի կողմից հայերի ու թուրքերի և մյուս կողմից հրեաների ու գերմանացիների միջև ստեղծվել էր ուժերի ծայրահեղ անհավասար հարաբերակցություն, կամ, հեղինակի խոսքերով, ձևավորվել էր հայերի և հրեաների «պատմական խոցելիությունը»: Շարունակելով իր միտքը՝ Վ. Դադրյանն անդրադառնում է երկու համաշխարհային պատերազմների ընձեռած այն հնարավորություններին, որոնցից օգտվեցին

[1] Dadrian V.N., "The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice". In *The Yale Journal of International Law*, Summer 1998, Volume 23, Numb. 2.

թուրք և գերմանացի ոճրագործները՝ իրենց հանցանքները իրագործելիս: Հեղինակը, մասնավորապես, կարծիք է հայտնում, որ երկու իրադարձությունների ամենացայտուն ընդհանրությունն այն է, որ երկու դեպքերում էլ ցեղասպանությունների իրականացման գլխավոր հեղինակները միատարր քաղաքական կուսակցություններ էին: Ե՛վ իթթիհատականները, և՛ նացիոնալ-սոցիալիստները, գալով իշխանության գլուխ, ներթափանցեցին պետական բոլոր կառույցների մեջ և դրանք օգտագործեցին իրենց հանցավոր ծրագրերը կյանքի կոչելու համար: Վ.Դադրյանը նաև շեշտում է իթթիհատական և նացիստական կուսակցությունների հատուկ լիազոր ներկայացուցիչների՝ տեղերում ցեղասպանական գործառույթների ընդհանրությունը:

Հոդվածում անդրադարձ կա նաև երկու իրադարձությունների միջև գոյություն ունեցող իրավական և պատմական աղերսներին: Հայոց ցեղասպանության անպատժելիությունը պետք է որոշակի վստահություն ներշնչեր նացիստներին իրենց հանցավոր ձեռնարկումներում, առավել ևս, որ, ինչպես նշում է հեղինակը, նացիստական Գերմանիայի պարագլուխները քաջատեղյակ պետք է լինեին հայերի ճակատագրին:[1]

Խոսելով ամերիկացի հետազոտող Ռոբերտ Մելսոնի կատարած աշխատանքների մասին՝ ճիշտ կլիներ նախ և առաջ նշել նրա՝ «Հոլոքոստի ինքնատիպության և համեմատելիության վերաբերյալ. համեմատություն Հայոց ցեղասպանության հետ» գրքույկի[2] մասին, որտեղ հեղինակը շեշտում է, որ «1915թ. սկսված հայերի ոչնչացումը XX դարի առաջին տոտալ ցեղասպանությունն էր և այն նախադեպ դարձավ ոչ միայն

[1] Dadrian V.N., նշված աշխ., էջեր 517-559: Երկու ցեղասպանությունների միջև եղած վերոհիշյալ աղերսների վերաբերյալ Վահագն Դադրյանը խոսում է նաև իր մեկ այլ հոդվածում՝ Dadrian V.N., "The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective." Reprinted from *Is the Holocaust Unique? Perspectives on Comparative Genocide.* Edited by Alan S. Rosenbaum, Boulder, Color.: Westview Press, 1996.

[2] Melson R., On the Uniqueness and Comparability of the Holocaust: a Comparison with the Armenian Genocide. Australia, Macquarie University: Centre for Comparative Genocide Studies, 1996.

Հոլոքոստի, այլև այդ կարգի այլ հանցագործությունների իրագործման համար»: Հեղինակը նաև փորձում է հիմնավորել երկու իրադարձությունների համադրման, ինչպես նաև ընդհանրությունների ու տարբերությունների բացահայտման կարևորությունը: Նա, մասնավորապես, այն միտքն է արտահայտում, որ Հոլոքոստի «բացառիկության» կողմնակիցները մոլորության մեջ են, կարծելով, թե «եթե ինչ-որ բան ինքնատիպ է, ուրեմն՝ անհամեմատելի է, և եթե ինչ-որ բաներ համեմատելի են, ուրեմն՝ հավասար են: Մինչդեռ, ոչ ինքնատիպությունն է անհամեմատելիություն նշանակում, ոչ էլ համեմատելիությունը՝ հավասարություն»:[1]

Պրոֆ. Ռ.Մելսոնն իր մենագրությունում, որը կոչվում է «Հեղափոխություն և ցեղասպանություն: Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի առաջացման վերաբերյալ»,[2] երկու ցեղասպանությունների պատճառները փորձում է պայմանավորել հայ և հրեա ժողովուրդների նախընթաց պատմական զարգացմամբ, Թուրքիայում և Գերմանիայում հեղափոխական ուժերի հաղթանակով և համաշխարհային պատերազմների գործոնով: Հեղինակը, մասնավորապես, այն կարծիքն է հայտնում, որ հայերն Օսմանյան Թուրքիայում և հրեաները Գերմանիայում գտնվում էին դարավոր հպատակության կարգավիճակում, իսկ XIX դարում նրանց հասարակական առաջընթացը դժգոհության պատճառ դարձավ տիրապետող հասարակություններում և թշնամական մթնոլորտ ստեղծեց նրանց հանդեպ: Այն բանից հետո, երբ իթթիհատական և նացիստական ուժերը եկան իշխանության գլուխ, վերջիններս այս ժողովուրդներին սկսեցին դիտել որպես ազգային և ռասայական անհաշտ թշնամիներ: Ըստ հեղինակի, և՛ երիտթուրքերը, և՛ նացիստները երկու համաշխարհային պատերազմներն օգտագործեցին իրենց երկրների միջազգային դիրքը բարելավելու և ներքին «թշնամիներին» ոչնչացնելու համար:

Հեղինակն իր աշխատանքի վերջնամասում խոսում է

[1] Melson R., On the Uniqueness and Comparability of the Holocaust..., էջ 16:
[2] Melson R., Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust. Chicago: The University of Chicago Press, 1992.

նաև երկու իրադարձությունների միջև եղած տարբերությունների մասին: Նա, մասնավորապես, գտնում է, որ ի տարբերություն հայերի, որոնք ձգտում էին ինքնուրույնություն ձեռք բերել թուրքերից, հրեաները, լինելով ցրված ողջ Եվրոպայում, աշխատում էին ձուլվել տիրապետող հասարակություններում, և միայն դրա անհաջողությունից հետո էր, որ առաջ եկավ սիոնիզմի գաղափարախոսությունը: Մելսոնի կարծիքով, զգալի տարբերություն կա նաև իթթիհատականների և նացիստների դավանած գաղափարախոսությունների միջև. օրինակ, պանթուրքիզմը երբեք այնպիսի ռասայական ատելություն չի ունեցել հայերի հանդեպ, ինչպիսին հատուկ է եղել նացիոնալսոցիալիզմին՝ հրեաների նկատմամբ: Հեղինակն անդրադառնում է նաև սպանության մեթոդների միջև եղած տեխնոլոգիական տարբերությանը:[1]

Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, ի մի բերելով պատմաբանների և սոցիոլոգների կատարած դիտարկումները Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի նմանությունների վերաբերյալ, իր «Հայկական հարցի պատմական ընդգրկումը, 1878-1923» հոդվածում[2] դրանք ներկայացնում է ինը կետերով: Վերջիններս հիմնականում պարունակում են երկու ցեղասպանությունների հետևյալ ընդհանրությունները. ոճիրների իրականացումը մեծ միջազգային կոնֆլիկտի քողի ներքո, հանցանքի մտահղացումը օտարատյաց քաղաքական խմբավորումների կողմից, ազգայնական-ռասիստական գաղափարախոսության առկայությունը, նախապատրաստական փուլում կուսակցական խիստ կարգապահության և գաղտնապահության պահպանումը, հատուկ զինված ջոկատների ստեղծումը, հասարակական թշնամանքի գրգռումը, զոհերի խոցելի վիճակը, մեքենայացման և հաղորդակցության ասպարեզներում եղած ձեռքբերումների օգտագործումը ցեղասպանական նպատակներով, սպանությունները խրախուսելու նպատակով տարբեր պաշ-

[1] Melson R., Revolution and Genocide..., pp. 247-257.
[2] Hovannisian R.G., "The Historical Dimensions of the Armenian Question, 1878-1923". In *The Armenian Genocide in Perspective*. Edited by R. Hovannisian. New Brunswick: Transaction Books, 1986.

տոնների շնորհումը և թալանի թողտվությունը:[1]

Ռիչարդ Հովհաննիսյանի գրչին է պատկանում նաև երկու ցեղասպանությունների ժխտման ընդհանրություններին նվիրված ուսումնասիրությունը՝ «Հայոց ցեղասպանության ժխտումը Հոլոքոստի ժխտման հետ որոշ համեմատությամբ» վերնագրով:[2]

Իր հոդվածներից մեկում, երկու ցեղասպանությունների միջև եղած ընդհանրությունների համառոտ ակնարկ է կատարել նաև իսրայելցի աստվածաբան պրոֆ. Ֆրանկլին Լիբթելը:[3] Հատկապես հետաքրքիր է վերջինիս այն դիտարկումը, համաձայն որի ինչպես Թուրքիայում, այնպես էլ Գերմանիայում հաստատվել էին բազմակարծության ավանդույթներով թույլ հասարակություններ, երկու երկրներում էլ տեղի էր ունեցել ռազմական ուժերի քաղաքականացում, իսկ հայերն ու հրեաները սահմանվել էին որպես ներքին թշնամիներ: Այս գործոնները, ըստ հեղինակի, նպաստեցին երկու ոճիրների իրագործմանը:

2002թ. լույս տեսած «Հայոց ցեղասպանությունը և Շոան[4]» հոդվածների ժողովածուում երկու իրադարձությունների համեմատման փորձեր են արել նաև Արոն Ռոդրիգը[5] և Մարկ Լիվինը[6]: Վերջինս, մասնավորապես, փորձում է զուգահեռներ անցկացնել 1915-16թթ. հայկական կոտորածների և ռումինական ուժերի կողմից Երկրորդ աշխարհամարտի ժամանակ իրականացված հրեական ջարդերի միջև:

[1] Hovannisian R.G., նշված աշխ., էջ 30:

[2] Տե՛ս Hovannisian R.G., Denial of the Armenian Genocide with Some Comparisons to Holocaust Denial. Sydney, Macquarie Univ.: Centre for Comperative Genocide Studies, 1996.

[3] Լիբել Ֆ., Ողջակիզում և ցեղասպանություն. հիմնական զարգացումը,- «Հայ ժողովրդի պատմությունից», Երևան, 1990:

[4] Հրեաների ցեղասպանության համար Հոլոքոստի փոխարեն օգտագործվող մեկ այլ անվանում, որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է «աղետ»:

[5] Rodrigue A., "The Mass Destruction of Armenians and Jews in the 20-th Century in Historical Perspective." In *The Armenian Genocide and the Shoah.* Edited by Hans Lukas Kieser, Dominik J. Schaller. Zurich: Chronos Verlag, 2002.

[6] Levene M., "The Experience of Genocide: Armenia 1915-16 and Romania 1941-42." In *The Armenian Genocide and the Shoah.* Edited by Hans Lukas Kieser, Dominik J. Schaller. Zurich: Chronos Verlag, 2002.

Հետաքրքիր է, որ երկու ցեղասպանությունների միջև զուգահեռներ են անցկացվել նաև սոցիալական հոգեբանության տեսանկյունից, ինչը, անշուշտ, զգալիորեն օժանդակում է պատմագիտական ուսումնասիրությանը: Հատկապես հիշատակման է արժանի Ռ.Դեքմեջյանի «Ցեղասպանության որոշիչ գործոնները. հայերը և հրեաները որպես ուսումնասիրության առարկա» հոդվածը,[1] որտեղ հեղինակը, մատնանշելով XX դարի ցեղասպանություններին բնորոշ հատկանիշները (կազմակերպչական առանձնահատկություն, ծրագրավորում և ժամանակի սահմանում, բյուրոկրատական էֆեկտիվություն և բազմակողմանիություն, տեխնոլոգիական հնարավորություններ, գաղափարախոսական հրամայական), անդրադառնում է նաև մինչև երկու ցեղասպանությունները Թուրքիայում և Գերմանիայում ստեղծված անբարենպաստ հասարակական մթնոլորտներին, որտեղ և ձևավորվել էին թուրքական և գերմանական ազգայնական շարժումները:

Երկու ցեղասպանությունների իրականացումը՝ թուրքական և գերմանական հասարակությունների հոգեբանական հիվանդագին վիճակի հետ է փորձում կապել նաև ամերիկացի հետազոտող Է.Սթաուբն իր «Չարիքի արմատները: Ցեղասպանության և խմբային այլ բռնությունների ծագումը» մենագրության մեջ:[2]

Ուսումնասիրության մեջ օգտագործված գրականության մյուս հատվածները վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և Հոլոքոստին նվիրված աղբյուրագիտական նյութերին (փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, ականատեսների վկայություններ, հիշողություններ), ինչպես նաև ուսումնասի-

[1] Dekmejian R.H., "Determinants of Genocide: Armenians and Jews as Case Studies". In *The Armenian Genocide in Perspective.* Edited by Richard G. Hovannisian, New Brunswick: Transaction Books, 1986.

[2] Staub E., The Roots of Evil. The Origins of Genocide and Other Group Violence. New York: Cambridge University Press, 1989.

ռություններին՝ մենագրությունների և հոդվածների տեսքով:[1]

Հարկ ենք համարում հավելել, որ կենտրոնանալով երկու ցեղասպանությունների գործոնների և իրականացման բուն գործընթացների վրա, ատենախոսությունը չի անդրադարձել երկու աղետներից առաջացած հետևանքների համեմատմանը: Երկու ցեղասպանությունների հետևանքների նախնական համադրումն ի հայտ է բերում թերևս ամենացայտուն և հաճախակի շեշտվող տարբերիչ առանձնահատկություններից մեկը: Հայերի ցեղասպանության հետևանքով վերջիններս կորցրեցին իրենց պատմական հայրենիքը, մինչդեռ հրեաները ոչնչացվեցին իրենց հայրենիքից դուրս՝ Եվրոպայի տարածքում, ավելին. Հոլոքոստից հետո նրանք կարողացան ստեղծել իրենց ազգային պետությունը՝ Իսրայելը:[2]

[1] Կցանկանայինք նաև նշել այն իրողության մասին, որ այդ ուսումնասիրություններից և հոդվածներից շատերը (հատկապես Հոլոքոստին վերաբերող) հաճախ նաև երկլեզվական աղբյուրի դեր են կատարել: Դա անխուսափելի էր, քանի որ մեր աշխատանքը, որպես կանոն, կատարվել է Հայաստանի Հանրապետության տարբեր գրադարաններում առկա նյութերի շրջանակներում:

[2] Պրոֆ. Հ.Հակոբյանը ևս, քննելով հայության՝ իր հայրենիքը վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերի խնդիրը, շեշտում է երկու ցեղասպանությունների այս տարբերությունը: Նա, մասնավորապես, նշում է, թե հրեաների ցեղասպանությունը պատճառ դարձավ, որ ճանաչվի նրանց՝ հայրենիք վերադառնալու և այնտեղ հրեական պետականությունը վերականգնելու իրավունքը: Սրան հակառակ՝ առ այսօր ճանաչված չէ տարագիր հայության հայրենիք վերադառնալու և փոխհատուցում ստանալու իրավունքը: Բացի այդ, հրեաները Ողջակիզման հետևանքով չէ, որ կորցրել էին իրենց հայրենիքը, մինչդեռ թուրքերը ամենավայրագ և բիրտ ձևով ցեղասպանության էին ենթարկել երկրի իսկական տերերին: Այնուամենայնիվ, հեղինակը համոզված է, որ հրեաների փորձը կարող է շատ ուսանելի դասեր մատուցել բռնագաղթի ենթարկված ժողովուրդներին, ում համար հայրենիք վերադառնալու ձգտումը շարունակում է դեռևս մնալ իբրև գաղափար: (Առավել մանրամասն տե՛ս Հակոբյան Հ.Վ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, Ասողիկ հրատ., Երևան, 2002, էջեր 87-125:)

Պրոֆ. Վ. Դադրյանը նույնպես գրում է, թե երկու ցեղասպանությունների հիմնական տարբերությունը կապված է այն իրողության հետ, որ մի դեպքում ցեղասպանությունն իրականացվում էր սեփական պատմական հայրենիքում ապրող ժողովրդի, մյուս դեպքում՝ տարբեր երկրների տարածքում ներգաղթի ճանապարհով հաստատված հրեաների նկատմամբ: Այստեղից, ըստ հեղինակի, ի հայտ է գալիս ևս մեկ տարբերություն: Հայոց ցեղասպանության հետևանքով ոչնչացավ հայ ժողովրդի գոյության անմիջական հենքը, այն է՝ նրա հասարակական, կլանական և մշակութային ինստիտուտները, մինչդեռ Ողջակիզման հետևանքով ոչնչացավ հրեա ժողովրդի սփյուռքացիր ենթամշակույթը: (Dadrian V.N., The Comparative Aspects of..., p. 103.)

Dadrian V.N., The Determinants of the Armenian Genoide. H.F. Guggenheim Foundation, 1998, p. 1.

Գլուխ առաջին

1. Ցեղասպանության պատմական նախադրյալները

Հայոց ցեղասպանությանը և հրեական Հոլոքոստին նվիրված աշխատանքներում հաճախ կարելի է հանդիպել այն մտքին, համաձայն որի Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ տեղի ունեցած աղետները գագաթնակետն էին դարերի ընթացքում հայերի և հրեաների դեմ իրականացվող քաղաքականության: Անշուշտ, Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը զանգվածային սպանության մյուս դեպքերից տարբերվում են նախ և առաջ երկարատև նախապատմությամբ, որի ընթացքում ձևավորվել էր հայերի և հրեաների խոցելի վիճակը:

Ցեղասպանագիտության բնագավառում հայտնի մասնագետ Վահագն Դադրյանը ևս գտնում է, որ նախընթաց պատմությունը որոշիչ դեր կարող է ունենալ ցեղասպանության իրականացման համար: Ըստ հեղինակի, ցեղասպանությունը ենթադրում է երկարատև կոնֆլիկտ պոտենցիալ զոհի և պոտենցիալ դահիճի միջև: Ընդ որում, այդ կոնֆլիկտը ձգձգվում է և ենթակա չէ լուծման խաղաղ ճանապարհով, ուստի՝ ծանրացած է իր պատմության բեռով:[1]

Հայերի և հրեաների դեպքում ևս այդ կոնֆլիկտը դարերի ընթացքում ավելի էր կարծրացել և իր «վերջնական լուծումը» գտել XX դարի առաջին կեսին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ նախ նպատակահարմար կլիներ տեսնել, թե ինչ

պատմական զարգացում են ապրել հայերը և հրեաները մինչև Մեծ Եղեռնը և Հոլոքոստը, ինչպես նաև դիտարկել այս երկու ժողովուրդների պատմական խոցելիության ձևավորման պատճառները:

* * *

Հենց սկզբից հարկավոր է նշել, որ հրեա ժողովրդի համապարփակ պատմությունը ներկայացնելիս յուրաքանչյուր ուսումնասիրող կանգնում է հետևյալ խնդրի առջև. Եվրոպայի տարբեր մասերում ապրող հրեաները միասնական պատմական զարգացում չեն ունեցել: Սեփական պետականության բացակայության, անընդհատ ճնշումների և զանգվածային գաղթերի հետևանքով եվրոպական հրեականությունն սփռվել էր տարբեր երկրներում և ներքաշվել վերջիններիս պատմական զարգացման գործընթացի մեջ: Բավական է ասել, որ XX դարի առաջին քառորդին հրեական համայնքներ կային բոլոր եվրոպական երկրներում՝ Պորտուգալիայից մինչև Խորհրդային Միություն, Հունաստանից և Իտալիայից մինչև Շոտլանդիա և Իռլանդիա:[1] Այնուամենայնիվ, փորձենք համառոտակի ներկայացնել եվրոպական հրեաների պատմական ճակատագիրը:

Հրեաները Եվրոպայում առաջին անգամ հայտնվել են մոտ 2000 տարի առաջ. թողնելով Միջերկրական ծովի շրջանները՝ նրանք հռոմեական զորքերի հետևից ճանապարհ ընկան դեպի «Հին մայրցամաքի» խորքերը: Դրանից հետո հրեական համայնքների տարածումն ամբողջ մայրցամաքի վրա ընթացել է երկու հիմնական փուլերով: Նախ մի քանի դարերի ընթացքում հրեաները բնակություն հաստատեցին Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի տարբեր մասերում իսկ XIII դարից սկսած՝ գաղթեցին դեպի Արևելք և բավականին ստվար համայնքներ ստեղծեցին Արևելյան Եվրոպայի երկրներում:

Եվրոպական հրեականության հիմնական խնդիրները

[1] Berenbaum M., The World Must Know. The History of the Holocaust as Told in the United States Holocaust Memorial Museum. Canada, USA: Little, Brown & Co., 1993, p. 10.

ծնունդ առան քրիստոնեական կրոնի տարածմամբ, որը սկսեց պարտադրվել նաև հրեական համայնքներին: Կրոնափոխությանը չենթարկվելու բացասական հետևանքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Արդեն չորրորդ դարում Հռոմի Կոնստանդիանոս կայսրը կրոնական հողի վրա առաջին հակահրեական քաղաքականության սկիզբը դրեց:[1] V դարում Բյուզանդիայի Թեոդոսիոս II կայսրն իր օրենսգրքում հրեաներին մեղադրեց անհնազանդության մեջ և առաջին անգամ նրանց նկատմամբ կիրառեց «առանձին ժողովուրդ» պիտակը: VII դարում Հերակլիուս կայսրը ընդհանրապես արգելեց հրեաների պաշտամունքը կայսրության սահմաններում:[2]

Հակահրեական քաղաքականությունը ժամանակ առ ժամանակ կարծրանում էր կրոնական տրամադրությունների ակտիվացման հետ մեկտեղ: Օրինակ՝ այսպես կոչված «Մութ դարերի» (Dark Ages) ընթացքում՝ V-X դդ., հրեաները քիչ թե շատ հասարակական ընդունելություն ունեին և ապահով կյանքով էին ապրում: Սակայն 1096թ., որը խաչակրաց արշավանքների սկիզբը հանդիսացավ, ազդարարեց նաև քրիստոնեական մոլեռանդության և չարագուշակ նախապաշարմունքներով լի դարաշրջանի սկիզբը:[3] XIII և հաջորդ դարերի ընթացքում սկսվում է Արևելյան Եվրոպայի զանգվածային բնակեցումն Արևմուտքից գաղթող հրեաների հաշվին: Ըստ երևույթին, կրոնական թշնամանքին արդեն գումարվել էր նաև տնտեսական մրցակցության սաստկացումը (հրեաները զգալի դեր ունեին արհեստների, ներքին և արտաքին առևտրի, ինչպես նաև վաշխառության ոլորտներում):

Արևմտյան Եվրոպայի տիրակալները որոշեցին պարզապես ձերբազատվել իրենց պետությունների տարածքում ապրող հրեաներից: Անգլիայի թագավոր Էդուարդ I-ը (1272-

[1] Hilberg R., The Destruction of the Europen Jews. Chicago: Quadrangle Books, 1967, p.1.

[2] Strom M., Parsons W., Facing History and Ourselves: Holocaust and Human Behavior. Watertown: Int. Education, Inc., 1982, p. 51.

[3] Տե՛ս Поляков Л., История антисемитизма. Эпоха веры. Москва-Иерусалим, 1997, стр. 205-216.

1307) և ավելի ուշ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկը (1268-1314) հրեաներին դուրս քշեցին իրենց երկրներից՝ մինչ այդ խլելով նրանց ունեցվածքը:[1] Հրեաների հետապնդումները և բռնի արտաքսման քաղաքականությունը մեծ թափ ստացան հատկապես 1348-1351թթ. ընթացում Արևմտյան Եվրոպայում բռնկված «Սև մահվան»՝ ժանտախտի սաստիկ համաճարակի ժամանակ, որի տարածման պատճառ համարվում էին հրեաները:[2] Այս մեղադրանքների հետևանքով Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում շուրջ երեք հարյուր հրեական համայնքներ սաստիկ հալածանքների ենթարկվեցին:[3]

Այս անբարենպաստ դարերի ընթացքում հրեական կյանքի զարգացման համար միակ քիչ թե շատ նպաստավոր տեղը դարձել էր արաբական խալիֆայության տիրապետության տակ գտնվող Իսպանիան: Սակայն, այստեղ էլ իսպանական հողերի ազատագրմանը (ռեկոնկիստա) զուգընթաց վերջ դրվեց այդ զարգացմանը: 1492թ. մարտի 31-ին հատուկ էդիկտով Իսպանիայի տիրակալներ Ֆերդինանդը և Իզաբելան հրեաներին արտաքսեցին երկրից[4] (Իսպանիայից և Պորտուգալիայից արտաքսված հրեաների մի մասը բնակություն հաստատեց Թուրքիայում և հայտնի դարձավ «իսպանյոլա-հրեաներ» անվամբ):

Վերը հիշատակված քաղաքականության և սրանից բխող արտագաղթի հետևանքով նորանոր հրեական համայնքներ են ստեղծվում այժմյան Լեհաստանի, Լիտվայի, Չեխիայի, Սլովակիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Ռուսաստանի տարածքներում: Սկզբնական շրջանում հրեաները հաճույքով էին

[1] Поляков Л., նշված աշխ., էջ 51:

[2] Այն բանից հետո, երբ ժանտախտի համաճարակը երկու տարվա ընթացքում կլանատեց Եվրոպայի բնակչությունը մեկ երրորդով, սկսեցին լուրեր տարածվել, թե իբր հրեաները դիտավորյալ որոշել են թունավորել խմելու ջրի բոլոր աղբյուրները (Տե՛ս Трахтенберг Дж., Дьявол и евреи. Средневековые представления о евреях и их связь с современным антисемитизмом. Москва-Иерусалим, 1998, стр. 95.)

[3] Джонсон П., Популярная история евреев. Москва, 2001, стр. 249.

[4] Поляков Л., նշված աշխ., էջ 142:

ընդունվում տեղի իշխանավորների կողմից՝ որպես նպաստավոր տարր իրենց պետությունների տնտեսական զարգացման գործում: Սակայն շուտով կրոնական ատելության համաճարակը և բռնությունները հասնում են նաև արևելք՝ ընդունելով ավելի վայրագ ձևեր: Լեհաստանում, Լիտվայում, Ուկրաինայում, Գալիցիայում հրեաների կյանքը նույնքան անտանելի է դառնում, որքան մյուս քրիստոնեական երկրներում:[1]

Գոնե Արևմուտքի հրեաների համար կյանքի բարելավման որոշ փոփոխություններ են նկատվում Լուսավորության ժամանակաշրջանից սկսած: 1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որը «ազատության, հավասարության և եղբայրության» խոստումներ հռչակեց, քաղաքացիական իրավունքներ տարածեց նաև հրեաների վրա: Այն երկրներում, ուր լուսավորական գաղափարները քիչ թե շատ ընդունելություն էին գտնում, հատուկ օրենքներով արգելքներ էին դրվում նաև կրոնական հողի վրա հրեաների հետապնդումներին:[2]

Օրինակ՝ ինչ-որ չափով սկսեց բարելավվել Գերմանիայում մնացած հրեաների վիճակը: 1800-ականների սկզբներին նրանց թույլատրեցին դուրս գալ գետտոներից[3] և աստիճանաբար ընդունելություն գտնել հասարակության գրեթե բոլոր ոլորտներում: Թեև հրեաներին հավասարություն շնորհող օրենքների կիրառումը շարունակում էր խիստ կամայական բնույթ կրել, այնուամենայնիվ, մինչև 1870-ականները նրանք արդեն օրենքի կողմից պաշտպանված լիահավասար քաղաքացիներ էին: Այդ պատճառով վերջիններս սկսեցին արագ և տպավորիչ ձեռքբերումներ ունենալ առևտրի, արդյունաբերու-

[1] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 56:

[2] Голлендорский Л., Восемнадцативековые предрассудки. Санктпетербург, 1870, стр. 57.

[3] Գետտո հասկացությունն առաջացավ այն բանից հետո, երբ XVI դարի սկզբին Վենետիկի իշխանությունները պարտադրեցին իրենց կողքին ապրող հրեաներին կենտրոնանալ քաղաքի մեկուսացված թաղամասերից մեկում, որի անունն էր «Նոր ձուլարան» (“Getto Nuovo”): Այստեղից էլ առաջացավ գետտո բառը, որը շուտով սկսեց կիրառվել այլ վայրերում գտնվող հրեական մեկուսացված թաղամասերի նկատմամբ:(Տե՛ս Джонсон П., նշված աշխ., էջ 269:)

թյան, հասարակական ծառայությունների, գիտության և արվեստի բնագավառներում:[1]

Հատկանշական է, որ ազգային փոքրամասնության իրավունքների համար մղվող պայքարը, որը Արևելյան Եվրոպայում ապրող հրեաների կենտրոնական խնդիրներից մեկն էր, գրեթե երբեք այդպիսին չդարձավ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում ապրող հրեաների համար: Այս երկրներում հատկապես ուժեղ էին ձուլման միտումները, և հրեաների հասարակական կյանքը, որպես կանոն, սահմանափակվում էր կրոնական և մարդասիրական ոլորտներում:[2]

Ի տարբերություն Արևմուտքի՝ Արևելյան Եվրոպայում հաստատված հրեա ժողովրդի համար փորձությունների մի նոր շարան պետք է սկսվեր XIX դարի ընթացքում: Նապոլեոն Բոնապարտի պարտությունից հետո, երբ Լեհաստանը Վիեննայի կոնգրեսում (1814-1815) նոր բաժանման ենթարկվեց Ռուսաստանի, Պրուսիայի, Ավստրիայի միջև, հրեաների մի հսկայական զանգված ընկավ ցարական տիրապետության տակ: Կարճ ժամանակամիջոցում նոր հակահրեական օրենքներ և սահմանափակումներ տարածվեցին նրանց վրա: Արդյունքում, 1881-1918թթ. ընթացքում շուրջ 1 մլն. 300 հազար հրեաներ թողեցին ռուսական կայսրությունը: Նրանց մեծագույն մասը փոխադրվեց ԱՄՆ, շատերն անցան Արևմտյան Եվրոպա և այլուր:[3]

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո հրեաները նոր տառապանքներ կրեցին: Հրեական համայնքները հարձակումների էին ենթարկվում ճակատի երկու կողմերում էլ՝ դիտվելով որպես հակառակորդի գործակիցներ: Պատերազմի ավարտը նրանց թեթևացում չբերեց: Օրինակ՝ Լեհաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո հրեական համայնքները նոր «պոգրոմների» ենթարկվեցին: Հրեական համայնքների ճնշումները սաստկացան նաև հետպատերազմյան Ռումինիայում, Հունգարիայում, Չեխիայում և այլ պետություններում՝ որպես պատասխան տնտեսական պայմանների օրեցօր վատթարացման (դեմագոգները հրեաներին քավության նոխազ էին դարձնում հասարակական որևէ չարիքի՝ պատերազմի, աղքատության, գործազրկության, կոռուպցիայի համար):[1]

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս բացասական մթնոլորտում հրեաները շարունակում էին ապրել և զգալի հաջողություններ ունենալ: Օրինակ՝ Լեհաստանում, ուր նկատվում էին հակահրեականության ամենացցուն դրսևորումները, 1937-1938թթ. կար ուսուցումը երբաներեն լեզվով իրականացնող 267 դպրոց՝ մոտ 43 հազ. աշակերտներով. երեսունականներին այս երկրում տպագրվում էին երկու հարյուրից ավելի հրեական թերթեր և ամսագրեր: Հրեական մի շարք քաղաքական կուսակցություններ (սիոնիստներ, բունդիստներ) ներկայացված էին եվրոպական երկրների խորհրդարաններում:[2]

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի ավարտին ամբողջ աշխարհում հաշվվում էր 14 մլն. հրեա: Նրանց ամենամեծ զանգվածը՝ 3,5 մլն., ապրում էր Միացյալ Նահանգներում:[3] Եվրոպայի այն հսկայական տարածքի վրա, որն արևմուտքում սահմանակից էր Գերմանիային, արևելքում՝ Դնեպր գետին, հարավում՝ Սև իսկ հյուսիսում՝ Բալթիկ ծովերին, ապրում էր շուրջ յոթ միլիոն հրեա:[4]

* * *

1299թ. հիմնադրված Օսմանյան պետությունը նոր նվաճումների ակնկալիքով իր հայացքն ուղղեց ինչպես դեպի արևմուտք, այնպես էլ՝ արևելք: 1392-1398թթ. ընթացքում գրավելով մինչև Երզնկա և Կամախ ընկած տարածությունը՝ օսմանյան թուրքերը ընդհուպ մոտեցան Մեծ Հայքի սահմաննե-

[1] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 59:
[2] Кохави Е., Еврейский мир в середине XX века накануне Холокоста в Европе. "Холокост - Сопротивление – Возрождение". Москва – Иерусалим, 2000, стр. 23.
[3] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 57:

[1] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 59:
[2] Кохави Е., նշված աշխ., էջ 23:
[3] Նույն տեղում, էջ 19:
[4] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 56:

ին:[1] 1473թ. Մեհմեդ Ֆաթիհ սուլթանը Դերջանի ճակատամարտում ծանր պարտության մատնեց ակ-կոյունլուների սուլթան Ուզուն Հասանին: Այս հաղթանակի անմիջական հետևանքը հանդիսացավ Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան մասի (Էրզրում, Բաբերդ, Դերջան, Կամախ և այլն) միացումը Թուրքիային:[2]

Շատ շուտով Օսմանյան Թուրքիան բախվեց հզորացող Սեֆյան Պարսկաստանի հետ, որն իր հերթին նպատակ ուներ նվաճումներ կատարել Փոքր Ասիայի խորքերում: Պարբերաբար կրկնվող թուրք-պարսկական պատերազմների հետևանքով կնքվեցին 1555 և 1639 թվականների պայմանագրերը, որոնց համաձայն, բովանդակ Արևմտյան Հայաստանը ճանաչվեց որպես Օսմանյան կայսրության տարածք:

Այսպիսով, նոր տիրապետության ներքո սկսվեց հայ ժողովրդի պատմության մի նոր շրջան, որը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Դրանցից առաջինը, որ կարելի է «բացահայտ ճնշումների» ժամանակաշրջան անվանել (հայերի իրավազուրկ կարգավիճակը խրախուսվում էր պետական օրենքներով), սկսվում է օսմանյան պետության առաջին նվաճումներով և ավարտվում 1839 թվականով:

Ընկնելով թուրքական գերիշխանության տակ՝ հայերը անմիջապես հայտնվում են կախվածության մեջ: Սուլթան Սելիմ II-ը (1566-1575) հողային օրենք է ընդունում, ըստ որի ոչ մահմեդականների ձեռքին գտնվող բոլոր հողերը հայտարարվում են նվաճված և հարկ վճարելու պայմանով տրվում են նախկին օգտագործողներին:[3] Արևմտահայերի ճնշող մեծամասնությունը, որը թուրքական նվաճումների պահին զբաղվում էր երկրագործությամբ, ընկնում է նոր հողատերեր դարձած թուրք և քուրդ ֆեոդալների իշխանության տակ և սարսափելի հարկման ենթարկվում:

Ոչ մահմեդական ժողովուրդների կառավարումը և հարկերի գանձումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Մեհմեդ II (1451-1481) սուլթանի օրոք Օսմանյան Թուրքիայում հիմք է դրվում «միլլեթների»՝ կրոնական համայնքների համակարգին: Հայերը՝ ուղղափառ քրիստոնյաների և հրեաների կողքին, դառնում են առանձին «միլլեթ»:[1]

Հայերի, ինչպես նաև մյուս քրիստոնյա ժողովուրդների կրոնական հալածանքներն այս ժամանակաշրջանում, որպես կանոն, դրսևորվում են բռնի մահմեդականացմամբ, կրոնական հողի վրա տեղի ունեցած կոտորածներով և զանազան սահմանափակումներով: Պատմությանը հայտնի են հայերի բռնի մահմեդականացման բազմաթիվ դեպքեր, որոնք հաճախ ուղեկցվել են կոտորածներով. օրինակ՝ 1643թ. Էրզրումի, 1708-1710թթ. Թոքատի գավառի,[2] 1820թ. Թոքատի, Բաբերդի, 1830թ. Համշենի, Տրապիզոնի հայերի զանգվածային մահմեդականացման դեպքերը:[3]

Այս ամենի հետ մեկտեղ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխմանը: Ակնհայտ է, որ սկզբնական շրջանում թուրք էթնիկ տարրի ներկայությունը տարածաշրջանում չնչին էր. հայերն այստեղ ազգային և կրոնական մեծամասնություն էին կազմում: XVII դարում Հայաստան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն հաղորդում է, որ «Թոքաթից մինչև Թավրիզ երկիրը բնակեցված է գրեթե միայն քրիստոնյաներով,... և քաղաքներում ու գյուղերում հիսուն հային մի մահմեդական է բաժին ընկնում»:[4]

Թուրքական իշխանությունները, այս պատճառով, ձեռնամուխ եղան տարածաշրջանի էթնիկական և կրոնական պատկերի աղավաղմանը: Որդեգրվեց տարածաշրջանից քրիստոնյաների արտաքսման և մահմեդական տարրի բնակեցման

---

[1] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980, էջ 23:
[2] Նույն տեղում, էջ 23:
[3] Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 431:

---

[1] Новичев А.Д., Турция. Краткая история. Москва, 1965, стр, 25.
[2] Տաշեան Յա.Վ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջեր 34, 68:
[3] Барсегов Ю.Г., Геноцид армян - преступление по международному праву. Москва, 2000, стр. 28.
[4] Նույն տեղում, էջ 25:

քաղաքականությունը: Սելիմ Ահեղ սուլթանի օրոք Թուրքիայի տարածքում մեծ արտոնություններ են ստանում քրդերը (հատկապես Բաղեշի քրդական ցեղերի առաջնորդ Մոլլա Իդրիսը[1]): Արդեն XVII դարում Թուրքիայի տարածքում ձևավորված մի շարք քրդական իշխանություններից հատկապես նշանավոր էր Բաղեշի հյուքյումեթությունը, որը, գտնվելով կենտրոնական Հայաստանում, իր ենթակայության տակ էր պահում նաև Մուշում, Սասունում, Խիզանում, Խնուսում, Բուլանըխում, Խլաթում, Արճեշում և այլ վայրերում առաջացած քրդական իշխանություններին:[2]

Գոնե մինչև սուլթան Մահմուդ II-ը (1808-1839), ինչպես այս՝ քրդական, այնպես էլ Փոքր Ասիայի այլ շրջաններում ստեղծված թուրքական իշխանությունները՝ դերեբեյությունները, գտնվում էին գրեթե անկախ կարգավիճակում և ավազակային բնույթ ունեին: Այս իշխանապետությունների տարածքներում ապրող քրիստոնեական և առաջին հերթին հայկական համայնքներն անվանապես գտնվում էին սուլթանի կենտրոնական իշխանության տակ, սակայն իրականում ենթարկվում էին իրենց քուրդ և թուրք բեկերի ու փաշաների կամայականություններին: Բացի այդ, հայ ազգաբնակչության համար իսկական չարիք դարձան քոչվոր անասնապահությամբ զբաղվող քրդական ցեղերը, որոնց կարելի էր հանդիպել Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում:[3]

1839թ. սուլթան Աբդուլ Մեջիդի օրոք հռչակվում է կայսերական Թանզիմաթ, որն իբրև թե իրավահավասարություն պետք է շնորհեր կայսրության բոլոր կրոնական համայնքներին: Ինչպես այս, այնպես էլ 1856թ. նույն սուլթանի կողմից հռչակված բարեփոխումների ծրագիրը, որը, ըստ էության, առաջինի լրացված տարբերակն էր, մնացին թղթի վրա: 1839-ից մինչև 1876թթ. ընկած ժամանակահատվածը, այդ պատճառով, ընդունված է դիտել որպես «տապալված ռեֆորմների շրջան»:

[1] Ալպոյաճյան Ա., նշված աշխ., էջ 437:
[2] Նույն տեղում, էջեր 438, 445, 449, 457-460:
[3] Նույն տեղում, էջ 438:

Այդ ռեֆորմներն իրականում արգելք չհանդիսացան դեռ նախորդ շրջանից հայերի նկատմամբ իրականացվող հալածանքների շարունակմանը: Ռազմաֆեոդալական հետամնաց Թուրքիայում, որտեղ օրենքների կիրառումը շարունակում էր կախված մնալ տեղական փաշաների և բեկերի կամքից, քրիստոնյաները շարունակում էին ծանր հարկեր վճարել. չկային նաև նրանց կյանքի ու գույքի ապահովության երաշխիքներ:

1850թ. հայերի և ասորիների նոր կոտորածներ են տեղի ունենում:[1] 1862 թվականին սաստկացող ճնշումների դեմ է դուրս գալից Զեյթունի կիսանակախ հայկական համայնքը: Թուրքական իշխանություններին մեծ հոգս են պատճառում նաև Մուշի և Չարսանջակի հայերի հուզումները:

Միաժամանակ, նախկինի նման շարունակվում է հայերի վտարումը բարեբեր հողեր ունեցող բնակավայրերից. նրանց փոխարինում է նորեկ մահմեդական տարրը՝ հիմնականում քրդերն ու մուհաջիր թուրքերը (մի փոքր ուշ սրանց են միանում նաև Կովկասից ներգաղթող «չերքեզները»):

Այնուամենայնիվ, այսպիսի դժնդակ մթնոլորտի պայմաններում հայերի հասարակական, քաղաքական, մշակութային և տնտեսական գործունեությունը Արևմտյան Հայաստանի քաղաքներում և հատկապես Կ.Պոլսում և Զմյուռնիայում զգալի վերելք ապրեց: Ոգևորվելով բարենորոգումների խոստումներից՝ Կ.Պոլսում հայությունը ձեռնամուխ եղավ իր ներքին կյանքը կարգավորող կանոնադրության մշակմանը, որը բազմաթիվ ձևափոխումներից հետո 1863թ. ընդունվեց թուրքական կառավարության կողմից:

Զգալի վերելք ունեցավ մշակութային կյանքը: Հայ եկեղեցու և բարերարների միջոցներով զարգացում ապրեց կրթական գործը. ընդլայնվեց հայկական դպրոցների ցանցը: Հատկապես մեծ հաջողություններ ունեցավ տպագրությունը: Բավական է նշել, որ 1876թ. Կ.Պոլսում լույս տեսնող 47 թերթերից 9-ը հայկական էին (13-ը՝ թուրքական, 9-ը՝ հունական և այլն):[2]

[1] Барсегов Ю.Г., նշված աշխ., էջ 30:
[2] Emin A., The Development of Modern Turkey as Measured By Its Press. New York, 1914, p. 41.

1876թ. գահ բարձրացած Աբդուլ-Համիդ II-ը փորձեց Օսմանյան կայսրությանը սպառնացող արտաքին և ներքին վտանգներին պատասխանել ծայրահեղ միջոցներով: Այս պատճառով, 1839-1876թթ. «տապալված թանզիմաթների» հարաբերական խաղաղ փուլին փոխարինելու եկավ մի նոր ժամանակաշրջան (1876-1908), որը հաճախ դիտվում է որպես ցեղասպանական, և համարվում 1915-23թթ. արյունալի իրադարձությունների ակունքը (օրինակ ըստ Յու. Բարսեղովի, Հայոց ցեղասպանության ժամանակագրական սահմաններն են 1876-1923 թվականները,[1] Մկրտիչ Ներսիսյանը ևս այն կարծիքին է, որ աբդուլհամիդյան ջարդերը պետք է դիտել 1914-1918թթ. ցեղասպանության համատեքստում[2]):

Այս շրջանում պարբերաբար կրկնվող սպանությունները, թալանը, առևանգումները, բնակավայրերից բռնի վտարումներն անտանելի էին դարձրել արևմտահայերի հետագա գոյատևումը: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո հայերը փորձեցին իրենց հուզող խնդիրները ներկայացնել Սան Ստեֆանոյում: Սրան հաջորդած Բեռլինի կոնգրեսի ժամանակ Հայկական հարցը դարձավ միջազգային արծարծումների առարկա, և ավելի գրգռեց Թուրքիայի կառավարող շրջանակներին: Վերջիններս պատասխանեցին յուրովի. հայկական կոտորածներն աննախադեպ չափեր ընդունեցին, հատկապես 1894-1896 թթ.: Սասունում, Տրապիզոնում, Ուրֆայում, Վանում, Կ.Պոլսում և բազմաթիվ այլ վայրերում տեղի ունեցան սոսկալի իրադարձություններ, որոնց ժամանակ սպանվեցին, բռնի կրոնափոխ եղան և արտագաղթեցին հարյուր հազարավոր հայեր: Վերջիններս Վանում, Զեյթունում, Սասունում և այլ վայրերում դիմեցին ինքնապաշտպանության:

Փաստորեն XIX դարը՝ հատկապես իր վերջին քառորդում տեղի ունեցած սոսկալի իրադարձություններով, կործանարար հետևանքներ թողեց արևմտահայության վրա և հող նախապատրաստեց ավելի մեծ աղետի համար: Այս առումով

[1] Барсегов Ю.Г., նշված աշխ., էջ 22:

[2] Геноцид армян в Османской Империи. Сборник документов и материалов под редакцией М.Г. Нерсисяна. Ереван, 1982, стр. III.

արտահայտիչ են Էրզրումի վիլայեթին վերաբերող տվյալները, ըստ որոնց, եթե 1809թ. Էրզրումի նահանգում կար 931 հայկական բնակավայր՝ 381.230 հայ բնակիչներով, ապա 1909թ. բնակավայրերի և հայ բնակիչների թիվը համապատասխանաբար կազմում էին 391 և 151.949:[1]

Ինչևէ, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի տարածքում ապրում էին երկու միլիոնից ավելի հայեր: Նրանց ամենամեծ զանգվածը սփռված էր Արևմտյան Հայաստանի նահանգներում և Կիլիկիայում: Շուրջ 200 հազար հայեր ապրում էին Կ.Պոլսում և Զմյուռնիայում:

Հայերի և հրեաների պատմական խոցելիության ձևավորումը

Հայոց և հրեական ցեղասպանությունների նախապատմությունն անկասկած լի է եղել հայերի և հրեաների նկատմամբ իրականացված կոտորածների, բռնի կրոնափոխության, արտաքսման և իրավազրկության դրվագներով: Սա առաջին հերթին հետևանք էր հպատակության, որն այս ժողովուրդներն ընդունել էին որպես իրենց կյանքի շարունակման երաշխիք:

Եթե հայերը հպատակություն էին ընդունել թուրքերի կողմից կատարված նվաճումների արդյունքում՝ այն էլ սեփական հայրենիքի տարածքում, ապա հրեաներն այդ վիճակում հայտնվել էին մշտական տեղաշարժերի հետևանքով: Անկախ այն հանգամանքից՝ որն է եղել հպատակության պատճառը, նման կարգավիճակն ի վերջո աղետաբեր եղավ երկուսի համար էլ: Ենթարկվելով իշխող հասարակության թելադրած կանոններին՝ այս ժողովուրդները դարերի ընթացքում հայտնվել էին իրավազուրկ վիճակում կամ, ինչպես բնորոշել է ամերիկացի հետազոտող Հելեն Ֆեյնը, հայերը և հրեաները ցեղասպանությունից դեռ շատ առաջ իրենց իշխող խմբերի կողմից դուրս էին մղվել այսպես կոչված «պարտավորությունների ոլորտից»

[1] Մելքոնյան Ա., Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները /XV դարի վերջ-1915թ./, /պատմաժողովրդագրական ակնարկ Էրզրումի նահանգի օրինակով/,- «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», մաս 1, Երևան, 1995, էջ 58:

(universe of obligation). այսինքն՝ մարդկանց այն խմբից, որի անդամները միմյանց պաշտպանելու փոխադարձ պարտավորվածություն ունեն:[1]

. Ուրեմն, ցեղասպանության գործընթացն ավելի լավ հասկանալու համար նախ և առաջ նպատակահարմար կլիներ քննել Օսմանյան Թուրքիայում և Եվրոպայում ապրող հայերի և հրեաների իրավազրկության դրսևորումները: Հետաքրքիր կլիներ նաև հետևել այս ժողովուրդների համարժեք գործողություններին՝ ի պատասխան հակահայկականության ու հակահրեականության բռնկումների:

Երկու ժողովուրդների դարավոր ենթակայությունն առաջին հերթին պետք է ենթադրեր համապատասխան տնտեսական և սոցիալական կարգավիճակ: Լինելով չպաշտպանված և իրավազուրկ՝ և՛ հայերը, և՛ հրեաները տիրապետող միջավայրում ստիպված էին ընտրել այնպիսի տնտեսական և հասարակական դերակատարություն, որը բավարարեր իշխող ժողովրդի վերնախավին, ինչպես նաև, համեմատաբար անվտանգ ու ապահով լիներ տվյալ փոքրամասնության համար: Հայերի և հրեաների տնտեսական ու սոցիալական դերերի ստանձնումը կատարվում էր հենց այս օրենքին համապատասխան:

Օսմանյան Թուրքիայի նվաճումների ժամանակ արևմտահայության ճնշող մեծամասնությունն զբաղվում էր հողագործությամբ: Թեև քրիստոնյաների ձեռքին եղած հողերը թուրքերի կողմից հայտարարվեցին նվաճված, այնուամենայնիվ, որպես կանոն, դրանք մնացին նախկին տերերի ձեռքին՝ հարկեր վճարելու պայմանով:

Նման զարգացումը բնական էր, քանի որ այնպիսի տնտեսական զբաղմունքներ, ինչպիսիք էին հողագործությունը, առևտուրը, արհեստները, գրեթե չէին հետաքրքրում ռազմաքաղաքական ավանդույթներ ունեցող թուրքական վերնախավին: Վերջինիս համար եկամուտի, սոցիալական դիրքի ձեռքբերման հիմնական աղբյուր էին հանդիսանում զինվորական և

[1] Fein H., Accounting for Genocide. National Responses and Jewish Victimization during the Holocaust. New York, London, 1979, p. 4.

պետական ծառայությունը: Ուստի իր ծառայության դիմաց ստացած հողաբաժինը մահմեդական ֆեոդալը հանձնում էր քրիստոնյաներին և հետո ծանր հարկեր գանձում նրանցից: Սա է պատճառը, որ երբեք չդառնալով իր հողի սեփականատերը, արևմտահայության ճնշող մեծամասնությունը շարունակեց աշխատել և ապրել կյանքի ծանր պայմաններում:

Թուրքիայում ապրող քրիստոնյաների մեկ այլ տնտեսական զբաղմունք՝ վաշխառությունը, արդյունք էր մահմեդական կրոնի սահմանափակումներից մեկի: Ինչպես հայտնի է, Մուհամեդ մարգարեն արգելել էր իր հավատքի հետևորդներին վաշխառությամբ զբաղվել,[1] ուստի, երկրի տնտեսության համար շատ կարևոր այդ դերակատարությունը մեծ հաջողությամբ իրենց վրա վերցրեցին հույները, հրեաները, հայերը: Վերջիններս, օգտագործելով նաև իրենց համայնքները ինչպես կայսրության ներսում, այնպես էլ կայսրությունից դուրս, սկսեցին մեծ դեր կատարել երկրի ներքին և արտաքին առևտրում:

Եվրոպայում ևս, երկրից երկիր գաղթող հրեական համայնքները ստիպված էին իրենց տեղը գտնել ընդունող հասարակության տնտեսական համակարգում: Սկզբից Արևմտյան, այնուհետև նաև Արևելյան Եվրոպայում պետական օրենքներով հրեաներին արգելվեց հող ձեռք բերել (Օֆենի սինոդ, 1279թ.):[2] Ի տարբերություն Օսմանյան Թուրքիայի՝ եվրոպացի ֆեոդալները բարձր էին գնահատում հողի արժեքը, որը և՛ եկամուտի, և՛ հասարակական դիրք ձեռք բերելու հարմար միջոց էր հանդիսանում: Այդ պատճառով ողջ Եվրոպայի տարածքում սփռված հրեականությունը ոչ՛ միջնադարում, ոչ՛ էլ հետո գրեթե չզբաղվեց երկրագործությամբ: Քաղաքների արվարձաններում հաստատված հրեաների հիմնական զբաղմունքը դարձավ առևտուրը, մանր արհեստագործությունը, ոչ պատվաբեր գործ համարվող վաշխառությունը (միջնադարյան Եվրոպայում ևս եկեղեցին ամեն կերպ խոչընդոտում և հետապնդում էր վաշխառությամբ զբաղվող իր հավատակիցներին[3]): Նրանք ևս, օգ-

[1] Еремеев Д.Е., Ислам., Образ жизни и стиль мышления. Москва, 1990, стр. 66.
[2] Hilberg R., նշված աշխ., էջ 6:
[3] Джонсон П., նշված աշխ., էջ 229:

տագործելով եվրոպական տարբեր երկրներում հաստատված հրեական համայնքների սերտ կապերը, զգալի հաջողությունների հասան ներքին և արտաքին առևտրի բնագավառում:

Պատահական չէ, որ այս ժողովուրդների կենսական կարևոր դերի մասին արտահայտվել են հենց իրենք՝ տիրակալները: 1632թ. Թուրքիայի Մուրադ IV սուլթանն իր ճառերից մեկում հետևյալ միտքն է արտահայտել. «Ո՞վ պետք է ապահովի մեր եկամուտները, եթե չլինեն ռայաները»:[1] Իսկ օսմանյան մեկ ուրիշ սուլթան՝ Բայազիդ II-ը, 1492թ. Իսպանիայից հրեաներին վտարելու կապակցությամբ հետևյալ խոսքերն է ասել. «Այդ Ֆերդինանդը հիմարի մեկն է. նա աղքատացրեց իր երկիրը և միաժամանակ հարստացրեց իմը»:[2]

Վերոհիշյալի վրա հենվելով՝ կարելի է ասել, որ հայերի և հրեաների տնտեսական զբաղմունքներն առաջին հերթին բխում էին տիրապետող ազգային և կրոնական համայնքների նպատակահարմարությունից: Սրա պատճառով հայերի և հրեաների ճնշող մեծամասնությունը մինչև Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները շարունակեց ապրել կյանքի դժվարին պայմաններում, իսկ նրանց սակավաթիվ ներկայացուցիչների հաջողությունները վաշխառության, առևտրի, հետագայում նաև արդյունաբերության ոլորտներում այս ժողովուրդների հանդեպ լրացուցիչ թշնամանքի առիթ հանդիսացան: Այս իմաստով հետաքրքիր է Ռոբերտ Մելսոնի դիտարկումը, ըստ որի XIX դարի ընթացքում հայերի և հրեաների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման արդյունք հանդիսացող հասարական առաջընթացը (social mobilization) «հայկական հարցի» և «հրեական խնդրի» ձևավորման պատճառներից մեկը դարձավ:[3]

[1] Dadrian V.N., Warrant For Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict. New Brunswick: Transaction Publish., 1993, p. 8.
[2] Дубнов С.М., Краткая история евреев. Ростов-на-Дону, 2000, стр. 479.
[3] Melson R., Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust. Chicago: The University of Chicago, 1992, pp. 61-62, 84-85, 92-93, 247.

Այստեղ ճիշտ կլիներ նշել այն իրողության մասին, որ յուրաքանչյուր անգամ, երբ հրեաների և հայերի համար իշխանությունների կողմից

Հայերի և հրեաների իրավազրկության մեկ այլ դրսևորումներից էր իշխանության տարբեր ինստիտուտներ մուտք գործելու անհնարինությունը, հանգամանք, որը քիչ դեր չխաղաց հետագայում նրանց ոչնչացման գործում: Ոչ՛ Թուրքիայում ապրող հայերը, ոչ՛ էլ եվրոպական հրեականությունն իշխանությանը մասնակցելու հնարավորություն այդպես էլ չունեցան: Պատճառը ազգային և կրոնական խտրականությունն էր: Փոխարենը, այս երկու ժողովուրդների որոշ ներկայացուցիչներ մեծ հաջողությամբ օգտագործվում էին բարձր իշխանավորների կողմից:

Քրիստոնյա և մահմեդական իշխանավորների պալատներում ընդունված երևույթ էր «պալատական հրեան»: Հրեան խորհրդականի, թարգմանչի, պալատական բանկիրի, հատուկ հանձնարարություններ կատարող էմիսարի կարգավիճակում ավելի շուտ կանոն էր, քան թե բացառություն:[1]

Այս առումով ոչ պակաս կարևոր դեր են խաղացել նաև Օսմանյան կայսրությունում ապրող հայերը: Բավական է միայն նշել այն հայ ընտանիքների անունները (Պալյան, Տուզյան, Տատյան), որոնք երկար ժամանակ այս կամ այն պալատական պաշտոնն են վարել:

Սակայն, պալատներում ծառայող հայերը և հրեաները այդ իշխանությունն ունեին որպես ծառաներ, որպես իրենց տերերի քաղաքականության և ցանկությունների իրականացնողներ, և ինչպես նշում է նացիոնալիզմի ուսումնասիրման բնագավառում հայտնի ամերիկացի հետազոտող Է.Գելները, «ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին օգտագործելը... ընդունված էր հենց այն պատճառով, որ

իրավունքների քիչ թե շատ համահավասար պայմաններ էին ստեղծվում, այս ժողովուրդները, օգտագործելով նախկին անբարենպաստ պայմաններում ձեռք բերված փորձը և հմտությունները, նոր իրավիճակում առավել ակնառու և արագ հաջողությունների էին հասնում գործարարության, մշակույթի և այլ բնագավառներում: Բնական է, որ սա, իր հերթին, պետք է գրգռեր եվրոպացի քրիստոնյաների և մահմեդականների ատելությունը մի դեպքում հրեաների, մյուս դեպքում՝ հայերի նկատմամբ:

[1] Дятлов В., "Диаспора: попытка определиться в понятиях." *Диаспоры*, Москва. 1999, N1, стр. 15.

նրանք օտար էին և անուժ»:[1]

Չնայած օրենքն ավելի ուշ ժամանակներում հայերի և հրեաների համար հավասարություն և իշխանությանը մասնակցելու հնարավորություն էր նախատեսել, իրականում դա տեղի չունեցավ: Հրեաներն այդպես էլ զրկված մնացին այնպիսի ոլորտներ և մասնագիտություններ մուտք գործելու իրավունքից, ինչպիսիք էին դատական, դասախոսական պաշտոնները, կառավարության վերին օղակները, զինված ուժերը:[2]

Ճիշտ նման վիճակում էին նաև հայերը, որոնց նույնպես XIX դարում հավասարություն էր խոստացվել: Հալեպի անգլիական հյուպատոս Թ.Սքինը, օրինակ, վկայում է. «Տեղական «մեջլիսի» կազմում երկու քրիստոնյաներ կան, որոնց մասնակցությունը խիստ ձևական բնույթ է կրում: Նրանք չեն մասնակցում քննարկումներին և արժանանում են ամենավերին արհամարհանքի, երբեք չեն համարձակվում արտահայտել իրենց կարծիքը կամ անհամաձայնությունը...»:[3]

Կարևոր նշանակություն ունեցող հարց է նաև այս ժողովուրդների մասնակցությունն իրենց երկրների բանակներում: Թեև եվրոպական երկրներում հրեաներին զորակոչում էին բանակ, այնուամենայնիվ նրանց մուտքը դեպի բարձր զինվորական պաշտոններ, որպես կանոն, փակ էր: Այս առումով աղետալի էր հայության վիճակը. Օսմանյան Թուրքիայում հայերին ոչ միայն չէին զորակոչում բանակ (որի համար նրանք նույնիսկ հատուկ հարկ էին մուծում), այլև նրանց արգելված էր զենք կրել, այն դեպքում, երբ հարևան մահմեդականներին արտոնված էր այդ իրավունքը:

Այսպիսով, Օսմանյան Թուրքիայում հայերի և Եվրոպայում հրեաների ստորադրյալ կարգավիճակը նախ և առաջ ենթադրում էր համապատասխան տնտեսական և սոցիալական դերակատարություն՝ իր մի շարք բացասական հետևանքներով: Եթե սրան գումարենք նաև այս ժողովուրդների հանդեպ կիրառված կրոնական հալածանքները, ապա նրանց ծանր վիճակի վերաբերյալ մեր պատկերացումներն ավելի ամբողջական կդառնան:

[1] Дятлов В., նշված աշխ., էջ 15:
[2] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 60:
[3] Krikorian M.K., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908. London: Routledge & Kegan Paul, 1977, p. 102.

Հայերի և հրեաների նախընթաց պատմության ուսումնասիրությունից առավել աչքի են ընկնում այն ընդհանրությունները, որոնք առկա էին նրանց կրոնական իրավազրկության ոլորտում: Իսկ կրոնի գործոնը ըստ պատշաճի գնահատելու համար հարկ է հիշել, որ միջնադարի ընթացքում և դրանից հետո դեռ երկար ժամանակ ժողովուրդների կրոնական ինքնագիտակցությունը գերակայող էր ազգայինի հանդեպ: Թուրքերն ու քրդերը մի կողմից, Եվրոպայի քրիստոնյա ժողովուրդները՝ մյուս, հայերին և հրեաներին առաջին հերթին դիտում էին որպես քրիստոնյաներ և հուդայականներ: Այս իմաստով մահմեդական և քրիստոնեական կրոններն իրենց ծանրակշիռ դերակատարությունն ունեցան հակահայկականության և հակահրեականության ակունքների ձևավորման գործում:

Օսմանյան թուրքերի համար մահմեդական գաղափարախոսությունը ոչ միայն հարմար գործիք էր նվաճումներ կատարելու, այլև նվաճված ժողովուրդներին, հատկապես քրիստոնյաներին, հպատակության մեջ պահելու համար: Վերջիններիս՝ ամենաբռնի մեթոդներով հնազանդեցնելու որոշ պատվիրանները, որոնք առկա էին մահմեդականների սուրբ գրքում՝ Ղուրանում, ժամանակ առ ժամանակ շահադիտական նպատակներով ծառայեցվում էին քրիստոնյա ժողովուրդների դեմ: Ինչպես նշում է Վ.Դադրյանը, Ղուրանը շուրջ երկու հարյուր պատվիրան է պարունակում, որտեղ մահմեդականներին կոչ է արվում «սրբազան պատերազմի»՝ ջիհադի ոգով արյունալի հաշվեհարդար տեսնել «անհավատների» նկատմամբ:[1]

Եվրոպայում ևս հրեաների կրոնական ճնշումների համար «լուրջ» պատճառներ գտնվեցին: Այն բանից հետո, երբ քրիստոնեությունը տարածվեց Եվրոպայում, և հրեաները հրաժարվեցին կրոնափոխ լինել, եկեղեցու կողմից հակահրեական մեծ հարձակում սկսվեց: Ակտիվ շրջանառության մեջ դրվեց հրեաների՝ աստվածասպան լինելու գաղափարը. Եվրոպայում ապրող հրեաներին սկսեցին մեղադրել Աստծո որդուն՝ Հիսուս

[1] Տե՛ս Dadrian V.N., Warrant For Genocide..., p. 6.

Քրիստոսին սպանելու մեջ: Այս մեղադրանքներն ամրապնդվում էին նաև Աստվածաշնչի Նոր Կտակարանում եղած հակահրեական մեջբերումներով:[1]

Փաստորեն և՛ հայերին, և՛ հրեաներին ճնշելու համար իշխողներն ունեին հարմար գործիք՝ կրոնը, որը միջնադարյան եվրոպացու, առավել ևս՝ թուրքի համար ծանրակշիռ հեղինակություն ուներ: Երկու դեպքում էլ կրոնական զգացմունքները հաճախ օգտագործվում էին հակահայկական և հակահրեական ատելություն սերմանելու համար: Այդ ատելության չափը հասկանալու գործում օգնության են գալիս մասնավոր օրինակները: Ահա հատված թուրքական մի հրամանից, որը վերաբերում էր Զեյթունի հայերին և գործեց 1695թ. մինչև 1808թ. «...Սատանայի գլխարկ կրող, Աստուծոյ ապարանքի դռնէն զրկուող, վատ սկզբունքի տեր, պառաւեալ երէց: Կը ծանուցուի որ Ձեր հայհոյիչ գարշելի ժողովրդեն, այս ինչ հայհոյիչի տղան այն ինչ հայհոյիչը սատկած ըլլալով՝ թէև գարշելի պիղծ դիակը հող անգամ չընդունիր, ինչ օգուտ, ինչ օգուտ, որ այս զզուելի գարշահոտութիւնը մեջտեղէն վերցուելու համար քաղաքէն դուրս հանէք, խորունկ փոս մը փորել տաք, մեջը ձգեք, վրան հողով ծածկէք, լաւ մը տրորէք, կոխկռտեք ու գաք, պառաւեալ երէց»:[2] Սակայն, այս ստորացուցիչ հրամանի վերացումից հետո էլ, ըստ ականատեսների՝ «...թուրքերը կը շարունակեն ծաղրել, անարգել, հայհոյել և քարկոծել մեր ննջեցեալներն ու մեռելաթաղ քահանաները, ըսելով. «կեաւիր կեպէրիկի կիտիյօր, հա»(անհաւատի սատկած կերթայ)»:[3]

Հետաքրքիր է նաև 1543թ. Գերմանիայում ռեֆորմիստական շարժման առաջնորդ Մարթին Լյութերի ձևակերպած ծրագիրը, որը նախատեսված էր հրեաների համար. «Նրանք հակառակվում են մեր՝ հավատափոխ անելու փորձերին... Ես առաջարկում եմ իմ վստահելի ծրագիրը. առաջին, մենք պետք է կրակի մատնենք նրանց սինագոգները..., երկրորդ, հարկավոր է նույն ձևով ոչնչացնել նրանց տները... և բնակեցնել

[1] Տե՛ս Поляков Л., նշված աշխ., էջ 24:
[2] Զեյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, մաս Բ, Բալիզ, 1903, էջ 208:
[3] Նույն տեղում, էջ 209:

նրանց մեկ այլ ծածկի տակ, կամ անասնագոմում, ինչպես գնչուներին, որպեսզի իմանան, որ իրենք այս երկրի տերերը չեն...: Երրորդ, հարկավոր է նրանց ձեռքից վերցնել աղոթքի և Թալմուդի բոլոր գրքերը... չորրորդ, այսուհետ ռաբբիներին մարմնական պատիժների և մահվան սպառնալիքի տակ պետք է արգելվի կարդալ իրենց ուսմունքը... հինգերորդ, հրեաներին պետք է կտրականապես արգելել ճանապարհներով քայլել...»:[1]

Որպես կրոնական ստորադասման դրսևորում պետք է դիտել նաև հայերին և հրեաներին իշխող ժողովուրդներից տարբերելու նպատակով կիրառված միջոցները:

1215թ. կաթոլիկ եկեղեցու Չորրորդ լատերանական խորհուրդը հրեաներին ճանաչում է որպես առանձին ժողովուրդ և ստիպում նրանց տարբերակիչ նշաններ կրել: Անգլիայում այդ նշանը փոքրիկ ուղղանկյան ձև ուներ, Ֆրանսիայում և Գերմանիայում այն դեղին գույնի «O»-ն էր, որը հետագայում նացիստների կողմից օկուպացված երկրներում հրեաներին պարտադրված դեղին աստղի նախատիպն էր:[2] Ավելի ուշ Հռոմի Պողոս I պապը ստիպում է հրեաներին դեղին գլխարկ կրել:[3]

Ի թիվս Օսմանյան Թուրքիայի մյուս կրոնական համայնքների՝ այդպես էին վարվում նաև հայերի հանդեպ: 1621թ. Կ.Պոլսի ղադիի կողմից հրաման է արձակվում, որտեղ ասվում էր. «...ձի նստեցնել, սամոյր մուշտակ, սամոյր գլխանոց,... սնդուսէ և մետաքսէ ծաղկենկար կերպասէ շինուած զգեստներ... հագցնել չտաս, որպեսզի իսլամներու յատուկ զգեստներու տարազով չպտտին»:[4] XVIII դարի սկզբին մեծ վեզիր Ահմեդ Ջելաիրլիի օրոք քրիստոնյաներին պարտադրվել էր հագնել միայն սև գույնի հագուստ և փողոց դուրս գալու ժամանակ թևերին զանգակներ կրել:[5]

[1] Джонсон П., նշված աշխ., էջ 277:
[2] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 51:
[3] Таланцев А.Д., "Истоки антисемитизма." *Самиздат*, Internet. http://zhurnal.lib.ru/t/talancew_d_ a/antsetxt.shtml).
[4] Հնասեր (Գ.Մանուկյան), Կորսուելու ենթակայ վաւերաթուղթեր. «Բազմավեպ», 1934, հունվար, թիվ 1, էջ 32:
[5] Զուլալյան Մ., նշված աշխ., էջ 74:

Կրոնական երանգ ունեցող իրավազրկության ընդհանրությունները ակնհայտ են նաև այլ ոլորտներում: Օրինակ՝ 1179թ. Երրորդ լատերանական խորհուրդը հրեաներին արգելեց հայց ներկայացնել կամ դատարանում հանդես գալ քրիստոնյաների դեմ:[1] Նույն կարգավիճակում էին գտնվում հայերը Օսմանյան Թուրքիայում. նրանց արգելված էր դատարաններում վկայություն տալ, եթե մահմեդականի գործ էր քննվում:[2] Ինչպես հրեաներին, այնպես էլ հայերին արգելված էր իրենց տներում տիրապետող հասարակության կրոնին պատկանող ծառաներ ունենալ:[3]

Հետաքրքիր է, որ թրքահայության և Եվրոպայի հրեաների իրավազուրկ վիճակը դարերի պամության ընթացքում առաջացրել էր նաև նրանց կողմից ցուցաղրվող վարքի և գործողությունների իրար հիշեցնող համակարգեր: Դրանք հիմնականում ուղղված էին իրենց կյանքին, գույքին, համայնական շահերին սպառնացող վտանգների չեզոքացմանը և վերացմանը:

Հայերի և հրեաների վարքագծի ակնհայտ ընդհանրությունների առկայության պայմաններում նախ և առաջ հարկավոր է նշել մի կարևոր տարբերության մասին: Եվրոպայում ապրող հրեաների ողջ պատմության ընթացքում զինված դիմադրության օրինակները գրեթե գոյություն չեն ունեցել:[4] Մինչդեռ հայերը ժամանակ առ ժամանակ դիմել են զինված ինքնապաշտպանության կամ ապստամբությունների, որոնք պետք է դիտել թուրքական տիրապետության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի համատեքստում: Սակայն, սեփական իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարի քիչ թե շատ ակտիվ ձևերը հաճախ արյունոտ հետևանքներ էին ունենում՝ հանգեցնելով զանգվածային կոտորածների:

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 5:
[2] Հայ ժողովրդի պատմություն: Հատոր IV (Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, էջ 292:
[3] Hilberg R., նշված աշխ., էջ 5: Նաև՝ Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, էջ 205:
[4] Hilberg R., նշված աշխ., էջ 15:

Իրենց սպառնացող վտանգները չեզոքացնելու համար հայերը և հրեաները ավելի շուտ ստիպված էին դիմել այլ միջոցների: Այդ միջոցներից առաջինը և հաճախ ոչ ամենաարդյունավետը դիմումների, միջնորդությունների, աղերսագրերի համակարգն է եղել: Հրեաների պատմությունը լի է նման դրվագներով: Օրինակ՝ ամբողջ 19-րդ դարի ընթացքում հրեաների փրկության կոմիտեներ և ենթակոմիտեներ էին գործում, որոնք տարբեր դիմումների և խնդրագրերի միջոցով փորձում էին մեղմացնել այս ժողովրդի ճնշումները տարբեր եվրոպական երկրներում:[1] Թուրքիայում ապրող հայերի պատմության ընթացքում ևս բազմաթիվ են եղել այն դեպքերը, երբ հայերը փրկության խնդրանքներով դիմել են ինչպես իրենց, այնպես էլ տարբեր եվրոպական երկրների տիրակալներին և կրոնական առաջնորդներին: Սակայն, գործողության այս եղանակը հեռու էր արդյունավետ լինելուց և հաճախ նոր թշնամանքի տեղիք էր տալիս:

Առավել արդյունավետ գործող միջոցը կաշառքն էր: Վերջինիս օգնությամբ հայերը և հրեաները շատ հաճախ կարողանում էին իրենց ճակատագիրը վճռողներին հետ կանգնեցնել հակահայկական կամ հակահրեական որոշումներից: Օրինակները շատ խոսուն են:

1384թ., երբ Գերմանիայում հրեաների արյուն էր հեղվում, Նյուրնբերգ քաղաքի հրեական համայնքը 80.000 գիլդիեր է հավաքում և հանձնում Վենզել թագավորի ներկայացուցիչներին: Կոտորածները դադարում են:[2]

1705թ. Բաղեշ քաղաքի դատավորը հրաման է արձակում, որի համաձայն մահմեդականություն ընդունած քրիստոնյայի բոլոր անչափահաս երեխաները նույնպես պետք է մահմեդական դառնային: Հայերի կողմից հավաքված ավելի քան 700 դուրուշ կաշառքի միջոցով հնարավոր է դառնում դատավորին հետ կանգնեցնել այդ որոշումից:[3]

Ըստ ամերիկացի հետազոտող Ռ.Հիլբերգի, հրեաները

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 15:
[2] Նույն տեղում:
[3] Զուլալյան Մ., նշված աշխ., էջ 75:

իրենց դարավոր հպատակության ընթացքում մշակել էին վտանգից խուսափելու ևս մեկ եղանակ: Այդ միջոցը վտանգի կանխավ գուշակումն էր և սեփական կամքով հնազանդումը:[1]

Սպառնալիքից խուսափելու նման եղանակ, անկասկած, բնորոշ է եղել նաև թուրքահայերի վարքագծին: Օրինակ՝ նույն սկզբունքով էին գործում հայերից շատերը 1915թ. սկզբներին, երբ թուրքական իշխանությունների՝ զենքերը հանձնելու պահանջով զենք էին գնում և ներկայացնում վերջիններիս:

Վերջապես, այս ժողովուրդների դարավոր պատմության ընթացքում ինքնապահպանմանն ուղղված վերջին միջոցը հնազանդումն էր: Երբ անօգուտ էին դառնում վտանգից խուսափելու վերոհիշյալ եղանակները, կրոնափոխ լինելու, բնակավայրերը լքելու, մանկահավաքի և այլ պահանջներով վերջնագրերին ենթարկվելը հաճախ նրանց համար կենսական նշանակություն էր ստանում: Եթե նախընթաց պատմության ընթացքում նման հնազանդումը հավասարազոր էր ողջ մնալուն, ապա Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ այն մեծ աղետի հանգեցրեց:[2]

[1] Այսպիսի վարքը, ըստ հեղինակի, ինչ-որ իմաստով նման է այն մարդու գործողություններին, որը կանխազգալով մահաբեր հարվածը, ինքն իրեն վնասում է և դրանով ցույց տալիս, թե այլևս հարվածելու կարիք չկա: (Hilberg R., նշված աշխ., էջ 15:)

[2] Ուշագրավ է, որ ինչպես Առաջին, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ հայերը և հրեաները նախորդ դարերի ընթացքում ձևավորած վարքի եղանակներ էին ցուցաբերում: Ինչպես և նախընթաց պատմության ընթացքում, երկու ժողովուրդներն էլ չդիմեցին համընդհանուր բնույթ կրող զինված դիմադրության (թեև այս առումով հայերն ավելի ակտիվ էին): Փոխարենը՝ նորից դրսևորվում էր համայնքային կամ անհատական խնդրագրերի, կաշառատվության, դահիճների հետ համագործակցելու և վերջապես՝ հնազանդվելու վարքագիծը: Բազմաթիվ օրինակներից նշենք միայն մի քանիսը: 1916թ. սկզբներին Հալեպի շրջակայքից հայերի տեղահանության ժամանակ այս կուսակալության անունով շուրջ 10 հազար աղերսագրեր էին ստացվել՝ չտարագրվելու խնդրանքով:(Անտոնյան Ա., Մեծ Ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 100:) Թուրքի հայերը, ստանալով իրենց տեղահանության վերաբերյալ իշխանությունների հրամանը, տեղի մյութեսարրիֆին նույն նպատակով 1600 օսմանյան ոսկի կաշառք են տալիս:(Հայկական ջարդերը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությանը և հրեական Հոլոքոստին նախորդող ժամանակաշրջանների առավել աչքի ընկնող ընդհանրությունը երկու ժողովուրդների հպատակ կարգավիճակն է՝ իր բոլոր բացասական դրսևորումներով: Նախ, հպատակության հետևանքով հայկական և հրեական ազգաբնակչության մեծ մասը մինչև երկու աշխարհամարտերը շարունակեց ապրել ծանր պայմաններում: Երկու ժողովուրդների այն փոքր հատվածները, որոնք զգալի հաջողությունների էին հասել առևտրի, կապիտալի և գործարարության այլ ոլորտներում, իշխող հասարակության վերնախավի կողմից սկսեցին դիտվել որպես մրցակցության լուրջ վտանգ և լրացուցիչ թշնամանքի պատճառ դարձան: Բացի այդ, դարերի ընթացքում հայերի ու հրեաների բացակայությունն իրենց երկրների իշխանության ոլորտներից ավելի էր հեշտացնում հակահայկական և հակահրեական որոշումների ընդունման և իրագործման գործընթացը, հանգամանք, որից մեծապես օգտվեցին երիտթուրքերը և նացիստները:

Հայերի և հրեաների համար գրեթե հավասարապես աղետաբեր եղավ նաև նրանց դեմ օգտագործվող կրոնական

Տոքթ. Եոհանէս Լեփսիուսի տեղեկագիրը, Պեյրութ, 1965, էջ 68:) Այն բանից հետո, երբ Մարզվանում մուֆտիկը հայտարարում է, թե 15-ից 70 տարեկան բոլոր հայ տղամարդիկ պետք է զորանոցները ներկայանան, հայ քահանաներն սկսում են տնից տուն շրջել և տղամարդկանց խորհուրդ տալ համակերպվել այդ հրամանի հետ: Նույն տեղում, էջ 77:)

Նույնը վերաբերում է հրեաներին: Երբ գերմանացիները Բուլղարիայի կառավարությունից պահանջում են արագացնել հրեաների արտաքսումը երկրից, 1942թ. սեպտեմբերի 27-ին շուրջ 350 հրեաներ հավաքվում են Բուլղարիայի ներքին գործերի նախարարության բակում և խնդրագիր ներկայացնում՝ արտաքսումը հետաձգելու վերաբերյալ: (Hilberg R., նշված աշխ., էջ 481:) 1942թ. ընթացքում Բրատիսլավայի հրեաների Փրկության կոմիտեն ՍՍ-ական պաշտոնյա Դիտեր Վիսլիցենիին կաշառք էր տվել 50 հազար դոլարի չափով՝ Սլովակիայից հրեաների տարագրումը հետաձգելու նպատակով: (Arendt H., Eichmann In Jerusalem. A Report on the Banality of Evil. New York: The Viking Press, 1963, p, 144.) Սրա կողքին, Հոլոքոստի ողջ ընթացքում հրեաների ոչնչացման գործընթացին իրենց աջակցությունն էին ցուցաբերում նացիստների կողմից ստեղծված «հրեական խորհուրդները» (Judenrat):

թշնամանքը, որի չարագուշակ ժառանգությունը հետագայում հմտորեն օգտագործվեց ազգայնամոլ կառավարիչների կողմից: Պատահական չէ, որ նախընթաց դարերում կրոնական հողի վրա իրականացված դաժանություններն ավելի խտացված ձևերով կարելի է հանդիպել XX դարի առաջին կեսի երկու ցեղասպանությունների ընթացքում:

Վերջապես, երկար դարերի ընթացքում հակահայկական և հակահրեական մթնոլորտի պայմաններում հայերը և հրեաները մշակել էին յուրահատուկ հոգեբանություն և գործողությունների համակարգ, որտեղ ակտիվ դիմադրությունը, որպես կանոն, բացակայում էր: Անկասկած, երիտթուրքերը և նացիստներն իրենց եղերական ծրագրերը կառուցելիս այս հանգամանքը ևս քաջ գիտակցել էին:

2. Գաղափարախոսություն և ցեղասպանություն

Պատմագիտական ուսումնասիրության ժամանակ՝ հասարակական երևույթները պայմանավորող մի շարք կարևոր գործոնների (ժամանակ, տեղ և այլն) դիտարկման կողքին խիստ կարևորվում է նաև այդ երևույթների հասարակաքաղաքական շարժառիթների բացահայտումը: Ռ. Մելսոնի կարծիքով, *ցեղասպանություն* երևույթը ամբողջությամբ հասկանալու համար հարկավոր է, ի թիվս այլոց, պատասխանել հետևյալ հարցերին. ա) որո՞նք էին այն ներքին և արտաքին նախապայմանները, որ թույլատրեցին ցեղասպանություն գործելու հակում ունեցող շարժումներին հասնել պետական իշխանության, և բ) ինչպիսի՞ դրդապատճառներով, աշխարհայացքով և զգացմունքներով էին առաջնորդվում այդ ուժերը ցեղասպանության որոշումը կայացնելիս:[1]

Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի՝ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներին նախորդող ժամանակաշրջանների ուսումնասիրությունից անմիջապես աչքի է

[1] Melson R., "Revolutionary Genocide: On the Causes of the Armenian Genocide of 1915 and the Holocaust". In *Holocaust and Genocide Studies*. 1989, Volume 4, Number 2, p. 162.

զարնում այն ընդհանրությունը, որ երկու երկրներում էլ վերացվել էր իշխանության միապետական համակարգը: Թուրքիայում տապալվել էր Աբդուլ-Համիդ II-ի միապետությունը իսկ Գերմանիայում՝ Հոհենցոլերների դինաստիան: Այս իրադարձություններին հաջորդել էր բարդ և հակասական ժամանակաշրջան, որն էլ ավարտվել էր ծայրահեղ գաղափարախոսություն դավանող ուժերի՝ իթթիհատականների և նացիստների հաղթանակով:

Այստեղից կարելի է նախնական ենթադրության հանգել այն իմաստով, որ միապետություններին հաջորդած միջանկյալ փուլերում տեղի ունեցած հասարակական զարգացումները վճռական ազդեցություն էին ունեցել երկու ոճրագործությունների իրականացման համար:

Ռ.Մելսոնը այն կարծիքին է, թե երկու ոճրագործություններն էլ առավելապես համընկնում են այն առումով, որ և՛ Թուրքիայում, և՛ Գերմանիայում կայսերական ռեժիմները վերացվել էին և փոխարինվել հեղափոխական շարժումներով, որոնք էլ իրականացրեցին խնդրո առարկա ցեղասպանությունները:[1]

Ուշադրություն է գրավում նաև այն փաստը, որ այդ «հեղափոխական» ուժերը՝ իթթիհատականները և նացիոնալ-սոցիալիստները, հենց այս միջանկյալ ժամանակափուլերում ձևավորեցին իրենց քաղաքական աշխարհայացքները, որոնց ցեղասպանական բովանդակությունն ավելի առարկայական պիտի դառնար այս ուժերի՝ իշխանության համար մղվող պայքարում հաղթանակ տանելուց հետո: Այստեղից հետևում է նաև գաղափարախոսության՝ որպես ոճրագործությունը հիմնավորող միջոցի կարևորությունը: Վերջին հանգամանքի օգտին են խոսում իթթիհատականների և գերմանական ֆաշիստների դավանած գաղափարախոսությունների միջև գոյություն ունեցող էական ընդհանրությունները:

Թուրքիան և Գերմանիան՝ համապատասխանաբար մինչև Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, բարդ և հակասական զարգացման ժամանակաշրջան ապրեցին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 1908-1913թթ.

[1] Melson R., նշված աշխ., էջ 162:

հետհամիդյան Թուրքիայի անհաջողություններին ներքին և արտաքին ասպարեզներում, ինչպես նաև 1919-1933թթ. Վայմարյան հանրապետության ծանր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակին: Հենց վերոհիշյալ ժամանակահատվածներում էլ վերջնականապես ձևավորվեցին **պանթուրքիստական** և **նացիոնալ-սոցիալիստական** գաղափարախոսությունները, որոնք քաղաքական կիրառում պետք է գտնեին իթթիհատական և նացիստական վարչակարգերի հաղթանակից հետո:

Լինելով ինչ-որ իմաստով համանման ճգնաժամային միջավայրերի ծնունդ,[1] նացիոնալ-սոցիալիզմը և պանթուրքիզմը կիսում էին մի շարք ընդհանուր գաղափարներ և շատ դեպքերում սնվում էին միևնույն ինտելեկտուալ աղբյուրներից: Զարմանալի չէ նաև, որ այդ գաղափարներից մի քանիսը համընկնում էին իրենց **ցեղասպանական** բովանդակությամբ և մեծ դեր կատարեցին հայերի և հրեաների զանգվածային ոչնչացումը հիմնավորելու գործում:

Մինչև պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի գաղափարական ընդհանրություններին անդրադառնալը՝ ճիշտ կլիներ շեշտել այն հանգամանքը, որ երկու գաղափարախոսություններն էլ իրենց աշխարհայացքները ձևակերպելիս մեծապես օգտվել են «պատրաստի» գաղափարներից: Օրինակ՝ նացիոնալ-սոցիալիզմի «Ավետարանը» համարվող «Իմ պայքարը» գրքում հանդիպող հայացքներից շատերը կարելի է տեսնել XVIII դարի կեսերից Գերմանիայում ծնունդ առած «ֆոլկիստական» (գերմ. folk՝ «ժողովուրդ») գաղափարախոսության

[1] Ամերիկացի հոգեբան Է. Սթաուբը, ուսումնասիրելով զանգվածային սպանությունների մի շարք օրինակներ, այն համոզմանն է գալիս, որ կյանքի դժվարին պայմաններում մարդիկ դիմում են իրենց ֆիզիկական և հոգեբանական ինքնապահպանմանն ուղղված գործողությունների: Կյանքի դժվարություններին նրանք պատասխանում են որոշակի մտքերով, զգացումներով և գործողություններով, որոնք չեն փոխում իրականությունը, սակայն օգնում են լուծել հոգեբանական խնդիրները: Նման գործողությունների շարքին, ըստ հեղինակի, դասվում է որևէ *գաղափարախոսության* որդեգրումը: (Տե՛ս Staub E., The Roots of Evil. The Origins of Genocide and Other Group Violence. New York: Cambridge University Press, 1989, p. 5.)

մեջ, որը Հիտլերի կողմից հմտորեն ծառայեցվեց հանուն սեփական շահերի:

Նույնը կարելի է ասել պանթուրքիստ մտավորականների վերաբերյալ: Չունենալով անհրաժեշտ գաղափարական հենք թուրքական միջավայրում՝ այս մարդիկ իրենց ծայրահեղ ազգայնական հայացքները շատ դեպքերում յուրացնում էին հենց նույն գերմանական «ֆոլկիզմի» զինանոցից: Պատահական չէ, որ երիտթուրքական հեղափոխությունից հետո Թուրքիայում սկսեցին թարգմանվել Հերդերի, Ֆիխտեի, Հեգելի, Նիցշեի, Տրոյտչկեի և գերմանական ազգայնականության հիմքերը ձևավորող այլ հեղինակների գրքերը:[1]

Հայերի և հրեաների ոչնչացման առումով պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի աշխարհայացքների մեջ կարելի է առանձնացնել մի շարք էական և ոչ էական ընդհանրություններ: Մեզ, նախ և առաջ, հետաքրքրում են այս գաղափարախոսությունների այն բաղկացուցիչ հատվածները, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորված առնչվելու էին հայերի և հրեաների հետ: Այս իմաստով առաջին տեղում են գտնվում ազգայնականության, ռասիզմի և ծավալապաշտության հայացքները: Ընդ որում, վերջիններիս միջև հստակ սահմանագիծ անցկացնելը բավականին դժվար է, քանի որ դրանք շատ հաճախ հանդես են գալիս միասնական տեսքով և փոխպայմանավորված:

Պետք է կարծել, որ իթթիհատական և նացիստ գործիչները, ի թիվս այլ նպատակների, կարևորում էին իրենց ներկա և ապագայում ստեղծվելիք «կայսրությունները» էթնիկ տեսանկյունից միատարր դարձնելու խնդիրը. վերջինիս լուծումը պետք է հիմքեր ստեղծեր պանթուրքիզմի և գերմանական ֆաշիզմի մյուս նպատակների հաջող իրականացման համար: Իթթիհատականների դեպքում այդ խնդիրը պետք է լուծվեր պանթուրքիզմի բաղկացուցիչ մասը կազմող թուրքիզմի համատեքստում: Արդեն 1911թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի չորրորդ համագումարի

[1] Гасанова Э.Ю., Идеология буржуазного национализма в Турции. Баку, 1966, стр. 49.

ժամանակ հետևյալ բովանդակությամբ որոշումն էր ընդունվել. «Վաղ թե ուշ պետք է տեղի ունենա կայսրության բոլոր ժողովուրդների օսմանացումը և եթե այն հնարավոր չէ իրականացնել խաղաղ միջոցներով, չպետք է խուսափել բռնի, ընդհուպ մինչև ռազմական միջոցների կիրառումից...»:[1]

Նացիստների պարագայում վերոհիշյալ ձգտումը տարածվելու էր ինչպես բուն Գերմանիայի, այնպես էլ գրավված տարածքների նկատմամբ: Արդեն 1939թ. նոյեմբերին, Լեհաստանի գրավումից անմիջապես հետո, օկուպացված տարածքների նախարարության գլխավոր էքսպերտ Ալֆրեդ Վետցելի կողմից մշակված ծրագրում ասվում էր. «...հարկավոր է միշտ հետևել այն սկզբունքին, համաձայն որի բոլոր վարչական և իրավական միջոցները ծառայեն միմիայն մեկ նպատակի, այն է՝ ոչ գերմանական բնակչության գերմանականացմանը»:[2] Դրա համար, ըստ Ադոլֆ Հիտլերի, անգամ ամբողջ ռասայական միավորների ոչնչացման անհրաժեշտություն պետք է առաջանար:[3] 1939թ. օգոստոսին Օբերզալցբերգում արտասանած ճառում, ուր ակնարկ կար նաև հայերի ոչնչացման վերաբերյալ, Հիտլերն ասել էր. «...Լեհաստանը կմարդազրկվի և կբնակեցվի գերմանացիներով... իսկ այն, ինչ կփորձարկվի Լեհաստանում, այնուհետև կկիրառվի նաև Ռուսաստանում»:[4] Հատկանշական է, որ Թուրքիան թրքացնելու և Գերմանիան գերմանականացնելու ծրագրերի «հիմնավորման» առումով երկու գաղափարախոսությունների մեջ տեղ էին գտել շատ բաներում իրար հիշեցնող այլ ազգայնական հայացքներ:

Երկու աշխարհամարտերին նախորդող վերոհիշյալ ճգնաժամային փուլերում ազգայնականության յուրահատուկ դրսևորում պետք է համարել այսպես կոչված «ժողովրդականության» գաղափարների ծնունդը: Գերմանիայում այն արտահայտվեց «ֆոլկիզմի» իսկ Թուրքիայում՝ «հալքչիլիք» (թուրք. "halk"՝ «ժողովուրդ») շարժումների ձևով: Ընդ որում, այս վերջինը, որ ձուլվեց պանթուրքիզմի մեջ, իր գաղափարներն ակնհայտորեն փոխառել էր գերմանական նախակերպարից, որը հիմք դարձավ նաև նացիոնալ-սոցիալիզմի համար:

Գերմանացի ազգայնականների համար ֆոլկը նշանակում էր մարդկանց որոշակի կատարյալ հանրություն, որը ձուլված է իր բնական միջավայրի հետ և արմատներով գնացել է բնության խորքերը: Այստեղից, ֆոլկի կենսական ուժերը գտնվում են գյուղացիության մեջ, որն առավել մոտ է կանգնած բնությանը: Ֆոլկիստները սրանով արտահայտում էին իրենց անթաքույց թշնամանքը քաղաքի հանդեպ, որն իր գործարաններով, քաղաքային յուրահատուկ կյանքով համարվում էր ոչ մաքուր:[1]

Զարմանալի չէ, որ այս համատեքստում ֆոլկիստների հարձակման առարկա դարձան հրեաները, որոնք գլխավորապես բնակվում էին քաղաքներում (դրա լավագույն դրսևորումներից էին «Բեռլինը հրեաների դոմենն է» հաճախակի դարձած կոչերը[2]): Իսկ այն հանգամանքը, որ հրեան Գերմանիայի տարբեր շրջաններում զբաղվում էր վաշխառությամբ, սկսեց օգտագործվել որպես պախարակման նոր առիթ: Ֆոլկիստական ոգով գրված վեպերում սովորական թեմա դարձավ գերմանացի գյուղացու ունեզրկումը հրեայի կողմից: Այս ժանրի ամենանշանավոր գրքերից էր Վիլհելմ Պոլենցի «Գյուղացին Բյուտներից» վեպը (1895), որից ժամանակին մեծապես ազդվել էր Ադոլֆ Հիտլերը (այստեղ խոսվում էր գերմանացի մի գյուղացու մասին, որը չկարողանալով հետ վերադարձնել պարտքը հրեա վաշխառուին, կորցնում է իր հողը և հուսահատությունից կախվում. հրեան այդ հողի վրա գործարան է կառուցում):[3]

---

[1] Ավագյան Ա., Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», մաս 3, Երևան, 1997, էջ 18:

[2] Поляков Л., История антисемитизма. Эпоха знаний, стр. 440.

[3] Шульмейстер Ю.А., Гитлеризм в истории евреев. Киев, 1990, стр. 50.

[4] Տե՛ս Bardakjian K.B., Hitler and the Armenian Genocide. Cambridge, Massach.: The Zoryan Institute, 1985, p. 6.

[1] Mosse G.L., The Crisis of German Ideology. Intellectual Origins of the Third Reich, New York: Howard Fertig. Inc., 1998, p. 23.

[2] Նույն տեղում, էջ 23:

[3] Նույն տեղում, էջ 27:

Այսպիսով, ֆոլկիստները հրեային նույնացնում էին ինդուստրիալ հասարակության հետ, որն արմատախիլ է անում գյուղացուն, զրկում նրան հողից, պատճառ դառնում նրա մահվան: Սրանից ելնելով՝ ներկայացվում էր գերմանական դժբախտությունների վերացման ֆոլկիստական ճանապարհը. «եթե օձը հեռացվի ծառի արմատներից, ծառը կծաղկի»:[1]

Արդեն աբդուլհամիդյան վարչակարգի տապալման ժամանակաշրջանից Թուրքիայում ևս ծավալվել էր մի շարժում, որը շատ գծերով նման էր գերմանական ֆոլկիզմին և յուրացվեց իթթիհատականների կողմից:

Ազգայնական տրամադրությունների բարձրացման պահին թուրք մտավորականները ևս իրենց հայացքներն ուղղեցին դեպի թուրք գյուղացին՝ ազգի իդեալ գտնելու մտադրությամբ: Դա, մասնավորապես, երևում է պանթուրքիզմի գլխավոր գաղափարախոսներից մեկի՝ Զիա Գեոք Ալփի աշխատանքներում[2] (նա քաջ ծանոթ է եղել գերմանացի հայտնի հակահրեա-ֆոլկիստ պատմաբան Տրոյտչկեի աշխատություններին[3]): Զիա Գեոք Ալփն առաջ էր քաշում այն կարծիքը, թե Թուրքիան իր ուժերը պետք է քաղի Անատոլիայի «կոշտ» գյուղացիությունից, որն աչքի է ընկնում իր կարգապահությամբ, հայրենասիրությամբ, հավատարիմ ոգով և ռազմականությամբ: Ֆոլկիստական գաղափարախոսության օրինակով՝ Գեոք Ալփն իր ստեղծագործություններում որոշակի հակադրություն է մտցնում հասարակ ժողովրդի կամ գյուղացիների (halk) և քաղաքացիների (sehirli) միջև: Հեղինակը գտնում է, որ վերջիններս, կենտրոնացած լինելով քաղաքներում, հիմնակա-

[1] Mosse G.L., նշված աշխ., էջ 28:

[2] Զիա Գեոք Ալփի հայացքների դիտարկումը կայանդրվում է հատկապես այն պատճառով, որ նա եղել է իթթիհատական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ: Ըստ նրա կենսագիր Ուրիել Հեյդի՝ Գեոք Ալփը կոմիտեի շրջանակներում զբաղվել է կայսրության ազգային (հատկապես հայկական) խնդիրներով, և նրա առաջարկությունների զգալի մասն ընդունվել է կուսակցության կողմից և ի կատար ածվել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: (Heyd U., The Foundations of Turkish Nationalism. London: The Harvil Press Ltd, 1950, p. 36.)

[3] Heyd U., նշված աշխ., էջ 159:

նում օտար ծագում ունեն և չթաքնված արհամարհանքով են նայում գավառներում ապրողների վրա:[1]

Կոչ անելով թուրք մտավորականությանը հոգ տանել թուրքական գյուղի մասին՝ Գեոք Ալփը նաև շեշտում է այդ նույն գյուղը վաշխառուների, կապալառուների, ամենակուլ առևտրականների ձեռքից փրկելու անհրաժեշտությունը:[2] Պարզ է, որ այս իմաստով, ի թիվս այլ ժողովուրդների, հարձակման են ենթարկվում նաև հայերը: Օրինակ՝ Թուրքիայի քաղաքներում գործող հայկական դրամատները, որոնք որոշակի գործարքներ էին կատարում նաև մահմեդական գյուղացիների հետ, թուրք ազգայնական մամուլում սկսում են ստանալ «տզրուկ», «դավաճան» պիտակները:[3]

Վերոհիշյալ հարցում թուրք գաղափարախոսների վերաբերմունքում ակնհայտորեն նշմարվում են գերմանացի գործիչների ազդեցության արձագանքները: Գերմանացի պատմաբան Հիլմար Կայզերը նշում է այն մարդկանց անունները, որոնք մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանում օգնել են Գերմանիայում և հետևաբար՝ Թուրքիայում հակահայկական տրամադրությունների ձևավորմանը: Օրինակ՝ նրանցից Ալբերտ Վիրսը՝ հակահրեական պանգերմանական լիգայի առաջատար դեմքերից մեկը, ասում էր, որ հայերը «ծծում են թուրք գյուղացիության արյունը... Նրանք շահագործում են նաև Կովկասի գերմանացի գաղութաբնակներին»:[4]

[1] Heyd U., նշված աշխ., էջ 76:

[2] Նույն տեղում, էջ 140:

[3] Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 82:

[4] Kaiser H., Imperialism, Racism, and Development Theories. The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians, Ann Arbor, Mich.: Gomidas Institute, 1997, p. 18.

Հետաքրքիր են նաև գերմանական ֆաշիզմի հիմնադիրներից մեկի՝ հակահրեա հեղինակ Հյուստոն Չեմբերլենի հայացքները հայերի վերաբերյալ: Նրա՝ XX դարի սկզբին լույս տեսած «Հրեաները, նրանց առաջացումը և Եվրոպայում նրանց ազդեցության պատճառները» աշխատությունում կարելի է հանդիպել հետևյալ տողերին. «...Այսօրվա սիրիացուն, հրեային և հային միայն դժվարությամբ կարելի է տարբերել իրարից, ինչը հեշտությամբ բացատրվում է այն հանգամանքով, որ այդ ժողովուրդների նախաարմատ-ցեղից ծառանգված գծերը շարունակում են գերակշռել նրանց ա-

Այս ամենից կարելի է ենթադրություն անել, որ թուրք ազգայնականների շրջանում ևս կարող էր առաջանալ «օձը ծառի արմատներից հեռացնելու» մտադրությունը:[1]

Հայերի և հրեաների հանդեպ խնդրո առարկա գաղափարախոսությունների վերաբերմունքը պարզաբանելիս հարկ է հաշվի առնել նաև տնտեսական ծայրահեղ հայացքների խնդիրը:

Երիտթուրքերի կողմից երկրպագվող թուրքիզմի անբաժան մաս պետք է համարել զուտ թուրքական տնտեսական

ռանձնահատկությունների նկատմամբ»: (Чамберлен Г.С., Евреи, их происхождение и причины их влияния в Европе. С.-Петербург, 1910, стр. 62.) Մեկ այլ տեղ հեղինակը գրում է. «...Հայերը խեթերից, որպես ժառանգություն, բացի հրեական քթից ստացել են նաև հրեայի նույն ագահությունը, գործարարի նույն խորամանկությունը, վաշխառության նկատմամբ ունեցած նույն կիրքը՝ միայն թե ավելի մեծ չափով: Արևելքում ընդունված է ասել՝ մեկ հայը երեք հրեա արժե»: (Նույն տեղում, էջ 117:)

. Մի փոքր շեղվելով թեմայից՝ նշենք, որ գերմանացիների այսպիսի վերաբերմունքը, այսինքն՝ հայերին հրեաների հետ նույնացնելու միտումը, պետք է իրեն զգացնել տար նաև Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Այսպես, 1943թ. հունիսին Բուլղարիայում Գերմանիայի արտգործնախարարության ներկայացուցիչ Բեկկերլեն, չկարողանալով համաձայնության գալ տեղի իշխանությունների հետ բուլղարական հրեաների արտաքսման հարցում, իր նախարարությանն ուղղված զեկուցագրում գրում էր. «Բուլղարացիներն այնքան երկար են ապրել այնպիսի ժողովուրդների հետ ինչպիսիք են հայերը, հույները և գնչուները, որ պարզապես ի վիճակի չեն գնահատել հրեական խնդիրը»: (Hilberg R., նշված աշխ., էջ 483:) 1947թ., Հարավային Ռուսաստանում հրեաների ոչնչացմամբ զբաղվող հատուկ ջոկատներից մեկի հրամանատար Բիքերշտայնի հարցաքննության ժամանակ վերջինս ասել էր, թե իրեն տեղեկացրել էին այն մասին, որ բոլոր այն վայրերում, ուր հայեր են ապրում, այնտեղ շատ հրեաներ չկան: (Նույն տեղում, էջ 661:)

[1] Թուրք ազգայնական շրջաններում տիրող տրամադրությունների որոշակի արտահայտություն են պարունակում Գեոք Ալփի մտքերը: Նրա՝ 1920թ. Անկարայում լույս տեսած «Թուրքիզմի սկզբունքները» գրքում կարելի է կարդալ հետևյալ տողերը. «Մյուս էթնիկ խմբերը լրեցին օսմանյան հասարակությունը որպես կրթված, քաղաքակիրթ և հարուստ հանրություններ, մինչդեռ թշվառ թուրքերին որպես ժառանգություն մնաց միայն մի կոտրած քուր և մի արոր»: (Gokalp Ziya, The Principles of Turkism. Leiden: E.J. Brill, 1968, p. 58.) Մեկ այլ տեղ հեղինակը նշում է, որ դարերի ընթացքում ոչ մահմեդական ժողովուրդները հանդիսացել են թուրքերի տնտեսական մակարույծները:(Նույն տեղում, էջ 65:)

համակարգ ստեղծելու ազգայնական ծրագիրը: Ամերիկահայ պատմաբան Ս.Աստուրյանի կարծիքով, «միլլի իքթիսաթի» («ազգային տնտեսություն») գաղափարը թուրքերը փոխառել էին գերմանացի ազգայնական Ֆրիդրիխ Լիստի հայացքներից[1] (նրա ազդեցությունն անժխտելի է նաև նացիոնալ-սոցիալիզմի պանգերմանական գաղափարների ձևավորման վրա): «Ազգային տնտեսությունը» օսմանյան համատեքստում ստացել էր հետևյալ իմաստը. ձերբազատվել կայսերական տնտեսության «մակաբույծ» ոչ թուրքական տարրերից և ստեղծել օրգանական թուրքական բուրժուազիա, որը կայսրությունը կտաներ դեպի տնտեսական առաջադիմություն:[2]

Այս միտումը հստակ նկարագրված է Թեքին Ալփի «Թուրքական և պանթուրքական իդեալը» գրքում: Հեղինակը նշում է, որ պատերազմից առաջ ծայր առած ազգայնական շարժման հետևանքով սկսեցին բոյկոտի ենթարկվել հայերի, հույների և այլ ազգության գործարարների ապրանքները: Այդ քաղաքականությունը ջերմորեն խրախուսվում էր ազգայնական մամուլի և կառավարության կողմից, որի հետևանքով հարյուրավոր հայ և հույն առևտրականներ կործանվեցին:[3] Համեմատաբար խաղաղ միջոցների կողքին, հայերի հանդեպ սկսեց կիրառվել նաև հարձակումների և թալանի քաղաքականությունը, որն իր գագաթնակետին հասավ ցեղասպանության ժամանակ «բռնի հավասարում» կարգախոսի ներքո[4] (պատահական չէ, որ պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի դեսպան

[1] Kaiser H., Imperialism,.... In the foreword by Stephan H. Astourian, p. ix. Տե՛ս նաև Gokalp Ziya, նշված աշխ., էջեր 55-56:

[2] Տե՛ս Astourian S.H., "Modern Turkish Identity and the Armenian Genocide. From Prejudice to Racist Nationalism". In *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide.* Edited by Richard G. Hovannisian, Detroit, Mich.: Wayne State University Press, 1999, pp. 35-41.

[3] Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal. London:Liberty Press, 1917, pp. 37-39.

[4] Զարևանդ, նշված աշխ., էջ 83:

Անգամ Զիա Գեոք Ալփն իր վերոհիշյալ աշխատությունում նշում է, որ համաշխարհային պատերազմն ընդհատեց «ազգային տնտեսության» տեսաբանների մտավոր ուսումնասիրությունները և հանգեցրեց այդ ծրագրի պրակտիկ իրագործմանը: (Gokalp Ziya, նշված աշխ., էջ 56:)

Մորգենթաուի հետ զրույցում Թալեաթը ասել էր, թե հայերը հարստացել են թուրքերի հաշվին[1]):

Նացիոնալ-սոցիալիզմը ևս ապագա ռայխի կյանքը չէր պատկերացնում գերմանական աշխատավորի «արյունը խմող» հրեական գործարար տարրի հետ միասին:[2] Դրա վառ ապացույցը 1933-1939թթ. և ողջ պատերազմի ընթացքում Գերմանիայի և օկուպացված երկրների հրեաների նկատմամբ իրականացված քաղաքականությունն էր, որը դրսևորվեց տնտեսության «արիականացմամբ»: Այս քաղաքականությունը ենթադրում էր բոլոր հրեական մասնավոր ձեռնարկությունների, կազմակերպությունների անցումը գերմանացիների ձեռքը:[3] Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը նացիստներին հիմնականում հաջողվեց իրականացնել այդ ծրագիրը. «կամավոր» և բռնի եղանակներով հրեա սեփականատերերը հաճախ ծիծաղելի գներով վաճառեցին իրենց ունեցվածքը: Ճնշման տակ մանր և միջին ձեռնարկատերերի կողքին այդպես վարվեցին նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում արդյունահանմամբ զբաղվող Ռոտշիլդների, Վայնմանների, Պետսչեկների հրեական խոշոր ընտանիքները:[4]

Պանթուրքիստների և նացիստների վերոհիշյալ հայացքները զգալի դեր պետք է կատարեին «Թուրքիան թրքացնելու» և «Գերմանիան գերմանականացնելու» ծրագրերի արդարացման համատեքստում: Դրանք, անկասկած, կարելի է դասել ազգայնական գաղափարների ոլորտը: Սակայն, պանթուրքիզմին և նացիոնալ-սոցիալիզմին հատուկ այսպիսի նեղ ազգայնականությունը, որպես կանոն, հաղթահարվում էր ավելի ծայրահեղական բնույթ ունեցող ռասիստական հայացքներով:

[1] Morgenthau H., Ambassador Morgenthau`s Story. New York: Doubleday, Page & Co., 1918, p. 337.

[2] Նացիստ գաղափարախոսներն անգամ տեսություն էին մշակել «թալանչիական» և «ստեղծագործ» կապիտալների գոյության մասին: Ըստ վերջինի, հրեաների հետ նույնացվող «չար» և «շահագործող» բանկային և առևտրական կապիտալը հակադրվում էր արիացիների «բարի» արդյունաբերական կապիտալին: (Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 6:)

[3] Hilberg R., նշված աշխ., էջ 60:

[4] Նույն տեղում, էջ 66:

Իմիջիայլոց, պատերազմի ընթացքում Ռումինիայի ֆաշիստական իշխանությունները, հետևելով իրենց դաշնակից Գերմանիայի օրինակին, սկսեցին իրականացնել սեփական տնտեսության «ռումինիզացիան», որի հետևանքները տարածվեցին ինչպես հրեաների, այնպես էլ հայերի և հույների նկատմամբ: (Նույն տեղում, էջ 489:)

Թեև թուրք գաղափարախոսների դավանած ռասիզմը աչքի չէր ընկնում այն «կուռ» կառուցվածքով, որը հատուկ էր նացիստական ռասիզմին,[1] այնուամենայնիվ, պանթուրքիզմն ու նացիոնալ-սոցիալիզմն այստեղ ևս շփման ընդհանուր եզրեր ունեն: Սրա պատճառը, թերևս, այն է, որ և՛ թուրք, և՛ գերմանացի մտավորականներն իրենց հայացքները հարստացրել էին միևնույն գաղափարական ակունքներից:

Եվրոպական ռասիզմի հայր իրավամբ կարելի է համարել XIX դարի կեսերի ֆրանսիացի դիվանագետ Արթուր դը Գոբինոյին: Վերջինիս հայացքները մեծ տարածում էին ստացել Եվրոպայի տարբեր երկրներում և հատկապես՝ Գերմանիայում: Ամենայն հավանականությամբ, հենց այստեղից էր, որ գերմանական մտքի կողմից հարստացված այդ գաղափարներն անցան Թուրքիա, իսկ ավելի ուշ՝ քաղաքական կիրառում գտան բուն Գերմանիայում: Բանն այն է, որ ռասիստական գաղափարները XIX դարի վերջի - XX դարի սկզբի Գերմանիայում տարածում էին գտնում հիմնականում պանգերմանական շարժումներում, իսկ պանթուրքիստ մտածողները, ինչպես Գեոք Ալփը, Աքչուրան և այլոք, քաջ ծանոթ էին պանգերմանական շարժման առաջնորդների աշխատանքներին: Բացառված չէ, որ ֆրանսիացի Գոբինոյի գաղափարներն իրենց հետ Թուրքիա բերած լինեին նաև «Իթթիհատ վե թերաքքի»-ի փարիզյան մասնաճյուղի անդամները:[2]

[1] Սա բնական էր, քանի որ XX դարի սկզբին թուրքական քաղաքային միջավայրում նոր-նոր տեղի էր ունենում ազգային ինքնագիտակցության արթնացում դարերի պատմություն ունեցող կրոնականի փոխարեն. այս պատճառով ռասիստական գաղափարները չէին կարող ձևավորման երկար պատմություն անցած լինել և լայն ընդունելություն գտնել Թուրքիայում: Մինչդեռ նացիստները տասնամյակների ընթացքում մշակված ռասիստական գաղափարները հեշտությամբ կարող էին տարածել արդեն խոր ազգային ինքնագիտակցություն ունեցող գերմանական հասարակության մեջ:

[2] Թուրք հետազոտող Թաներ Աքչամը գրում է, որ պանթուրքիզմի վաղ

Հենց սկզբից նշենք այն տարբերությունների մասին, որոնք տեղ պետք է գտնեին գերմանացի և թուրք գաղափարախոսների հայացքներում՝ ռասա երևույթը սահմանելիս: Գերմանացիների համար ռասաները դասակարգվում էին ըստ մարդաբանական և մշակութային, մասնավորապես՝ լեզվաբանական տվյալների: Ընդ որում, առաջին տեղում էին մարդաբանական հատկանիշները: Մասնավորապես, հենվելով Տակիտոսի «Գերմանիա» աշխատության տվյալների վրա՝ նացիստ գաղափարախոսները (Ռոզենբերգ, Գյունտեր) «նորդիկական» ռասայի (թեև գիտականորեն նման ռասա գոյություն չունի) ֆիզիկական իդեալ դարձրեցին բարձրահասակ, ձվաձև դեմքով, շեկ մազերով, կապույտ լայն բացված աչքերով, սպիտակ մաշկով, նեղ քթով մարդուն:[1] Հենվելով Կանտի կողմից առաջ քաշած այն գաղափարի վրա, ըստ որի աշխարհագրականորեն պայմանավորված ռասայական առանձնահատկություններն ուղեկցվում են «ներքին կենսական ուժով», ռասիստ մտածողներն առաջ քաշեցին այն դրույթը, թե գերմանացիների արտաքին հատկանիշները պայմանավորում են նրանց բարձր և բացառիկ ներքին հոգին:[2]

Այս հարցում մի փոքր այլ մոտեցում պետք է ցուցաբերեին պանթուրքիստները: Նրանք հասկանում էին, որ «թուրանական ռասայի» մարդաբանական հատկանիշները սահմանելու համար պատմությանը չարժեր անդրադառնալ. XX դարի օսմանյան թուրքերն իրենց մարդաբանական տվյալներով վաղուց նման չէին այն ցեղերին, որոնք նվաճել էին Փոքր Ասիան (այդ դեպքում նրանց համար դժվար կլիներ արտաքին հատկանիշների նմանություններ գտնել նաև միջինասիական թրքախոս ժողովուրդների հետ): Այստեղ օգնության է գալիս թուրք գաղափարախոսների հնարամտությունը: Նրանք ռասան բնորոշելիս հիմնականում շեշտը դնում են մշակույթի վրա: Այսպես, Գեոք Ալփը գտնում է, որ արենակցությունը, գանգի ձևը, մազի և աչքի գույնը քիչ դեր են խաղում մարդկային ցեղը բնորոշելու համար. դրա փոխարեն՝ ժողովրդի ներքին կապը իրականացվում է մշակույթի միջոցով:[1]

Այնուամենայնիվ, պանթուրքիստները՝ գերմանացի գաղափարակիցների օրինակով, որոշեցին ստեղծել «թուրանական մարդու» իրենց սեփական իդեալը: Այդ պատճառով, նշում է Զարևանդը, որոշվեց թուրքի մեջ վերակենդանացնել ժուժկալության, առողջության և մարմնական զորության իդեալները, որոնք կորսվել էին անդադար պատերազմների և մեղմ կլիմայի ու հանդարտ կյանքի ազդեցությամբ:[2] Դրա ապացույցն Առաջին աշխարհամարտից առաջ ստեղծված չափահասների «Թուրք գյուջու» («Թուրքական ուժ») և պատանիների «Իզջի» («Արահետ գտնող») կազմակերպություններն էին (այս վերջինը, որի ղեկավարը ռազմական մինիստր Էնվերն էր, իր անունը և ծրագիրը փոխառել էր գերմանական համանուն "Pfadfinder" («Արահետ գտնող») շարժումից):[3]

Հատկանշական է, որ երկու գաղափարախոսությունների ներկայացուցիչներն էլ ակտիվորեն գովաբանում էին սեփական «ռասաները»: Այսպես, գերմանացի ազգայնամոլ գործիչներն առաջ էին քաշում «արիական ռասայի»՝ մաքուր և մնացած բոլոր ռասաներից բարձր լինելու գաղափարը: Եթե սկզբնական շրջանում «արիացիների» շարքին դասվում էին համեմատաբար մեծ թվով ժողովուրդներ (օրինակ՝ անգլիացիները), ապա արդեն նացիոնալ-սոցիալիստները «բարձրագույն արիականությունը» ներկայացնում էին որպես զուտ գերմանական առանձնաշնորհ.[4] գերմանացիներին մյուս՝ ավելի ցածր

գաղափարախոսները հպարտությամբ նշում էին, թե իրենց հոգևոր հայրերից մեկը հանդիսացել ռասիզմի հանրահայտ գաղափարախոս Գոբինոն: (Акчам Т., Турецкое национальное "я" и армянский вопрос. Москва: "Арио-Никс", 1995, стр. 26.)

[1] Brady R. A., The Spirit and Structure of German Fascism, London: Victor Gollancz Ltd, 1937, p. 187.

[2] Mosse G.L., նշված աշխ., էջ 89:

[1] Զարևանդ, նշված աշխ., էջ 56:

[2] Նույն տեղում, էջ 80:

[3] Նույն տեղում:

[4] Այստեղ հարկ է շեշտել այն հանգամանքը, որ ի տարբերություն պանթուրքիզմի, նացիստները խիստ ծայրահեղ դիրքորոշում ունեին իրենց «ռասայական» մաքրության պահպանման խնդրի վերաբերյալ՝ բացառելով «արիացիների» մեջ որևէ այլ ժողովրդի, հատկապես՝ հրեաների ձուլման հնարավորությունը: Մինչդեռ Թուրքիայում, ինչպես նախկինում, այնպես էլ Առա-

«արիացիներից» տարբերակելու համար ընտրվեց ռասայական ինքնանվանման «նորդիկական արիացիներ» ձևը:[1]

Դեռ գերմանական վաղ ռասիզմի ներկայացուցիչներից մեկը՝ Լյուդվիգ Վոլտմանը, որի առավել ծայրահեղ հայացքները հետագայում կլանվեցին նացիզմի կողմից,[2] գրում էր, որ մարդկության ամենաակնառու տաղանդները գերմանական կամ վերջինիս հետ խառնուրդ ռասայի ներկայացուցիչներ են եղել:[3] Ողջ եվրոպական քաղաքակրթությունը հանդիսացել է գերմանական ռասայի արտադրանք. պապական իշխանությունը, Վերածննդի դարաշրջանը, ֆրանսիական հեղափոխությունը և Նապոլեոնի համաշխարհային տիրապետությունը գերմանական ոգու դրսևորումներ են եղել: Ըստ Վոլտմանի, ապացուցված փաստ է, որ բոլոր հզոր երկրների իշխող շրջաններում գերակշռում է մաքուր կամ խառնուրդ գերմանական արյունը:[4]

Դիմելով վաղ գերմանական ռասիստների օրինակին՝ պանթուրքիստ մտավորականներն սկսեցին բարձրացնել իրենց սեփական «ռասան»: Վերջինս, ըստ Զիա Գեոք Ալփի, կոչվում էր «ուրալ-ալթայան», որի մի մասն էլ օսմանյան

ջին աշխարհամարտի տարիներին, իթթիհատական իշխանությունների իմացությամբ թուրք ընտանիքները որդեգրում էին հայ երեխաների, հայ աղջիկները և կանայք կնության էին վերցվում թուրք տղամարդկանց կողմից: Այնուամենայնիվ, ավելորդ չէ նշել, որ դեռ 1910թ. թուրքական պառլամենտում առաջարկություն էր արվել օրենք ընդունել, որով «թուրք-արիացիներին» կարգելվեր ամուսնությունն այլ ազգերի ներկայացուցիչների հետ: (Киракосян Дж.С., Младотурки перед судом истории. Ереван, 1986, стр. 124.)

[1] Hirschmann I.A., "The Degradation of Culture", in *Nazism: An Assault on Civilization*, New York, 1934, p. 91.

[2] Mosse G.L., նշված աշխ., էջ 103:

[3] Вольтман Л., Политическая антропология. Исследование о влиянии эволюционной теории на учение о политическом развитии народов. С.-Петербург, 1905, стр. 263.

[4] Вольтман Л., նշված աշխ., էջ 302:

Գերմանական ռասիզմի մեկ այլ հիմնադիր՝ Հյուստոն Չեմբերլենը, անգամ պնդում էր, որ Հիսուս Քրիստոսն է արիական ծագում ունեցել: (Shirer W.L., The Rise and Fall of the Third Reich, New York: Crest Book, 1960, pp. 155-156.)

թուրքերն են:[1] Իսկ Գեոք Ալփի գաղափարակիցները պնդում էին, թե «թյուրք-թուրանյան ռասան» Արևելքի, գուցե նաև ամբողջ մարդկության համար էներգիայի աղբյուր է դարձել: Պանթուրքիստական գաղափարները տարածող «Թյուրք յուրդու» («Թուրքական օջախ») հանդեսում անգամ խմբագրական հոդված տպագրվեց, որտեղ ասվում էր, թե աշխարհի բոլոր առաջնորդները սերում են երկու ազգերից՝ թուրքերից և գերմանացիներից: Այսպես, Թունիսից մինչև Յեմեն, Իրան, Հնդկաչին, Ղրիմ, Աֆղանստան և ավելի հեռու, տիրակալները թյուրքական ծագում ունեն, իսկ Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների առաջնորդները գերմանացիներ են:[2] Նույն թերթում Ահմեդ Աղաևը գրում էր, որ բացառությամբ ճապոնացիների, թյուրքերը Ասիայի ամենաառաջավոր և մշակութապես զարգացած ժողովուրդն են, նաև ավելացնում, թե «ո՛չ Կովկասի հայերը, ո՛չ էլ Կազանի ռուսները չեն կարող հավասարվել թյուրք առևտրականներին և վարպետներին»:[3]

Պետք է նշել, որ գերմանացի և թուրք գաղափարախոսների կողմից իրենց «ռասաների» գովերգումը ինքնանպատակ չէր: Այն պարզապես հիմքեր էր նախապատրաստում հետագա անհեթեթ հավակնությունների համար:

Պանթուրքիզմը և նացիոնալ-սոցիալիզմն առավելապես համընկնում են «սոցիալական դարվինիզմի» նկատմամբ տածած համակրելի վերաբերմունքով: Այս ուղղության ներկայացուցիչներ Հ.Սպենսերը (հիմնադիր), Հ. Չեմբերլենը, Ժ. դը Լապուժը, Օ. Կոնտը և ուրիշներ, Չարլզ Դարվինի «գոյության պայքարի» և «բնական ընտրության» կենսաբանական օրենքներն անհիմն կերպով փոխադրում էին մարդկային հասարակության տարբեր խմբերի վրա: Այս պատճառով է, որ պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի համատեքստերում «սոցիալական դարվինիզմի» գաղափարները ձեռք բերեցին մյուս ժողովուրդներին նվաճելու և ոչնչացնելու բովանդակություն:

[1] Гасанова Э.Ю., նշված աշխ., էջ 141:

[2] Նույն տեղում, էջ 133:

[3] Նույն տեղում, էջ 137:

Դեռ Գոբինոն պնդում էր, որ նվաճումների ձգտումը արիացիների բնավորության հատուկ գիծն է, որի միջոցով նրանք բարձր են կանգնած մյուս նվաճված ռասաներից:[1] Լյուդվիգ Վոլտմանը, հետևելով վերոհիշյալ տեսությանը, իր «Քաղաքական մարդաբանություն» աշխատությունում գրում է, որ օրգանական տեսակների զարգացման նախադրյալներ են հանդիսանում այդ տեսակների թվաքանակի արագ աճը և սննդի, բազմացման ու տիրապետության համար մղվող թեժ պայքարը: Զարգացման այդ օրենքը, ըստ հեղինակի, իրական է ինչպես կենդանական և բուսական աշխարհների, այնպես էլ մարդկային ռասաների համար:[2] Տեսական հիմնավորումից հետո Վոլտմանը եզրահանգում է, որ «գերմանական ռասան կոչված է ողջ երկրագնդի վրա իր տիրապետությունը տարածելու, բնության բարիքները և աշխատուժն օգտագործելու և պասիվ ռասաներին որպես ծառաներ օգտագործելու համար»:[3] Հ.Չեմբերլենը ևս գտնում էր, որ գերմանացիներն իրավունք ունեն տիրելու աշխարհին:[4]

Այս իմաստով հետաքրքիր են նաև նացիզմի բարձրագույն ղեկավարության մտքերը: 1939թ. Ադոլֆ Հիտլերը վերմախտի հրամանատարությանն ուղղված իր ճառում ասել էր. «...Ողջ կենդանի աշխարհի ճակատագիրը ես տեսնում եմ պայքարի մեջ: Որևէ մեկը չի կարող խուսափել պայքարից, եթե ուզում է ապրել... Եթե որևէ ժողովուրդ հրաժարվի պայքարից, այն աստիճանաբար կոչնչանա»:[5] ՍՍ-ի ղեկավար Հայնրիխ Հիմլերը պատերազմի ժամանակ Մինսկ կատարած այցի ընթացքում ներկա էր գտնվել հրեաների զանգվածային գնդակահարություններից մեկին, որից հետո մարդասպանների առջև ոգևորիչ ճառ արտասանել: Նա, մասնավորապես, կոչ էր արել նայել բնությանը, որտեղ, ինչպես և մարդկային հասարակությունում, պատերազմ է ընթանում բույսերի և կենդանիների միջև, ավելացնելով, որ բոլոր նրանք, ովքեր հոգնել են պայքարից դատապարտված են անէացման:[1]

Այն, որ «սոցիալական դարվինիզմի» հայացքները տարածված են եղել նաև պանթուրքիստների շրջանում, երևում է մի շարք փաստերից: Այսպես, Տրապիզոնի թեմի առաջնորդ Հովհաննես Արք. Նազլյանն իր հուշերում գրում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության օրգան «Հիլալը Ահմէտ» օրաթերթը քարոզում էր մի շարք գաղափարներ, որոնք ներկայացվում էին կեղծ գիտական տարազով: Դրանցից մի քանիսը, մասնավորապես, հետևյալ իմաստն ունեին. «Ըստ բնության օրենքներում, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերում կերն ըլլան: Պատերազմը ուժի վարչաձևն է, և կգտնուի իշխող ցեղերում անկաշկանդ տրամադրության տակ անձնապաշտպանության համար՝ հանդեպ տկարներու, որոնք պարտավոր են կրելու անոր հետևանքները, որչափ ալ աղետալի ըլլան անոնք իրենց համար»:[2]

Նույն հեղինակը գրում է, որ իթթիհատականներն իրենց հայտարարում էին ֆրանսիացի փիլիսոփա Օգյուստ Կոնտի

[1] Mosse G.L., նշված աշխ., էջ 90:
[2] Вольтман Л., նշված աշխ., էջ 151:
[3] Նույն տեղում, էջ 307:
[4] Shirer W.L., նշված աշխ., էջ 156:
[5] Нюрнбергский процесс. Сборник материалов в 8-ми томах, Под общ. редакцией М.Ю. Рагинского. Том 2, Москва, 1988, стр. 243.

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 219:

Այստեղ արժանի է հիշատակել նացիզմի այն առանձնահատկության մասին, որը հատկապես շեշտվում է երկու ցեղասպանությունները համադրող հրեա գիտնականների կողմից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն պնդմանը, համաձայն որի հրեաները գերմանական ֆաշիստների աշխարհայացքում սահմանված ռասայական թշնամիների շարքում գտնվում էին առաջին տեղում, և պետք է ենթարկվեին ոչնչացման աշխարհի բոլոր անկյուններում, ինչը, ըստ հրեա ուսումնասիրողների, չի կարելի ասել հայերի նկատմամբ պանթուրքիստների մոտեցման վերաբերյալ: (Մանրամասն տե՛ս Melson R., Revolution and Genocide..., pp. 250-251. Սահակյան Ռ.Գ., Սաֆրաստյան Ռ.Ա., Միջազգային գիտաժողով նվիրված հայոց ցեղասպանության 80-ամյակին,- «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 1999, Համար 1, էջ 72:)

[2] Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը Մերձավոր Արևելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրոնական դէպքերուն մասին, Ա. հատոր, թարմանեց ի ֆրանսերենէ դոկտ. Հ.Ստեփանեան, Պեյրութ, 1960, էջ 11:

գաղափարների հետևորդներ:[1] Ըստ երևույթին, վերջինիս հայացքներից թուրքերը յուրացրել էին նաև այն դրույթը, ըստ որի կենդանի բնության մեջ մղվող «գոյության պայքարի» սկզբունքները փոխադրելի են մարդկային հասարակության վրա:

Իմիջիայլոց, Մեվլան Զաղե Ռիֆաթի գրքում ևս (թեև որոշ մասնագետներ թերահավատորեն են վերաբերվում դրան) տեղեկություններ կան, համաձայն որոնց երիտթուրք պարագլուխները հետևել են «սոցիալական դարվինիզմի» գաղափարներին: Օրինակ՝ գրքում հեղինակը ներկայացնում է Իթթիհատի կենտրոնական կոմիտեի հատուկ նիստերից մեկը, որտեղ հայերին ոչնչացնելու ծրագիրը հիմնավորելիս դոկտոր Նազիմն այն միտքն է հայտնում, թե բոլոր կենդանիները և բույսերն ուտում են իրար և սեփական կյանքը երկարացնում միմյանց բնաջնջելու միջոցով:[2]

Հատկանշական է, որ և՛ պանթուրքիզմը, և՛ նացիոնալ-սոցիալիզմը «սոցիալական դարվինիզմի» անբաժան մասն էին դարձնում ուժի, բռնության, դաժանության գովերգումը: Օրինակ՝ հայտնի է, որ պատերազմից անմիջապես առաջ թուրքական դպրոցների աշակերտներին սովորեցնում էին հետևյալ բնույթի երգեր. «Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Եկեք սպանե՛նք, եկեք պատառ-պատառ անե՛նք: Եկեք արյան ծովու՛մ լողանք: Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ»:[3] Նույն ոգին է պարունակում նաև Ադոլֆ Հիտլերի արտահայտած միտքը պատանիների դաստիարակության մասին. «Ինձ հարկավոր է երիտասարդություն, որը ծարավ է բռնության, իշխելու, որը չի վախենում ոչնչից...Ազատ և գիշատիչ գազան պետք է երևա նրա աչքերում...»:[4]

Այս առումով հետաքրքիր է Վահագն Դադրյանի դի-

[1] Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը..., էջ 10: Տե՛ս նաև Սիմոնյան Հր.Ռ., նշված աշխ., էջեր 269, 280-281:
[2] Ռիֆաթ Մեվլան Զաղե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 98:
[3] United States Official Documents on tne Armenian Genocide. Compiled and Introduced by Ara Sarafian, Volume II, Watertown: The Arm. Review Inc., 1994, p.105.
[4] Мельников Д., Черная Л., Преступник номер 1. Нацистский режим и его фюрер, Москва, 1991, стр. 23.

տարկումը, ըստ որի, երկու գաղափարախոսություններն էլ առանձնակի բարձր տեղ էին հատկացնում իր դաժանությամբ աչքի ընկած պատմական այնպիսի անձի գովերգմանը, ինչպիսին էր Չինգիզ խանը:[1]

Պետք է ասել, որ ինչպես պանթուրքիստները, այնպես էլ նացիստները հաճախ դիմում էին նաև իրենց պատմական անցյալի գովաբանմանը՝ հակադրելով այն սեփական ժողովուրդների ներկա անմխիթար վիճակին և միաժամանակ փորձելով այդ անցյալում ոգեշնչման աղբյուր գտնել հետագա գործողությունների համար: Թուրք ազգայնական հեղինակները և գործիչները, օրինակ, վկայակոչում էին Օղուզի, Աթիլլայի, Լենկթեմուրի, Մեհմեդ Ֆաթիհ և Սուլեյման սուլթանների ժամանակները, նրանց նվաճումները և գործերը:[2] Գերմանական ֆաշիստների դեպքում, ոգեշնչման աղբյուր էր հանդիսանում «Գերմանական ազգի Հռոմեական սրբազան կայսրության» պատմությունը: Պատահական չէ, որ նացիստների կողմից ապագայում ստեղծվելիք հսկայական կայսրությանը տրվում էր «Երրորդ ռայխ» կամ «Հազարամյա ռայխ» անվանումը՝ ի նշանավորումն նախկին պատմական փառքի շարունակականության[3] (Խորհրդային Միության վրա հարձակման ծրագիրը գերմանացիներն անվանել էին «Բարբարոսա»՝ XII դարի գերմանական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի անունով):

Եթե սեփական «ռասայի» գովերգումը հիմնավորելու էր մյուս ազգերին նվաճելու, հպատակեցնելու, ոչնչացնելու անհրաժեշտությունը, ապա այս վերջինը հիմք պետք է ծառայեր ավելի հեռու գնացող ծրագրերի ձևակերպման համար: Պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի ազգայնական-ռասայական հայացքների բնական շարունակությունն պետք է համարել տարածապաշտական գաղափարները՝ պանթուրքականու-

[1] Տե՛ս Dadrian Vahakn N., "The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice". In *The Yale Journal of International Law*, Summer 1998, Volume 23, Numb. 2, pp. 543-547.
[2] Տե՛ս Զարևանդ, նշված աշխ., էջեր 42, 63, 65-67, 90:
[3] Տե՛ս Бурдерон Р., Фашизм: идеология и практика. Москва, 1983, стр. 57.

թյան կամ պանթուրանականության և պանգերմանականության տեսքով:

Ըստ պատմաբանների, նացիոնալ-սոցիալիզմի հայացքների համակարգում, անկասկած, կարևոր տեղ են զբաղեցնում «ծավալապաշտության» գաղափարները: Ընդ որում, այս գաղափարները նոր չէին և ծնունդ էին առել դեռ XIX դարի ընթացքում: Ադոլֆ Հիտլերը պանգերմանական շարժումից անվերապահորեն սեփականացրել էր առնվազն երեք սկզբունք՝ մայրցամաքային Եվրոպայում գերիշխանության հաստատում, գերմաներեն խոսող բոլոր ժողովուրդների միավորում և Գերմանիայի գաղութային տարածքների ընդլայնում:[1]

Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության ծրագրի առաջին կետում, մասնավորապես, ասվում էր. «Մենք պահանջում ենք բոլոր գերմանացիների միավորումը մեծ Գերմանիայի մեջ...»:[2] Այս հայտարարությունը նախ և առաջ նկատի ուներ «ռասայապես մաքուր» այն 15 միլիոն գերմանախոսներին, որոնք ապրում էին Գերմանիայից դուրս՝ Ավստրիայում, Բալթիկայի շրջանում, Չեխոսլովակիայում և Շվեյցարիայում:

Երկրորդ փուլով առաջարկվում էր Երրորդ ռայխի մեջ ընդգրկել «նորդիկական ռասային» պատկանող շուրջ 25 միլիոն մարդկանց, որոնք ապրում էին Գերմանիայի հարակից երկրներում՝ Հոլանդիայում, Բելգիայում, Սկանդինավյան թերակղզու երկրներում: Այսպիսով, իրականանալու էր Ալֆրեդ Ռոզենբերգի երազանքը՝ «Գերմանիան՝ Ալպերից մինչև Ուպսալա»:[3]

Այս երկու համեմատաբար «անվնաս» փուլերին հետևելու էր երրորդը, որտեղ և դրսևորվելու էր ֆաշիստական ծավալապաշտության ողջ աղետաբեր բովանդակությունը: Հիմնվելով ռասայական տեսության վրա՝ Ադոլֆ Հիտլերն առաջ քաշեց «Լեբենսռաումի» («Կենսական տարածք») անհրաժեշտության մասին ծայրահեղական գաղափարը: Ըստ դրա, գերմանական ռասայի զարգացման և աճի համար հարկավոր են նոր տարածքներ, որոնց նախկին բնակչությունը կամ պետք է ոչնչացվի, կամ շահագործվի՝ հանուն գերմանական ռասայի բարգավաճման:

Սա հստակորեն արտահայտված է նացիզմի առաջնորդի մտքերում. «...Նացիոնալ-սոցիալիստական շարժումը պետք է պայքարի մեր տարածքների և բնակչության միջև եղած անհամաչափությունը վերացնելու համար...Մենք պարտավոր ենք անխոնջ կերպով պայքարել... այն հողերի համար, որոնց նկատմամբ իրավունք ունի գերմանական ժողովուրդը»:[1]

Իսկ ինչ՞ հողերի հաշվին պետք է վերացվեր այդ անհամաչափությունը: Հիտլերը շարունակում է. «...Մենք՝ նացիոնալ-սոցիալիստներս, սկսում ենք այն տեղից, որտեղ կանգ էինք առել 600 տարի առաջ: Մենք կանգնեցնում ենք գերմանացիների անվերջ շարժումը դեպի հարավ և արևմուտք և մեր հայացքները շրջում արևելքում գտնվող հողերի վրա ...Իսկ երբ խոսում ենք այսօրվա Եվրոպայում որևէ տարածքի մասին, մենք կարող ենք նկատի ունենալ միայն Ռուսաստանը՝ իր հարևան վասալ երկրների հետ միասին»:[2]

Հետաքրքիր է պարզել նաև, թե ինչ շրջաններ պետք է ընդգրկեր նացիստների երևակայած «կենսական տարածքը»: 1942թ. սեպտեմբերին Ուկրաինայում ՍՍ-ի և ոստիկանության բարձրագույն ղեկավարության առջև իր ունեցած ելույթում Հիմլերը հետևյալն էր ասել. «Մոտակա քսան տարիների ընթացքում մենք պետք է գերմանացիներով բնակեցնենք Արևելյան Պրուսիայից մինչև Վերին Սիլեզիա ընկած գերմանական նահանգները, ողջ Գեներալ-նահանգապետությունը,[3] հարկավոր է նաև գերմանականացնել և բնակեցնել Բելոռուսիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Ինգերմանլանդիան,[4] Ղրիմը: Մնացած շրջաններում, մայրուղիների երկայնքով մենք

---

[1] Галкин А.А., Германский фашизм, Москва, 1989, стр. 273.
[2] Lengyel E., "The Brown International". In *Nazism: An Assault on Civilization*, New York, 1934, p. 179.
[3] Նույն տեղում, էջ 179:

[1] Hitler A. Mein Kampf. Internet: http//:www.hitler.org/writings/Mein-Kampf/
[2] Նույն տեղում:
[3] Լեհաստանի տարածքը:
[4] Նովգորոդի, Պսկովի և Լենինգրադի շրջանները:

կստեղծենք ոչ մեծ քաղաքներ..., որոնց մոտակայքում տեղակայված կլինեն մեր ավտոուղիները, երկաթգծերը և օդանավակայանները: Այդ՝ 15-20 հազար բնակչություն ունեցող քաղաքների շուրջ 10 կմ շառավիղով կտարածվեն գերմանական գյուղերը... Այդ մարգարիտ-բնակավայրերը կհասնեն մինչև Դոն և Վոլգա գետերը, իսկ այնուհետև, հույս ունեմ՝ մինչև Ուրալ... Մինչև Ուրալ ձգվող Գերմանական Արևելքը պետք է դառնա գերմանական ռասայի բուծարան, այնպես որ, 400-500 տարի հետո,... մայրցամաքների միջև տեղի ունենալիք բախման պահին գերմանացիների թիվը կկազմի ոչ թե 120, այլ 500-600 միլիոն»:[1]

Պանթուրքիզմի ծավալապաշտության գաղափարական հիմքերի ձևավորման վրա նորից զգալի է գերմանական մտքի ազդեցությունը: Պարզվում է՝ դեռ 1842թ. թուրքական զորքերի գերմանացի մարզիչ Հելմուտ Մոլտկեն, որը մեծ ավանդ է թողել նաև գերմանական միլիտարիզմի ձևավորման վրա, թուրքերին համոզում էր, թե նրանց ապագան արևելքում է և ոչ թե Եվրոպայում:[2] Սակայն, որոշ հանգամանքների բերումով այս միտքը լայն ընդունելություն չգտավ թուրքական վերնախավի շրջանում: Փոխարենը՝ Աբդուլ-Համիդի կողմից որդեգրվեց պանիսլամիզմի քաղաքականությունը, որը, ի դեպ, հարստացնելու էր պանթուրքիզմի գաղափարական զինանոցը:

Թեև պանթուրքիստ առաջնորդները, ինչպես խոստովանել է իթթիհատական գաղափարախոսներից մեկը՝ Հալիդե Էդիբը, երբեք հստակ պատկերացում չեն ունեցել Թուրանի աշխարհագրական սահմանների վերաբերյալ,[3] այնուամենայնիվ, նրանց արտահայտած մտքերից կարելի է որոշակի պատկերացում կազմել դրա մասին:

Նախ և առաջ պանթուրքիզմը նպատակ ուներ իրագործել մոտակա խնդիրը, այն է՝ Թուրքիան թրքացնելուց հետո միավորել օսմանյան, Հյուսիսային Պարսկաստանի և Անդրկովկասի օղուզական թուրքերին: Այնուհետև պետք է իրագործվեր

[1] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 50:
[2] Զարևանդ, նշված աշխ., էջ 87:
[3] Гасанова Э.Ю., նշված աշխ., էջ 119:

թրքախոս մյուս ժողովուրդների միավորումը մեկ համաթուրքական պետության մեջ:[1]

Այս վերջին ծրագրի կապակցությամբ է, որ պանթուրքիստ գաղափարախոսները տարբերվում են իրենց մոտեցումներով: Մասնավորապես, Ռուսաստանից տեղափոխված թաթար հեղինակները Թուրանի սահմանները չափազանց տարածական էին տեսնում, որի պատճառով պատմագիտական գրականության մեջ նրանք հայտնի են պանթուրանիստներ անունով՝ հակառակ ավելի չափավոր պանթուրքիստների: Այսպես, նրանցից Ահմեդ Աղաևը գտնում էր, որ թյուրքերը ցրված են աշխարհի տարբեր մասերում՝ Չինաստանի ամենահեռավոր անկյուններից մինչև Ֆինլանդիա, Լեհաստան, Հունգարիա և Հյուսիսային Աֆրիկա: Ուստի, Թուրանը, ըստ Աղաևի, իր տարածքով մեծ էր լինելու Եվրոպայից և Ամերիկայից միասին վերցրած՝ 70-80 միլիոն բնակչությամբ: Կային նաև այնպիսիները, որոնք ապագա Թուրանի կազմում առաջարկում էին ընդգրկել Ճապոնիան, Կուրիլյան կղզիները, Թայվանը:[2] Սակայն, պետք է կարծել, որ իթթիհատականների շրջանում առավել ընդունված էր Թուրանի ավելի իրատեսական տարբերակը, որի հեղինակներից էին Գեոք Ալփը և Յուսուֆ Աքչուրան: Վերջինիս կարծիքով, թյուրքական աշխարհը բաղկացած է երեք մասերից՝ Օսմանյան Թուրքիա, Իրանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջաններ և երրորդ՝ Ռուսաստանի և Չինաստանի տիրապետության տակ գտնվող երկրամասեր՝ Հյուսիսային Կովկաս, Անդրկովկաս, Ղրիմ, Կազան, Բաշկիրիա, Ղազախստան, Թուրքեստան և մի շարք սիբիրյան տարածքներ:[3]

Ուրեմն, պատահական չէ, որ պատերազմից անմիջապես առաջ երիտթուրքական կառավարության շրջաբերականում ասվում էր. «Մեր ազգի և պետության իդեալը... մեզ տանում է դեպի մոսկովյան թշնամու վերացումը. դրա միջոցով կայսրության մյուս մասերի հետ ձեռք կբերենք բնական սահ-

[1] Zenkovsky S.A., նշված աշխ., էջ 111: Տե՛ս նաև Gokalp Ziya, նշված աշխ., էջ 20:
[2] Гасанова Э.Ю., նշված աշխ., էջեր 117-118:
[3] Նույն տեղում, էջ 118:

ման, որը կընդգրկի և կմիավորի մեր ռասայի բոլոր ճյուղերին»:[1]

Հետաքրքիր է և միգուցե նաև՝ ճակատագրական, որ պանթուրքիստները և նացիստները իրենց ծավալապաշտական ծրագրերի իրականացման գործընթացը որոշակիորեն կապում էին հայերի և հրեաների հետ: Իսկ վերջիններս ճակատագրի բերումով ապրում էին ոչ միայն Թուրքիայում և Գերմանիայում, այլև պանգերմանական և պանթուրքական իդեաների իրականացման ամենամեծ խոչընդոտը հանդիսացող Ռուսաստանի տարածքում:

Հասկանալի է, որ ռուս-թուրքական սահմանի երկու կողմերում գտնվող հայերն սկսեցին դիտվել որպես «սեպ»՝ մխրճված թուրքական աշխարհի մեջ: Դեռևս 1906թ. Բեհաէդդին Շաքիրը, որը հետագայում կենտրոնական դեր պետք է խաղար հայերի ոչնչացման գործում, Կովկասի պանիսլամական առաջնորդներին հետևյալ կոչով էր դիմում. «...Մեր թշնամին հանդիսացող և ձեզ՝ ռուսների լծից ազատելու դեմ ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակեցեք մի կանոնավոր ծրագիր նրանց ջլատելու համար»:[2]

Հետաքրքիր են նաև Հիտլերի մտորումները հրեաների վերաբերյալ. «...Ճակատագիրն այս առումով բարի է մեր նկատմամբ: Այն Ռուսաստանը հանձնել է բոլշևիկներին, ինչը նշանակում է՝ Ռուսաստանը հանձնվել է հրեաներին: Արևելքում գտնվող հսկա տերությունը հասունացել է կործանման համար: Ռուսաստանում հրեական իշխանության վերջը կնշանակի նաև ռուսական պետության վերջը»:[3]

Այս առումով պետք է շեշտել նացիոնալ-սոցիալիզմի ևս մեկ առանձնահատկության, այն է՝ բոլշևիզմի նկատմամբ ունեցած անհաշտ վերաբերմունքի մասին: 1945թ. փետրվարին Բորմանի հետ ունեցած զրույցի ժամանակ Հիտլերն ասել էր. «Գերմանիայի գլխավոր խնդիրը, իմ կյանքի նպատակը և նացիոնալ-սոցիալիզմի գոյության իմաստը բոլշևիզմի ոչնչացումն էր»:[1] Ընդ որում, մարքսիզմը նացիստների կողմից ներկայացվում էր որպես հրեական հայտնագործություն, որը ծառայեցվում էր աշխարհին տիրելու համար (այսպես, Հիտլերը մտածում էր, որ հրեաների պատմական առաջնորդ Մովսեսն աշխարհի առաջին բոլշևիկն է եղել և իսկական նախակերպարը մեկ այլ հրեայի՝ Լենինի[2]): Այս պայմաններում հրեաների հանդեպ ռասայական ատելությանն ավելանում էր նաև քաղաքական թշնամանքը:[3]

Խոսելով պանթուրքիստների և նացիստների տարածքային նկրտումներում հայերի և հրեաների զբաղեցրած տեղի մասին՝ հարկ է շեշտել երկու ցեղասպանությունները ծնող պատճառների ամենահիմնական և ամենացայտուն տարբերության, այն է՝ *հայրենիքի* գործոնի մասին: Ի տարբերություն ողջ Եվրոպայով սփռված հրեաների, հայերն ապրում էին իրենց պատմական հայրենիքում, և այս հանգամանքն իթթիհատականներին պետք է որոշակի հաստատակամություն ներշնչեր՝ այդ տարածքի իրական տերերից մեկընդմիշտ ձերբազատվելու անհրաժեշտության հարցում: Կարելի է ասել, որ իթթիհատական ոճրագործների ցեղասպանական քաղաքականության մեջ կուտակված էր նվաճող-տեղաբնիկ դարավոր թշնամանքի ողջ մաղձը:[4] Հասկանալի է, որ ողջ Եվրոպայով մեկ տարածված հրեաների ոչնչացման հիմքում նման դրդապատճառ չէր կարող լինել: Երկու ցեղասպանությունների այս տարբերությունն ավելի ցայտուն է դառնում, երբ համադրվում

---

[1] Tekin Alp, նշված աշխ., էջ 50:

[2] Ղազարեան Հ.Գ., Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջեր 153-154:

[3] Hitler A. Mein Kampf. Internet: http//:www.hitler.org/writings/Mein-Kampf/

[1] Безыменски Л., Особая папка "Барбароса", Москва, 1972 , стр. 15.

[2] Кон Н., Благославление на геноцид: миф о всемирном заговоре евреев и "Протоколах сионских мудрецов", Москва, 2000, стр. 117.

[3] Պետք է ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստական քարոզչական մեքենայի կողմից հրեաների և բոլշևիկների արհեստական նույնացումը հմտորեն օգտագործվեց այն իմաստով, որ Խորհրդային Միության դեմ պատերազմը ներկայացվեց հակահրեական պայքարի համատեքստում և հակառակը:

[4] Թուրք ազգայնականների կողմից այս խնդրի գիտակցման արտահայտությունն այն էր, որ հայերի ֆիզիկական բնաջնջումն ուղեկցվում էր նրանց մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացմամբ իսկ հետագայում նաև՝ տեղանունների փոփոխմամբ և պատմության նենգափոխմամբ:

են դրանց հետևանքները: Փաստորեն, ենթարկվելով ցեղասպանության, հայերը կորցրեցին իրենց պատմական հայրենիքը, մինչդեռ Հոլոքոստից հետո համաշխարհային հրեականությունը կարողացավ իր կշիռն օգտագործել ազգային պետականություն ստեղծելու համար:

Հետաքրքիր ենք համարում ներկայացնել պանթուրքիստ և նացիոնալ-սոցիալիստ մտածողների գաղափարական ևս մեկ ընդհանրություն, որն ինչ-որ չափով առնչվում է հայերի և հրեաների ճակատագրին: Դա այսպես կոչված «կատարյալ հասարակության» վերաբերյալ հայացքներն են:

Ջիա Գեոք Ալփը, ինչպես նշում է վերջինիս կենսագիր Ուրիել Հեյդը, վերցնելով և աղավաղելով ֆրանսիացի սոցիոլոգ Էմիլ Դյուրկհեյմի գաղափարները, իր աշխատանքներում կարևորում էր անհատի՝ հանուն հասարակական շահերի ինքնազոհության անհրաժեշտությունը:[1] Իսկ հասարակությունը, ըստ Գեոք Ալփի, պատրաստ է ցանկացած զոհաբերություն կատարել հանուն իր իդեալների իրականացման:[2]

Նման կարծիք է արտահայտում նաև Ադոլֆ Հիտլերը. «...Բոլոր կազմակերպությունների ամենահիմնական էությունը հետևյալն է. անհատը, հրաժարվելով իր անձնական կարծիքից և շահից, դրանք զոհաբերում է ի օգուտ ավելի մեծ խմբի»:[3]

Եթե Գեոք Ալփի դեպքում հասարակությունը նույնացվում է ազգի հետ, ապա Հիտլերը շեշտը դնում է ռասայի վրա, հանուն որի թույլատրելի է ամեն ինչ: Տրամաբանական է, որ հանուն վերոհիշյալ իդեալների՝ հայերի և հրեաների ոչնչացումը կարող էր հեշտությամբ «լուրջ» արդարացում ստանալ:

Ցեղասպանության ուսումնասիրման իմաստով կարևոր վերոհիշյալ գաղափարական ընդհանրությունների կողքին՝ նացիոնալ-սոցիալիզմի և պանթուրքիզմի մեջ կարելի է առանձնացնել մի քանի ոչ էական նմանություններ: Օրինակ՝ երկու գաղափարախոսություններում էլ կարելի է նկատել դրական վերաբերմունք այնպիսի հարցի նկատմամբ, ինչպիսին է սոցիալական համերաշխության անհրաժեշտությունը հասարակության տարբեր խավերի միջև:[1] Սրան կարելի է գումարել բրիտանացի հետազոտող Ք. Ռոքերի այն դիտարկումը, ըստ որի երկու աշխարհայացքներում էլ զգացվում է ակնհայտ արհամարհական վերաբերմունք իրենց հասարակությունների ավանդական կրոնների հանդեպ:[2]

Չնայած վերջին հանգամանքին՝ այնուամենայնիվ հարկավոր է նշել, որ և՛ երիտթուրքերը, և՛ նացիստներն իրենց եղերական ծրագրերում օգտագործեցին կրոնի գործոնը: Իթթիհատականները հայերին բնաջնջելու ժամանակ բնակչության հետամնաց զանգվածներին գրգռում էին ջիհադի կոչերով, իսկ նացիստներն օգտագործում էին հատկապես Արևելյան Եվրոպայի բնակչության շրջանում գոյություն ունեցող հակահրեական կրոնական թշնամանքը:

Պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի վերոհիշյալ ընդհանրություններից բացի, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այդ աշխարհայացքներն առաջ քաշող և կենսագործող գաղափարախոսների և քաղաքական գործիչների անձերը: Վերջիններիս միջև եղած նմանությունների վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ է կատարել ամերիկահայ հետազոտող Ռ.Դեքմեջյանը: Համեմատելով հայկական և հրեական ցեղասպանությունների առաջացման պատճառները սոցիալական հոգեբանության տեսանկյունից՝ հեղինակը իրավացիորեն շեշտել է նացիստ և իթթիհատական առաջնորդների էթնիկական և աշխարհագրական մարգինալության՝ սահմանայնության փաստը: Իրոք, երկու կուսակցությունների վերնախավերի՝ որոշիչ դերակատարություն ունեցող անձինք աշխարհագրական և ազգային հանգամանքների բերումով չէին կարող «մաքուր» գերմանացի կամ «մաքուր» թուրք համարվել:

Ադոլֆ Հիտլերը՝ նացիստական կուսակցության առաջնորդը և նացիզմի գլխավոր գաղափարախոսը, ծնունդով Ավս-

[1] Heyd U., նշված աշխ., էջ 53:
[2] Նույն տեղում, էջ 58:
[3] Hitler A. Mein Kampf. Internet: http//:www.hitler.org/writings/Mein-Kampf/

[1] Տե՛ս Heyd U., նշված աշխ., էջ 69: Тольятти П., Лекции о фашизме, Москва, 1974, стр. 16; Бурдерон Р., նշված աշխ., էջ 31:
[2] Walker Ch.J., Armenia: The Survival of a Nation London: Croom Helm, 1980, p. 191.

տրիայից էր և գերմանական քաղաքացիություն էր ստացել միայն 1932թ. (տեսակետ կա, որ նա որոշակի անհարմարություն էր զգում այս կապակցությամբ և Ավստրիայի անշլյուզով փորձում էր իրեն լրիվ գերմանացի դարձնել[1]):

Կուսակցության երկրորդ մարդը և քաղաքականության մեջ Հիտլերի առաջին ուսուցիչներից մեկը՝ Ռուդոլֆ Հեսը, ծնունդով Եգիպտոսից էր և Գերմանիա էր տեղափոխվել 14 տարեկան հասակում: Նացիզմի մեկ այլ կարկառուն դեմք՝ Ալֆրեդ Ռոզենբերգը, որը հատկապես հայտնի էր իր ռասիստական գաղափարներով, ծնվել էր Էստոնիայում և Գերմանիա էր անցել Առաջին աշխարհամարտից հետո:[2] Ծագումով անգլիացի էր գերմանական ինքնագիտակցություն ունեցող Հյուստոն Չեմբերլենը, որը նացիզմի և Հիտլերի վրա մեծ ազդեցություն թողեց իր ռասիստական գաղափարներով:[3] Այս մարդկանց ցուցակին կարելի է ավելացնել նաև Ռիբբենտրոպ, Գյորինգ, Ռոհմ, Կալտենբրուններ անունները:[4]

Նույնը պետք է ասել պանթուրքիստ առաջնորդների մասին: Զիա Գեոք Ալփը, որին հաճախ անվանում են «պանթուրքիզմի հայր», սերում էր Դիարբեքիրի քրդական միջավայրից:[5] Հանրահայտ իրողություն էր, որ պանթուրքիստներ Յուսուֆ Աքչուրան, Իսմայիլ Գասպրինսկին, Հյուսեինզադե Ալին, Ահմեդ Աղաևը ռուսաստանցի թաթարներ էին: Դյոնմե (մահմեդականացած հրեա) էին պանթուրքիզմի գաղափարախոսներ

[1] Lengyel E., նշված աշխ., էջ 181:
[2] Նույն տեղում, էջ 178:
[3] Shirer W.L., նշված աշխ., էջ 152:
[4] Dekmejian R.H., "Determinants of Genocide: Armenians and Jews as Case Studies". In *The Armenian Genocide in Perspective*. Ed. by Richard G. Hovannisian, New Brunswick: Trans. Books, 1986, p. 93.
[5] Heyd U., նշված աշխ., էջ 21:

Որոշ աղբյուրներում նա ներկայացվում է որպես թրքացած հրեա: (Սիմոնյան Հր.Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 217:)

Թեքին Ալփը,[1] դոկտ. Նազիմը[2]. մահմեդականացած հրեայի դուստր էր Հալիդե Էդիբը[3]:

Ռ. Դեքմեջյանը նշում է, որ իթթիհատական կուսակցության քաղաքականությունն ի կատար ածողները նույնպես աչքի էին ընկնում իրենց ոչ թուրքական ծագումով: Այսպես, ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան բուլղարացի գնչու[4] էր, ռազմական նախարար Էնվերը չերքեզական և ալբանական ծագում ուներ, ֆինանսների նախարար Ջավիդ բեյը դյոնմե էր, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան՝ ալբանացի արքայազն: Բալկանյան ծագում ուներ հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկը բժիշկ Բեհաէդդին Շաքիրը:[5]

Հեղինակի կարծիքով ընդհանուր անբարենպաստության պայմաններում (ինչպիսիք ստեղծվել էին Թուրքիայում և Գերմանիայում մինչև երկու աշխարհամարտերը) նոր վերնախավը կազմող վերոհիշյալ անձինք իրենց սահմանային ինքնագիտակցության պատճառով ինքնության ցավագին ճգնաժամ են ապրում: Իրենց այս զգացումը հաղթահարելու համար նրանք որդեգրում են ծայրահեղական գաղափարախոսություն և դառնում դրա «ճշմարիտ հետևորդները»: Գալով իշխանության՝ այս մարդիկ իրենց հիվանդագին վիճակը տարածում են իրենց հասարակությունների վրա, ինչն էլ պատճառ է դառնում հակահայկական և հակահրեական ծայրահեղ դիրքորոշումների որդեգրման:[6]

Այսպիսով, Թուրքիայում և Գերմանիայում երկու աշխարհամարտերից առաջ իշխանության գլուխ եկած վարչակարգերն իրենց նպատակների իրականացման համար առաջ-

[1] Tekin Alp, նշված աշխ., էջ VI:
[2] Walker Ch.J., նշված աշխ., 344:
[3] Ռիֆաթ Մեվլան Զադե, նշված աշխ., էջ 137:
[4] Մորգենթաուն գրում է, որ Թալեաթի ծագման մասին կան բազմաթիվ վարկածներ և առանձնացնում է երկուսը, որոնց համաձայն, նա բուլղարացի գնչու է կամ պոտոմակ (մահմեդականացած բուլղար): Ամերիկացի դեսպանն ավելի շատ հավատում է վերջին տարբերակին: (Տե՛ս Morgenthau H., նշված աշխ., էջ 20:)
[5] Dekmejian R.H., նշված աշխ., էջ 93:
[6] Նույն տեղում, էջ 92:

նորդվում էին որոշակի գաղափարախոսություններով, որպիսիք էին պանթուրքիզմը և նացիոնալ-սոցիալիզմը: Վերջիններս, կրելով իրենց ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական բարդ զարգացումների, ինչպես նաև հասարակության և անհատների հոգեբանական հիվանդագին վիճակի կնիքը, աչքի էին ընկնում իրենց ծայրահեղությամբ և մարդատյացությամբ:

Երկու ցեղասպանությունների ուսումնասիրության տեսանկյունից պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի մեջ հատկապես առանձնացան ազգայնականության, ռասիզմի և տարածապաշտության գաղափարները:

Երկու գաղափարախոսություններն էլ կարևորում էին իրենց պետություններն ազգային տեսանկյունից միատարր դարձնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև միատարր ազգային տնտեսության ստեղծման գաղափարը: Բացի ազգայնական հայացքներից, պանթուրքիզմը և նացիոնալ-սոցիալիզմն ընդհանրություններ ունեին նաև ռասիստական գաղափարների ոլորտում: Հատկապես հետաքրքիր էր այն հանգամանքը, որ իթթիհատականները և նացիստները հարել են «սոցիալական դարվինիզմի» տեսությանը: Պատահական չէ նաև, որ նրանք ամեն կերպ գովաբանել են ուժը, բռնությունը և պատերազմը, իսկ ծավալապաշտական նկրտումները դարձել էին պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի ազգայնական և ռասիստական գաղափարների բնական շարունակությունը:

3. Պատերազմ և ցեղասպանություն

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները՝ որպես հայերի և հրեաների ոչնչացման նպաստավոր գործոն

Պանթուրքիստական և նացիոնալ-սոցիալիստական աշխարհայացքների քննությունից պարզ դարձավ, որ երկու գաղափարախոսություններին էլ հատուկ էր ուժի և նվաճումների փառաբանումը: Ե՛վ պանթուրքիզմի, և՛ նացիոնալ-սոցիալիզմի մեջ նոր տարածքներ գրավելու և երևակայական կայսրություններ ստեղծելու պատկերացումները, ըստ էության, ծնունդ էին նախընթաց պատմական շրջանում կրած անհաջողությունների: Եթե ֆաշիստական Գերմանիայի ռևանշիստական ձգտումների հիմնական խթանը Վերսալյան հաշտության՝ Գերմանիայի համար նվաստացուցիչ պայմաններն էին, ապա Թուրքիան նոր նվաճումների համար ուներ ավելի «լուրջ» պատճառներ: Օսմանյան կայսրությունն արդեն 17-րդ դարի վերջերից սկսել էր դուրս մղվել Եվրոպայից, իսկ 20-րդ դարի սկզբին բալկանյան տարածքների կորստից հետո երիտթուրքերն ավելի էին ամրապնդել դեպի արևելք շարժվելու իրենց համոզմունքը:

Ֆաշիստական Գերմանիան և իթթիհատական Թուրքիան, պատերազմը դիտելով որպես ազգային նպատակների իրագործման հիմնական միջոց, իրենց նվաճողական ձգտումների գլխավոր օբյեկտ էին համարում Ռուսաստանը: Վերջինիս վրա նախահարձակ լինելով՝ երիտթուրքերը և նացիստներն իրենց երկրները ներքաշեցին մեծ պատերազմների մեջ: 1914թ. հոկտեմբերի վերջին Թուրքիան հարձակվեց ռուսական նավահանգիստների վրա, 1939թ. սեպտեմբերին Գերմանիայի նախաձեռնությամբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, իսկ 1941թ. հունիսին նացիստները հարձակվեցին Խորհրդային Միության վրա:

Այն փաստը, որ և՛ Հայոց ցեղասպանությունը, և՛ հրեաների Հոլոքոստը տեղի են ունեցել տոտալ պատերազմների ըն-

թացքում, արդեն մտածելու տեղիք է տալիս: Ոչ ստի, համաշխարհային պատերազմի՝ որպես ցեղասպանությանը նպաստող գործոնի ուսումնասիրությունն իրենից զգալի կարևորություն է ներկայացնում:

Համաշխարհային պատերազմի գործոնի դերը լուրջ քննարկման առարկա է դարձել Վ.Դադրյանի համար: Հենվելով իրավագիտության և սոցիոլոգիայի տվյալների վրա՝ հեղինակը երկու ցեղասպանությունների իրագործումը փորձում է բացատրել այսպես կոչված «հնարավորության համակարգի» ("oportunity structure") համատեքստում: Որպես հիմնավորում բերվում է քրեագիտության մեջ հայտնի այն ճշմարտությունը, ըստ որի՝ ծանր հանցանքները, այդ թվում նաև սպանությունները, տեղի են ունենում «ժամանակի և տարածության մեջ առնվազն երեք բաղադրիչների համընկման դեպքում. այդ բաղադրիչներն են՝ ա/ նպատակադրված հանցագործ, բ/ հարմար թիրախ և գ/ պաշտպանների բացակայություն»:[1]

Տրամաբանական է, որ սկզբում երիտթուրքերը, հետո նաև նացիստները (վերջիններս, անշուշտ, կարող էին նաև դասեր քաղել հայերի ցեղասպանության օրինակից) իրենց եղերական ծրագրերը մշակելիս պետք է հասկանային և հաշվի առնեին այն հնարավորությունները, որոնք ընձեռում էր համաշխարհային պատերազմը. դրանցից գլխավորը, անկասկած, այնպիսի իրադրության առաջացումն էր, երբ հայերը և հրեաները կհայտնվեին բացարձակ անպաշտպան վիճակում:

Այս կարևոր հանգամանքն ըմբռնելու համար՝ երկու ցեղասպանությունների հեղինակներին կարող էր օգնել նախկինում հակահայկական և հակահրեական քաղաքականության բացասական հետևանքների հիշողությունը: Հանրահայտ է, որ նախկինում հայերի բռնաճնշումները հաճախ առիթ էին դառնում մեծ տերությունների՝ Թուրքիայի գործերին միջամտելու համար (այդպես էր եղել, օրինակ, 1895թ.): Հայերի հետ կապված վերջին այդպիսի միջամտության դեպք կարելի է համարել պատերազմից առաջ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի նախաձեռնած բարենորոգումների ծրագիրը, որն ավելի էր

[1] Dadrian V.N., The Historical and Legal..., p. 519.

բորբոքել թուրքերի թշնամանքը հայերի նկատմամբ:

Համանման վիճակում էին գտնվում նացիստները, որոնց համար ևս տհաճ էին հրեաների բռնաճնշումների կապակցությամբ տարբեր երկրներում հնչող բողոքները: Որպես օրինակ, նշենք 1936թ. Բեռլինում անցկացված օլիմպիական խաղերը, որոնց ժամանակ, իշխանությունների ցուցումով, քաղաքի փողոցներից հեռացվել էին բոլոր հակահրեական ցուցանակները:[1] Նացիստական ղեկավարությանը մեծ գլխացավանք էին պատճառել նաև 1938թ. նոյեմբերի 9-ից 10-ը հրեաների դեմ տեղի ունեցած հարձակումների («Բյուրեղապակյա գիշեր») հետևանքով աշխարհի տարբեր երկրներում ձեռնարկված հակաֆաշիստական միջոցառումները:[2]

Այսպիսով, համաշխարհային պատերազմները, որոնք իրենց տոտալ բնույթով իրարանցում էին բերում միջազգային ասպարեզում, կարող էին զոհերին անօգնական դարձնել իսկ զանգվածային սպանություններն՝ աննկատ թողնել:

Այն, որ երիտթուրք և նացիստ առաջնորդները լավ էին գիտակցում այս հանգամանքը, երևում է փաստերից: Այսպես, պատերազմի սկզբին Բեհաէդդին Շաքիրն իթթիհատական պարագլուխների հանդիպումներից մեկի ժամանակ, որի նկարագրությունը բերվում Մեվլան Զադե Ռիֆաթի կողմից, հետևյալ միտքն էր արտահայտել. «...Պատերազմի մեջ ենք, Եվրոպայի և մեծ տերությունների միջամտության վախը չկա, աշխարհի մամուլն էլ չի կարող բողոք բարձրացնել, եթե աղմկեն իսկ, որևէ արդյունք չի ունենա. առաջիկայում խնդիրը կատարված մի իրողություն կդառնա, ձայները կդադարեն, և ոչ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակություն չի ունենա: Այս բացառիկ կացության նրբություններից առավելագույն չափով պետք է օգտվենք: Այս առիթն ամեն ժամանակ չի ներկայանա...»:[3]

Դոկտոր Լեփսիուսի կողմից հրատարակված ժողովածուներից մեկը պարունակում է Վանգենհայմի՝ կանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված զեկուցագիրը, որում ասվում է հե-

[1] Shirer W., նշված աշխ., էջ 322:
[2] Տե՛ս Hilberg R., նշված աշխ., էջեր 23-29:
[3] Ռիֆաթ Մեվլան Զադե, նշված աշխ., էջ 113:

տևյալը. «...Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս առանց վերապահումների հայտարարել է ներկայումս կայսերական դեսպանությունում աշխատող դոկտոր Մոռքմանին, որ Բ. Դուռը ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից իր ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հետ հաշիվները հիմնովին մաքրելու համար՝ առանց արտասահմանի խանգարիչ դիվանագիտական միջամտության»:[1]

Հրեաների ոչնչացման գործը ևս նացիստական վարչակարգի կողմից աղերսվում էր պատերազմի հետ: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Աուշվից «մահվան ճամբարի» նախկին պարետ Ռուդոլֆ Հեսսը պատմել էր, թե 1941թ. ամռանը Հիմլերի հետ ունեցած իր զրույցում վերջինս ասել էր. «Ֆյուրերը հրամայել է լուծել հրեական խնդիրը... Մեր տիրույթում գտնվող բոլոր հրեաներին, առանց բացառության, պետք է ոչնչացնել հիմա՝ պատերազմի ժամանակ»:[2] Հետաքրքիր են նաև Ադոլֆ Հիտլերի՝ 1939թ. հունվարի 30-ին ռայխստագում արտասանած խոսքերը. «...Եվրոպայում չի հաստատվի հավասարակշռություն, քանի դեռ գոյություն ունի հրեական հարցը... Իշխանության համար իմ մղած պայքարի ժամանակ ես ասել եմ, որ մի օր կգլխավորեմ պետությունը և ժողովուրդը և այդ ժամանակ մյուս հարցերի կողքին կլուծեմ նաև հրեական հարցը... Այսօր նույնպես ես հանդես կգամ որպես մարգարե. եթե հրեա միջազգային ֆինանսիստները Եվրոպայում և նրանից դուրս մեկ անգամ ևս փորձեն ժողովուրդներին ներքաշել համաշխարհային պատերազմի մեջ, ապա այդ պատերազմի արդյունքը կլինի ոչ թե աշխարհի բոլշևիկացումը, հետևապես՝ հրեաների հաղթանակը, այլ հրեական ռասայի ոչնչացումը Եվրոպայում»:[3]

[1] Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 96: (Հղումն ըստ՝ Lepsius Jo., Deutschland und Armenien. 1914-1918. Potsdam, 1919, S. 84.)

[2] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 69:

[3] Арад И., Нацизм и уничтожение евреев в Европе в годы Второй мировой войны. В кн. "Холокост-Сопротивление-Возрождение" , Москва-Иерусалим, 2000, стр. 86-87.

Թեև կարելի է կարծել, որ երկու ցեղասպանությունների հեղինակների տեսանկյունից համաշխարհային պատերազմների պահը պետք է ծառայեցվեր նաև իրենց ահռելի հանցանքները աշխարհից ծածուկ պահելու նպատակով, այնուամենայնիվ, հակառակորդ պետությունները տեղեկացան հայերի և հրեաների ոչնչացման մասին՝ հակառակ իթթիհատականների և նացիստների կողմից ձեռնարկված որոշակի միջոցառումների (խիստ գրաքննություն, գաղտնապահություն, բանավոր հրամաններ և այլն):

Այսպես, Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի հետ կատարվող ողբերգության մասին տեղյակ դարձան ոչ միայն Թուրքիայի դաշնակից Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, սկզբնական շրջանում չեզոք դիրք պահպանող Միացյալ Նահանգները, այլև Անտանտի պետությունները:

Նույնը կարելի է ասել հրեաների ոչնչացման ընթացքի մասին: Հայտնի է, որ 1942թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի հրեական համայնքների առաջնորդները Ֆրանկլին Ռուզվելտին և Ուինսթոն Չերչիլին հանձնած հուշագրերով տեղեկացրել էին այն մասին, որ Արևելյան Եվրոպայի տարբեր մասերում ստեղծվել են հրեաների զանգվածային ոչնչացման կենտրոններ:[1]

Սակայն, ինչպես արդեն նշվեց, համընդհանուր պատերազմների առաջացրած նոր միջազգային իրադրության պայմաններում, մի դեպքում Անտանտի, մյուսում՝ հակաֆաշիստական կոալիցիայի երկրները ձեռնպահ մնացին հակառակորդ պետությունների իշխանության տակ գտնվող տարածքներում հայերի և հրեաների օգտին քիչ թե շատ արդյունավետ քայլ կատարելուց: Լուրջ միջամտություն ցուցաբերելու անկարողության արտահայտություն պետք է դիտել նաև Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ մի դեպքում Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, մյուս դեպքում՝ Խորհրդային Միության, Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից հրապարակված հայտարարություն-

[1] Елисаветский С., Освенцим в свете некоторых современных документальных публикаций, мемуаров и зарубежных исследований. "Холокост и соучастность", 2002, N 4, стр. 9.

ները: Հետաքրքիր է, որ վերջիններիս բովանդակությունները չափազանց նման են միմյանց:

1915թ. մայիսի 24-ին Փարիզում, Լոնդոնում և Պետերբուրգում հրապարակվեց համատեղ հայտարարագիր. «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում տեղի է ունենում հայերի ջարդ թուրքերի և քրդերի կողմից՝ օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ իսկ երբեմն նաև ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդեր են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում. գլխովին կոտորվել է Վանի շրջակա հարյուրավոր գյուղերի բնակչությունը... Միևնույն ժամանակ Կ.Պոլսի թուրքական կառավարությունը ձերբակալություններ է իրականացնում և աննախադեպ ճնշումների ենթարկում հայ խաղաղ բնակչությանը:

Նկատի ունենալով այս նոր հանցագործությունները, որոնք իրականացվում են Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ, Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դաշնակից կառավարությունները հայտարարում են Բարձր Դռանը, որ այս հանցանքների պատասխանատվությունն իրենք դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակից կլինեն նման ջարդերին»:[1]

1943թ. հոկտեմբերի 30-ին Մոսկվայում ԽՍՀՄ նախաձեռնությամբ ընդունվեց «Հայտարարություն հիտլերականների կողմից իրականացվող գազանությունների վերաբերյալ», որտեղ ասվում էր. «Մեծ Բրիտանիան, Միացյալ Նահանգները և ԽՍՀՄ-ը տարբեր աղբյուրներից ստացել են վկայություններ հիտլերական զինված ուժերի կողմից գրավված տարբեր երկրների տարածքներում իրականացվող գազանությունների և զանգվածային սպանությունների մասին:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ երեք դաշնակից պետությունները երեսուներկու միավորված պետությունների անունից հանդիսավոր հայտարարում և նախազգուշացնում են ներքոհիշյալ հայտարարագրով:

...Այն գերմանացի սպաները և զինվորները, ինչպես նաև նացիստական կուսակցության անդամները, որոնք պատասխանատու են եղել վերոհիշյալ գազանությունների և սպանությունների համար կամ ինքնակամ մասնակցություն են ունեցել դրանցում, կուղարկվեն այն երկրները, որտեղ կատարվել են այդ սահմռկեցուցիչ արարքները, որպեսզի դատվեն և պատժվեն այդ ազատագրված երկրների... օրենքներին համապատասխան:

...Այս հայտարարագիրը չի շոշափում գլխավոր հանցագործների հարցը, որոնց հանցանքները կապ չունեն որոշակի աշխարհագրական տեղի հետ. նրանք կպատժվեն ըստ դաշնակից պետությունների համատեղ որոշման»:[1]

Այս երկու հայտարարությունների համադրությունը հեշտությամբ ի հայտ է բերում բովանդակային հետևյալ ընդհանրությունները. ա/ հայտարարությունների հեղինակ պետությունները տեղյակ են իրենց թշնամիների կողմից կատարվող հանցանքներին, և բ/ այդ հանցագործությունների հեղինակները կենթարկվեն պատասխանատվության (թեև երիտթուրքերի դեպքում պատասխանատվության հարցն ավելի անորոշ է ձևակերպված): Սակայն, վերոհիշյալ կետերից բացի, այս հայտարարություններն պարունակում են նաև ոչ բացահայտ իմաստ, այն է՝ դրանք անուղղակիորեն նշում են, որ այս պետությունները տվյալ պահին գործնական ոչինչ չեն կարող անել տուժողների համար:

Հաշվի առնելով այս ամենը, այդուհանդերձ, արդարացի կլիներ որոշակի վերապահում կատարել մեծ տերությունների լիակատար անզորության հարցում: Երկու ցեղասպանությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր այն դեպքերում, երբ հայերին և հրեաներին օգնություն ցու-

[1] Барсегов Ю.Г., Геноцид армян-преступление против человечества. О правомерности термина и юридической квалификации. Ереван, 1990, стр. 24-25.

[1] Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Сб. материалов и документов. Т. 1, Москва, 1946, стр. 418-419.

ցաբերելու ունակ ուժերը հայտնվում էին այս ժողովուրդների փրկության կամ սեփական քաղաքական ու ռազմական շահի երկընտրանքի առջև, ապա գերապատվությունը տալիս էին վերջինին:

Օրինակ՝ 1915թ. սկզբին Անտանտի տերությունները Քիթչենների ծրագրի փոխարեն որոշեցին իրականացնել Չերչիլի և Լլոյդ Ջորջի կողմից մշակված ծրագիրը, որը դոկտ. Եր.Գասպարյանի կարծիքով, հետևանք էր Ֆրանսիայի անզիջում և եսասիրական դիրքորոշման և աղետաբեր եղավ արևմտահայության համար:[1]

Հայտնի է նաև, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հրեաների փրկությամբ զբաղվող տարբեր կազմակերպություններ դաշնակից երկրների ղեկավարներին ծրագրեր էին ներկայացրել, որոնցում առաջարկվում էր օդից ռմբակոծել դեպի «մահվան ճամբարներ» տանող ճանապարհները և դիակիզարանները. դրա արդյունքում, հրեաների զանգվածային ոչնչացման գործընթացը պիտի կանգ առներ:[2] Այդ կոչերը հատկապես ակտիվացան 1944թ. ամռանից, երբ սկսվել էր հունգարական հրեաների զանգվածային փոխադրումը Օսվենցիմ: Իր՝ «Ինչու՞ չռմբահարվեց Աուշվիցը» հոդվածում պատմաբան Դավիդ Վայմանը ցույց է տալիս, որ 1944թ. ընթացքում բրիտանական և հատկապես ամերիկյան օդային ուժերը հնարավորություն ունեին հասնել մինչև Օսվենցիմ և ռմբակոծել այն, սակայն հրեական կազմակերպությունների բոլոր դիմումները հանդիպում էին զինվորական ղեկավարության մերժողական պատասխաններին: Ամերիկյան և բրիտանական հրամանատարությունը առաջ էր քաշում այն հիմնավորումը, թե այդ ծրագրի իրականացման համար հարկավոր կլինի զգալի օդային ուժեր շեղել հիմնական գործողությունների թատերաբեմից:[1]

Երկու աշխարհամարտերի ժամանակ հայերի և հրեաների խոցելի վիճակի պատճառներից մեկն էլ, ինչպես նշում է Վ.Դադրյանը, այն իրողությունն էր, որ այս ժողովուրդները չունեին իրենց «մայր պետությունները» (parent states), որոնք ինչ-որ կշիռ կարող էին ունենալ նրանց ոչնչացումը կանխելու գործում:[2] Այս առումով, հայերի և հրեաների վիճակին կարելի է հակադրել Օսմանյան Թուրքիայում ապրող հույների կացությունը: Ինչպես գրում է Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հ.Մորգենթաուն, հույներին ևս կարող էին բաժին հասնել հայկական բոլոր սարսափները, եթե չլիներ Եռյակ դաշինքի երկրների մտավախությունն այն հարցում, որ հույներին կոտորելու դեպքում Հունաստանի իշխանություններն ստիպված պատերազմի մեջ կմտնեն Անտանտի տերությունների կողքին:[3]

Հայերի և հրեաների ցեղասպանության տեսանկյունից երկու աշխարհամարտերի հիմնական գործառույթը, անկաս-

---

[1] Մանրամասն տե՛ս Գասպարյան Ե.Ա., Ֆրանսիան և Մեծ Եղեռնը, Երևան, 1997, էջեր 17-20:

Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Քիթչենների մշակած ծրագրով նախատեսվում էր դաշնակից զորքերի ափհանում Իսկենդերոնի ծովածոցում, որից հետո նրանք Կիլիկիայով պետք է մտնեին Անտիոքի դաշտ և, շարժվելով հյուսիս-արևելք, Դիարբեքիրի կամ Վանի վիլայեթներում միանային ռուսական զորքերին: Մինչդեռ մյուս ծրագիրը նախատեսում էր ռազմանավերով ճեղքել նեղուցները, ափ իջնել Գալիպոլիում և գրավել Կ.Պոլիսը: (Նույն տեղում, էջեր 16-17:)

[2] Елисаветский С., նշված աշխ., էջ 9:

[1] Մանրամասն տե՛ս Wyman D.S., "Why Auschwitz Wasn't Bombed." In *Anatomy of the Auschwitz Death Camp.* Edited by Yisrael Gutman and Michael Berenbaum. Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1994, pp. 569-577.

[2] Dadrian V.N., The Historical and Legal Interconnections..., p. 531. Տե՛ս նաև Dadrian V.N., "The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective." Reprinted from *Is the Holocaust Unique? Perspectives on Comparative Genocide.* Edited by Alan S. Rosenbaum, Boulder,Color.: Westview Press, 1996, p. 116.

[3] Morgenthau H., նշված աշխ., էջ 325:

Այստեղ ճիշտ կլիներ նաև նշել այն առանձնահատկության մասին, որ ի տարբերություն հրեաների, որոնց ոչնչացումն իրականացվում էր պատերազմը նախաձեռնող գլխավոր ուժի՝ նացիստական Գերմանիայի կողմից, հայերը ցեղասպանության էին ենթարկվում մի պետության կողմից, որը դաշնակցում էր գլխավոր պատերազմական ուժերին: Այստեղից, հայերի ոչնչացումը կանխելու գործում լուրջ դերակատարություն կարող էր ունենալ Թուրքիայի հովանավոր Գերմանիան:

կած, օտար պետությունների միջամտության բացառումն էր: Սակայն, ճիշտ կլիներ նշել նաև այն հանգամանքը, որ այս պատերազմները հայերի և հրեաների ոչնչացման գործում ունեցան մեկ այլ օժանդակ դերակատարություն: Ինչպես իթթիհատականները, այնպես էլ նացիստները երկու պատերազմների առիթը հմտորեն օգտագործեցին հակահայկական ու հակահրեական քարոզչության և հետևաբար՝ արհեստականորեն ներքին թշնամու կերպար ձևավորելու նպատակով: Այսպես, պատերազմի սկզբից ևեթ հայերը թուրքական իշխանությունների կողմից սկսեցին նույնացվել Անտանտի քրիստոնյա երկրների և հատկապես՝ Ռուսաստանի հետ, ինչը պետք է գրգռեր մահմեդականներին և նպաստեր հայերի ոչնչացման գործընթացին: Նույն կերպ հրեաները նացիստների կողմից միտումնավոր նույնացվում էին մի դեպքում ամերիկացի կապիտալիստների, մյուս դեպքում՝ խորհրդային բոլշևիզմի հետ[1], ինչը նույնպես պետք է ամրապնդեր դահիճների՝ հրեականությանը ոչնչացնելու համոզումը:

Հետաքրքիր է, որ պրոֆ. Ռ.Մելսոնն այս խնդրին նայում է մեկ այլ տեսանկյունից: Նա յուրահատուկ կապ է տեսնում հեղափոխության, պատերազմի և ցեղասպանության միջև: Հենվելով իր՝ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի առաջացման պատճառների համեմատական ուսումնասիրության վրա՝ հեղինակը նշում է, որ հեղափոխական շարժումների առաջնորդներն իշխանության գալուց հետո մտածում են իրենց երկրների միջազգային կացությունն արմատապես վերափոխելու ուղղությամբ: Սրանից ելնելով՝ հեղափոխություններին շատ հաճախ հետևում են պատերազմները, վերջիններս էլ կարող են պատճառ դառնալ ցեղասպանության համար:[2] Այսպես, երիտթուրքերը միացան Գերմանիային, պատերազմի մեջ մտան Ռուսաստանի դեմ և մի քանի ամիս հետո սկսեցին հայերի ոչնչացումը: Նույն ձևով նացիստները 1933թ. գրավեցին իշխանությունը, վեց տարի անց պատերազմի մեջ մտան և հենց

[1] Kuper L., Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London: Yale University Press, 1981, p. 94.
[2] Melson R., Revolution and Genocide. On the Origins..., p. 271.

այս պատերազմի համատեքստում ձեռնամուխ եղան հրեական հարցի վերջնական լուծմանը:[1] Ըստ Ռ. Մելսոնի, ցեղասպանության հավանականությունն աճում է այն ժամանակ, երբ պատերազմի ընթացքում հասարակական այն խմբերը, որոնք սահմանվել էին որպես հեղափոխության հակառակորդներ (խոսքը վերաբերում է նաև հայերին և հրեաներին), սկսում են նույնացվել արտաքին թշնամի պետությունների հետ:[2] Ստացվում է, որ երիտթուրքերի կողմից հայերին ոչնչացնելու պատճառն այն էր, որ վերջիններս երիտթուրքերի կողմից սկսեցին նույնացվել ռուսների հետ: Նմանապես, նացիստները հետապնդում էին հրեաներին, որովհետև վերջիններս նույնացվում էին նացիստական Գերմանիայի քաղաքական հակառակորդներ ԽՍՀՄ-ի կամ Միացյալ Նահանգների հետ:

Մինչդեռ իրականությունն այլ էր: Իթթիհատական պարագլուխների կողմից հայերին՝ ռուսամետ կեցվածք ունենալու մեղադրանքները ոչ այլ ինչ էին, քան առիթ: Նույնը վերաբերում է հրեաներին. նացիստները քաջ գիտակցում էին, որ ամբողջ եվրոպական հրեականությանը բոլշևիզմի մեջ մեղադրելը պարզապես անհեթեթություն է, սակայն իրականությունն այն է, որ այդ մեղադրանքները հրեաներին ոչնչացնելու հարմար պատրվակի դեր կատարեցին:

[1] Melson R., Revolution and Genocide. On the Origins..., p. 272.
[2] Նույն տեղում, էջ 273:

Գլուխ երկրորդ

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի գործադրումը

1. Հայոց և Հրեական ցեղասպանությունների ընթացքը

Հայերի ցեղասպանությունը

Ըստ Թեոդիկի «Ամենուն տարեցուցի»՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ամբողջ Թուրքիայում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում, Անատոլիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Սիրիայում, ապրում էին երկու միլիոնից ավելի հայեր:[1] Հենց վերջիններիս հիմնական զանգվածի ոչնչացմանն էր, որ պիտի լծվեին իթթիհատականները պատերազմի ընթացքում:

Հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների նախապատրաստած քաղաքականության չարագուշակ բովանդակությունն արդեն նշմարելի դարձավ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց քիչ անց՝ ռուս-թուրքական և թուրք-պարսկական սահմանագծին ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Այսպես, գրավելով Արդանուշն ու Օլթին, թուրքերն սպանել էին շուրջ 1200 խաղաղ հայերի: 1914թ. դեկտեմբերի 12-ին ռուսական բանակի նահանջի հետևանքով ավերվել էին Ալաշկերտի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերը: Հայերի կոտորածներ էին կազմակերպվել Բայազետում և Ղարաքիլիսեում:[2] Թուրքերն իրենց դաժանություններով աչքի էին ընկել նաև Պարսկաստանի տարածքում: 1915թ. սկզբներին հարյուրավոր հայեր էին գազանաբար սպանվել Ջուլֆայի և Թավրիզի միջև

[1] Կիրակոսյան Ջ.Կ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 406:

[2] Dadrian V.N., "The Role of the Special Organization in the Armenian Genocide During the First World War" reprinted from *Minorities in Wartime*. P.Panayi, ed., Oxford and Providence, 1993, pp.13-14.

գտնվող հայկական բնակավայրերում,[1] Սալմաստի շրջանում:[2]

Սակայն հայերի հանդեպ իսկական հալածանքները պետք է սկիզբ առնեին 1915թ. գարնանից: Այդ գործընթացն ավելի լավ պատկերացնելու համար արժեր անդրադառնալ Առաջին աշխարհամարտի վերջին բրիտանացիների կողմից Կ.Պոլսում հայտնաբերված փաստաթղթերից մեկին, որն ըստ Վահագն Դադրյանի, ընդունված պետք է լիներ կամ 1914թ. դեկտեմբեր, կամ 1915թ. հունվար ամսին:[3] Ըստ այդ փաստաթղթի հիմնական կետերի՝ թուրքական իշխանությունները նախ և առաջ ենթադրում էին փակել բոլոր հայկական կազմակերպությունները, ձերբակալել ու ոչնչացնել այն հայերին, որոնք երբևիցե գործել էին կառավարության դեմ. նախատեսվում էր նաև հավաքել զենքերը: Բանակի հրամանատարությունն ի կատար պետք է ածեր ծառայության մեջ գտնվող բոլոր հայերի սպանությունը: Պարտադիր էր համարվում նաև 50 տարեկանից ցածր բոլոր տղամարդկանց, կրոնավորների, ուսուցիչների ոչնչացումը: Ըստ փաստաթղթի՝ միջոցներ պետք է ձեռնարկվեին ողջ մնացած հայերի ընտանիքները վտարելու և իրենց բնակության վայրերից ամբողջությամբ կտրելու ուղղությամբ. մինչ այդ հայաբնակ վայրերում նախատեսվում էր գրգռել մահմեդականների հակակրանքը և ջարդեր կազմակերպել, որոնց պիտի մասնակցեին ինչպես ժողովրդական զանգվածներն, այնպես էլ կանոնավոր ուժերը: Համապատասխան բոլոր գործողությունները պետք է սկսվեին միաժամանակ՝ զոհերի կողմից դիմադրության կազմակերպումը բացառելու նպատակով և խիստ գաղտնիության պայմաններում: Փաստաթղթի տակ ստորագրել էին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը, Իթթիհատի կենտրոնական կոմիտեի

[1] The Armenian Genocide. News Accounts from the American Press (1915-1922). Compiled by Richard D. Kloian. Berkley, California, 1985, p. 5.

[2] Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916. Сборник документов и материалов. Под редакцией Г.А. Абраамяна, Т.Г. Севан-Хачатряна, Ереван, 1995, стр. 9-10.

[3] Dadrian V.N., "The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians". In *Holocaust and Genocide Studies*. 1993, Volume 7, Number 2, p. 174.

անդամներ Բեհաեդդին Շաքիրը և Նազըմը, ներքին գործերի նախարարության հասարակական անվտանգության բաժնի վարիչ Իսմայիլ Ջանփոլադը և օսմանյան բանակի գլխավոր շտաբի հետախուզության բաժանմունքի ղեկավար գնդապետ Սեյֆին:[1]

Ակնհայտ է՝ թուրքական իշխանությունները քաջ գիտակցել էին, որ հայերի ոչնչացման ծրագրի հաջող իրականացման համար ամենակարևոր նախապայմաններից մեկը հայ ազգաբնակչության զրկումն էր իր՝ հիմնական ինքնապաշտպանական ուժը հանդիսացող երիտասարդ տղամարդկանցից: 1914թ. ամռանից զորակոչային տարիքի հայ երիտասարդներն սկսեցին մեկնել թուրքական բանակ: Իսկ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո զինվորագրության պահանջը տարածվեց նաև 18-45 տարեկան բոլոր տղամարդկանց վրա (թեև պահպանվում էր որոշակի գումարի դիմաց ծառայությունից ազատվելու կարգը):

Թուրքական բանակում ծառայող հայ զինվորներին և սպաներին մեկուսացնելու հարմար առիթ հանդիսացավ Սարիղամիշի տակ թուրքերի կրած ծանր պարտությունը: Հայ զինվորները մեղադրվեցին «դավաճանության» մեջ և զինաթափվեցին 1915թ. փետրվարի 25-ի հրամանով,[2] ապա՝ նրանցից կազմավորվեցին աշխատավորական գումարտակներ, որոնք ուղարկվեցին երկրի տարբեր նահանգներ՝ հիմնականում ճանապարհաշինարարական և բեռնակրություն աշխատանքներ կատարելու նպատակով:[3] Այս զինվորների ոչնչացումը գլխավորապես տեղի ունեցավ 1915-1916թթ. ընթացքում:

Առաջին աշխարհամարտի իրադարձությունների ժամանակակից անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբին այսպես է նկարագրում այդ գործընթացը. «Հենց սկզբից նշենք, որ

[1] Dadrian V.N., նշված աշխ., էջեր 175-176:
[2] Արդեն 1915թ. մարտի 15-ի դրությամբ զորքերում ծառայող բոլոր հայերը զինաթափված էին: (Տե՛ս Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 317:)
[3] Տե՛ս Zurcher E.J., "Ottoman Labour Battalions in World War I." In *The Armenian Genocide and the Shoah*. Edited by Hans-Lukas Kieser, Dominik J. Schaller. Zurich: Chronos Verlag, 2002, pp. 190-194.

նրանք բոլորը զինաթափվեցին և տեղադրվեցին ճանապարհներ կառուցող գումարտակներում: Մի վստահելի աղբյուրից տեղեկացանք, որ Էրզրում նահանգի բոլոր հայ զինվորները, որ աշխատում էին Էրզրում-Երզնկա ճանապարհի վրա, ոչնչացվել են առանց բացառության: Դիարբեքիր նահանգի բոլոր հայ զինվորները կոտորվել են Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհների վրա: Խարբերդից 1800 հայ երիտասարդներ որպես զինվորներ ուղարկվել էին Դիարբեքիրում աշխատելու համար. նրանք բոլորն էլ սպանվել են Արղանայի մոտերքում: Մենք տեղեկություններ չունենք այլ նահանգներից, բայց վստահաբար կարելի է ասել, որ այնտեղ ևս հայ զինվորները նույն ճակատագրին են արժանացել»:[1]

Հայ զինվորներին չեզոքացնելու հետ մեկտեղ թուրքական իշխանությունները միջոցներ ձեռք առան հայ ժողովրդին իրենց առաջնորդներից զրկելու ուղղությամբ. այս քայլը ևս հայ բնակչության անխափան ոչնչացման գլխավոր երաշխիքներից մեկը պետք է հանդիսանար: Յոհաննես Լեփսիուսի հաղորդմամբ՝ 1915թ. ապրիլի 21-ից մինչև մայիսի 10-ը Թուրքիայի տարբեր հայաշատ քաղաքներում հայ երևելի անձանց ձերբակալություններ են տեղի ունենում: Օրինակ՝ այս ժամանակահատվածում Իզմիրում կալանվում և տարագրվում են 100 հայ մտավորականներ և ազգային գործիչներ, Պարտիզակում՝ 80 հոգի, Բրուսայում՝ 40, Էրզրումում՝ 600, Սեբաստիայում՝ 500, Կեսարիայում՝ 200 և այսպես շարունակ:[2] Այս ձերբակալությունների մեջ հատկապես աչքի է ընկնում ապրիլի 24-ին Կ.Պոլսում տեղի ունեցած շուրջ 270 հայ մտավորականների և տարբեր ոլորտներին պատկանող հայ ազգային գործիչների ձերբակալությունը և արտաքսումը:[3] Վերոհիշյալ անձանցից միայն շատ քչերին հաջողվեց խուսափել մահվանից:

Վերոհիշյալ քայլերի իրականացման հետ մեկտեղ իթ-

[1] Toynbee A.J., The Murder of a Nation. With a Speech Delivered by Lord Bryce in the House of Lords. London: Hodder and Stoughton, 1915, pp. 81-82.
[2] Հայկական ջարդերը: Տոքտ. Եոհաննես Լեփսիուսի տեղեկագիրը, էջ 27:
[3] Թեռռիկ, Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարիին. Նիւ Եորք, 1985, էջ 10:

թիհատականները ձեռնամուխ եղան 50 տարեկանից բարձր կամ զինվորական հարկը վճարած տղամարդկանց և 18 տարեկանից ցածր հայ պատանիների ոչնչացման գործին: Այդ նպատակով սովորաբար թուրքական իշխանությունները հայ տղամարդկանց «հրավիրում» էին իրենց բնակավայրերի վարչական շենքի մոտ՝ ինչ-որ կարևոր հարց քննարկելու պատրվակով, որից հետո պատրաստի սպասող ոստիկանները և ժանդարմները ձերբակալում էին նրանց և նետում բանտը: Մի քանի օր կիսասովահարության վիճակում պահելուց հետո, գիշերով նրանց դուրս էին հանում բանտից, տանում որոշակի հեռավորության վրա և սպանում: Որոշ դեպքերում էլ հայ տղամարդկանց (հատկապես մեծահասակներին) տեղահանում էին իրենց ընտանիքների հետ միասին, սակայն ճանապարհին նրանք առանձնացվում և ոչնչացվում էին:

Թեև հայ բնակչության տեղահանության մասին պաշտոնական հրամանագիրը կառավարության կողմից հրապարակվել էր միայն 1915թ. մայիսի 14-ին, սակայն բուն տեղահանության գործընթացն սկսվել էր շատ ավելի վաղ: Դոկտ. Լեփսիուսը հետևյալ կերպ է ներկայացնում հայերի տեղահանության ժամանակագրությունը. «Կիլիկիայի հայ ազգաբնակչության տարագրությունն սկսվում է մարտ ամսվա վերջին և կանոնավոր կերպով շարունակվում ապրիլ և մայիս ամիսներին: Արևելյան նահանգների մեջ (բացառությամբ Վանի) տարագրությունն սկսվում է մայիսի վերջին և հետևողականությամբ շարունակվում է մինչև հուլիսի 1-ը: Արևմտյան Անատոլիայում տեղահանություններն սկսվում են օգոստոսի առաջին օրերին և շարունակվում սեպտեմբեր ամսվա ընթացքում: Հյուսիսային Սիրիայի և Միջագետքի մեջ ձեռք առնված միջոցներն ի սկզբանե սահմանափակված էին կարևոր հայերի բանտարկությամբ: Այստեղ տարագրություններն սկսվում են մայիսի վերջին և շարունակվում են մինչև հոկտեմբեր»:[1]

Հասկանալի է, որ թուրքական կառավարության կողմից հայտարարված տեղահանության ծրագիրն իրականում ոչնչացման հատուկ եղանակ էր: Այն, ըստ իթթիհատականների, պետք է հայերի տեղահանման և այլ վայրերում բնակեցման կեղծ տպավորություն ստեղծեր, իսկ իրականում՝ հասներ տարագիրների հիմնական զանգվածի ոչնչացմանը: Այնպես որ, երկարատև ճանապարհի ընթացքում անընդհատ կրկնվող կանխամտածված սպանությունների, արհեստականորեն ստեղծված սովի, ծարավահարությունների և հիվանդությունների պատճառով քչերն էին հասնում Հյուսիսային Սիրիա և Միջագետքի անապատները: Պատահական չէ, որ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին ուղղված 1915թ. հուլիսի 4-ի իր զեկուցագրում Սամսունի փոխհյուպատոս Կուկհոֆը նշում էր, որ հայ բնակչության բռնագաղթեցումն ու կոտորածը միմյանց հավասարազոր երևույթ են:[1]

Այս իմաստով աղետալի էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից (հատկապես Էրզրումից) և Տրապիզոնից տեղահանված հայության դրությունը: Իրականում նրանց քարավաններից միայն չնչին մնացորդներ էին հասնում ճանապարհորդության վերջնակետ:

Օրինակ՝ հունիսի վերջերին Տուզհիսար գյուղից (Սեբաստիա նահանգի Գոչհիսար գավառում) դուրս եկած հայերի 2000 հոգանոց քարավանից մեկ ամսյա ճանապարհորդության հետևանքով Հալեպ է հասնում ընդամենը 100 հոգի:[2] Պեհեսնե ավանի (Խարբերդի նահանգի Մալաթիա գավառում) 3000 հոգանոց քարավանից տեղ է հասնում 200 հոգի:[3] Խարբերդ քաղաքից դուրս եկած և 1000 հոգուց բաղկացած քարավաններից մեկը՝ երկու ամիս ճամփորդելուց հետո Հալեպ է հասնում 31 հոգով:[4] Երբեմն էլ հայ տարագիրների քարավաններն ընդհանրապես չէին հասնում տարագրության վերջնակետ: Այսպես, Էրզրումի դաշտի 15000 հայ գյուղացիները հունիսի

[1] Հայկական ջարդերը..., էջ 6:

[1] Միքայելյան Վ., Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում (համառոտ ակնարկ), «1915թ. Հայոց ցեղասպանությունը : Պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 1995, էջ 23:
[2] Պողարեան Գ., Ցեղասպան թուրքը: Վկայութիւններ քաղուած՝ հրաշքով փրկուածներու զրոյցներէն, Պէյրութ, 1973, էջ 18:
[3] Նույն տեղում, էջ 33:
[4] Գաբիկեան Կ., Եղեռնապատում փոքուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթրն, 1924, էջ 508:

սկզբներին տեղահանվել էին իրենց բնակավայրերից և իսպառ ոչնչացվել ճանապարհին՝ Քեմախի ձորում:[1]

Ինչևէ, մինչև 1915թ. աշնան վերջ Թուրքիայի ողջ տարածքը, բացառությամբ Կ.Պոլսի (այստեղից այնուամենայնիվ արտաքսվեցին և սպանվեցին շուրջ 34 հազար հայեր[2]) և Զմյուռնիայի, դատարկվել էր հայերից: Այս առումով հատկապես խոսուն է ցեղասպանության գործընթացի գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Բեհաէդդին Շաքիրի հեռագիրն Անթալիայի կառավարչին. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և Զորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»:[3]

1915թ. վերջին - 1916թ. սկզբներին Հալեպի նահանգի Հալեպ, Բաբ, Մեսքենե, Մաարա, Ռաքքա և այլ բնակավայրերի շրջակայքում կենտրոնացել էին մի քանի հարյուր հազար հայեր: Վերջիններիս մեջ էին Արևմտյան Հայաստանի նահանգներից տեղահանված հայ ազգաբնակչության փշրանքները և հիմնականում Կիլիկիայի, Անատոլիայի երկաթգծի երկայնքով տեղակայված բնակավայրերի և Կ.Պոլսի շրջակաների հայությունը, որը համեմատաբար անվնաս էր մնացել (նրանց մի մասն այս վայրեր էին բերվել երկաթուղով): Սակայն, նրանց «հանգիստը» ևս երկարատև չեղավ. 1916թ. սկզբներին նահանգի թուրքական իշխանությունների հրամանով այստեղի հայերը սկսեցին տեղահանվել և քշվել դեպի Տեր-Զոր և Ռես-Ուլ-Այն՝ ոչնչացվելու համար:[4]

Ցեղասպանության անմիջական ականատեսներից մեկի՝ Արամ Անտոնյանի վկայությամբ՝ մինչև 1916թ. աշուն հայերի երեք մեծ կոտորածներ են տեղի ունենում: Նախ 70 հազ.

[1] Bryce J., Toynbee A., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Edited and with an introduction by Ara Sarafian. Princeton, New Jersey, 2000, p. 269.
[2] Ղազարյան Հայկազն, նշված աշխ., էջ 134:
[3] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. Առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա.Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 47:
[4] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 22:

հայեր են սպանվում Ռաս-ուլ-Այնում,[1] նույն ժամանակ սպանվում են Բաղդադի երկաթուղու ճանապարհի վրա՝ Ինթիլլիում (Ադանայի նահանգ) աշխատող շուրջ 50 հազ. հայերը:[2] Երրորդ և ամենամեծ կոտորածը տեղի է ունենում Տեր-Զորի անապատները քշված շուրջ 200 հազ. հայերի նկատմամբ:[3]

Այսպիսով, 1915-1916թթ. ընթացքում Ամբողջ Թուրքիայի տարածքում մոտավոր հաշվարկներով ծրագրված ոչնչացման զոհ են դառնում շուրջ մեկ և կես միլիոն հայեր:[4]

Հրեաների ցեղասպանությունը

1933թ. հունվարին գալով իշխանության գլուխ՝ Գերմանիայի ֆաշիստական վարչակարգն անմիջապես ձեռնամուխ եղավ հակահրեական օրենսդրության մշակմանը: Այդ բնույթի առաջին օրենքներն ուժի մեջ մտան նույն 1933թ. ընթացքում (ապրիլի 7-ին, հունիսի 30-ին և սեպտեմբերի 22-ին), ըստ որոնց, շրջանառության մեջ էր դրվում «ոչ արիացի» հասկացությունը, արգելվում էր հրեաների մուտքը բոլոր պետական հիմնարկներ և ուսումնական հաստատություններ. նրանց արգելվում էր նաև լրագրությամբ զբաղվել:[5]

Ըստ 1935թ. սեպտեմբերի 15-ի «Գերմանական արյան և պատվի պահպանման օրենքի» («Նյուրնբերգյան օրենքներ»)՝ ազդարարվում էր, որ Գերմանիայի քաղաքացի կարող է համարվել միայն այն մարդը, ում «երակներում հոսում է գերմանական կամ ազգակից արյուն»: Նույն թվականի հոկտեմբերի 14-ին ընդունվում է այս օրենքի լրացումը, որով սահմանվում էր «հրեա» հասկացությունը. ըստ գերմանացի օրենսդիրների՝ այսուհետև հրեական ազգությանն էր պատկանում

[1] Տե՛ս Անտոնյան Ա., նշված աշխ., էջեր 54-55:
[2] Նույն տեղում, էջեր 57-60:
[3] Նույն տեղում, էջ 112:
[4] Геноцид армян в Османской империи, стр. XII.
Յոհաննես Լեփսիուսը բերում է 1.396.350 թիվը: (Նույն տեղում, էջ 393:)
[5] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 14:

այն անհատը, որը ծագումով հրեա առնվազն երեք նախնի ուներ:[1] «Նյուրնբերգյան օրենքներով» հրեաները զրկվում էին ընտրական իրավունքից, ամբողջությամբ մեկուսացվում երկրի քաղաքական և մշակութային կյանքից: Հոլոքոստի ուսումնասիրողներից մեկի՝ Յու. Շուլմեյստերի խոսքերով, այս օրենքի ընդունումից հետո «հրեաները հայտնվեցին ռայխի իրավազուրկ հպատակների կարգավիճակում»:[2] 1938թ. ապրիլի 26-ի գերմանական իշխանությունների հատուկ կարգադրությամբ, բռնագրավման էր ենթարկվում հրեական ազգություն ունեցող անձանց ողջ շարժական և անշարժ գույքը:[3]

Այս օրենքների հիշատակումը կարևորվում է այն առումով, որ դրանք կիրառում գտան ոչ միայն Գերմանիայում և Ավստրիայում (անշլյուզի էր ենթարկվել 1938թ. մարտին), այլև շուտով գործադրվեցին նաև այն բոլոր տարածքներում, որոնք պետք է բռնակցվեին կամ օկուպացվեին նացիստների կողմից (Հիտլերի դաշնակից պետությունները ևս համանման օրենքներ ընդունեցին իրենց երկրների հրեաների դեմ): Այս կարգի օրենքները կարևոր դեր խաղացին գերմանացիների հսկողության տակ գտնվող տարածքներում հրեաներին հայտնաբերելու, մեկուսացնելու, իրավազուրկ դարձնելու և «վերջնական լուծման» համար նախապատրաստելու տեսանկյունից:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Ադոլֆ Հիտլերը Ֆրանսիայի կապիտուլիացիայից անմիջապես հետո (1940թ. հունիսի 22-ին) բանավոր հրաման էր տվել ՍՍ-ի գերագույն հրամանատար Հիմլերին նախապատրաստություններ սկսել Եվրոպայում ապրող հրեաների ոչնչացման համար: Այդ գործընթացը պետք է սկսվեր Խորհրդային Միության վրա հարձակման պահից:[4]

1939թ. սեպտեմբերին հարձակվելով և գրավելով Լեհաստանը, ուր ապրում էին ավելի քան 3 միլիոն հրեաներ, ֆաշիստական իշխանությունները ձեռնամուխ եղան այս երկրի տարածքային նոր բաժանմանը: Լեհաստանի արևմտյան շրջանները մտցվեցին ռայխի սահմանների մեջ, իսկ արևելքում գտնվող Կրակով, Լյուբլին, Վարշավա, Ռադոմ (ավելի ուշ՝ նաև Գալիցիա) շրջաններից կազմավորվեց Գերմանիային ենթակա մի նոր վարչական միավոր՝ Լեհաստանի գեներալ-նահանգապետությունը: Հենց այս վարչամիավորի տարածքում էլ շուտով պետք է տեղի ունենար Հոլոքոստին զոհ գնացած հրեաների ամենամեծ հատվածի անհետացումը:

1939թ. սեպտեմբերի 21-ին Հիմլերի տեղակալ Ռայնհարդ Հայդրիխի[1] դիրեկտիվում ասվում էր, որ «հրեական հարցի վերջնական լուծման»[2] համար անհրաժեշտ են կարճատև փուլեր, որոնց ընթացքում պետք է լուծվեին տեխնիկական և տնտեսական հիմնավոր նախապատրաստման հարցերը: Մասնավորապես, հրեանը պետք է առանձնացվեին և կենտրոնացվեին գրավված տարածքների այն վայրերում, որտեղից հետագայում առավել դյուրին կդառնար նրանց ոչնչացման իրականացումը: Դիրեկտիվն առաջարկում էր համակենտրոնացման վայր ընտրել այն քաղաքները, որոնք հանգուցային երկաթուղային կայարաններ էին կամ գտնվում էին երկաթգծերի հարևանությամբ:[3] Նման կենտրոնավայր դարձան Լեհաստանի գեներալ-նահանգապետության քաղաքները:

Ֆաշիստական իշխանությունները նախ և առաջ անհրաժեշտ համարեցին հրեաներից ազատել ռայխի բոլոր հին և նոր ձեռք բերված (Ավստրիա, Լեհաստանի արևմտյան շրջաններ, Բոհեմիա, Մորավիա) տարածքները: 1939թ. վերջից մինչև 1940թ. նոյեմբեր արևմտալեհական հողերից գեներալ-նահանգապետության տարածք փոխադրվեցին շուրջ 350 հազ. հրեա-

---

[1] Տե՛ս Hilberg R., նշված աշխ., էջեր 43-53:
[2] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 16:
[3] Նույն տեղում, էջ 23:
[4] Hornshoj-Moller S., "Hitler and the Nazi Decision-Making Progress to Commit the Holocaust." In *Encyclopedia of Genocide.* Volume I. Israel W. Charny editor in chief. Jerusalem: Institute on the Holocaust, 1999, p. 314.

---

[1] Վերջինս ՍՍ-ի մաս հանդիսացող Կայսերական անվտանգության գլխավոր վարչության տնօրենն էր:
[2] Ընդունված է կարծել, որ սկզբնական շրջանում «վերջնական լուծում» ասելով, գերմանացիները նկատի ունեին միլիոնավոր հրեաների տեղափոխումը Մադագասկար կղզի, սակայն այն պահից, երբ պարզ դարձավ, որ այդ ծրագիրն անիրականանալի է, նացիստները որոշեցին ոչնչացնել հրեաներին: (Տե՛ս Hilberg R., նշված աշխ.,128:)
[3] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 51:

ներ: 1940թ. նոյեմբերից սկսվեց Գերմանիայի, Ավստրիայի և Չեխոսլովակիայի հրեաների տեղափոխումը:[1]

Գեներալ-նահանգապետության տարածք ժամանող մարդկանց տեղավորելու համար մեծ քաղաքների արվարձաններում ստեղծվեցին մեկուսացված թաղամասեր՝ գետտոներ: Առաջին գետտոն ստեղծվեց արդեն 1939թ. հոկտեմբերին Պետրոկով-Տրիբունալսկի քաղաքում: Շուտով նման թաղամաս բացվեց Լոդզիում, ուր տեղավորվեցին 160 հազար հրեաներ: Դրանց գումարվեցին նաև Կրակովի, Լյուբլինի, Ռադոմի, Բիալիստոկի և այլ բնակավայրերի գետտոները: Սրանցից ամենախոշորը 1940թ. հոկտեմբերին բացված Վարշավայի գետտոն էր, ուր նացիստները կենտրոնացրեցին շուրջ 400 հազար հրեաների (ընդամենը 27 հազար՝ միջինը երկուսենյականոց բնակարաններում):[2]

Հրեաներն անմիջապես հայտնվեցին խստագույն հսկողության տակ. գետտոների շուրջ բարձր պատնեշներ կառուցվեցին, հրեաներին պարտադրվեց տարբերանշաններ կրել («Դավթի աստղը»), աշխատունակ բնակչությունը ներգրավվեց պարտադիր աշխատանքների մեջ: Հրեա առաջնորդներից ստեղծվեցին «հրեական խորհուրդներ», որոնք պետք է կատարեին գերմանացիների կարգադրությունները: Նույն նպատակով ստեղծվեց հրեական ոստիկանություն: Գեներալ-նահանգապետությունում հաստատված 3 միլիոնից ավելի հրեականության նման հարաբերական «անդորրը» պետք է շարունակվեր մինչև 1942թ. սկիզբը:

Մինչ այդ, նացիսները ձեռնամուխ եղան ավելի արևելք՝ Խորհրդային Միության տարածքներում գտնվող հրեաների ոչնչացմանը: Այն սկսվեց 1941թ. հունիսից՝ ԽՍՀՄ-ի վրա հիտլերականների հարձակումով: Հրեաներին հայտնաբերելու և ոչնչացնելու գործը հանձնվեց ՍՍ-ի տարբեր ստորաբաժանումներին, մասնավորապես՝ չորս հատուկ նշանակության

[1] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 69:

[2] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сб. материалов в семи томах. Под общ. редакцией Р.А. Руденко. Том 4, Москва, 1959, стр. 664.

օպերատիվ ջոկատներին, որոնք կրնկակոխ հետևեցին գերմանական բանակին և իրականացրեցին իրենց առջև դրված առաջադրանքը:

Պետք է նշել, որ Խորհրդային Միության տարածքում հրեաների ոչնչացումը շարունակվում էր գերմանական օկուպացիայի ողջ ընթացքում՝ մի քանի փուլերով: Առաջին փուլում, որը տևեց 1941թ. հունիսից մինչև 1941-1942թթ. ձմեռ, ոչնչացվեց մերձբալթյան հանրապետություններում, Մոլդավիայում, Արևելյան Բելոռուսիայում, Արևելյան ՈՒկրաինայում և ՌԽՖՍՀ օկուպացված տարածքներում գտնվող հրեաների մեծ մասը: Երկրորդ փուլում՝ 1942թ. գարնանից մինչև նույն թվականի ձմեռ, սպանվեց ՈՒկրաինայի և Բելոռուսիայի արևմտյան շրջանների, ինչպես նաև 1942թ. ամռանն օկուպացված ՌԽՖՍՀ հարավային շրջանների հրեաների մեծ մասը: Երրորդ փուլում՝ 1943թ. սկզբից մինչև գերմանական զորքերի նահանջը, ոչնչացվեցին վերոհիշյալ բոլոր տարածքներում տակավին կենդանի մնացած հրեաները:[1]

Ոչնչացման գործն ավելի արդյունավետ դարձնելու համար օպերատիվ ջոկատները, այլ կերպ՝ այնզացխմբերը, առաջադրանք էին ստացել նախ հայտնաբերել և գրանցել խորհրդային բնակավայրերի բոլոր հրեաներին: Այն բոլոր վայրերում, ուր հրեաները մեծ թիվ էին կազմում և նրանց ողջ զանգվածի ոչնչացումն անհնար էր միանգամից իրականացնել, ստեղծվեցին ժամանակավոր հավաքատեղիներ:[2] Լեհաստանի օրինակով, հրեական գետտոներ կազմավորվեցին Ռիգայում, Մինսկում, Կիևում, Լվովում, Օդեսսայում և այլուր:

Հրեաների սպանություններն սկսվեցին մեծ թափով: Եթե գերմանական ներխուժումից հինգ շաբաթ անց հրեական հարցով զբաղվող ուժերն արդեն ոչնչացրել էին 62 հազարից

[1] Арад И., նշված աշխ., էջ 69:

[2] 1941թ. հունիսի 22-ի դրությամբ Խորհրդային Միության այն տարածքներում, որոնք օկուպացիայի էին ենթարկվել գերմանացիների կողմից, ապրում էր շուրջ 2.750.000-2.900.000 հրեա: Այս թվի մեջ էին մաև 1939-1940թթ. Խորհրդային Միության կողմից անեքսիայի ենթարկված տարածքների հրեաները: (Նույն տեղում, էջ 65:)

ավելի մարդ,[1] ապա ընդամենը հինգ ամիս անց այդ թիվը հասավ 500 հազարի:[2] Մերձբալթիկայում գործող «A» այնզացխմբի հաշվետվություններից մեկում, որը վերաբերում էր 1941թ. հոկտեմբերից մինչև 1942թ. հունվար ամիսը կատարված աշխատանքներին, ասվում էր. «Հիմնական հրամանի համաձայն, Արևելքի մաքրման կանոնավոր աշխատանքը նպատակ ուներ հրեաների լրիվ ոչնչացումը: Այդ աշխատանքը հիմնականում կատարված է: Չհաշված Բելոռուսիան՝ մահապատժի է ենթարկվել 229.052 հրեա: Մերձբալթյան նահանգներում ողջ մնացած հրեաները շտապ կարգով մոբիլիզացվում են աշխատանքների համար և տեղավորվում են գետտոներում... Այսօրվա տվյալներով, Էստոնիայում հրեաներ չկան... Գերմանական զորքերի՝ Լատվիա մուտք գործելու ժամանակ այնտեղ կար 70 հազար հրեա: Ներկա պահին 2500 հրեաներ են մնացել Ռիգայում, 950-ը՝ Դվինսկում, 300-ը՝ Լիբավայում... Լիտվայում տարբեր գործողությունների արդյունքում ոչնչացվել է 136.421 մարդ...»:[3]

Հրեաները զանգվածային ոչնչացման էին ենթարկվում նաև մյուս վայրերում: Օրինակ՝ միայն երկու օրվա ընթացքում՝ 1942թ. օգոստոսի 26-27-ին ուկրաինական Լուցկ քաղաքում գնդակահարվել էր 20 հազար հրեա,[4] նույն օգոստոսի 26-ին սպանվել էին Սառնի քաղաքի 14 հազ. հրեաները: Կիև և Դնեպրոպետրովսկ քաղաքների օկուպացիայի առաջին ամիսներին անհետացել էր 60 հազարից ավելի հրեա:[5]

Այս բոլոր գործողությունների (դրանք պայմանականորեն կարելի է անվանել «առաջին փուլ») հետևանքով՝ Կարմիր բանակի կողմից խորհրդային տարածքների ազատագրման պահին ՍՍ-ի հատուկ ստորաբաժանումներն՝ իրենց օժանդակ ուժերով, իրականացրել էին մոտավորապես 1 միլիոն 400 հազար հրեաների սպանությունը:[1]

Մինչ արևելքի գրավված շրջաններում շարունակվում էին գնդակահարությունները, Բեռլինում որոշում ընդունվեց զբաղվել նաև Եվրոպայի մյուս մասերում մնացած հրեաների ճակատագրով: Պետք է ասել, որ մինչև 1941թ. վերջը ամբողջ Եվրոպան՝ բացի Մեծ Բրիտանիայից, Իռլանդիայից, Իսպանիայից, Պորտուգալիայից, Շվեյցարիայից և Շվեդիայից, գտնվում էր Գերմանիայի կամ նրա դաշնակից պետությունների օկուպացիայի տակ:

1942թ. հունվարի 20-ին Հայդրիխը, որին ռայխսմարշալ Հերման Գյորինգը նշանակել էր (Հիտլերի հրամանով) Եվրոպայում հրեական հարցի վերջնական լուծումը նախապատրաստող լիազոր, Բեռլինի Վանսեյե արվարձանում գտնվող առանձնատներից մեկում, բացեց ՍՍ-ի բարձրագույն ղեկավարների և տարբեր նախարարությունների ներկայացուցիչների համատեղ կոնֆերանս: Այս կոնֆերանսում ռայխի տարբեր գերատեսչությունների միջև համաձայնություն ձեռք բերվեց ամբողջ Եվրոպայի 11 միլիոն հրեաների ոչնչացումն ավելի արդյունավետ ձևով կազմակերպելու վերաբերյալ:[2]

Վանսեյեի կոնֆերանսից հետո էր, որ նացիստները՝ Խորհրդային Միության տարածքում շարունակվող գնդակահարությունների հետ զուգընթաց, ձեռնամուխ եղան Լեհաստանի և Եվրոպայի այլ տարածքներում կենտրոնացված հրեաների ոչնչացման գործին՝ հատուկ այդ նպատակով կառուցված «մահվան ճամբարներում»: Վերջիններս ստեղծվեցին հենց գեներալ-նահանգապետության տարածքում, որը մի շարք երկաթուղային ճանապարհների հարմար խաչմերուկ էր և դրանով հեշտացնելու էր Եվրոպայի տարբեր վայրերից զոհերի փոխադրումը դեպի վերջնակետ:

Վերոհիշյալ կոնֆերանսից դեռ մի քանի շաբաթ առաջ գեներալ-նահանգապետությունում գտնվող Չելմնո ճամբարում արդեն սկսել էր գործել մի գազախուց, իսկ կոնֆերանսից հետո

[1] Headland R., "The Einsatzgruppen: The Question of Their Initial Operations". In *Holocaust and Genocide Studies.* 1989, Volume 4, Number 4, p. 406.
[2] Hilberg R., նշված աշխ., էջ 196:
[3] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 705.
[4] Նույն տեղում, էջ 682:
[5] Նույն տեղում, էջ 683:

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 256:
[2] Տե՛ս Encyclopedia of Genocide. Volume II, Israel W. Charny, Editor in chief. Jerusalem: Institute on the Holocaust and Genocide, 1999, pp. 600-607.

մի քանի ամիսների ընթացքում Լյուբլինի շրջանում հիմնադրվեցին Բելզեց, Սոբիբոր, Մայդանեկ և Տրեբլինկա «մահվան ճամբարները»: Մինչև 1942թ. օգոստոս ամիսն այս ճամբարներում մարդկանց թունավորելու համար հիմնականում օգտագործվում էր կարբոն-մոնոքսիդ գազը. հետո այն փոխարինվեց ավելի կատարյալ միջոցով՝ ցիկլոն «Բ» գազով:[1] 1940-1941թթ. ընթացքում Սիլեզիայում կառուցվեց նաև ռայխի ամենամեծ համակենտրոնացման ճամբարը՝ Օսվենցիմ-Բիրկենաուն, որը մարդկանց դաժան շահագործման և միաժամանակ զանգվածային ոչնչացման վայր դարձավ:[2]

Նացիստները նախ և առաջ ձեռնարկեցին լեհական հրեաների ոչնչացման գործը. հրեաներով բեռնավորված առաջին շարժակազմերն այս ճամբարներ սկսեցին ժամանել 1942թ. գարնանից: Շուտով հրեաների փոխադրումը Լեհաստան սկսվեց նաև Եվրոպայի մյուս երկրներից:

Ողջ պատերազմի ընթացքում գերմանացիներն օկուպացված Ֆրանսիայի 350 հազար հրեաներից «մահվան ճամբարներ» ուղարկեցին և սպանեցին շուրջ 90 հազարին. նույնը տեղի ունեցավ բելգիական հրեաների 40 հազար ներկայացուցիչների հետ: Նիդերլանդների 140 հազար հրեաներից Աուշվից և Սոբիբոր ճամբարներն ուղարկվեցին շուրջ 110 հազարը: Գերմանական ռայխի սահմանների մեջ ընդգրկված չեխական Բոհեմիայի և Մորավիայի շրջաններից Լեհաստան արտաքսվեցին 100 հազարից ավելի հրեաներ: Նորաստեղծ Սլովակիայի իշխանությունների կողմից նույն ճակատագրին արժանացան 80 հազարից ավելի մարդ: Իտալիան օկուպացնելուց հետո գերմանացիները կարողացան այստեղից տեղահանել 8 հազար հրեաների: Մինչև պատերազմի վերջը Խորվաթիայի մարիոնետային իշխանություններն սպանել կամ «մահվան ճամբարներ» էին ուղարկել շուրջ 30 հազար հրեաների: 1944թ. մարտից մինչև հուլիս ամիսը, շատ սեղմ ժամկետներում գերմանացիներն Աուշվից մահվան ճամբար ուղարկեցին շուրջ 437 հազար հունգարական հրեաների: Վերջիններիս ընդհանուր

[1] Grunberger R., Hitler's SS. London: Ebenezer Beyl & Son ltd, 1970, pp. 83-84.
[2] Зэн Я., Концетрационный лагерь Освенцим-Бжезинка. Варшава, 1961, стр. 7.

կորուստները կազմեցին 450 հազար մարդ: 1943թ. Հունաստանի օկուպացիայից հետո գերմանացիները մահվան ճամբարներ ուղարկեցին շուրջ 60 հազար հրեաների: Հարավսլավիայի հրեական համայնքի կորուստները կազմեցին շուրջ 55 հազար հոգի: Նորվեգիայի 1800 հրեաներից «մահվան ճամբարներ» ուղարկվեցին 800-ը:[1]

Եվրոպայի տարբեր մասերից ժամանող հրեաների մի փոքր մասը գերմանացիների կողմից առանձնացվում էր տարբեր աշխատանքների համար, մնացածներն ուղարկվում էին գազախցեր: Այսպես, պատերազմի ընթացքում Չելմնո «մահվան ճամբարում» (1941թ. դեկտեմբեր-1944թ. հուլիս) մոտավոր հաշվարկներով ոչնչացվել էին 150-300 հազար հրեաներ, Բելժեցում (1942թ. մարտ-դեկտեմբեր)՝ 600 հազար, Սոբիբորում (1942թ. ապրիլ-1943թ. հոկտեմբեր)՝ 250 հազար, Տրեբլինկայում (1942թ. հուլիս-1943թ. օգոստոս)՝ 700-900 հազար, Մայդանեկում (1941թ. հոկտեմբեր-1944թ. հուլիս)՝ 360 հազար հոգի:[2] Օսվենցիմ-Բիրկենաու ճամբարում 1942թ. ապրիլից մինչև 1944թ. ապրիլ գազով սպանված հրեաների թիվը կազմում էր 1 միլիոն 765 հազար մարդ (այս ճամբարում 1944թ. հուլիս ամսվա ընթացքում օրական 12 հազար հունգարական հրեաներ էին սպանվում): Ըստ Նյուրնբերգյան դատավարության նյութերի՝ ընդհանուր առմամբ տարբեր համակենտրոնացման ճամբարներում (այսինքն՝ Հոլոքոստի «երկրորդ փուլում») սպանվել էին շուրջ 4 միլիոն հրեաներ:[3]

Հայտնի է, որ զգալով գերմանացիների մոտալուտ պարտությունը, Հիմլերը պատերազմի ավարտից վեց ամիս առաջ հրաման էր արձակել հրեաների ոչնչացումը դադարեցնելու

[1] Տե՛ս Dawidowicz L., The War Against the Jews, 1933-1945. New York: Bantam Books, 1986, pp. 362-394.
[2] Брухфельд Ст., Левин П., Передайте об этом детям вашим...История Холокоста в Европе 1933-1945. Москва, 2000, стр. 57.
[3] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 675, 676.

Այս թվի մեջ պետք է ներառել նաև այլ համակենտրոնացման ճամբարներում (Մաուտհաուզեն, Բուխենվալդ, Ռավենսբրյուկ և այլն) ծանր աշխատանքի հետևանքով զոհված բազմաթիվ հրեաներին:

մասին:[1] Հոլոքոստի մասնագետների շրջանում առավել տարածված է այն տեսակետը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հիտլերականների կողմից ոչնչացված հրեաների թիվը տատանվում է 6 միլիոնի սահմաններում:[2]

2. Հայերի և հրեաների զանգվածային ոչնչացման հիմնական իրագործողները

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի իրականացման գործընթացներն առավել համակողմանիորեն հասկանալու համար նպատակահարմար կլիներ պատասխանել այն հարցերին, թե ինչպիսի՞ ուժեր են օգտագործվել հայերի և հրեաների զանգվածային սպանությունների ժամանակ և արդյո՞ք դրանց միջև որոշակի ընդհանրություններ են եղել:

Բնական է, որ խնդրո առարկա ցեղասպանություններն իրականացնելու նպատակով ոճրագործներին հարկավոր էր հատուկ գործիք: Գտնվելով պատերազմական վիճակում՝ իթթիհատականները և նացիստները հարկադրված դիմեցին բանակին այլընտրանք հանդիսացող այլ ուժերի օգտագործմանը: Հայերի զանգվածային ոչնչացման հիմնական գործիք դարձան «Թեշքիլաթը մահսուսայի» («Հատուկ կազմակերպություն») ուժերը: Հրեաների ոչնչացման գործում հիմնական դերակատարություն ունեցան ՍՍ-ի (գերմ. "Schutzstaffeln"՝ «Պահնորդական ջոկատներ» անվանումից) տարբեր ստորաբաժանումների ջոկատները: Թեև գերմանական ՍՍ-ի և թուրքական Թեշքիլաթը մահսուսայի միջև եղած տարբերությունները վիթխարի են, այնուամենայնիվ, վերոհիշյալ կազմակերպությունները մեզ նախ և առաջ հետաքրքրում են հայերի և հրեաների ցեղասպանության գործընթացներում իրենց դերակատարության տեսանկյունից:

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 635.

[2] Հոլոքոստի ընթացքում զոհված հրեաների թվի վերաբերյալ մանրամասն տե՛ս Поляков Л., История антисемитизма. Эпоха знаний, стр. 442-445.

Այս կազմակերպությունների ծավալած գործունեությունն ուսումնասիրելիս առաջին հայացքից աչքի է զարնում այն իրողությունը, որ, չնայած իրենց կիսազինվորական բնույթին, երկուսն էլ գտնվել են կուսակցական ապարատների ազդեցության ներքո:

ՍՍ-ը սկզբնական շրջանում նացիստական կուսակցության վերնախավի անվտանգությունն ապահովող կազմակերպությունն էր: Արդեն 1934թ. Հիտլերի հատուկ որոշումով ՍՍ-ը իր մատուցած ծառայությունների համար բարձրացվում է անկախ կազմակերպության կարգավիճակի՝ նացիստական կուսակցության համակարգում:[1]

Թեև Թեշքիլաթը մահսուսայի վերաբերյալ կարծիքներ կան, թե այն երկակի բնույթ է ունեցել, այսինքն, կազմակերպության ջոկատների մի մասը պատկանել է Թուրքիայի ռազմական նախարարությանը, իսկ մյուս մասը՝ իթթիհատականների կենտրոնական կոմիտեին,[2] այնուամենայնիվ, պետք է նշել, որ հայերի կոտորածներն իրականացնող Թեշքիլաթը մահսուսայի արևելյան նահանգների բաժանմունքը գտնվում էր կենտրոնական կոմիտեի անմիջական հսկողության ներքո: Հայերի տեղահանության և ջարդերի ժամանակ կոմիտեի հսկողության տակ էին անցել նաև կազմակերպության այն ստորաբաժանումները, որոնք ուղարկվել էին կովկասյան ռազմաճակատ:[3]

Իրերի նման դասավորությունը, այսինքն այն հանգամանքը, որ հայերի և հրեաների զանգվածային սպանություններն իրականացնող կազմակերպությունները կուսակցական ենթակայության տակ էին, պատահական չէ: Բանն այն է, որ հայերի և հրեաների ոչնչացման մտահղացումը պատկանում էր նախ և առաջ կուսակցական բարձրագույն շրջանակներին, հետևաբար, և՛ իթթիհատականները, և՛ նացիստները շահագրգռված էին այս գործի ի կատար ածումը հանձնել ներկուսակցական այնպիսի վստահելի կառույցների, ինչպիսիք էին

[1] Нюрнбергский процесс. Том 2, стр. 210.

[2] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի..., էջեր 38, 72, 93:

[3] Dadrian V.N., The Role of the Special Organization..., p. 7.

մի դեպքում Թեշքիլաթը մահուսան, մյուսում՝ ՍՍ-ը: Բացի այդ, հարկ է նշել, որ ինչպես Թեշքիլաթը մահուսայի, այնպես էլ ՍՍ-ի ամենավերին ղեկավարները համապատասխանաբար պանթուրքիստական և նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսությունների ջերմ հետևորդներ էին: Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը, Զիա Գեոք Ալփը, լինելով նաև կենտրոնական կոմիտեի անդամներ, հայտնի էին իրենց պանթուրքիստական գաղափարներով և մասնավորապես՝ հայատյացությամբ: ՍՍ-ի բարձրագույն ղեկավար Հիմլերը, նրա տեղակալներ Հայդրիխը, Կալտենբրունները, իրենց հերթին, աչքի էին ընկնում որպես ջերմ նացիստներ և անհաշտ հակահրեաներ: Այս վերջին հանգամանքը, ինչ խոսք, պետք է նպաստեր հայերի և հրեաների նկատմամբ կիրառվելիք քաղաքականությանը:

Ավելորդ չէ նշել, որ այս կազմակերպությունները մինչև հայերի և հրեաների ոչնչացման գործին լծվելը, դարձել էին իրենց հասարակություններում քաղաքական ահաբեկման և հարևան երկրներում սաղրանքներ կազմակերպելու գործիք: Այսպես, հայտնի է, որ Թեշքիլաթը մահուսայի (նաև վերջինիս հիմքը հանդիսացող «ֆիդայիների կազմակերպության») մարտիկները մասնակցել են Թուրքիայի մի քանի հակադիր քաղաքական գործիչների սպանություններին, ինչպես նաև Կովկասում և Բալկաններում իրականացված մի շարք սաղրանքներին:[1] ՍՍ-ը նույնպես, մինչև պատերազմն օգտագործվել է քաղաքական հակառակորդներին ճնշելու («Երկար դանակների գիշեր»[2]) և հատկապես միջազգային ասպարեզում մի շարք սաղրանքներ կազմակերպելու գործում («Օտտո», «Գլեյվից» գործողություններ[3]), որոնք Հիտլերի համար պատրվակ հանդիսացան նոր տարածքներ բռնակցելու համար:

Թուրքական աղբյուրների համաձայն, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թեշքիլաթը մահուսա

[1] Մանրամասն տե՛ս Авакян А., Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений. Ереван, 1999, стр. 73-74, 79-84.
[2] Տե՛ս Мельников Д., Черная Л., Тайны гестапо. Империя смерти. Москва, 2000, стр. 45-59.
[3] Նույն տեղում, էջեր 249, 252-254:

կազմակերպության կառավարման համար ստեղծված է եղել ութ հոգուց բաղկացած ղեկավար կոմիտե: Վերջինիս անդամներն էին Միդհատ Շյուքրին, Զիա Գեոք Ալփը, Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը, սպաներ Հիլմին, Ռիզան, Քյուչյուք Թալեաթը և Աքֆը:[1] Երիտթուրքերի դատավարության նյութերից մեզ համար պարզ է դառնում նաև, որ այս կոմիտեի որոշումները հաստատում էր մայրաքաղաքի պարետ Ջևադ բեյը[2] (այս վերջին իրողությունը խոսում է կազմակերպության՝ ռազմական նախարարության հետ ունեցած սերտ համագործակցության մասին):

Վերոհիշյալ անդամներից Բեհաէդդին Շաքիրի կենտրոնը գտնվել է Էրզրում քաղաքում, որտեղից նա ղեկավարել է կազմակերպության՝ արևելյան վիլայեթներում գործող ուժերը: Թեշքիլաթը մահուսայի անդամների ընդհանուր թիվը կազմել է 30-34 հազար,[3] որի զգալի մասը բանտերից ազատ արձակված հանցագործներ են եղել: Վերջիններս իթթիհատի կենտրոնական կոմիտեի որոշմամբ (այնուհետև նաև կառավարության հաստատմամբ), դուրս են բերվել երկրի տարբեր քաղաքների բանտերից և ազատություն շնորհվել՝ կառավարության հատուկ հանձնարարությունները կատարելու դիմաց: Դրա մասին են խոսում երիտթուրքերի դատավարության ժամանակ օգտագործված փաստաթղթերը: Օրինակ՝ 1914թ. նոյեմբերին Բալքեսիրի կուսակցական տեսուչ Մուսայից Միդհատ Շյուքրիին ուղղված նամակում ասվում էր. «...Սրանից մեկ շաբաթ առաջ ներքին գործերի մինիստրությունից... մի հրաման եկավ, որ իմ լիվայի մեջ գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մարդկանցից մոտ երկու հարյուր հոգի հավաքեմ և ուղարկեմ Կովկասում չեթեություն անելու համար: Այդ գործն արդեն նախաձեռնվել է...»:[4] Հայտնի է նաև, որ 1915թ. մարտի 3-ին Անկարայի կենտրոնական բանտից ազատ է արձակվել 249

[1] Տե՛ս Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հատոր 2, գիրք 1, Երևան, 2001, էջ 451:
[2] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի..., էջեր 38-39:
[3] Dadrian V.N., The Role o f the Special Organization..., p. 10.
[4] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի..., էջ 99:

հանցագործ, իսկ մայիսի 15-ին Յոզղաթի բանտից՝ 65 հոգի, որոնցից 51-ը՝ մարդասպան:[1]

Այս երևույթը տեղի էր ունենում ողջ կայսրությունով մեկ: Թուրք ժամանակակցի՝ պատմաբան Ահմեդ Ռեֆիկի հավաստմամբ, «Պատերազմի սկզբում Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա: Այդ հրոսակախմբերը բանտերից դուրս բերված մարդասպաններից և հանցագործներից էին կազմված: Սրանք, ռազմական նախարարության մարզահրապարակում մեկ շաբաթ մարզվելուց հետո, «Հատուկ կազմակերպության» միջոցով Կովկասի սահման էին ուղարկվում: Հայերի նկատմամբ իրականացվող բռնություններում ամենից մեծ հանցագործություններն այս հրոսակախմբերն են կատարել»:[2]

Հայերի ոչնչացմանը մասնակից Թեշքիլաթը մահսուսայի համալրման մեկ այլ կարևոր աղբյուր էին կայսրության տարածքում ապրող ռազմատենչ մահմեդական ժողովուրդները, առաջին հերթին՝ քրդերը և 19-րդ դարում Հյուսիսային Կովկասից Թուրքիա ներգաղթած լեռնական ժողովուրդները, որոնք հայտնի էին «չերքեզ» հավաքական անվամբ:

Այսպես, կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում Իզմիրի մյուֆտի Զուհդի Զադե Ահմեդն ասում էր. «...Եթե չեչեն Ահմեդ աղային թույլ տրվի, ապա Դիարբեքիրում իր հայրենակիցներից մի կարևոր «Թեշքիլաթ» ստեղծելով՝ շարժվելու է դեպի սահման... Կարծում ենք նրանց առաքումը կարող է երկու տեսանկյունով օգտակար լինել հայրենիքի համար»:[3]

1914թ. սեպտեմբեր ամսով թվագրված նամակում, որն Էրզրումի պատասխանատու քարտուղար Հիլմին ուղարկել էր քրդական ցեղապետերից մեկին, ասվում էր. «Մոտենում է ժամանակն իրականացնելու այն, ինչ մենք քննարկել էինք Երզնկայում... Ես կցանկանայի ունենալ քո ցեղի 50 խիզախներին... այստեղ նրանց կապահովեմ բոլոր հարմարություններով... Դու նախապատրաստիր ու ամեն ինչ հայտնիր մեծապատիվ բեյ-էֆենդի Բ. Շաքիրին...»:[1]

Թեշքիլաթը կազմակերպության անդամների մի մասն էլ կազմում էին թուրքերից բաղկացած տեղական «ինքնապաշտպանական» ուժերը, որոնք հավաքագրվում էին չեթեություն անելու նպատակով:[2] Պետք է կարծել, որ կազմակերպության մեջ ներգրավված են եղել նաև Բալկաններից տարագրված փախստական թուրքերը:

Թեշքիլաթը մահսուսայի ջոկատները ղեկավարվում էին բանակի գործող կամ պահեստի սպաների կողմից: Փոքր ջոկատների գլուխ կանգնած էին յուզբաշիները (կապիտան), իսկ մեծ ջոկատներն առաջնորդվում էին բինբաշիների (մայոր) կողմից:[3] Թուրքիայի արևելյան նահանգներում Թեշքիլաթը-ի հայտնի հրամանատարներից էին Կարա Քեմալը, Յենիբահչելի Նաիլը, հրետանու մայոր տրապիզոնցի Ռիզա բեյը:[4]

Ըստ Ա.Թոյնբիի, այն բանից հետո, երբ հայերը «վերաբնակեցվելու» նպատակով ժանդարմների ուղեկցությամբ դուրս էին բերվում իրենց բնակավայրերից, ճանապարհի հենց առաջին հարմար կայանատեղում՝ օտարազգիների տեսադաշտից դուրս, հայտնվում էին չեթեները և իրականացնում կոտորածը: Սա, ըստ հեղինակի, տեղի էր ունենում Անատոլիայի բոլոր վիլայեթներում, բացի Այդինից:[5]

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստական ղեկավարությունը ևս իր հանցագործ ծրագրերն իրականացնելու համար ստեղծեց հատուկ ուժեր: Դրանք կազմված էին ՍՍ-ի տարբեր ստորաբաժանումներից, որոնք օգտագործվեցին հրեաների ոչնչացման տարբեր փուլերում:

ՍՍ-ի հզորությունը հասկանալու համար պետք է նշել, որ 1929թ. բաղկացած լինելով ընդամենը 280 հոգուց, 1939թ. այս կազմակերպությունն իր բոլոր ստորաբաժանումներում

[1] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշված աշխ., էջ 454:
[2] Ռեֆիկ Ա., Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 33:
[3] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի..., էջ 91:

[1] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշված աշխ., էջ 452:
[2] Dadrian V.N., The Role of the Special Organization..., էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 19:
[4] Авакян А., նշված աշխ., էջ 85:
[5] Toynbee A., The Western Question in Greece and Turkey. Boston, New York, 1922, p. 280.

արդեն ուներ 240 հազար ծառայող:[1] Պատերազմի ժամանակ ՍՍ-ը բաղկացած էր տասներկու տարբեր գործառույթներ ունեցող վարչություններից: Հրեաների ոչնչացման գործում սրանցից թերևս ամենամեծ ավանդը պատկանում է 1939թ. կազմավորված «Անվտանգության գլխավոր կայսերական վարչությանը»՝ «RSHA» ("Reichssicherheitshauptamt"): Վերջինս, իր հերթին, բաղկացած էր մի շարք ենթաբաժիններից: Դրանցից գլխավորներն էին գաղտնի քաղաքական ոստիկանությունը՝ «Գեստապոն» ("GeheimeStaatspolizei"), քրեական ոստիկանությունը՝ «Կրիպոն» ("Kriminalpolizei"), և անվտանգության ծառայությունը՝ «ՍԴ»-ն ("Sicherheitsdienst"): Վերջինս բաժանվում էր ներքին անվտանգության և արտաքին անվտանգության բաժինների:[2] «RSHA»-ն իր ստեղծման պահից գլխավորում էր Ռայնհարդ Հայդրիխը, իսկ 1942թ. նրա սպանությունից հետո՝ Կալտենբրունները: Վերջիններս անմիջականորեն ենթարկվում էին ՍՍ-ի ռայխսֆյուրեր Հայնրիխ Հիմլերին:

Բացի «Կայսերական անվտանգության գլխավոր վարչությունից»՝ 1938թ. Հիտլերի հրամանով ստեղծվել էին ՍՍ-ի ռազմականացված ստորաբաժանումները՝ «Վաֆֆեն-ՍՍ»-ը ("Verfugungstruppe"): Վերջինս համարվում էր ՍՍ-ին ենթակա կազմակերպություն, սակայն անհրաժեշտության դեպքում կարող էր տրամադրվել բանակին՝ քաղաքականապես շարունակելով ենթարկված մնալ նացիստական կուսակցությանը:[3] «Վաֆֆեն-ՍՍ»-ի թվաքանակը պատերազմի վերջում հասավ 580 հազարի:[4]

Ահա հիմնականում այս ուժերն էին, այսինքն՝ «RSHA»-ի վերոհիշյալ ստորաբաժանումները և ՍՍ-ի ռազմականացված ջոկատները, որոնք հիմք հանդիսացան հրեաների ոչնչացումն իրականացնող այսպես կոչված «այնզացխմբերի»

[1] СС в действии. Документы о преступлениях СС. Под редакцией М.Ю. Рагинского. Москва, 1969, стр. 43.
[2] Мельников Д., Черная Л., նշված աշխ., էջ 207:
[3] Buchler Ye., "Kommandostab Reichsfuhrer-SS: Himmler's Personal Murder Brigades in 1941". In *Holocaust and Genocide Studies*, 1986, Volume 1, Num. 1, p. 12.
[4] СС в действии, стр. 43-44.

("Einsatzgruppen")՝ հատուկ նշանակության ուժերի կազմավորման համար:

Մինչև ֆաշիստական Գերմանիայի՝ Խորհրդային Միության վրա հարձակվելը կազմակերպվեցին չորս այնզացխմբեր, որոնց անդամների ընդհանուր թիվը հասնում էր մոտ 3000 հոգու («RSHA»-ի պետ Հայդրիխի հրամանատարությամբ): Այս խմբերից յուրաքանչյուրն ուղարկվեց չորս տարբեր ուղղությամբ: Այնզացխումբ «A»-ն (հրամանատար՝ Շտահլեկեր) կցվեց «Հյուսիս» բանակախմբին, այնզացխումբ «B»-ն (հրամանատար՝ Նեբե)՝ «Կենտրոն» բանակախմբին: «Հարավ» բանակախմբի ուղղությամբ շարժվեց այնզացխումբ «C»-ն (հրամանատար՝ Ռաշ), իսկ այնզացխումբ «D»-ն (հրամանատար՝ Օհլենդորֆ) կցվեց 11-րդ բանակին, որը գործում էր ռազմաճակատի ծայր հարավում:[1]

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում գերմանական զորքերի արագ առաջխաղացման հետևանքով «B» և «C» այնզացխմբերը՝ համապատասխանաբար Բելոռուսիայում և Ուկրաինայում, որոշակի դժվարություններ ունեցան՝ կապված հրեաների մեծ թվաքանակի հետ: Այդ իսկ պատճառով, բացի վերոհիշյալ չորս այնզացխմբերից, հրեաների ոչնչացման համար որպես օժանդակ ուժ օգտագործվեցին ՍՍ-ի երեք հատուկ ռազմականացված բրիգադ՝ 25 հազար ընդհանուր թվաքանակով՝ Հիմլերի անմիջական հրամանատարությամբ:[2]

Բացի վերոհիշյալ ուժերից, որոնք հիմնականում իրականացրեցին հրեական ցեղասպանության առաջին փուլը (ԽՍՀՄ տարածքում), նացիստներն օգտագործեցին նաև ՍՍ-ին պատկանող այլ ուժեր, մասնավորապես՝ «Տոտենկոպֆ» կոչվող (գերմ. "Totenkopf"՝ «մեռած գլուխ») ստորաբաժանումները, որոնց հանձնարարված էր հրեաների ոչնչացման գործը համակենտրոնացման ճամբարներում: Պատերազմի ժամանակ 36 հազար անդամ ունեցող այս կազմակերպությունից շուրջ 12-14 գունդ ի սպաս դրվեցին այդ գործին:[3]

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 188:
[2] Buchler Ye., նշված աշխ., էջեր 14-15:
[3] Նույն տեղում, էջ 12:

Մինչև 1940թ. ՍՍ-ը կամավոր հիմունքների վրա հավաքագրվող կազմակերպություն էր, իսկ դրանից հետո զորակոչվածները կազմում էին բոլոր ծառայողների մեկ երրորդը:[1] Հետաքրքիր է, որ ինչպես և երիտթուրքերի դեպքում, նացիստներն իրենց ծրագրերն իրականացնելու համար օգտագործել են բանտերից ազատ արձակված հանցագործների: Այսպես, համակենտրոնացման ճամբարները հսկող Տոտենկոպֆի ստորաբաժանումներում ներգրավված են եղել բանտերից ազատ արձակված վեց հազար հոգի,[2] որոնք էլ ցեղասպանական գործընթացում աչքի ընկան իրենց կիրառած դաժանություններով: Օրինակ՝ հայտնի է, որ Աուշվից համակենտրոնացման ճամբարի կառուցման ժամանակ՝ 1940թ. մայիսին, վերջինիս առաջին պարետ Ռուդոլֆ Հեսը (Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա ծառայել էր Օսմանյան Թուրքիայում) Զաքսենհաուզեն համակենտրոնացման ճամբարի պարետից պահանջել և ստացել էր 30 պրոֆեսիոնալ հանցագործների:[3] Ազատ արձակված հանցագործներից կազմվել էր նաև Վաֆֆեն-ՍՍ-ի հատուկ բրիգադ՝ պրոֆեսիոնալ հանցագործ Օսկար Դյուրլեվանգերի գլխավորությամբ: Այս բրիգադը, որն իր մեջ ներառում էր ինչպես «մանր» գողերի, այնպես էլ ծանր հանցանքներ կատարած անձանց, հրեաների հանդեպ իր դաժանություններով աչքի ընկավ նախ Կրակովի գետտոյում ապա՝ Բելոռուսիայի տարածքում՝ հակապարտիզանական պայքարի ընթացքում:[4]

Այն իրողությունը, որ երկու ցեղասպանությունների հեղինակները դիմել էին պրոֆեսիոնալ հանցագործների օգնությանը, պետք է կարծել՝ հիմնված էր որոշակի հաշվարկի վրա: Նախ, նկատի էր առնված այն հանգամանքը, որ դահիճների առջև զոհերի կարգավիճակում հայտնվելու էին ոչ միայն

[1] CC в действии, стр. 44:

[2] Լիթել Ֆ., Ողջակիզում և ցեղասպանություն. հիմնական զարգացումը,- «Հայ ժողովրդի պատմությունից», Երևան, 1990, էջ 10:

[3] Зэн Я., նշված աշխ., էջ 15:

[4] Grunberger R., նշված աշխ., էջ 95: Տե՛ս նաև Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сб. материалов в семи томах. Под общ. редакцией Р.А. Руденко, том 3, Москва, 1958, стр. 358.

տղամարդիկ, որոնց ոչնչացման անհրաժեշտությունն ավելի հեշտ էր «հիմնավորել», այլև երեխաներ, կանայք, մեծահասակ մարդիկ: Վերջիններիս սպանության գործը պահանջում էր կարծր գործելակերպ, խղճի հետ կապված բոլոր զգացումների բացառում, հետևաբար, հանցագործների ներգրավումն այս գործընթացին առավել քան տեղին էր:[1] Իթթիհատականները և նացիստները պետք է հաշվի առած լինեին նաև այն հանգամանքը, որ բանտերից դուրս բերված մարդիկ տարբեր խոստումների դիմաց կարող էին ավելի մեծ պատրաստակամություն ցուցաբերել սպանություններ կատարելու գործում: Վերջապես, հանցագործների ներգրավումը ձեռնտու էր զինվորական կամ այլ ծառայության մեջ գտնվող մարդկային ռեսուրսները պատերազմի հիմնական գործից չշեղելու տեսանկյունից:

Հայերի և հրեաների զանգվածային ոչնչացման մասին մեր պատկերացումները թերի կլինեին, եթե այդ գործընթացներում ՍՍ-ից և Թեշքիլաթը մահուսայից զատ, հաշվի չառնվեր մյուս ուժերի մասնակցությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է թուրքական և գերմանական բանակներին: Բավա-

[1] Հետաքրքիր է, որ հայերի և հրեաների զանգվածային սպանություններին մասնակցող անձանցից նրանք, ովքեր նախկինում նման փորձ չէին ունեցել, այդ սպանություններից հետո հոգեբանական որոշակի խնդիրների առջև էին կանգնում: Այսպես, ԽՍՀՄ տարածքում հրեաների ոչնչացումն իրականացնող այնզացխմբերի անդամները ժամանակ առ ժամանակ նյարդային խանգարումներ էին ունենում, և ստորաբաժանումներից մի քանիսում ալկոհոլային խմիչքների օգտագործումը սովորական երևույթ էր դարձել: (Hilberg R., նշված աշխ., էջ 218:) Հայտնի է նաև, որ հրեաների գնդակահարության վայրեր այցելելուց հետո, Կենտրոնական Ռուսաստանի ՍՍ-ի հրամանատար գեներալ Բախ-Զելևսկին լուրջ հոգեբանական խնդիրներով տեղափոխվել էր հիվանդանոց:(Նույն տեղում, էջ 216:)

Թուրքական ռազմածովային ուժերի լեյտենանտ Օմերն իր հայ զրուցակցին (չգիտակցելով վերջինիս ով լինելը) խոստովանել էր, որ ինքը Ստամբուլում զինվորագրվել էր դոկտ. Նազրմի կողմից և, նշանակվելով 18 հանցագործներից բաղկացած մի ջոկատի հրամանատար, մասնակցել էր Երզնկայի մոտ՝ Քեմախի ձորում, հայերի կոտորածներին: Թուրք սպան պատմել էր նաև, որ դրանից հետո նա անընդհատ մղձավանջների մեջ է գտնվում և խղճի մեծ ցավ է ապրում: (Dadrian V.N., The Role of the Special Organization..., p. 23.)

կանին հետաքրքիր է այն փաստը, որ մինչև ցեղասպանության գործին լծվելը, և՛ Թեշքիլաթը մահմուսայի, և՛ ՍՍ-ի ղեկավարները բանակի հրամանատարության հետ բանակցություններում կարողացել էին մերձճակատային շրջաններում իրենց հատուկ առաջադրանքները կատարելու համար որոշակի ազատություն ձեռք բերել:[1] Չնայած սրան՝ թուրքական և գերմանական բանակների օժանդակությունը ցեղասպանական գործընթացին շոշափելի էր:

Թուրքական բանակի մեղսակցության մասին խոսելիս՝ նախ և առաջ հարկավոր է շեշտել դրա մասնակցությունը բանակ զորակոչված 18-45 տարեկան հայ տղամարդկանց ոչնչացման գործում: Հայ սպաները և զինվորները, որոնց մոտավոր թիվը պետք է կազմեր 100 հազար,[2] ոչնչացվեցին 1915-1916թթ. ընթացքում:

Այստեղ հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ բանակի գլխավոր հրամանատար ռազմական նախարար Էնվերը համարվում էր հայերի ցեղասպանության գլխավոր ջատագովներից մեկը: Ոչ պակաս կարևոր է 4-րդ բանակի հրամանատար Ջեմալի և 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի հայատյացության գործոնը: Մասնավորապես վերջինս տեղահանությունների ժամանակ հանդես էր եկել կոչով, որի համաձայն, հայերին աջակցող մահմեդականները պետք է ենթարկվեին մահապատժի, իսկ նրանց ապաստարանները՝ այրվեին:[3] Այս գեներալն էր նաև, որ հրաման էր արձակել օսմանյան բանակի հայ զինվորներին գնդակահարելու մասին:[4]

Թուրքական բանակի մասնակցությունը հայերի կոտորածներին մեծ չափեր է ընդունել հատկապես Վանի նահանգում՝ այստեղի զինվորական կուսակալ Ջևդեթի գլխավորությամբ: Բիթլիսում հայերի ոչնչացումը կազմակերպել է Թալեաթի աներորդի Մուստաֆա Խալիլը:[1] Մոսուլի գերմանական կոնսուլ Հոլշտայնի 1915թ. սեպտեմբերի 9-ի զեկուցագրից հայտնի է դառնում նաև, որ Ջեզիրեի (Տիգրանակերտի նահանգ) ողջ քրիստոնյա բնակչությունը ոչնչացվել է բանակի մասնակցությամբ:[2]

Մահմուդ Քյամիլ փաշային ենթակա հրամանատարներից հայերի դեմ իրենց հալածանքներով աչքի են ընկել նաև գեներալներ Խալիլ Կուտը (Էնվերի հորեղբայրը) և Ալի Իհսան Սաբիսը. վերջիններս իրենք են պարծենալով խոստովանել հայերի ոչնչացման գործում իրենց ունեցած ակտիվ մասնակցության մասին:[3]

Բանակի ներգրավվածությունը հայերի ցեղասպանությանն արտահայտվում է նաև Թեշքիլաթը կազմակերպությանը ցույց տրված օժանդակությամբ: Հայտնի է, որ բանտերից ազատ արձակված հանցագործները մարզվում էին ռազմական նախարարության աջակցությամբ,[4] իսկ Թեշքիլաթը-ի ջոկատներն առաջնորդվում էին բանակի գործող կամ պահեստի սպաների կողմից:[5]

Ինչպես և թուրքական դեպքում, գերմանական բանակի դերը նույնպես զգալի է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության (ինչպես հրեական, այնպես էլ սլավոնական) ոչնչացման գործում: Խորհրդային Միություն ներխուժելու արդեն իսկ առաջին շաբաթներից այնզացխմբերն իրենց զեկույցներում նշում էին բանակի ցուցաբերած ակտիվ օժանդակության մասին:[6] Այդ օժանդակությունը, մասնավորապես, դրսևորվում էր այնզացխմբերի զոհերին բնակավայրերից դեպի գնդակահարման վայրերը փոխադրե-

[1] Տե՛ս Dadrian V.N., The Role of the Special Organization..., էջ 17-18: Նաև Hilberg R., նշված աշխ, էջեր 183, 187:
[2] Ղազարյան Հայկազն, նշված աշխ., էջ 420:
[3] Dadrian V.N., "The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities". Reprinted from *Journal of Political and Military Sociology*. 1992, Volume 20, Numb. 2, p. 277.
[4] Նույն տեղում, էջ 277:

[1] Фирбюхер Г., Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Ереван, 1991, стр. 60.
[2] Dadrian V.N., The Role of the Special Organization..., p. 10.
[3] Նույն տեղում, էջ 276:
[4] Ռեֆիկ Ա., նշված աշխ., էջ 33:
[5] Dadrian V.N., The Role of the Special Organization..., p. 19.
[6] Headland R., նշված աշխ., էջ 404.

լու, հսկողություն և կարգ ու կանոն հաստատելու պարտականություններով:

Գերմանական բանակի ակտիվ դերը նախ և առաջ պայմանավորված էր վերջինիս բարձրագույն հրամանատարության դրական վերաբերմունքով դեպի հակահրեական գործողությունների ծավալումը: Այսպես, հայտնի է, որ գերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատար Կեյտելն ամենամանրակրկիտ ձևով տեղեկացվում էր հակահրեական գործողությունների մասին:[1] Հայտնի է նաև, որ արդեն 1941թ. գերմանական բանակի բարձրագույն հրամանատարությունը պաշտոնապես թույլատրել էր այնզացխմբերին մուտք գործել բանակի ենթակայության տակ գտնվող ժամանակավոր ճամբարներ, առանձնացնել հրեա և կոմունիստ ռազմագերիներին և ոչնչացնել նրանց:[2]

Բանակի կողմից հրեաների զանգվածային սպանությունների դեպքերը բազմապատկվեցին գերմանացիների կողմից հակապարտիզանական պայքարի հայտարարմամբ: Այս պայքարն իրականում նպատակ ուներ ամբողջացնել այնզացխմբերի կիսատ թողած գործերը: Այսպես, գերմանական զինված ուժերի գերագույն հրամանատարության 1942թ. դեկտեմբերի 16-ի հույժ գաղտնի հրամանում ասվում էր. «...Բանակը իրավունք ունի և պարտավոր է ավազակախմբերի դեմ պայքարում կիրառել ցանկացած միջոց... նույնիսկ կանանց և երեխաների նկատմամբ, եթե դա նպաստում է հաջողությանը...»:[3]

Ռուսաստանի ուղղությամբ ՍՍ-ի և ոստիկանության բարձրագույն ղեկավար Բախ-Զելևսկին Նյուրնբերգյան դատավարության ժամանակ հայտարարել էր, որ գերմանական բանակի թիկունքում չկար այնպիսի մի գեներալ, որն ինչ-որ կերպ մասնակից չլիներ հակապարտիզանական պայքարին, որի հետևանքով խաղաղ բնակչության շրջանում շատ հաճախ

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 2, стр. 333.
[2] Headland R., նշված աշխ., էջ 405:
[3] Нюрнбергский процесс.Том 3, стр. 347.

մեծ թվով զոհեր էին լինում:[1]

Հայտնի են նաև դեպքեր, երբ բանակի գեներալները վերոհիշյալ նպատակով ուղղակիորեն ստանձնել են ՍՍ-ի հատուկ ուժերի հրամանատարությունը: Այսպես, 1941թ. հոկտեմբեր ամսից ՍՍ-ի հեծելազորային բրիգադը ենթարկվել է բանակի հրամանատարությանը և մասնակցել Մոսկվայից 200 կմ հեռավորության վրա գտնվող Վելիկիե Լյուկի և Ռժև բնակավայրերի միջև «խաղաղություն հաստատելու» գործողություններին:[2] ՍՍ-ի առաջին բրիգադը 1941թ. օգոստոսին մեկ ամսով անցել էր ֆելդմարշալ Ռայխենաուի 6-րդ բանակի հրամանատարության տակ՝ շրջակա տարածքները պարտիզաններից և նրանց «սատարող» հրեաներից մաքրելու առաջադրանքով:[3]

Հայերի և հրեաների ոչնչացման գործողություններում անշուշտ մեծ է եղել նաև ոստիկանության դերը: Սա պայմանավորված էր թե՛ ոստիկանության՝ պետության մեջ ունեցած կարևոր գործառույթներով, թե՛ այն հանգամանքով, որ և Թուրքիայի, և Գերմանիայի ոստիկանությունները գտնվում էին ցեղասպանության հեղինակների անմիջական հսկողության տակ: Այսպես, Թալեաթը, լինելով ներքին գործերի նախարար, անմիջականորեն ղեկավարում էր ոստիկանության և ժանդարմերիայի գործողությունները: Այս ուժերը հիմնականում կատարեցին հայ տարագիրների քարավաններն ուղեկցելու ֆունկցիան, սակայն, շատ դեպքերում հենց իրենք ստանձնեցին դահիճի պարտականությունը:

Հրեաների դեպքում ևս, գերմանական ոստիկանությունը կատարեց զոհերին հայտնաբերելու (հատկապես ցեղասպանության երկրորդ փուլում), հսկելու, ուղեկցելու օժանդակ գոր-

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 3, стр. 355, 358:

Օրինակ՝ նույն դատավարության ընթացքում Օհլենդորֆը վկայել էր, որ 11-րդ բանակի հրամանատար Մանշտեյնը 1941թ. աշնանը շտապեցրել էր «D» այնզացխմբին Սիմֆերոպոլ քաղաքի հրեաների ոչնչացումն ավարտել մինչև ծննդյան տոները՝ պարենի հետ կապված առկա խնդիրների պատճառաբանությամբ: (Տե՛ս Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 96:)
[2] Buchler Ye., նշված աշխ., էջ 16:
[3] Նույն տեղում, էջ 18:

ծառույթը (ՍՍ-ի ռայխսֆյուրեր Հիմլերը 1936 թվականից հանդիսանում էր նաև գերմանական ոստիկանության տնօրենը):[1] Հրեաների ոչնչացման գործընթացում իրենց ակտիվությամբ հատկապես աչքի ընկան սլովակական և հունգարական ժանդարմերիաները:[2]

Երկու ցեղասպանությունների համար էլ հատկանշական է այն իրողությունը, որ բացի վերոհիշյալ կանոնավոր ուժերի գործածումից, երիտթուրքերը և նացիստները դիմել են այլընտրանքային միջոցների, այն է՝ հայերի և հրեաների ոչնչացման գործընթացներում հասարակ ժողովրդի ներգրավմանը: Ոճրագործները, հաշվի առնելով նաև պատմական փորձը, հասկացել էին, որ հայերի և հրեաների հարևանությամբ ապրող քաղաքացիական բնակչության օգտագործումն այսպիսի նպատակներով բավականին շահավետ կարող է լինել:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայերի կոտորածների ընթացքում, թերևս, ամենաակտիվ մասնակցությունն ունեցան քրդերը, չերքեզները և որոշ դեպքերում՝ քոչվոր ռազմատենչ արաբական ցեղերը: Ընդ որում, առաջին երկու ժողովուրդների ներկայացուցիչներն իրենց մասնակցությունը ցուցաբերեցին ոչ միայն որպես Թեշքիլաթը մահուսայի անդամներ, այլև սեփական նախաձեռնությամբ՝ որպես թուրք պաշտոնյաների հրահրման արդյունք: Այս իմաստով, հայերի կոտորածներին օժանդակում էին նաև հասարակ թուրքերը:

Արևմտյան Հայաստանի նահանգներից և Անատոլիայի շրջաններից տեղահանված հայության ծանր ճանապարհորդության պատմությունները լի են քրդերի կողմից կատարած հարձակումների, սպանությունների, բռնությունների, թալանի, առևանգումների նկարագրություններով: Չերքեզների կողմից հայերի զանգվածային սպանության ամենացայտուն օրինակը, թերևս, Ռաս-ուլ-Այնում հանգրվանած հայերի ոչնչացումն էր:

Գերմանացիները ևս հրեաների ոչնչացման ընթացքում հաճախ դիմում էին հրեաների հարևան ժողովուրդներին:

[1] CC в действии, стр 44.

[2] Տե՛ս Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 719, 722.

Այսպես, Մերձբալթիկայում իրականացված հակահրեական միջոցառումների ժամանակ «A» այնզացիմբին մեծ օգնություն էին ցույց տվել լիտվացի կամավորականները և լատվիական օժանդակ ոստիկանությունը:[1]

Գերմանացիներին հատկապես մեծ աջակցություն էին ցույց տալիս ուկրաինացի ազգայնականները: Օրինակ՝ Կիևում հրեաների զանգվածային գնդակահարություններին մասնակցում էր ուկրաինական օժանդակ ոստիկանությունը:[2] Ուկրաինական և մերձբալթյան ժողովուրդներից զգալի թվով կամավորներ էին աշխատում նաև Լեհաստանի գեներալ-նահանգապետության տարբեր համակենտրոնացման ճամբարներում:

1944թ. ապրիլին ՍՍ-ի կազմում ընդգրկվեցին 11 հազար ալբանացիներ Կոսովոյից և Ալբանիայից, որոնց առաջին իսկ առաջադրանքը եղավ Պրիշտինայի 300 հրեաներին համակենտրոնացման ճամբար ուղարկելը:[3] Ռազմաճակատի ծայր հարավում՝ Սև ծովի ափամերձ շրջաններում, «D» այնզացիմբի հրամանատարությունը բացահայտել էր, որ տեղի էթնիկ գերմանացիները մեծ հաճույքով են մասնակցում հրեաների գնդակահարություններին: Այս ջոկատի սպաներից մեկը պատերազմից հետո նույնիսկ խոստովանել էր, որ իրենք սարսափում էին տեղի գերմանացիների կատարած դաժանություններից:[4]

Հարկավոր է նշել, որ տարբեր ժողովուրդների մասնակցությունը հակահայկական և հակահրեական գործողություններին նպաստավոր էր երկուստեք: Նախ, այդ ժողովուրդների ներկայացուցիչները, մասնակցելով իրենց հարևանների կոտորածներին, հնարավորություն էին ստանում տիրանալ զոհերի ունեցվածքին: Այս հանգամանքի գիտակցմանը, մասնավորապես, օժանդակում էր իշխանությունների կողմից իրականացվող քարոզչությունը, որի մեջ հատուկ շեշտ կար այդպիսի հնա-

[1] Нюрнбергский процесс. Сборник материалов в 8-ми томах. Под общей редакцией А.М. Рекункова. Том 1, М., 1987, стр. 417.

[2] Круглов А., "Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.". *Холокост и соучастность*. 2002, N 5, стр.10.

[3] Бриман Ш., "Мусульмане в СС". *Холокост и соучастность*. 2002, N 4, стр. 9.

[4] Hilberg R., նշված աշխ., էջ 206:

բավորության մասին (հակահայկական և հակահրեական ընդհանուր քարոզչության մասին կանդրադառնանք հաջորդ ենթագլխում):

Օրինակ, թուրքական կայսրության շատ տեղերում, ինչպես Տիգրանակերտի նահանգում, մահմեդական բնակչության շրջանում տարվող նախապատրաստական աշխատանքների ժամանակ կրոնավորների կողմից հրապարակայնորեն հայտարարվում էր, որ «գյավուրների ունեցվածքը, կյանքը և կինը հալալ է իսլամին»:[1] Իթթիհատականների նման գործելակերպն ընդհանուր երևույթ էր, և պետք է կարծել՝ հատուկ է եղել կոտորածների բոլոր այն դեպքերին, որոնց մասնակից են դարձել հասարակ մահմեդականները: Օրինակ՝ Տեր-Զորի ռազմատենչ արաբական ցեղերին թուրքական իշխանությունները՝ հայերին սպանելու դիմաց խոստացել էին վերջիններիս պատկանող հագուստները:[2]

Հրեաների հարևան ժողովուրդները ևս, օգնելով գերմանացիներին՝ իրենց գոհերին հայտնաբերելու և արտաքսելու գործում, հաճախ տեր էին դառնում նրանց ունեցվածքին և բնակարաններին:[3] Այս իմաստով հատկապես խոսուն են օկուպացված Ֆրանսիայում հրեական հարցով զբաղվող ՍՍ-ի գնդապետ Կնոխենի կատարած գրառումները. «Պարզվեց, որ ֆրանսիացիների շրջանում գրեթե անհնար է գաղափարախոսական հիմքի վրա հակահրեական զգացումներ դաստիարակել: Մինչդեռ հակահրեական պայքարի հանդեպ հեշտությամբ համակրանք է առաջանում տնտեսական առավելությունների տրամադրման միջոցով: Փարիզում ապրող շուրջ հարյուր հազար օտարերկրյա հրեաների ներկայումը բազմաթիվ ֆրանսիացիների կարող է հնարավորություն տալ հասարակության ստորին զանգվածից վերածվել միջին խավի»:[4]

Սակայն, պետք է կարծել՝ կողմնակի ուժերի օգտագործումն առավել նպատակահարմար էր հենց ցեղասպանության հեղինակների համար: Ընդ որում, այդ նպատակահարմարությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Նախ և առաջ, քաղաքացիական բնակչության կողմից իրականացվող զանգվածային սպանությունները խնայում էին ցեղասպանության համար նախատեսված հիմնական ուժերի ժամանակը: Ցեղասպանության հեղինակների համար հասարակ մարդկանց օգտագործումը ոչ պակաս կարևոր էր նաև մեկ այլ տեսանկյունից. դրանով, մասնավորապես, հնարավոր էր դառնում հարմար քող ստեղծել սեփական հանցանքները ծածկելու համար: Հետաքրքիր է, որ այս հարցում ևս իթթիհատականները և նացիստները նույնանման մոտեցումներ պետք է ունենային:

Թուրքական իշխանությունները հայերի զանգվածային սպանությունները հաճախ ներկայացնում էին որպես կայսրության տարածքում ապրող անհնազանդ ժողովուրդների և ավազակախմբերի հարձակումների հետևանք: Այսպես, 1915թ. հունիսին երեք օր շարունակ Քեմախի ձորում քրդերի և Թեշքիլաթը մահսուսայի զինվորների կողմից տեղի է ունենում հայերի սոսկալի կոտորած: Չորրորդ օրը միայն, երբ սպանություններն ավարտված էին, հայտնի է դառնում, որ թուրքական 86-րդ հեծելազորային ջոկատն «ուղարկվել» է Քեմախ արյունարբու քրդերին «պատժելու» համար:[1] Մեկ այլ դեպքում, քուրդ ավազակապետ Զեյնալը, որը թուրքական իշխանությունների կարգադրությամբ հարձակվում էր Մալաթիայի մոտակայքով անցնող հայկական քարավանների վրա, իր պարտականությունները կատարելուց հետո ձերբակալվել էր և կախաղան բարձրացվել. սրանով, ըստ դեպքերը նկարագրող Ղազար Չարըգի, փորձ էր արվել կառավարության վրայից հանցանքների ողջ մեղքը փոխադրել նրա վրա:[2] 1916թ. քարոզչական նպատակներով՝ թուրքական իշխանությունների կողմից ֆրանսերեն լեզվով տպագրված գրքույկում, որն իբրև թե նկարագրում էր հայկական զինված ջոկատների կողմից իրականացված

[1] Մկրտիչեան Թ.Գ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 47:
[2] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 57:
[3] Արաք Ի., նշված աշխ., էջ 70:
[4] Поляков Л., История антисемитизма. Эпоха знаний, стр. 424.

[1] Фирбюхер Г., նշված աշխ., էջ 53:
[2] Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի: Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 479:

մահմեդականների «կոտորածները», ասվում էր, որ եթե և ցավալի դեպքեր են տեղի ունեցել հայերի տեղահանությունների ժամանակ, ապա դրանք հայերի նկատմամբ մահմեդական ժողովրդի ունեցած ատելության արդյունք պետք է համարել, և որ կառավարությունը հատուկ հանձնաժողովներ է ուղարկել գավառներ՝ հանցավորներին պատժելու համար:[1] Հենց վերոհիշյալ համատեքստում պետք է հասկանալ նաև պատերազմից հետո իթթիհատականների դատավարության ժամանակ Զիա Գեոք Ալփի արտահայտած միտքը: Փորձելով ժխտել հայերի կոտորածներ կազմակերպելու՝ իշխանություններին վերագրվող մեղադրանքները՝ Գեոք Ալփն ասել էր, որ այդ կոտորածներն արդյունք էին հայերի և թուրքերի միջև տեղի ունեցած պատերազմի:[2]

Ինչպես ասվեց, նման գործելակերպ էին որդեգրել նաև նացիստները: 1941թ. հունիսի 27-ին «Կայսերական անվտանգության գլխավոր վարչության» ղեկավար Հայդրիխն այնզացխմբերի բոլոր հրամանատարներին հրահանգել էր ամեն ինչով օժանդակել գրավված տարածքներում գործող տեղական ուժերին կոմունիստներից և հրեաներից «ինքնամաքրվելու» գործողություններում, ինչը հետագայում, ըստ նրա, պետք է ազատեր գերմանացիներին պատասխանատվությունից:[3] Հայտնի է, որ տեղական ազգայնական ուժերի միջոցով գերմանացիները հակահրեական ակտիվ միջոցառումներ էին կարողացել կազմակերպել հատկապես Արևմտյան Ուկրաինայում

[1] Զաւեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս: Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 167:

[2] Heyd U., նշված աշխ., էջ 37:

Իմիջիայլոց, ցեղասպանության ժխտման այս մոտեցումը հետագայում պիտի որդեգրվեր նաև թուրք որոշ պատմաբանների կողմից: Օրինակ՝ Թյուրքքայա Աթայովը 1984թ. լույս տեսած իր «Համառոտ հայացք Հայկական հարցին» գրքում գրում է. «1909 թվականի ապրիլի 14-ի դեպքերը հարավային Ադանա քաղաքում իսկապես մի «փորձ» էին մահմեդականների և հայերի միջև քաղաքացիական այն փոքր պատերազմում, որը տևեց երեք օր և հրահրվեց հետագայում՝ հանգեցնելով փոխադարձ արյունահեղության»: (Մանրամասն տե՛ս Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 286:)

[3] Headland R., նշված աշխ., էջ 53:

և Արևմտյան Բելոռուսիայում, ինչպես նաև մերձբալթյան հանրապետություններում: Պատահական չէ, որ հենց այս հանրապետությունների տարածքում գործող «Ա» այնզացխմբի հրամանատար Շտահլեկերն իր զեկուցագրում գրում էր հետևյալը. «Հետագա նպատակների համար ոչ պակաս կարևոր է այն անառարկելի մտայնության ամրապնդումը, ըստ որի ազատագրված բնակչությունն ինքն իր նախաձեռնությամբ է դաժան միջոցների դիմել բոլշևիկ և հրեա թշնամիների հանդեպ՝ առանց գերմանական իշխանությունների կողմից որևէ հրահանգի»:[1]

Հրեական հոլոքոստին վերաբերող ուսումնասիրություններում, բացի սպանություններին մասնակից ուժերին առնչվող խնդիրների պարզաբանումից, հաճախ քննության է առնվում նաև այն հարցը, թե ինչ ազդեցություն է ունեցել ցեղասպանական գործընթացին զոհերին շրջապատող բնակչության անտարբեր կեցվածքը:

Այս խնդրի դիտարկման ժամանակ, Ռաուլ Հիլբերգի կարծիքով, պետք է հաշվի առնել հետևյալ բանաձևը. «չեզոքությունը զրոյին համահավասար մեծություն է, որն անհավասար պայքարում նպաստում է ավելի ուժեղ կողմին»: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը գրում է, որ օկուպացված տարածքներում հրեաները տեղական բնակչության օժանդակության կարիքն ավելի շատ ունեին, քան գերմանացիները: Սակայն վերջիններս, ընդհանուր առմամբ, կարողացան ապահովել այդ բնակչության ոչ միայն չեզոք դիրքը, այլև հասան այն բանին, որ որոշ հատվածներ իրենց մասնակցությունը բերեն հակահրեական հետապնդումներին:[2]

Անկասկած, բնակչության չեզոքության խնդիրը կարելի է դիտարկել նաև Հայոց ցեղասպանության համատեքստում.

[1] Hilberg R., նշված աշխ., էջ 203:

Կաունաս և Ռիգա քաղաքներում տեղական ուժերի կողմից իրականացվող պոգրոմները նույնիսկ նկարահանվել էին ֆոտո և կինո խցիկներով, ինչը, ըստ Շտահլեկերի, պետք է ապագայի համար ապացույց հանդիսանար տեղացիների դաժանությունների վերաբերյալ: (Նույն տեղում, էջ 204:)

[2] Նույն տեղում, էջ 203:

սակայն, այստեղ ի հայտ է գալիս մի առանձնահատկություն: Ի տարբերություն գերմանացիների, որոնք գործում էին իրենց համար անծանոթ միջավայրում և ավելի շատ կարիք ունեին հրեաների հարևանությամբ ապրող ժողովուրդների օգնության կամ չեզոքության (զոհերին հայտնաբերելու, ապաստարան և այլ կարգի օգնություն չտրամադրելու առումով), իթթիհատականները գործում էին «սեփական» միջավայրում և մեծապես օգտվում էին տեղական վարչական իշխանությունների հնարավորություններից: Ուստի, նրանք նման օժանդակության կարիք ավելի քիչ ունեին: Փոխարենը՝ ինչպես և հրեաների դեպքում, հայերն ավելի շատ էին շահագրգռված տեղական բնակչության օժանդակության մեջ: Այնուամենայնիվ, ինչպես և գերմանացիների դեպքում, իթթիհատականները կարողացան ապահովել հայերի հարևանությամբ ապրող մահմեդական ժողովուրդների չեզոքությունը, ինչը, անշուշտ, պետք է հեշտացներ հայերի դեմ իրականացվող ծրագրերը:

Ամենայն հավանականությամբ, զոհերին շրջապատող բնակչության չեզոք վարքագծի հիմնական պատճառներն էին իշխանությունների նկատմամբ ունեցած վախը (երկու դեպքում էլ հայերի և հրեաների շուրջ ապրող բնակչությունը խիստ նախազգուշացվում էր օգնություն չտրամադրելու կապակցությամբ), զոհերի նկատմամբ պատմականորեն գոյություն ունեցող և արհեստականորեն ստեղծված բացասական մթնոլորտը, ինչպես նաև զոհերի հաշվին հարստանալու հնարավորության գիտակցումը:

Այս խնդիրն ավելի լավ հասկանալու համար ճիշտ կլիներ նաև նշել երկու իրադարձությունների ընթացքում տեղ գտած մի շարք բացառությունների մասին, երբ այս ժողովուրդների հարևաններն այս կամ այն կերպ փորձել են խոչընդոտ հանդիսանալ նրանց ոչնչացմանը. դրանք ավելի շատ են հրեաների պարագայում: Այսպես, Երկրորդ աշխարհամարտի ժամանակ օկուպացված Դանիայի բնակչությունը, իմանալով իրենց երկրում ապրող շուրջ 8 հազար հրեաների մոտալուտ արտաքսման մասին, տարբեր միջոցներով օժանդակել էր վերջիններիս թաքնվելու գործում. արդյունքում՝ 7200 հրեաներ փրկվել

էին: Իտալիայի օկուպացման ժամանակ այստեղի հասարակ ժողովուրդը հազարավոր հրեաների էր օգնել թաքստոցներում պատսպարվելու և փրկվելու համար:[1] Այս ձևով շուրջ 900 հրեաներ փրկվել էին Նորվեգիայում:[2]

Հայոց ցեղասպանությանը վերաբերող նկարագրություններում ևս, երբեմն կարելի է հանդիպել հայերի հարևանությամբ ապրող մահմեդականների կողմից ցուցաբերված օգնության օրինակների: Սակայն, դրանք, որպես կանոն, պայմանավորված չեն խմբային գիտակցությամբ (ինչպես դանիացիների և իտալացիների վերոհիշյալ դեպքերում), այլ, ավելի շուտ, անհատական մղումների բնույթ են կրում (թերևս բացառություն կարելի է համարել Դերսիմի քրդերի և արաբական որոշ գյուղերի օրինակները): Վերջին հանգամանքի օգտին է խոսում, մասնավորապես, Թուրքիայի մի շարք տեղական պաշտոնյաների դիրքորոշումը հակահայկական քաղաքականության վերաբերյալ: Օրինակ՝ կառավարության՝ հայերի դեմ նախատեսված ծրագրերը չիրականացնելու համար իրենց պաշտոններից հեռացվել էին Անկարայի վալի Մազհար բեյը, Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան,[3] Կոնիայի և այնուհետև Հալեպի վալի Ջելալ բեյը, Քյոթահիայի մյութեսարիֆ Ֆայիք Ալի բեյը և այլոք:[4]

Այստեղ ի դեպ է նշել, որ ի տարբերություն հայերի ցեղասպանության, որը գերազանցապես տեղի էր ունենում մեկ երկրի տարածքում և մեկ իշխանության կողմից, հրեաների դեպքում նացիստական իշխանություններն ամեն կերպ աշխատում էին ոչնչացման գործընթացին մասնակից դարձնել նաև դաշնակից կամ խամաճիկային երկրների կառավարություններին: Այսպես, իրենց երկրների տարածքում հրեաների ոչնչացման կամ այնտեղից նրանց արտաքսման գործում մեծ

[1] Арад И., նշված աշխ., էջեր 57-58:
[2] Dawidowicz L., նշված աշխ., էջ 373:
[3] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության..., էջ 102:
[4] Նույն տեղում, էջ 188:

ներդրում ունեցան Ռումինիան,[1] Հունգարիան,[2] Նորվեգիան,[3] Ֆրանսիան,[4] Խորվաթիան, Սլովակիան:

Այսպիսով, հայերի և հրեաների ոչնչացման նպատակով երիտթուրքերը և նացիստները գործի են դրել որոշակի ուժեր, որոնց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին կամ հիմնական խմբին են պատկանում մի դեպքում Թեշքիլաթը մահսուսայի, մյուս դեպքում՝ ՍՍ-ի ստորաբաժանումները, որոնք էլ իրականացրել են համապատասխանաբար հայկական և հրեական բնակչության հիմնական զանգվածների ոչնչացման գործը:

Բացի այս հիմնական կազմակերպություններից, երկու ցեղասպանությունների ընթացքում ներգրավված են եղել նաև օժանդակ ուժեր, առաջին հերթին՝ բանակը: Ե՛վ Հայոց ցեղասպանության, և՛ Հոլոքոստի ժամանակ թուրքական և գերմանական բանակները փորձում էին օժանդակել, իսկ որոշ տեղերում՝ նույնիսկ ամբողջությամբ ստանձնել հետապնդվող զոհերի սպանության գործը: Վերջապես, երկու ցեղասպանությունների գործընթացն ամբողջանում էր հայերի և հրեաների

[1] Գերմանացիների գիտությամբ ռումինական ուժերը՝ դիկտատոր Անտոնեսկուի գլխավորությամբ, մինչև 1942թ. վերջերն իրականացրեցին Բեսարաբիայի, Բուկովինայի և Տրանսնիստրիայի (Դնեստր և Բուգ գետերի միջև ընկած շրջանը) շուրջ 350 հազ. հրեաների ոչնչացումը: (Մանրամասն տե՛ս Levene M., "The Experience of Genocide: Armenia 1915-16 and Romania 1941-42". In *The Amenian Genocide and the Shoah.* Edited by Hans-Lukas Kieser, Dominic J. Schaller, Zurich: Chronos Verlag, 2002, pp. 438-457.)

[2] Այն բանից հետո, երբ 1944թ. մարտին գերմանացիներն օկուպացրեցին Հունգարիան, այստեղ հաստատված Շտոժայի և Սալաշիի պրոգերմանական կառավարությունները ռեգենտ Խորտիի գլխավորությամբ իրականացրեցին 400 հազարից ավելի հրեաների արտաքսումը դեպի Օսվենցիմ: (Dawidowicz L., նշված աշխ., էջ 382:)

[3] Նորվեգիայում ապրող շուրջ 1800 հրեաներից 800-ը Օսվենցիմ ուղարկվեցին պրոֆաշիստական տրամադրություններ ունեցող դիկտատոր Քվիսլինգի կառավարության կողմից: (Dawidowicz L., նշված աշխ., էջ 372:)

[4] Փարիզի օկուպացիայի ժամանակ ընդամենը 10 ՍՍ-ականներ էին զբաղվում «հրեական հարցով», դրա փոխարեն՝ մարշալ Պետենի ոստիկանությունը գերմանացիների համար պատրաստել էր 110 հազար հրեաների անուններից բաղկացած հատուկ քարտարան՝ տարագրության գործը հեշտացնելու նպատակով: (Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 48:)

հարևանությամբ ապրող ժողովուրդների (հրեաների դեպքում նաև պետությունների)՝ թուրքական և գերմանական իշխանություններին ցուցաբերած օգնությամբ կամ զանգվածային սպանություններին ակտիվ մասնակցությամբ: Իթթիհատական և նացիստ դահիճներին դա ձեռնտու էր ինչպես սեփական ուժերը խնայելու, այնպես էլ պետության կողմից կազմակերպված ցեղասպանության գործընթացին «ժողովրդական բախումների» կամ «քաղաքացիական պատերազմի» երանգ հաղորդելու տեսանկյունից:

3. Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի իրականացման եղանակները և հատկանիշները

Սպանության եղանակները

Ինչպես արդեն նշվեց, 1915-1916թթ. ժամանակահատվածում երիտթուրքական կառավարության հետևողական ջանքերով ոչնչացվեցին շուրջ 1,5 միլիոն հայեր: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստները հետամուտ եղան շուրջ 6 միլիոն հրեաների անհետացմանը: Հենց այս հանցանքների ահռելի չափերն են, որ բնական անհրաժեշտություն են առաջացնում խոսել այն մասին, թե սպանության ինչպիսի՞ մեթոդներով և եղանակներով են առաջնորդվել թուրք և գերմանացի ոճրագործներն իրենց նպատակներն իրականացնելիս: Ընդ որում, թեև առաջին իսկ հայացքից աչքի են զարնում դրանց միջև եղած շոշափելի տարբերությունները, այնուամենայնիվ, ավելի ուշադիր քննման դեպքում ի հայտ են գալիս նաև մի շարք ընդհանրություններ:

Ընդհանրապես, խոսելով Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի ժամանակ կիրառված զանգվածային սպանության տարբեր եղանակների մասին, պետք է շեշտել այն հանգամանքը, որ ոչնչացման իթթիհատական և նացիստական ձևերի միջև եղած տարբերությունն ուղիղ համեմատական կապի մեջ է վերոհիշյալ ժամանակաշրջանների Թուրքիայի և Գերմանիայի միջև եղած տնտեսական և գիտատեխնիկական զարգացման անհավասար մակարդակների հետ:[1] Այսպես, եթե Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի ոչնչացումը մեծ մասամբ տեղի էր ունենում «նահապետական» եղանակներով և ոչ հաճախ կիրառվող գնդակահարություններն ինչ-որ իմաստով «ճոխություն» էին համարվում, ապա Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նացիստները հրաժարվեցին գնդակահարություններից՝ դիմելով ավելի արդյունավետ միջոց հանդիսացող գազախցերին:[1] Այնուամենայնիվ, տեսնենք, թե որո՞նք են եղել երկու ցեղասպանությունների ժամանակ կիրառված սպանությունների առավել տարածված եղանակները:

Ինչպես արդեն նշվեց, հրեական Հոլոքոստի «առաջին» փուլը նշանավորվեց Խորհրդային Միության օկուպացված տարածքներում շուրջ 1,5 միլիոն հրեաների սպանությամբ: Ընդ որում, այդ սպանություններն իրականացվեցին երկու հիմնական ձևերով:

Առաջին և ամենատարածված ձևը զանգվածային գնդակահարություններն էին: Դրանք հիմնականում իրականացվում էին այնզացխմբերի և ՍՍ-ի ռազմականացված ստորաբաժանումների կողմից: Խորհրդային Միության տարբեր վայրերում տեղի ունեցող գնդակահարությունների ընթացքը հասկանալու համար կարելի է դիմել 1941թ. սեպտեմբերին Կիև քաղաքի մոտակայքում՝ Բաբիյ յառ վայրում, «Շ» այնզացխմբի կողմից մի քանի տասնյակ հազար հրեաների սպանության նկարագրությանը:

Ականատեսի վկայությամբ, նախապես հայտարարված օրը Կիևի հրեաներն ամբողջ ընտանիքներով՝ «վերաբնակեցվելու» նպատակով ներկայանում են հավաքատեղիներ, ուր վերցվում են ՍՍ-ականների և ուկրաինական ոստիկանների

---

[1] Ինչպես նկատել է ցեղասպանության խնդիրներով զբաղվող սոցիոլոգ Ի.Լ. Հորովիցը, «Օսմանյան կայսրության և գերմանական վերնախտի միջև հազար տարվա տեխնոլոգիական տարբերություն կար՝ խտացված մի քանի տասնամյակների պատմության մեջ»: (Horowitz I.L., "Government Responsibilities to the Jews and Armenians: Nazi Holocaust and Turkish Genocide Reconsidered". In *The Armenian Genocide. Documentation.* Volume 8. Munchen: Institut fur Armenische Fragen, 1991, p. 382.)

[1] Իմիջիայլոց, երկու ցեղասպանությունների հենց այս առանձնահատկություններն են հիմք ծառայել Վ.Դադրայանի համար հետևյալ տարբերիչ եզրահանգումը կատարելու. «Եթե հաշվի առնենք Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայի հետամնաց պայմանները և տեխնոլոգիական զարգացման աստիճանը, ապա հայերի նկատմամբ կիրառվող զանգվածային սպանության միջոցներն իրենց բնույթով ավելի սարսափազդու էին, քանի որ տեղահանվածների գերակշռող մեծամասնությունը կազմող մեծահասակները, կանայք և երեխաները մեռնում էին երկար տանջանքներից հետո»: (Dadrian V.N., The Comparative Aspects of the Armenian and Jewish cases..., p. 105.)

հսկողության տակ: Այնուհետև վերջիններիս ուղեկցությամբ՝ բեռնատարներով կամ հետիոտն, հրեաներն առաջնորդվում են քաղաքի արվարձանում գտնվող Բաբիյ յառ կոչվող ձորակը: Թանկարժեք իրերը դահիճներին հանձնելուց և մերկանալուց հետո՝ զոհերն իրար հետևից հատուկ պատրաստված արահետներով իջնում են ձորակը և երեսնիվայր պառկում գետնին՝ կողք կողքի: Այնզացխմբերի դահիճները հետևից կրակում են զոհերի ծոծրակին: Հրեաների հաջորդ խումբն արդեն երեսնիվայր պառկում է դիակների վրա և այդպես շարունակ:[1]

Հետաքրքիր է, որ Նյուրնբերգյան դատավարության ժամանակ «D» այնզացխմբի հրամանատար Օհլենդորֆն ասել էր, որ ինքը, ի տարբերություն մյուս այնզացխմբերի հրամանատարների, կարգադրում էր գնդակահարությունները կատարել ոչ թե զոհերի հետևից, այլ դեմ առ դեմ՝ կանգնած կամ ծնկաչոք վիճակում, համազարկով:[2]

Ուկրաինայի Ստանիսլավ քաղաքում հրեաների գնդակահարությունը տեղի էր ունենում մոտավորապես նույն ձևով: 300-ից 1000 հոգանոց խմբերով նրանց բերում էին քաղաքի հրեական գերեզմանոց և տեղավորում փշալարերով օղակված հատուկ ճամբարում: Այդ մարդկանցից մի քանի տասնյակին ստիպում էին փոսեր փորել: Այնուհետև դահիճները պարտադրում էին զոհերին մերկանալ, մի քանի շրջան վազել փոսի շուրջ և ցատկել դրա մեջ: Հետո զոհերը պարզապես գնդակահարվում էին ինքնաձիգերից և հրացաններից:[3]

Օսվենցիմին հարող Բիրկենաու համակենտրոնացման ճամբարում մահապատիժները սկզբնական շրջանում իրականացվում էին նաև գնդակահարության միջոցով: Ճամբարի բակում ՍՍ-ականները հավաքում էին շուրջ 5000 դատապարտվածների, որտեղից 300-400 հոգանոց խմբերով ուղղորդում էին դեպի հանդերձարան: Այստեղ մերկանալով՝ հրեաները դուրս էին գալիս բակի մյուս կողմ, ուր նրանց գնդակահարում էին և

[1] Круглов А., նշված աշխ., էջ 10:
[2] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 634.
[3] Նույն տեղում, էջ 643:

նետում մեծ հորերի մեջ, որոնց հատակին խարույկ էր վառվում:[1]

Գերմանացիների կողմից օկուպացված ԽՍՀՄ տարբեր վայրերում, մասնավորապես՝ Ռիգայում, Վիլնայում, Մինսկում, Կաունասում, Լվովում ստեղծված համակենտրոնացման ճամբարներում նույնպես գործում էր մարդկանց (ոչ միայն հրեաների) ոչնչացման այս եղանակը:[2]

Խորհրդային Միության տարածքում զանգվածային սպանությունների մյուս ամենատարածված միջոցը «մահվան մեքենաներն» էին ("Gasenwagen"), որոնց հեղինակն էր ՍՍ-ական դոկտ. Բեկկերը: Այս մեքենաները, որոնք բնակչության կողմից «դուշեգուբկա» անունն էին ստացել, իրենցից ներկայացնում էին 5-7 տոննանոց փակ բեռնատարներ՝ դիզելային շարժիչով: Այդ մեքենաներն այնպես էին կառուցված, որ դրանց արտանետման գազերի խողովակը հատուկ ելքով դուրս էր գալիս դեպի բեռնախցիկ: Դիզելային շարժիչի արտանետված գազերը՝ բարձր կոնցենտրացիայի ածխածնի օքսիդի պարունակությամբ, մուտք գործելով բեռնախցիկ, առաջացնում էին մարդկանց արագ թունավորում և մահ:[3]

Զանգվածային սպանություններ իրականացնելու նպատակով «դուշեգուբկաների» կիրառումը տարածված էր հատկապես Ռուսաստանի հարավային շրջաններում: Այսպես, հայտնի է, որ Կրասնոդարում 1943թ. հունվարին՝ գերմանացիների նահանջից առաջ, ՍՍ-ականները շաբաթը մի քանի անգամ գեստապոյի նկուղներից բեռնում էին այս մեքենաները մարդկանցով: Վերջիններիս սկզբում մերկացնում էին, ապա 60-ից 80 հոգանոց խմբերով նստեցնում էին բեռնախցիկի մեջ, ընդ որում, խտրականություն չէր դրվում տղամարդկանց, կանանց և երեխաների միջև: Այնուհետև մեքենավարը միացնում էր շարժիչը. մի քանի րոպե տեղում կանգնելով՝ մեքենան շարժվում էր դեպի հակատանկային խրամատը: Այստեղ էլ

[1] Мельников Д., Черная Л., նշված աշխ., էջ 334:
[2] Shirer W., նշված աշխ., էջ 1260:
[3] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 605-606.

տեղի էր ունենում արդեն խեղդամահ եղած զոհերի բեռնաթափումը և թաղումը:[1]

Ոչնչացման վերոհիշյալ ձևերի կողքին, սակայն, նացիստական տեսանկյունից ամենաարդյունավետը համակենտրոնացման ճամբարներում կիրառվող գազահարումն էր: Սպանության այս եղանակը գերմանացիներն առաջին անգամ օգտագործել էին 1939-1940թթ. ընթացքում, երբ Հիտլերի հրամանով ամբողջ ռայխի տարածքում սկսեց գործել հատուկ ծրագիր՝ ուղղված բոլոր մտավոր թերություններ ունեցող և անբուժելի հիվանդ մարդկանցից պետության բեռը թեթևացնելուն:[2]

Հրեական հարցի լուծման համար ևս նացիստները նպատակահարմար համարեցին մարդկանց զանգվածային ոչնչացման սույն ձևը: Ողջ գործընթացը պատկերացնելու լավագույն աղբյուրը, թերևս, ոչնչացման ամենամեծ ճամբարներից մեկում՝ Օսվենցիմում տեղի ունեցող արարողակարգի նկարագրությունն է ականատեսների կողմից:

Ճամբար ժամանող մարդկանց խմբերը հենց երկաթուղային կայարանում քննվում էին բժիշկների կողմից: Այն մարդիկ, որոնք ընդունակ էին աշխատելու, ուղարկվում էին ճամբար, իսկ աշխատանքի համար ոչ պիտանիներն անմիջապես ուղղորդվում էին դեպի ոչնչացման «պալատներ»:[3] Ինչպես և մյուս ոչնչացման ճամբարներում, այստեղ ևս մարդկանց գազախցեր էին տանում «լոգանք ընդունելու» պատրվակով:[4]

Աուշվիցի առաջին պարետ Ռուդոլֆ Հեսսն իր հուշերում նկարագրում է, թե ինչ էր տեղի ունենում հետո. «Մերկանալով, հրեաները մտնում էին գազախուց, որի առաստաղին տեղադրված էին ցնցուղանման խողովակներ. դա բաղնիքի տպավորություն էր թողնում: Հետո դռներն արագ փակվում էին և ամրացվում: Պատրաստի սպասող «վարակազերծողները» ցիկլոն «Բ»-ի բյուրեղիկներն առաստաղում գտնվող խողովակներով նետում էին ներս... Մարդկանց մեկ երրորդը մահանում էր անմիջապես, մյուսներն սկսում էին իրար հրմրել, բղավել և ջղաձգորեն կուլ տալ օդը... Առավելագույնը 20 րոպեից ոչ ոք այլևս չէր շնչում»:[1]

Մահապատժից քսան-երեսուն րոպե հետո հրեաներից բաղկացած ջոկատները (որոնց անդամներին խոստումներ էին տրվում անվնաս թողնելու մասին) սկսում էին դիակների դուրս բերումը դեպի դիակիզարան և գազախցերի մաքրումը՝ նախապատրաստելով դրանք զոհերի հաջորդ խմբի համար:[2]

Պետք է նշել, որ մինչև ցիկլոն «Բ» գազի կիրառումը (1941թ. աշուն), Բելժեց, Սոբիբոր, Տրեբլինկա ճամբարներում մարդկանց թունավորելու համար ՍՍ-ականներն օգտագործում էին խորհրդային տանկերի շարժիչների արտանետած գազերը:[3] Տրեբլինկայում գործում էր նաև սպանության հետևյալ եղանակը. հրեաներին ուղղորդում էին հերմետիկ փակվող խցերի մեջ, որից հետո հզոր շարժիչները պարզապես դուրս էին քաշում խցերի մեջ եղած օդը: Մարդիկ շնչահեղձ էին լինում:[4]

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի զանգվածային սպանությունների ժամանակ ևս կիրառվել է գնդակահարության եղանակը, թեև ոչ այնքան մեծ ծավալով, ինչպես հրեաների ոչնչացման դեպքում: Թուրքական իշխանությունների կողմից հրազենի գործածումն իրականում սահմանափակ էր. այն գլխավորապես կիրառվում էր աշխատանքային գումարտակներում գտնվող հայ զինվորների և սպաների, ինչպես նաև բանակ չզորակոչված մյուս հայ տղամարդկանց նկատմամբ: Այսպես, Խարբերդի կենտրոնական վարժարանի, ամերիկյան և ֆրանսիական քոլեջների բոլոր ուսանողները՝ թվով 1500 հոգի, որոնք բանակ էին զորակոչվել և օգտագործվում էին անզեն ծառայության մեջ, մեկուսացվել էին և մի քանի օր առանձին շինության մեջ պահվելուց հետո ուժեղ

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 606:
[2] Grunberger R., նշված աշխ., էջ 54:
[3] Shirer W., նշված աշխ., էջ 1261:
[4] Նույն տեղում, էջ 1263:

[1] Елисаветский С., նշված աշխ., էջ 8:
[2] Shirer W., նշված աշխ., էջ 1264:
[3] Брухфельд Ст., Левин П., նշված աշխ., էջ 55:
[4] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 115:

հսկողության տակ գիշերով դուրս բերվել՝ իբր Ուրֆա ուղարկվելու համար: Սակայն քաղաքից 40-50 կմ հեռավորության վրա՝ Քեյզին կոչվող վայրում, բոլորին գնդակահարել և թաղել էին:[1] Տրապիզոնցի մի թուրք զինվոր պատմել էր, որ Գյումուշ-Խանեի մոտ աշխատող իրենց գումարտակի միջից առանձնացվել էին բոլոր հայերը՝ շուրջ 180 հոգի, հեռացվել ճամբարից և գնդակահարվել: Դրանից հետո այդ թուրքը մի խումբ զինվորների հետ ուղարկվել էր հայերի մերկ դիակները թաղելու:[2] Եղել են նաև դեպքեր, երբ թուրք զինվորների ամբողջ գնդեր պարզապես հարձակվել են խաղաղ աշխատող հայկական գումարտակների վրա և տեղում գնդակահարել:[3]

Գնդակահարության եղանակով հայ տղամարդկանց սպանելու դեպքերը բազմաթիվ են, սակայն, համոզված կարելի է ասել, որ թուրքերը հրազենի հետ մեկտեղ ավելի շատ դիմել են այլընտրանքային, այն է՝ սառը զենքի գործածմանը: Ընդ որում, տեղին է նշել այն հանգամանքը, որ հայ տղամարդկանց ոչնչացման թուրքական մեթոդն աչքի էր ընկնում զոհերի հանդեպ ցուցաբերված առավել խստությամբ և զգուշավորությամբ: Սովորաբար հայ զոհերին սպանությունից մի քանի օր կամ շաբաթ առաջ բանտարկում էին և թողնում առանց սնունդի և ջրի, այնպես որ դիմադրություն ցույց տալու հավանականությունը նվազեր առավելագույն չափով:

Այսպես, 1915թ. հուլիսի 5-ին բանտարկվում են Խարբերդի, Մամուրեթ-Ուլ-Ազիզի և շրջակա գյուղերի շուրջ 800 հայ տղամարդիկ: Որոշ ժամանակ բանտում պահելուց հետո, մի գիշեր նրանց դուրս են հանում, իրար կապում 14 հոգանոց խմբերով և ժանդարմների հսկողության տակ տանում Խարբերդից 13-15 ժամ հեռավորության վրա գտնվող մի դաշտ: Ճանապարհին զոհերին արգելում են անգամ ջուր խմել: Այստեղ հայերին կարգադրում են նստել և այս վիճակում սկսում գնդակահարել: Երբ զոհերի մեծ մասը սպանվում է, դահիճներին

[1] Геноцид армян в Османской империи, էջ 425:
[2] Bryce J., Toynbee A., նշված աշխ., էջ 315:
[3] Гиббонс Г.А., Последние избиения в Армении. Факты и ответственности. Петроград, 1916, стр 13.

հրամայվում է մնացածներին սվինահարել՝ փամփուշտները խնայելու համար:[1]

Տեր-Զորում հայերի հետապնդումն իրականացնող չեչեն ավազակապետ Մահմուդ բեկը պատմում է, որ իր խումբը հայերի 2000 հոգանոց մի քարավանից առանձնացրել էր 500 տղամարդկանց: Պատշաճ հեռավորության վրա տանելով՝ դահիճները շարել էին հայերին կողք կողքի և սկսել գնդակահարությունը: Սակայն երեք ժամ հետո ավազակները հոգնել էին «նշան բռնելուց» և մնացած տղամարդկանց պարզապես սվինահար արել:[2]

Ինչպես արդեն նշվեց, իթթիհատականները հայերի ոչնչացման գործում ապահովել էին մահմեդական ժողովրդի լայն զանգվածների մասնակցությունը: Վերջիններս էլ, հասկանալի է, որ իրենց «պարտքը» կատարելիս պետք է օգտագործեին սպանության համար պիտանի ցանկացած միջոց: Ընդ որում, սա վերաբերում էր ինչպես տղամարդկանց, այն-

[1] Davis L., The Slaughterhouse Province. An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917. New Rochelle, New York: Aristide D.C. Publisher, 1989, p. 63. Տե՛ս նաև Германские источники о геноциде армян (период первой мировой войны). Сборник документов и материалов в 2-х томах. Том 1. Под редакцией профессора С.С. Степаняна, Ереван, 1991, стр. 238.

Համեմատության համար բերենք գերմանացիների գործելակերպին վերաբերող մեկ օրինակ: Կուրսկ քաղաքի օկուպացիայի ընթացքում ՍՍ-ականների կողմից իրականացվող գնդակահարություններից մեկի ժամանակ վերջացել էին փամփուշտները: Զինվորների հրամանատարը հրամայել էր մնացած 25 զոհերին սպանել բահերի, հրացանակոթերի և այլ առարկաների միջոցով: (Судебный процесс о зверствах немецко-фашистских захватчиков на территории города Харькова и Харьковской области в период их временной оккупации. Москва, 1943, стр 68.)

[2] Յուշամատեան մեծ եղեռնի, կազմեց Գերսամ Ահարոնեան, Պէյրութ, 1965, էջեր 549-550:

Բաղդադի երկաթուղու վրա աշխատող գերմանացի ինժեներների հավաստմամբ, թուրքերը կապում էին հայ տղամարդկանց միմյանց և կրակ բացում նրանց վրա մանրագնդակով (կոտորակ), որից հետո հեռանում էին՝ թողնելով իրենց զոհերին դանդաղ մահով մեռնելու: (Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец XIX– начало XX века). Ереван, 1975, стр. 123.)

պես էլ կանանց և երեխաների սպանությանը:

Օրինակները շատ խոսուն են: Անգորայի 15-ից մինչև 70 տարեկան բոլոր հայ տղամարդկանց ձերբակալելուց հետո, թուրքերը նրանց կապում են իրար չորս հոգանոց խմբերով և քաղաքից դուրս տանում Կեսարիայի ճանապարհով: Հինգ-վեց ժամ ճանապարհորդելուց հետո նրանք հասնում են մի ամայի դաշտի: Այստեղ էլ զոհերի վրա է հարձակվում թուրք գյուղացիների բազմությունը՝ *մահակներով, մուրճերով, կացիններով, մանգաղներով, բահերով և սղոցներով* զինված:[1]

Հայոց ցեղասպանության ընթացքը նկարագրող բազմաթիվ նյութերի ուսումնասիրությունից թերևս կարելի է ասել, որ սառը զենքի տարբեր տեսակներն ամենահաճախ կիրառվող միջոցներն էին հայերի զանգվածային ոչնչացումն իրականացնելու գործընթացում: Չնայած այս հանգամանքին՝ հայ ժողովրդի դահիճները միշտ աշխատել են կատարելագործել սպանելու եղանակները:

Ինչպես արդեն տեսանք, Հոլոքոստի «երկրորդ» փուլում նացիստականները հրեաների ոչնչացման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար անցում կատարեցին գազախցերի օգտագործմանը: Ինչպես գազախցերի, այնպես էլ «մահվան մեքենաների» միջոցով զոհերին սպանելու գլխավոր սկզբունքը հետևյալն էր. որքան հնարավոր է շատ թվով մարդկանց տեղադրել փակ տարածության մեջ և շնչահեղձ անել կամ թունավորել գազով: Պարզվում է, որ ոչնչացման այս ձևը, թեև ավելի պրիմիտիվ եղանակներով, լայնորեն կիրառվել է դեռևս Հայոց ցեղասպանության ժամանակ: Բերենք մի քանի օրինակ:

Հայերի կոտորածների ականատես արաբ Ֆայեզ էլ Ղոսեյնի հավաստմամբ, Բիթլիսում և Մուշում հաճախ միանգամից մի քանի հարյուր հայերի փակում էին մեծ հարդանոցներում, դռները ծածկում խոտով և այրում, ինչի հետևանքով մարդիկ մահանում էին շնչահեղձությունից:[2] 1916թ. սկզբներին

[1] Morgenthau H., նշված աշխ., էջ 312:

[2] Ղոսեյն Ֆ., Հելոսական հայութեան անցեալէն: Ջարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, 1960, էջ 23:

Տեր-Զոր ավանում գտնվող 1500-ից ավելի հայ որբերը կառավարիչ Զեքի բեյի կողմից հանձնվում են տեղի գաղթականների առաքման պատասխանատու արաբ Աբդուլլահ փաշային: Վերջինս հայ մանուկներին կառքերով տանում է մոտակայքում գտնվող Մարաթի անապատը, մի մասին պայթեցնում է դինամիտով, հիվանդներին այրում չոր խոտով, մի մասին էլ մտցնում է քարանձավների մեջ, մուտքի մոտ թաց խոտ դնում և այրելով շնչահեղձ անում:[1]

Վերոհիշյալ չեչեն ավազակապետ Մահմուդ բեկի հավաստմամբ, իր խումբը Տեր-Զորի մոտակայքում հավաքել էր 230 հայ տարագիրների, ողջ կամ վիրավորված վիճակում նրանց լցրել ցամաքած մի ջրհորի մեջ, այնուհետև ծածկել այն չոր խոտով և այրել:[2] Նույն Մահմուդ բեկի խումբը մի դաշտում ստիպել էր 1200 հոգանոց հայ գաղթականների խմբին երեք օր շարունակ մեծ փոսեր բացել: Հետո մերկ զոհերին պարտադրվել էր ցատկել դրանց մեջ, որից հետո նրանք պարզապես հողածածկ էին արվել:[3] Հայտնի է նաև, որ Երզնկայի կառավարիչ Մեմտուհը, Մամախաթուն-Դերջան ճանապարհից հավաքելով 500 հայ որբերի, մի մեծ փոս էր փորել տվել և հրամայել հայ մանուկներին կենդանի-կենդանի թաղել:[4]

Այնուամենայնիվ, հայերին այս եղանակով սպանելու դեպքերից ամենացայտունը Տրապիզոնում տեղի ունեցածն էր, որը, ըստ Վ. Դադրյանի, թերևս կարելի է համարել նացիստա-

Մարդկանց՝ գոմերում և մարագներում այրելու միջոցով սպանելը հատկապես տարածված էր Բիթլիսի նահանգում: (Տե՛ս Շարաֆեան Ե., Տարոնի եղեռնը: Ականատեսի վկայութիւններ, Սան Ֆրանսիսքօ, 1965, էջեր 17-18, 22, 29, 37:)

[1] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 199:

[2] Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 549:

[3] Նույն տեղում, էջ 550:

[4] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության..., էջ 177:

Իմիջիայլոց, երեխաներին և կանանց ողջ վիճակում թաղելու դեպքեր են գրանցվել նաև նացիստների գործելակերպում, մասնավորապես՝ Խարկով քաղաքում 1941թ.: (Տե՛ս Судебный процесс о зверствах немецко-фашистских захватчиков..., стр., 15.)

կան գազախցերի նախադեպը:[1] Տրապիզոնի հայերի տեղահանությունից հետո այստեղ երկու դպրոցական շենքերում հաստատվել էր հայ որբերի հավաքատեղի. վերջիններիս մի մասին բաժանում էին մահմեդական ընտանիքների միջև, մյուս մասին՝ ոչնչացնում: Այդ ոչնչացումը կատարվում էր Տրապիզոնի հիթիհատական ներկայացուցիչ Նայիլի և տեղի հասարակական առողջապահության ծառայության տնօրեն բժիշկ Սաիբի կողմից: Վերոհիշյալ դպրոցներից մեկում գտնվում էր սալիկապատ մի սենյակ, որը ներկայացվում էր որպես «շոգեբաղնիք»: Հայ երեխաները խմբերով տարվում էին այդ սենյակը՝ «լողանալու» պատրվակով և թունավորվում բժիշկ Սաիբի կողմից հատուկ գազով: Հետո մանուկների դիակները տեղադրում էին զամբյուղների մեջ և նետում ծովը:[2]

Պետք է նշել, որ սպանության վերոհիշյալ եղանակների կողքին թուրքերը և գերմանացիները դիմել են նաև ավելի պարզագույն և ձեռնտու ձևերի: Վերջիններիս շարքին կարելի է դասել մարդկանց ջրասույզ անելը և որոշակի բարձրությունից վայր նետելը:

Օրինակ՝ Տրապիզոնի հայերի տեղահանության ժամանակ, մի քանի անգամ Սամսուն տեղափոխելու պատրվակով հայերին նստեցնում էին նավերը, որոնք դուրս գալով բաց ծով, շուտով վերադառնում էին առանց իրենց ուղևորների:[3] Ակն քաղաքում մնացած 16-ից մինչև 90 տարեկան 500 հայ տղամարդկանց 1915թ. հունիսի 7-ից 11-ը հինգ գիշեր իրար հետևից դուրս են բերում բանտից հինգ հոգանոց խմբերով և երկու կամուրջների վրայից նետում Եփրատը: Լողալով փրկվելու հավանականությունը բացառելու նպատակով զոհերի պարանոցին երկաթե օղեր են անցկացնում և իրանին քարեր կապում:[4] 1915թ. մայիսի 20-ին Տիգրանակերտում ձերբակալված 674 հայ երևելի տղամարդկանց նստեցնում են Տիգրիսի վրայով նավարկող 12 լաստերի վրա՝ Մոսուլ ուղարկելու պատրվակով: Մի փոքր նավարկելով՝ հայերից վերցնում են փողերը, թանկարժեք իրերը, մերկացնում և թափում են գետը: Լողալով փրկվել փորձողները գնդակահարվում են ափին կանգնած զինվորների կողմից:[1]

Ջրասույզ անելու եղանակը, սակայն, ավելի հաճախ օգտագործվում էր լողալ չիմացող կանանց և հատկապես մանուկներին սպանելու համար: Այսպես, Երզնկայի թուրք պատգամավոր Հալեթը Կամախի մոտակայքում տեսնելով հայ որբերի 700 հոգանոց խմբին, հրամայել էր նրանց ջրասույզ անել:[2] Սև ծովում և Տրապիզոնի մոտակայքով հոսող Դեյիրմենդերե գետում հայ երեխաների և կանանց խեղդելու բազմաթիվ դեպքերի մասին էր խոսվում նաև Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Գորինիի, Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվիատկովսկու և Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդի զեկուցագրերում և ծածկագիր հեռագրերում:[3]

Ուշագրավ է, որ նացիստները ևս իրենց՝ կատարելության հասցված սպանության մեթոդների կողքին ժամանակ առ ժամանակ դիմել են այլընտրանքային եղանակների: Նյուրնբերգյան դատավարության նյութերից, օրինակ, տեղեկանում ենք, որ Ղրիմի թերակղզու օկուպացիայի ընթացքում գերմանացիները լաստանավերով ծով են դուրս բերել հազարավոր խաղաղ բնակիչների և ծովասույզ արել:[4]

Հայտնի է, որ պատերազմի ավարտին, երբ նացիստներն իրենց կատարած հանցանքների հետքերը վերացնելու

[1] Dadrian V.N., "The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians." In *Holocaust and Genocide Studies.* 1986, Volume 1, Num. 2., p. 177.
[2] Նույն տեղում:
[3] Bryce J., Toynbee A., նշված աշխ., էջ 313:
[4] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության..., էջ 240:

[1] Բինոն Ռ., Հայերու բնաջնջումը: Գերմանական մէթոտ – թրքական գործելակերպ, Կ.Պոլիս, 1919, էջ 40:
[2] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության..., էջ 177:
[3] Dadrian V.N., Children as Victims of Genocide: The Armenian Case. «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 7, 2003, էջ 7:
[4] Нюрнбергский процесс. Том 1, стр. 299.

Այս զոհերի մեջ բացի հրեաներից կարող էին լինել նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ: Տե՛ս նաև Поляков Л., История антисемитизма. Эпоха знаний, стр. 420.

նպատակով ձեռնամուխ եղան համակենտրոնացման ճամբարների վերացման գործին, ստիպված դիմեցին նաև մարդկանց ոչնչացնելու այս եղանակին: Օրինակ՝ 1945թ. սկզբին Էլբա գետի ափին գտնվող Նեյենգամմե ճամբարի բանտարկյալները նստեցվում են երկու մեծ նավերի վրա և ջրասույզ արվում Հյուսիսային ծովում:[1] 1945թ. ապրիլին Զակսենհաուզեն ճամբարի կառավարիչ Կայնդլը հրաման էր ստացել իր ճամբարի 40-45 հազար բանտարկյալներին նստեցնել լաստանավերի վրա, Շպրեյե գետի ջրանցքների ցանցով դուրս բերել Բալթիկ կամ Հյուսիսային ծով և ջրասույզ անել: Սակայն այս ծրագիրը չէր իրականացել խորհրդային զորքերի արագ առաջխաղացման արդյունքում:[2]

Հայերի դահիճներն իրենց խնդիրն ավելի հեշտացնելու համար ժամանակ առ ժամանակ դիմում էին նաև մեկ այլ միջոցի. նրանք զոհերին ցած էին նետում բարձր ժայռերից և անդունդների եզրերից: Օրինակ՝ թուրքերը Տիգրանակերտի նահանգի սահմաններում, Եփրատի ձախ ափին գտնվող Տուտանի անդունդն էին գլորել շուրջ 5000 հայ կանանց և մանուկների:[3] Այդ կերպ բազմաթիվ հայերի ցած էին նետել նաև Խարբերդի մոտ գտնվող Գյոլջուկ (պատմական Ծավք) լճին հարող ժայռերից:[4]

Հետաքրքիր է, որ Նյուրնբերգյան դատավարության մեղադրական եզրակացությունում ասվում էր, թե «Դնեպրոպետրովսկ քաղաքի Տրանսպորտային ինստիտուտի մոտակայքում գերմանացիները գնդակահարել կամ հսկա անդունդն են նետել շուրջ 11 հազար կանանց, երեխաների և մեծահասակ տղամարդկանց»:[5]

Հատկանշական է, որ իթթիհատականների և նացիստների գործելակերպը հաճախ համընկել է նաև հայ և հրեա մանուկների սպանության ժամանակ. վերջիններիս հաճախ ողջ-

[1] CC в действии, стр. 317.
[2] Նույն տեղում, էջ 314:
[3] Ղազարեան Հայկազն, նշված աշխ., էջ 203:
[4] Davis L., նշված աշխ., էջ 81:
[5] Нюрнбергский процесс. Том 1, стр. 300.

ողջ նետում էին կրակի մեջ: Այսպես, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիքը, հավաքելով շուրջ 1000 անծնող հայ մանուկների, այրել էր տվել խարույկների վրա Թաշխոտ կոչված վայրում:[1] Խարբերդի որբանոցի 300 հայ երեխաները կառավարության պահանջով դուրս էին բերվել քաղաքից և նույն ձևով նետվել կրակի մեջ:[2]

Օսվենցիմում աշխատող հսկիչներից մեկի հավաստմամբ, լինում էին դեպքեր, երբ գազախցերի համար նախատեսված գազը չէր բավականացնում և երեխաներին նետում էին դիակիզիչ վառանների մեջ:[3] 1941թ. դեկտեմբերին, գնդակահարելով Պոլտավայի շրջանի (Ուկրաինա) Խորոլ քաղաքի բոլոր չափահաս հրեաներին, գերմանացիները նրանց երեխաների վրա վառոդ էին լցրել և այրել:[4]

Երկու ցեղասպանությունների ժամանակ գործածված զանգվածային սպանության միջոցների թվին, անկասկած, պետք է դասել նաև զոհերին արհեստական սովի և վարակիչ հիվանդությունների միջոցով ոչնչացնելու մեթոդը:

Հայտնի է, որ հրեական հարցով զբաղվող նացիստ ղեկավարների մի մասը, որ գրականության մեջ ստացել է «ատրիցիոնիստներ» (անգլ. "attrition"՝ «հյուծում» բառից) անունը, նպատակ էր դրել գետտոներում կենտրոնացված հրեաների մի զգալի մասից ազատվել նրանց՝ արհեստական սովի մատնելու միջոցով:[5]

Օրինակ՝ Լեհաստանի գեներալ-նահանգապետության կառավարիչ Հանս Ֆրանկի օրագրից հայտնի է դառնում, որ նա իրեն ենթակա տարածքներում մտադրվել էր սովահարության մատնել և այդ միջոցով անհետացնել 1 մլն 200 հազար հրեաների:[6] Նույն նպատակով, ըստ 1941թ. նոյեմբերի 4-ի հատուկ հրամանի, արևելյան օկուպացված տարածքներում

[1] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 177:
[2] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության..., էջ 219:
[3] CC в действии, стр. 310.
[4] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 136:
[5] Headland R., նշված աշխ., note 22, p. 410.
[6] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 668.

գերմանացիների կողմից հրեաների համար սահմանվել էին սննդի այնպիսի նորմաներ, որոնք մյուս բնակիչների համար նախատեսված ամենացածր նորմաների միայն կեսն էին կազմում:[1] Սովահարության մատնելու նպատակով հրեաներին արգելվում էր նաև գյուղատնտեսությամբ զբաղվել, գնել հիմնական սննդամթերքները՝ ալյուրեղեն, միս, ձու, կաթ:[2]

Հարկ է նաև նշել, որ հրեաներին առանց սննդամթերքի թողնելու անմիջական հետևանքներից մեկն էլ բնակչության մեջ վարակիչ հիվանդությունների արագ տարածումն էր, ինչն ամեն կերպ խրախուսվում էր գերմանական իշխանությունների կողմից: Վերջին հանգամանքն ապացուցվում է Վարշավայի առողջապահության բաժանմունքի տնօրեն դոկտ. Հումմելի խոսքերով. «Բծավոր տիֆի տարածման վտանգը հետզհետե մեծանում է բնակչության և հատկապես հրեաների դիմադրողականության թուլացման հետևանքով: Մեր տվյալներով հրեական գետտոյում արդեն բծավոր տիֆի 2405 դեպք է գրանցվել, բայց իրականում այդ թիվն ավելի մեծ է... Հրեաների կենտրոնացումը գետտոյում ինքնըստինքյան օրինված է ի վերուստ: Այժմ կարևոր է իրականացնել գետտոյի լիակատար մեկուսացումը քաղաքից»:[3]

Իմիջիայլոց, Խորհրդային Միության տարածքում, մասնավորապես՝ Բելոռուսիայում, գերմանացիները բաց երկնքի տակ ստեղծել էին ժամանակավոր ճամբարներ, ուր կենտրոնացնում էին տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչների .և դիտավորյալ նրանց կողքին տեղավորում տիֆով հիվանդ մարդկանց՝ վարակը տարածելու ակնկալիքով:[4]

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 668:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 595:

Այս հարցի վերաբերյալ մանրամասն տե՛ս Browning Ch. R., "Genocide and Public Health: German Doctors and Polish Jews, 1939-1941". *Holocaust and Genocide Studies.* 1988, Volume 3, Numb. 1, pp. 21-36.

[4] Лагери смерти. Сборник документов о злодеяниях немецко-фашистских захватчиков в Белоруссии. Москва, 1944, стр. 6.

Խոսելով Հոլոքոստի ընթացքում գնդակահարությանը և գազախ-

Թուրքական իշխանությունների կողմից կիրառված ոչնչացման գլխավոր միջոցներից մեկն էլ, անկասկած, իրենց զոհերին դիտավորյալ սովահարության և ծարավահարության մատնումն էր: Հայ տարագիրների քարավանները մինչև իրենց նոր «բնակավայրերը» հասնելը հետզհետե նոսրանում էին նաև այն պատճառով, որ իրենց ուղեկցող զինվորները դիտավորյալ առաջ էին շարժվում անբնակ և անջրդի վայրերով, հաճախ չէին թույլատրում մոտենալ ջրի աղբյուրներին կամ վաճառում էին այդ իրավունքը մեծ գումարի դիմաց: Ընդ որում, սովահարության պատճառով մահացության դեպքերը սովորական երևույթ էին ինչպես գաղթի ճանապարհին, այնպես էլ ժամանակավոր կայանման վայրերում, ինչպես, օրինակ՝ Հյուսիսային Միջագետքում:

Ինչպես Միջագետքի անապատները տանող ճանապարհների վրա, այնպես էլ այլ վայրերում հայերի համար ստեղծված համակենտրոնացման տարբեր ճամբարները[1] երկու նպատակի համար էին ծառայում: Նախ, դրանք օգտագործվում էին որպես ժամանակավոր կայանման և կուտակման վայր, որտեղից զոհերին խմբերով քշում էին անապատ և սպանում: Այս ճամբարների երկրորդ և ոչ պակաս կարևոր նպա-

ցերին այլընտրանք հանդիսացող սպանության եղանակների մասին՝ հարկ է նշել, որ դրանք առավել լայն կիրառում են գտել այն դեպքերում, երբ գերմանացիները հրեաների սպանությունը «վստահում» էին իրենց օժանդակող ուժերին: Այսպես, ռումինացիներն իրենց ենթակա տարածքներում, մասնավորապես՝ Տրանսնիստրիայում հաստատված համակենտրոնացման ճամբարներում, հրեաների համար դիտավորյալ ստեղծել էին այնպիսի պայմաններ, որ վերջիններս տասնյակ հազարներով մահանան սովից և համաճարակներից: Ռումինացիները սովորություն ունեին հրեաներին նստեցնել երկաթուղային շարժակազմերի մեջ և առանց սնունդի և ջրի թողնել մի քանի օր: Դրա հետևանքով մարդկանց մեծ մասը մահանում էր: Հայտնի է նաև, որ 19 հազ. Օդեսացի հրեաներ կենտրոնացվել էին քաղաքի հրապարակներից մեկում, այնուհետև ռումինացիները նրանց վրա բենզին էին շաղ տվել և այրել: (Մանրամասն տե՛ս Levene M., նշված աշխ., էջեր 438-455:)

[1] Թուրք պաշտոնյաները հայտարարել էին, որ համակենտրոնացման ճամբարներ ստեղծելու գաղափարին հանգել են անգլիացիների փորձն ուսումնասիրելով. վերջիններս նման կերպ էին վարվում հարավաֆրիկյան բուռերի հետ: (Степанян Ст., նշված աշխ., էջ 127:)

տակը նույնական էր այն գործառույթին, որը, ըստ «ատրիցիոնիստների», պետք է կատարեին հրեական գետտոները: Ինչպես և նացիստների դեպքում, իթթիհատականները ևս հաշվարկել էին, որ սովի, թերսնվածության, ծարավահարության անմիջական հետևանքը լինելու էր զանազան մահաբեր հիվանդությունների տարածումը, հետևաբար՝ զանգվածային մահը:

Այսպես, ամերիկյան միսիոներներից մեկի հավաստմամբ, Հյուսիսային Միջագետքում գտնվող Մեսքենեի հարթավայրը թուրքական իշխանությունները դարձրել էին հայ գաղթականների համակենտրոնացման վայրի, որտեղից զոհերը հետագայում խմբերով քշվում էին Եփրատի երկայնքով: Մեսքենեում, ըստ միսիոների, սովից, դեզինտերեայից, տիֆից մահացած հայերի թիվը պետք է կազմեր շուրջ 60 հազար:[1] Նույն ականատեսի հավաստմամբ՝ հայերն այդպիսի վիճակում էին գտնվում նաև Մեսքենեից Տեր-Զոր տանող ճանապարհին ընկած մյուս հավաքատեղիներում:[2] 1915թ. սեպտեմբերին Հալեպի մոտակայքում գտնվող Համա ավան էին ժամանել շուրջ 20 հազար տարագիրներ: Երկու ամսվա ընթացքում նրանցից երեք հազարը մահացել էին քաղցից, երկու հազարը՝ համաճարակներից:[3] Կիլիկիայից և Փոքր Ասիայի այլ շրջաններից դեպի Հալեպ գաղթող հայ ժողովրդի մի մասը՝ մոտ 80 հազար, 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ստիպված էր ժամանակավորապես ճամբար դնել Ամանոսի լեռներում գտնվող Քանլը-Կեչիտ կոչվող ձորում: Այս ժամանակահատվածում սովից և զանազան հիվանդություններից օրական 600-700 հոգի էին մահանում:[4]

Թուրքական իշխանությունների վարած այս քաղաքականությունը լավագույնս արտահայտվում է Հալեպի գաղթականության ընդհանուր տեսուչ Աբդուլահատ Նուրիի խոսքերում: Երբ վերջինիս տեղեկացնում են, թե ժամանակավորապես Հալեպի շրջակայքում հաստատված հայերի տեղահանումը համաճարակների պատճառով կարող է մահաբեր դառնալ ողջ Միջագետքի համար, նա պատասխանում է. «... Այս կերպով երկու վնասակար տարրեր միասին կվերացնենք: Հայերի հետ մեռնողները արաբներ չե՞ն...Դրանով թրքության ապագայի ճանապարհը կհարթվի»:[1]

[1] Boyajian D.H., Armenia. The Case for a Forgotten Genocide. Westwood, N.J.: Educat. Book Craft., 1972, p. 120.

[2] Նույն տեղում, էջեր 120-124:

[3] Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Составитель, ответственный редактор Вардгес Микаелян. Ереван, 1995, стр. 283.

[4] Պալաքյան Գ., Հայ Գողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն: Բեռլինեն դեպի Զոր, Երևան, 1991, էջ 338:

Հիմնական հատկանիշները

Սպանության վերոհիշյալ եղանակները դիտարկելու ժամանակ կարելի էր նկատել, որ և՛ հայկական, և՛ հրեական դեպքերում դրանց իրականացումը, որպես կանոն, ուղեկցվել է հստակ կազմակերպվածությամբ: Հասկանալի է, որ այսպիսի գործելակերպը պետք է ապահովեր հայերի և հրեաների ոչնչացման առավել ամբողջական և արագ իրականացումը: Սակայն, հարկ է ասել, որ երկու ցեղասպանությունների ժամանակ էլ նման կազմակերպվածությունը հատուկ է եղել ոչ միայն զուտ սպանության գործընթացին, այլև դրանից անմիջապես առաջ կամ ընթացքում կատարվող նախապատրաստական և օժանդակ աշխատանքներին: Այստեղ է, որ իթթիհատականների և նացիստների գործելակերպը կրկին համընկնում է: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հայկական և հրեական ցեղասպանությունների այն բաղադրիչ հատկանիշներին, որպիսիք էին հակահայկական և հակահրեական քարոզչության ծավալումը, զանգվածային սպանությունների գաղտնիության ապահովումը և ցեղասպանական գործընթացն առավել շահութաբեր դարձնելու ձգտումը:

Հակահայկական և հակահրեական **քարոզչության** գերագույն նպատակը, պետք է կարծել՝ հայերին և հրեաներին մեկուսացնելու, արտաքսելու, վերջապես՝ սպանելու գործերին «հիմնավորում» տալն էր և աջակցելը:

[1] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 25:

Հայերի և հրեաների դեմ օգտագործվող պրոպագանդան, թերևս, առաջին հերթին նախատեսված էր «ներքին սպառման», այն է՝ հասարակ ժողովրդի և սպանություններն անմիջապես իրականացնող անձանց համար: Այս նպատակով, երկու դեպքում էլ ակտիվորեն օգտագործվում էին զոհերին տարբեր առիթներով մեղադրելու, «քավության նոխազ» դարձնելու, նրանց «արժեքը» նսեմացնելու, հետևաբար՝ սեփական հասարակական արժեքների համակարգից դուրս թողնելու քարոզչական մեխանիզմները: Այսպիսի հաշվարկված գործողությունների առաջին նպատակը հայերի և հրեաների հարևանությամբ ապրող ժողովուրդների շրջանում հնուց պահպանված հակահայկական և հակահրեական տրամադրությունների ակտիվացումն էր, ինչը պետք է նպաստեր բնակչության՝ տեղական իշխանությունների հետ համագործակցելուն իսկ հաճախ նաև՝ բուն ցեղասպանական գործընթացին մասնակցելուն: Ընդ որում, պետք է ասել, որ իթթիհատականների և նացիստների հակահայկական և հակահրեական պրոպագանդաներն ունեին ընդհանուր և մասնավոր (կամ տեղական) ուղղվածություն: Սրանցից առաջինի նպատակն էր զոհերին ընդհանուր կարգի ամբաստանություններ ներկայացնելը և նրանց շուրջ բացասական հասարակական մթնոլորտ ստեղծելը: Մասնավոր կամ տեղական քարոզչությունը կոչված էր «ապացուցելու» ընդհանուր պրոպագանդայի ճշմարտացիությունը և, որպես կանոն, նախորդում էր կոնկրետ գործողություններին:

Ինչպես հայերի, այնպես էլ հրեաների պարագայում, վերջիններիս դեմ ուղղված քարոզչության բովանդակությունը մեծ մասամբ պայմանավորվելու էր այն հանգամանքով, որ երկու ցեղասպանությունների հեղինակ պետությունները՝ Թուրքիան և Գերմանիան, գտնվում էին պատերազմական վիճակում: Ինչպես արդեն ասվեց, սա հարմար առիթ էր հայերից և հրեաներից ներքին թշնամու կերպար ստեղծելու համար:

Իթթիհատականները, հայերին նույնացնելով իրենց թշնամի պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի հետ,[1] սկսեցին նրանց «կասկածել» դավաճանության և «մեջքից հարվածելու» ցանկության մեջ: 1915թ. դեպքերի ժամանակակից Ահմեդ Ռեֆիկն իր «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» գրքում նկատում է, որ պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունները լուրեր էին տարածում, թե հայերը միանալու են թշնամուն, Ստամբուլում ապստամբություն են բարձրացնելու, սպանելու են իթթիհատական կուսակցության առաջնորդներին և բացելու են Բոսֆորի նեղուցը դաշնակիցների առջև: Ըստ հեղինակի, «այս նողկալի խաբեությունները կարողացան համոզել միայն հասարակ ժողովրդի այն հատվածին, որը չէր գիտակցում իր քաղցած լինելը»:[1]

Այս մեղադրանքներն ավելի առարկայական դարձնելու համար իթթիհատականները դիմում էին նաև կոնկրետ միջոցների: Դրանցից կարելի է հիշատակել հնչակյան գործիչների դատավարության՝ որպես քարոզչական հնարքի օգտագործման փաստը: Ինչպես հայտնի է, 1913թ. թուրքական իշխանությունները ձերբակալել էին հնչակյան կուսակցության Կ.Պոլսի մասնաճյուղի բոլոր անդամներին՝ Թալեաթի և նրա զինակիցների դեմ մահափորձ «նախապատրաստելու» ամբաստանությամբ: Նրանցից 20 նշանավորներին ռազմական դատարանը 1915թ. մայիսի 27-ին դատապարտեց մահապատժի, որն ի կատար ածվեց նույն թվականի հունիսի 15-ին: Ըստ Վ. Դադրյանի, այն հրապարակայնությունը, որ տրվեց մահապատժի լուսաբանմանը ամբողջ կայսրությունով մեկ, ծառայեց այն բա-

[1] Թուրքական իշխանությունների կողմից արևմտահայերի նույնացումը Ռուսաստանի հետ հատկապես վտանգավոր էր այն իմաստով, որ, ինչպես նշում է թուրքերի էթնիկական հոգեբանության վերաբերյալ իր ուսումնասիրությունում Ս.Լուրիեն, «ռուսների կողմից երկու դարերի ընթացքում թուրքերի նկատմամբ տարած անընդհատ հաղթանակների պատճառով վերջիններիս գիտակցության մեջ ստեղծվել էր Ռուսաստանի՝ որպես դարավոր և հավերժական թշնամու կերպարը...»: (Лурье С., Официальная идеология и сознание народных масс в Турции. "Метаморфозы традиционного сознания," Санкт-Петербург, 1994, стр. 105.)

[1] Ռեֆիկ Ա., նշված աշխ., էջ 51:

Կ.Պոլսում լույս տեսնող թուրքական «Կարագյոզ» թերթը գրում էր, թե «հայերի դեմքը կացության չափանիշն է. եթե այն ուրախ է, ապա պաշնակիցների գործերը բարվոք են, երբ մթագնած է, նշանակում է՝ վատ են ընթանում»: (Բինոն Ռ., նշված աշխ., էջ 20:)

նին, որ յուրաքանչյուր թուրքի համար հայկական ողջ համայնքը դառնա կասկածելի և դատապարտելի:[1]

Թուրքական իշխանությունները հակահայկական քարոզչության նպատակներով օգտագործեցին հատկապես 1915թ. ընթացքում կայսրության տարբեր վայրերում՝ Վանում, Շաբին-Գարահիսարում, Ուրֆայում և այլուր տեղի ունեցած հայերի ինքնապաշտպանական կռիվները, որոնք ներկայացվում էին որպես ընդհանուր կասկածները և ամբաստանությունները «հիմնավորող» ապացույցներ:

Հարկ է նաև նշել, որ գրեթե միշտ՝ Թուրքիայի տարբեր մասերում հակահայկական գործողություններից առաջ, այս ամբաստանությունների կողքին, հնչում էին նաև ավելի մասնավոր մեղադրանքներ, որոնք ծառայում էին նույն նպատակին: Այսպես, Սեբաստիայի նահանգում կեղծ լուրեր էին տարածվում, թե իբր հայերը թունավորել են թուրք զինվորների հացը:[2] Նման մեղադրանքներ են հնչում նաև Հալեպում՝ հայ զինվորների հասցեին:[3] Դիարբեքիրում սուտ լուրեր են տարածվում, թե իբր այստեղի հայերը 40 ռումբ են ուղարկել Վանի պաշտպաններին:[4] Կարինում հայ բժիշկները մեղադրվում էին թուրք զինվորներին դիտավորյալ արձակուրդային թղթեր տալու մեջ, որի նպատակն էր կազմալուծել օսմանյան բանակը:[5] Այս մեղադրանքների շարքը դեռ երկար կարելի է շարունակել:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նացիստները ևս դիմել են ակտիվ հակահրեական քարոզչության: Վերջինիս բովանդակությունը, ինչպես և իթթիհատական պրոպագանդայի դեպքում, բաղկացած էր մի քանի ինֆորմացիոն շերտերից: Նախ պետք է ասել, որ ի տարբերություն հայերի, հրեաները մեղադրվում էին ավելի գլոբալ «հանցանքների» մեջ: Օրինակ՝ դեռ 1937թ. ֆաշիստական Գերմանիայի պրոպագանդայի մինիստր Գեբելսը կուսակցական հանդիսավորության ժամանակ հրեաների մասին խոսելիս ասել էր. «Եվրոպան պետք է տեսնի և ճանաչի վտանգը... Մենք... ցույց կտանք, որ հրեան հանդիսանում է աղետների սկզբնավորողը և ոգեշնչողը... Տեսե՛ք, ահա՛ մոլորակի թշնամին, քաղաքակրթությունները փլուզողը, ժողովուրդների մակաբույծը, Քաոսի որդին, չարիքի մարմնացումը»:[1] Հենց այս խոսքերն էլ, ընդհանուր առմամբ, պատերազմի ժամանակ պայմանավորեցին հակահրեական քարոզչության բովանդակությունը:

Այս ուղղությամբ նացիստների ձեռնարկած քայլերից, մասնավորապես, կարելի է նշել Արևելյան և Արևմտյան Եվրոպայի օկուպացված երկրներում «Սիոնի իմաստունների արձանագրությունների»՝ դեռ դարասկզբից հայտնի առասպելը նորից ակտիվ շրջանառության մեջ դնելու փորձը:[2] Հայտնի է նաև, որ հետագայում՝ 1943թ., նույն Գեբելսի հրամանով արտասահմանյան երկրներ հեռարձակվող ռադիոհաղորդումներում նախկին 70-ի փոխարեն 80 %-ի էր հասցվել հակահրեական նյութերի ծավալը:[3]

Ինչպես և երիտթուրքերի դեպքում, նացիստական պրոպագանդան օգտագործեց նաև պատերազմի գործոնը: Հրեաներն սկսեցին նույնացվել Գերմանիայի թշնամի պետության՝ ԽՍՀՄ-ի քաղաքական համակարգի հետ, որի նպատակը բնակչության հակաբոլշևիկյան տրամադրությունները հրեաների դեմ օգտագործելն էր: Այս կարգի քարոզչությունը հատկապես ուժեղացավ Խորհրդային Միության տարածքների զավթումից հետո (պետք է նշել, որ հատկապես այս տարածքներում էր, որ գերմանացիները տեղական բնակչության աջակցության կարիքն ունեին՝ հրեաներին արագ հայտնաբերելու և ոչնչացնելու համար): Զանազան միջոցների կողքին, գերմանացիները դիմեցին տեղական մամուլի օգնությանը:

Նախապես Գերմանիայում պատրաստվում էին հակա-

---

[1] Dadrian V.N., The Secret Young-Turk Ittihadist Conference..., p. 190.
[2] Ղազարեան Հայկազն, նշված աշխ., էջ 92:
[3] Dadrian V.N., The Secret Young-Turk Ittihadist Conference..., p. 192:
[4] Ղազարեան Հայկազն, նշված աշխ., էջ 199:
[5] Չարըզ Ղ., նշված աշխ., էջ 468:

---

[1] Коя Н., նշված աշխ., էջ 139:
[2] Նույն տեղում, էջ 128:
Դարասկզբին միտումնավոր հորինված այս գրքում ներկայացվում էին հրեաների կողմից աշխարհին իբր տիրանալու ծրագրերը և ձևերը:
[3] Նույն տեղում, էջ 141:

հրեական հոդվածների ժողովածուներ, որոնք տեղում հանձնվում էին տպարան և լույս տեսնում ռուսերեն լեզվով:[1] Այդ հոդվածներում, մասնավորապես, խոսվում էր համաշխարհային և ռուսական ճակատագրերի վրա հրեաների ունեցած «աղետալի» ազդեցության, հրեական ծագում ունեցող խորհրդային մի շարք գործիչների մասին (Կագանովիչ, Մեխլիս, Լոզովսկի, Էրենբուրգ և այլոք), ինչպես նաև տպագրվում էին հակահիտլերյան կոալիցիայի ղեկավարների ծաղրանկարները՝ համաշխարհային հրեականության սպասավորների տեսքով:[2] Օրինակ՝ Սիմֆերոպոլի «Գոլոս Կոիմա» թերթում 1941-1944թթ. լույս տեսած հոդվածներից մի քանիսի վերնագրերը խոսում են նացիստական քարոզչության ընդհանուր բովանդակության մասին. «Եվրոպան կազատագրվի ջհուդներից», «Մասոնականությունը բոլոր ժողովուրդների թշնամին է», «Խիղճ չունեցող ռասան արժանի չէ կարեկցանքի», «ԽՍՀՄ-ը ջհուդների հենարանն է» և այլն:[3]

Հետաքրքիր է, որ հրեաներին բոլշևիկների հետ նույնացնելու քարոզչական հնարքի սնանկությունը հասկացել էին նաև ոչնչացման գործընթացն անմիջապես իրականացնողները: Այսպես, 1941թ. սեպտեմբերին Կայսերական անվտանգության վարչությանը («RSHA») ուղղված իր զեկուցագրում՝ Ուկրաինայի տարածքում գործող «C» այնզացխմբի հրամանատարությունը հետևյալն էր գրում. «Բոլշևիկյան աշխատանքն իրականացվում է հրեաների, ռուսների, վրացիների, հայերի, լեհերի, լատվիացիների, ուկրաինացիների կողմից. բոլշևիկյան ապարատը ոչ մի դեպքում չի կարելի նույնացնել հրեական բնակչության հետ»:[4]

Եթե իթթիհատականները «մեջքից հարված» ստանալու մտավախությունը և, հետևաբար, կարծր միջոցների դիմելու

[1] Тяглый М., "К вопросу об антисемитской пропаганде на оккупированных территориях СССР: новые источники". *Холокост и соучастность*. 2002, N 4, стр. 5.
[2] Նույն տեղում, էջ 6:
[3] Նույն տեղում:
[4] Hilberg R., նշված աշխ., էջ 225:

անհրաժեշտությունը «հիմնավորում» էին մի քանի վայրերում հայերի մղած ինքնապաշտպանական կռիվներով, ապա նացիստների դեպքում նման «հիմնավորումներից» մեկը դարձավ օկուպացված տարածքներում սկիզբ առած հակագերմանական պարտիզանական պայքարը:[1] Վերջինս, գերմանացիները միտումնավոր ներկայացնում էին որպես հրեաների կողմից ղեկավարվող և ուղղորդվող պայքար: Ուստի, կրկին շեշտվում և «արդարացվում» էր հրեաների ոչնչացման անհրաժեշտությունը:

Ինչպես և հայերի դեպքում, այստեղ ևս օգտագործվում էին ավելի կոնկրետ մեղադրանքներ: 1941թ. սեպտեմբերին Կիևում բռնկված մեծ հրդեհի մեղավորներ էին համարվել հրեաները: Մինսկում 2500 հրեաներ էին գնդակահարվել «լուրեր տարածելու» մեղադրանքով:[2] Օդեսայի օկուպացիայի ընթացքում ռումինական զորանոցի շենքի պայթեցումը դիտվել էր որպես հրեական սադրանք, ինչը դարձել էր տեղի 35 հազար հրեաների սպանության պատրվակ:[3]

Հատկանշական է, որ Հոլոքոստի ընթացքում հրեաների կողմից ցույց տրված հուսահատ դիմադրության հատուկենտ դեպքերը ևս, ինչպես, օրինակ, Վարշավայի գետտոյում,[4] նա-

[1] Ի պատասխան 1941թ. հուլիսի 3-ին Ստալինի՝ գերմանացիների թիկունքում պարտիզանական պատերազմ սկսելու կոչին, Հիտլերը նույն թվականի հուլիսի 16-ին հայտարարել էր. «Պարտիզանական պայքարի գոյությունը մեզ իրավունք է վերապահում ոչնչացնել մեր ճանապարհին հանդիպող ամեն ինչ»: (Buchler Ye., նշված աշխ., էջ 14:)
[2] Hilberg R., նշված աշխ., էջ 217:
[3] Арад И., նշված աշխ., էջ 68:
[4] 1943թ. գարնանը Վարշավայի գետտոյի 400 հազար հրեաներից մնացել էին ընդամենը 60 հազար հոգի: Այն բանից հետո, երբ ստացվեց վերջիններիս «վերաբնակեցման» հրամանը, այստեղի հրեաները ապրիլի 19-ին դիմեցին զինված ինքնապաշտպանության: Մինչև մայիսի կեսերը տնած մարտերում բոլոր պաշտպանները ոչնչացվել էին, իսկ ողջ մնացած հրեաները՝ ուղարկվել «մահվան ճամբարներ»: (Մանրամասն տե՛ս Shirer W., նշված աշխ., էջեր 1269-1273: Տե՛ս նաև СС в действии, стр. 247.)

Իմիջիայլոց, հրեա պատմաբան Յաար Աուրոնի դիտարկմամբ, ինչպես այս, այնպես էլ մյուս գետտոներում (Բիալիստոկ, Կովնո), գերմանացիներին դիմադրություն ցույց տալու կողմնակից հրեա գործիչները գաղտնի քննարկումների ժամանակ որպես ոգեշնչման աղբյուր վկայակոչել են Ֆրանս Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործությունը:

ցիստները ներկայացնում էին որպես հրեական ավազակախմբերի գործունեության դրսևորում: Այստեղ նույնպես կարելի է զուգահեռ անցկացնել հայ ինքնապաշտպանների նկատմամբ թուրքական իշխանությունների գործածած որակավորումների հետ:

Պետք է կարծել, որ թուրքական և գերմանական քարոզչական քաղաքականությունը զոհերի շուրջ թշնամական մթնոլորտ ստեղծելուց բացի, միաժամանակ ծառայում էր մեկ այլ ոչ պակաս կարևոր նպատակի. այն՝ սպանությունների գործընթացին անմիջապես մասնակցող և աջակցող մարդկանց համար հոգեբանական արդարացման յուրատեսակ միջոց էր հանդիսանում: Սա ավելի հասկանալի է դառնում ստորև ներկայացվող օրինակների դիտարկումից: Մասնավորապես, աչքի է ընկնում այն իրողությունը, որ և՛ թուրք, և՛ գերմանացի դահիճները հայերի և հրեաների ոչնչացումն իրականացնող մարդկանց շրջանում փորձում էին ներարկել այն մտայնությունը, թե նրանք պատմական «մեծ առաքելության» մեջ են ներգրավված:

Պատերազմի տարիներին թուրք տարբեր պաշտոնյաների հեռագրերում և ծածկագրերում հայերի ոչնչացման գործն անվանվում է «սուրբ գործ»,[1] «սրբազան մտադրություն»:[2] Դոկտ. Նազիմն անգամ հայտարարել էր, որ հայերին ոչնչացնելու ձեռնարկով արմատապես կլուծվի «Արևելյան հարցը»:[3]

Նացիստները ևս հրեաներին սպանելու իրենց քաղաքականությունը փորձում էին վարագուրել «պատմական առաքելության» շղարշով: Օրինակ՝ Հիմլերը հրեաների և այլ «ոչ պիտանի» տարրերի ոչնչացումը հիմնավորելու և իր ստորադասներին խրախուսելու համար օգտագործում էր հետևյալ կոչերը. «Սրանք այն ճակատամարտերն են, որոնք մեր ապագա սերունդները ստիպված չեն լինի նորից տալու»,[1] «Սա մեր պատմության փառավոր էջն է, որը երբեք չի գրվել և չի գրվի ուրիշների կողմից»[2] և այլն:

Ուշագրավ է նաև այն ընդհանրությունը, որը վերաբերում է թուրք և գերմանացի ոճրագործների՝ երեխաների ոչնչացումը «հիմնավորելու» և անմիջական մարդասպաններին խրախուսելու գործելակերպին: Այսպես, Տեր-Զորի հայերի սպանության գլխավոր կազմակերպիչ Զեքի բեյը հաճախ ինքն իր ձեռքով սպանում էր հայ մանուկներին և իր օգնականներին ասում. «Մի՛ կարծեք, որ անմեղի սպանեցի, սրանց նույնիսկ նորածինները հանցավոր են, քանի որ վրեժի սերմը պիտի կրեն իրենց մեջ. եթե ուզում եք վաղվա օրվա համար ապահով լինել, մի՛ խնայեք նաև փոքրերին»:[3]

Միջազգային տրիբունալում «C» այնզացխմբի ջոկատներից մեկի հրամանատար Էրվին Շուլցի կողմից տրված վկայությունների համաձայն, Հիմլերը և Հայդրիխը հրամայել էին իրենց ոչնչացնել բոլոր հրեաներին, այդ թվում՝ կանանց և երեխաներին, որպեսզի «վերջիններիցս վրիժառուներ չմեծանան»:[4]

Անժխտելի փաստ է, որ հակահայկական և հակահրեական քարոզչության ընթացքում օգտագործվում էին նաև նախընթաց պատմական ժամանակաշրջանից հայտնի այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված էին հիմնականում բնակչության առավել հետամնաց խավերի թշնամանքը գրգռելուն: Այս իմաստով հետաքրքիր ընդհանրություններ կարելի է նկատել երիտթուրք և նացիստ ոճրագործների գործելակերպում:

Թուրքիայի բնակչության առավել հետամնաց և կրոնամոլ հատվածներին զենքի կոչելու համար, օրինակ, հարկավոր էր դիպչել նրանց կրոնական զգացմունքներին. այս հնարքն իրեն հատկապես արդարացրել էր աբդուլհամիդյան ջարդերի

(Մանրամասն տե՛ս Auron Ya., The Banality of Indifference. Zionizm and the Armenian Genocide. New Brunswick: Transaction Publishers, 2000, pp. 301-306.)

[1] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 41:

[2] Նույն տեղում, էջ 26:

[3] Նույն տեղում, էջ 130: Տե՛ս նաև Akcam T., Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue. Cambridge, Toronto: The Zoryan Institute, 2001, p. 54.

[1] Arendt H., նշված աշխ., էջ 105:

[2] Кон Н., նշված աշխ., էջ 149:

[3] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 111:

[4] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 73:

ընթացքում: Օգտագործելով նախորդ փորձը՝ պատերազմի սկզբին երիտթուրքերի թելադրանքով Թուրքիայի սուլթան Մեհմեդ V-ը և շեյխուլիսլամը[1] «անհավատների» դեմ հրապարակայնորեն «ջիհադ»՝ սրբազան պատերազմ, հայտարարեցին: Սրա առաջին նպատակը թուրք զինվորների մոլեռանդության ապահովումն էր Անտանտի քրիստոնյա պետությունների դեմ պայքարում: Ջիհադի կոչերը նպատակ ունեին նաև կայսրության մահմեդական բնակիչներին մասնակից դարձնել հայերի ջարդերին կամ գոնե հետ պահել տեղահանությանը խոչընդոտ լինելուց:

Պատահական չէ, որ 1914թ. հոկտեմբերին թուրքական իշխանությունների կողմից պատրաստված և հինգ հազար բառ պարունակող «ջիհադի» տեքստում կային հետևյալ տողերը. «...Մաքրե՛լ երկիրը անբաղձալիներից, սա միակ առիթն է: Անհավատների արյունն անարժեք է: Երդու՛մ տվեք սպանել առնվազն երեք կամ չորս անհավատների: Դրանից ավելի բարի գործ չկա»:[2] 1915թ. դեպքերի ականատեսների վկայությամբ, թուրք պաշտոնյաները և մահմեդական կրոնավորները շրջում էին բնակավայրերում և հավատակիցներին կոչ անում կատարել իրենց կրոնական պարտավորվածությունները:

Հրեաների ոչնչացման գործն ավելի դյուրին դարձնելու նպատակով նացիստները ևս դիմեցին հին ժամանակներում գործածված միջոցների: Հայտնի է, որ նախկինում հակահրեական տրամադրություններ բարձրացնելու և պոգրոմներ առաջացնելու համար նույնպես օգտագործվում էր կրոնի գործոնը: Հրեաները, որպես կանոն, մեղադրվում էին Աստծո որդուն՝ Հիսուս Քրիստոսին սպանելու մեջ: Միջնադարում սրան գումարվեց նաև նրանց հասցեին ուղղված այն մեղադրանքը, թե իբր հրեաներն իրենց կրոնական տոներին, հատկապես՝ Զատկին, գողանում են քրիստոնյաների մանուկներին և սպանում՝ նրանց արյունը ծիսակատարությունների ժամանակ օգտագործելու նպատակով:[1]

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նացիստները չհապաղեցին օգտագործել այս կեղծ ամբաստանությունը: Դրա լավագույն ապացույցը ՍՍ-ի ղեկավար Հիմլերի կողմից իր ենթակա Կալտենբրուններին գրված նամակն է. «Սիրելի Կալտենբրուններ, ես բավականին մեծ քանակությամբ «Հրեաների ծիսական սպանությունները» գրքի օրինակներ եմ պատվիրել... Այդ գրքից ուղարկում եմ Ձեզ հարյուր օրինակ, որպեսզի բաժանեք ձեր այնզացխմբերին և առաջին հերթին՝ հրեական հարցի հետ գործ ունեցող մարդկանց... Ընդհանուր առմամբ, ծիսային սպանությունների հարցը պետք է էքսպերտների կողմից հետաքննության առարկա դառնա Ռումինիայում, Հունգարիայում և Բուլղարիայում: Այնուհետև, կարծում եմ, այն կարելի է տարածել մամուլում, ինչը կհեշտացնի հրեաների արտաքսումն այդ երկրներից»:[2]

Իթթիհատականների և նացիստների քարոզչական մեխանիզմների բազմազանությունը հասկանալու համար տեղին է մեջբերել երկու օրինակ ևս: Աշխատանքային գումարտակների հայ զինվորների ոչնչացմանը մահմեդական ժողովրդին մասնակից դարձնելու համար թուրք դահիճները խաբեության միջոցով հաճախ փորձում էին ազդել մարդկանց զգացմունքների վրա: Ժամանակակցի վկայությամբ, հայ տղամարդկանց սպանությունից առաջ, մոտակա գյուղերի բնակչությանը հետևյալ բովանդակությամբ հայտարարություններ էին արվում. «Եկե՛ք, ձեր հայրերին և զավակներին պատերազմում սպանողներին գերի ենք բերել: Եկե՛ք, դուք էլ սրանց ջարդեցեք, լուծե՛ք ձեր վրեժը, սրտներդ թեթևացրե՛ք»:[3]

Մոտավորապես նույն կերպ գերմանացիները փորձում

---

[1] Բավականին հետաքրքիր է այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ շեյխուլիսլամի պաշտոնը (1913 թվականից սկսած) զբաղեցնում էր իթթիհատական քաղաքական գործիչ Մուստաֆա Հայրի բեյը, ինչը, ըստ թուրք պատմաբան Ֆերոզ Ահմադի, արմատական շեղում էր մահմեդական ավանդույթներից: (Տե՛ս Ahmad F., նշված աշխ., էջ 148:) Հասկանալի է, որ այս բարձրագույն կրոնական պաշտոնը իթթիհատականներն օգտագործեցին նաև իրենց հակահայկական քաղաքական նպատակների իրագործման համար:

[2] Ղազարյան Հայկազն, նշված աշխ., էջ 27:

[1] Տե՛ս Трахтенберг Дж., նշված աշխ., էջ 117:

[2] СС в действии, стр. 227-228.

[3] Գաբիկեան Կ., նշված աշխ., էջ 169:

էին արթնացնել հրեաներին շրջապատող բնակչության՝ հնուց պահպանված թշնամական զգացումները: Օրինակ՝ Լվով քաղաքի օկուպացիայի ժամանակ ուկրաինացի ազգայնականներին հրեական ջարդերին մասնակից դարձնելու համար նացիստական իշխանությունները 1941թ. հուլիսի 25-ից մինչև 28-ը կազմակերպել էին «Սեմյոն Պետլյուրայի վրեժի» ակցիաներ,[1] որոնց հետևանքով ուկրաինացի ազգայնամոլների գազազած ամբոխն սպանել էր բազմաթիվ հրեաների:[2]

Բնական է, որ գերմանացիների և թուրքերի կողմից տարածած քարոզչությունը որոշակի հաջողություններ էր ունենում ինչպես հայկական և հրեական հարցով զբաղվող պաշտոնյաների, այնպես էլ սպանություններն անմիջապես իրականացնող մարդկանց շրջանում: Այսպես, ցեղասպանության դեպքերի ականատես Գրիգորիս վարդ. Պալաքյանը Յոզկաթի հայերի սպանության պատասխանատուներից մեկի՝ հարյուրապետ Շյուքրիի հետ ունեցած զրույցի ժամանակ հարցրել էր՝ արդյո՞ք նա չի զղջում իր արածների համար: Վերջինս պատասխանել էր. «Ամենևին,...ես նվիրական և սրբազան պարտականությունս կատարեցի Աստծո, մարգարեիս և խալիֆիս առջև,... որովհետև ջիհադ էր հայտարարված... Մի՞թե պատերազմի մեջ մարդ սպանելը ոճիր է»:[3] Մեկ այլ դեպքում՝ Երզնկայի մոտ ականատեսները հանդիպել էին մի մարդու, որն արդեն 250 հայ էր սպանել և սպասում էր տարագիրների հաջորդ քարավանին: Այս մարդն իր արարքների արդարացիությունն հիմնավորում էր բոլոր սպանվողների՝ «անիշխանական,

[1] Ուկրաինական բանակի նախկին հետևան Սեմյոն Պետլյուրան 1917-1920թթ. քաղաքացիական կռիվների ժամանակ մասնակից էր եղել հրեական պոգրոմների կազմակերպմանը, և 1926թ. սպանվել էր Փարիզում հրեա վրիժառու Սոլոմոն Շվարցբարդի կողմից: Իմիջիայլոց, Հոլոքոստի մասնագետ Հաննահ Արենդտը Սոլոմոն Շվարցբարդին և նրա դատավարությունը Փարիզում նմանեցնում է Սողոմոն Թեհլերյանի և բեռլինյան դատավարության հետ, հաշվի առնելով այն իրողությունը, որ երկու դեպքերում էլ վրիժառուներն արդարացվել էին: (Տե՛ս Arendt H., նշված աշխ., էջեր 265-266:)

[2] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 79:

[3] Պալաքյան Գր., նշված աշխ., էջ 217:

ազատական և ընկերվարականներ» լինելու հանգամանքով:[1] Իթթիհատականների կողմից կիրառվող կրոնական քարոզների հանդեպ հատկապես ընկալունակ էր մահմեդական բնակչությունը: Սրա արտահայտությունն են, մասնավորապես, կոտորածների նկարագրություններում հաճախակի հանդիպող այն դեպքերը, երբ հայերի վրա հարձակվող մահմեդականները կրոնական բնույթի կոչեր են անում:[2]

Ինչպես և հայերի դեպքում, նացիստ ղեկավարության տարածած պրոպագանդան իր ազդեցությունն էր ունենում նաև հրեաների սպանությունն անմիջապես իրականացնողների վրա: Նացիստների շրջանում առաջացած հակահրեական ատելության չափը հասկանալու համար լավագույն օրինակը հրեաների առաքումը դեպի համակենտրոնացման ճամբարներ իրականացնող պաշտոնյայի՝ Ադոլֆ Էյխմանի խոսքերն են: Վերջինս պատերազմի ավարտից առաջ իր ընկերներին ասել էր. «Ես ծիծաղելով կցատկեմ իմ գերեզմանափոսի մեջ, քանի որ խղճիս վրա հինգ միլիոն հրեական կյանքեր ունենալու գիտակցումն ինձ մեծագույն հաճույք է պարգևում»:[3] Հետաքրքիր փաստ է նաև այն, որ պատերազմից հետո հոգեբանների հետազոտությունները ցույց էին տվել, որ Բուխենվալդ և Դախաու համակենտրոնացման ճամբարներում ծառայող ՍՍ-ի անդամները խորապես համոզված էին նախապատրաստվող համաշխարհային հրեական դավադրության մեջ:[4]

Մեր կարծիքով, հենց վերոհիշյալ քարոզչական քաղաքականության համատեքստում պետք է դիտել երկու ցեղասպանությունների ժամանակ թուրք և գերմանացի բժիշկների կողմից հայերի և հրեաների նկատմամբ կիրառած և մահացու

[1] Բինոն Ռ., նշված աշխ., էջ 37:

[2] Օրինակ՝ ըստ Խարբերդի նահանգում տեղի ունեցած դեպքերի նկարագրությունների՝ քրդերը հայերի վրա հարձակվելիս բղավում էին «Կեցցե Մուհամմեդը»: (Տե՛ս Փիրանեան Ն., Խարբերդի եղեռնը, Պոսթըն, 1937, էջ 302:) Խարբերդ քաղաքի հայության տեղահանությունից հետո թուրք բնակչությունն ասում էր. «Մուհամմեդը հաղթանակեց Քրիստոսին, իսկ մահիկը՝ խաչին» (Նույն տեղում, էջ 227:)

[3] Arendt H., նշված աշխ., էջ 46:

[4] Koh H., նշված աշխ., էջ 149:

ելք ունեցող «գիտափորձերը»: Սա ևս փայլուն մի ապացույց է այն բանի, որ իթթիհատական և նացիստական քարոզչության հետևանքով անգամ բժիշկները հայերին և հրեաներին սկսել էին դիտել ոչ թե որպես հավասար մարդկային էակների, այլ թշնամիների և թերմարդկանց:[1]

Թուրքերի և գերմանացիների կիրառած վերոհիշյալ քարոզչական մեխանիզմների շարքում կարելի էր առանձնացնել ևս մեկ ընդհանրություն: Դա երկու ցեղասպանությունների հեղինակների կողմից տարածվող այն հավաստիացումներն էին, ըստ որոնց՝ կատարվող հանցանքների համար ոչ մի մասնակից որևէ պատասխանատվություն չպետք է կրեր: Անկասկած, սա ևս պիտի նպաստեր ցեղասպանական գործընթացի արդյունավետությանը:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Օհլենդորֆը պատմել էր, որ 1941թ. վերջերին Հիմլերը ժամանել էր Ուկրաինայի Նիկոլաև քաղաքը և խորհրդակցություն ունեցել օպերատիվ խմբերի ղեկավարների հետ: Այդ խորհրդակցության ընթացքում Հիմլերը կրկնել էր հրեաներին ոչնչացնելու

[1] Հայտնի է, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստների համակենտրոնացման ճամբարներում լայն մասշտաբներով բժշկական գիտափորձեր էին տեղի ունենում հրեական և սլավոնական ազգությունների ներկայացուցիչների նկատմամբ: Այս առումով հատկապես հայտնի էին Օսվենցիմ (մարդկանց ստերջացման գիտափորձեր), Դախաու (սառեցման գիտափորձեր, վարակում ծաղկախտով, դեղնախտով), Ռավենսբրյուկ (կանանց վարակում գազային գանգրենայով) և այլ ճամբարները: (Մանրամասն տե՛ս Мельников Д., Черная Л., նշված աշխ., էջեր 307-316: Նաև Shirer William, նշված աշխ., էջեր 1274-1288:)

Պարզվում է, որ թուրք բժիշկները ևս աչքի են ընկել հայերին իրենց գիտափորձերի առարկա դարձնելու գործում: Մասնավորապես, առավել աչքի է ընկնում Երզնկայում տեղի ունեցածը: Այստեղ 1915-1916թթ. ձմռան ընթացքում պաթոլոգանատոմիայի պրոֆեսոր Համդի բեյն աշխատանքային գումարտակներում գտնվող երիտասարդ և ամրակազմ հայ զինվորներին ներարկել էր բծավոր տիֆի մանրէներից չվարակազերծված իր պատվաստանյութը: Դրա հետևանքով մի քանի օրերի ընթացքում բազմաթիվ հայ երիտասարդներ էին մահացել: (Геноцид армян в Османской империи, էջեր 437-441. Տե՛ս նաև Գույումճյան Վ., Թուրք բժիշկների ոճրագործությունները Մեծ եղեռնի ժամանակ, Երևան, 2001, էջեր 6-17:)

հրամանը և ավելացրել, թե այն մարդիկ, որոնք ղեկավարում են այդ գործընթացը կամ անմիջական մասնակցում են դրան, ոչ մի անձնական պատասխանատվություն չեն կրում այդ հրամանի կատարման համար: Պատասխանատվություն են կրում միայն ինքը և ֆյուրերը:[1]

Համանման հավաստիացումներ էին տալիս նաև երիտթուրք ղեկավարները: Ներքին գործերի նախարար Թալեաթի՝ Հալեպի կուսակալությանն ուղղված 1915թ. հոկտեմբերի 3-ի ծածկագրում ասվում էր. «Ճանապարհի ընթացքում հայերի հանդեպ գործադրված ոճիրների համար ժողովուրդը չպետք է հետապնդման ենթարկվի, քանի որ այդ հանցանքները ծառայում են կառավարության նպատակներին»:[2] Հալեպի գաղթականության վարչության պետ Աբդուլահատ Նուրիի՝ Պապ ավան ուղարկված հրահանգում ասվում էր. «Պապի կազան հայերից դատարկելու ընթացքում գործադրվելիք խստությունների համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվելու»:[3]

Բացի հատուկ քարոզչության ծավալումից, Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի կազմակերպիչները երկու դեպքում էլ հետևել են զանգվածային ոչնչացումների գաղտնիության պահպանմանը, ինչը, հաշվի առնելով հանցանքի ահռելիությունը, ոչ պակաս կարևոր դերակատարություն ուներ: Ընդ որում, խոսելով ցեղասպանության կազմակերպման գաղտնիության մասին, խնդիրը պետք է դիտարկել երկու տեսանկյունից. նախ ոճրագործները, որպես կանոն, ձգտել են մինչև սպանության վերջին պահը զոհերից ծածուկ պահել իրենց իրական մտադրությունը և երկրորդ, ոճրագործները ջանացել են կատարվող հանցանքները հեռու պահել օտար պետությունների կամ նրանց ներկայացուցիչների տեսադաշտից:

Զոհերից՝ իրենց սպասվելիք ճակատագիրը թաքցնելու հնարքն իրականում միտված էր սպանությունների գործըն-

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4. стр. 628:
[2] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 203:
[3] Նույն տեղում, էջ 97:

բացն անխափան և առանց խոչընդոտների անցկացնելու նպատակին: Հակառակ դեպքում, այն հղի էր մի շարք բարդություններով, հատկապես՝ հուսահատությունից դրդված ըմբոստություններով և անգամ ապստամբությամբ: Հենց այս պատճառով է, որ ինչպես իթթիհատականները, այնպես էլ նացիստները հայերին և հրեաներին իրենց բնակավայրերից հեռացնելուց առաջ փորձում էին տարբեր միջոցներով հանգստացնել և ապահովության «խոստումներ» տալ: Ընդ որում, ինչպես և քարոզչության դեպքում, զոհերին մոլորեցնելու հնարքները աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և արդյունավետությամբ:

1915թ. հունիսյան տեղահանություններից առաջ Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներում թուրքական թերթերը հրապարակել էին տեղահանության վերաբերյալ իշխանությունների հրահանգը, որում, մասնավորապես, կային հետևյալ կետերը. «... 3. Պատրաստված են միջոցներ ճանապարհի ընթացքում հայերի հանգիստն ապահովելու և անվտանգ կերպով իրենց ժամանակավոր բնակավայրերը հասնելու համար: 4. Հայ համայնքի մեկ կամ մի քանի անդամի սեփականության, կյանքի կամ պատվի վրա հարձակում գործողների դեմ զենք պիտի գործածվի ընկերակցող զորախմբերի կողմից... 10. Հայերի անցնելիք ճանապարհների վրա նահիեների, կազաների, լիվաների և վիլայեթների պաշտոնյաները տեղական օժանդակություն պետք է ցույց տան»:[1]

Թուրք պաշտոնյաները դիմում էին նաև խաբեության այլ ձևերի: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանի շատ քաղաքներում թուրք կառավարիչներն իրենց բնակավայրերը լքող հայ տարագիրների խմբերին «բարի ճանապարհ» էին մաղթում:[2] Խարբերդի ամենահարուստ հայկական ընտանիքներից կազմված քարավանի անդամներից շատերին նահանգի կուսակալը և պատգամավորները նույնիսկ հատուկ պաշտոնագրեր էին տվել, որոնցով ոչ միայն անվտանգություն էր «երաշխավորվում» ճանապարհի ընթացքում, այլև խոստացվում էր

[1] Ղազարյան Հայկազն, նշված աշխ., էջեր 77-78:
[2] Morgenthau H., նշված աշխ., էջ 312:

կյանքի դյուրին պայմաններ տարագրության վերջնակետ հասնելուց հետո:[1]

Սեբաստիայի նահանգապետ Մուամմերը տեղի հայերի շրջանում ըմբոստության հնարավորությունը բացառելու նպատակով դիմում է ժողովրդին մոլորեցնելու այլ ձևի. երբ արդեն քաղաքի մի շարք թաղեր տեղահանված էին, իշխանությունները լուրեր են տարածում, թե իբր հայերին կառավարությունից ներում է շնորհվել, մեկ այլ անգամ հայտարարվում է, թե իբր այսինչ թաղերը անվնաս են մնալու: Հայ ժողովուրդն ընկնում է տարակուսանքի մեջ, սակայն տեղահանությունները շարունակվում են նույն թափով:[2] Հալեպի շրջակայքում գտնվող հայերի առաքումը դեպի անապատներն արագացնելու նպատակով ներքին գործերի նախարար Թալեաթը նույն կուսակալության ղեկավարությանը հետևյալ խորհուրդն էր տալիս. «Ընդհանուր տարագրությունից փրկվելու նպատակով իսլամանալ ցանկացող հայերին հաղորդեք, որ անհրաժեշտաբար իրենց տարագրության վայրերի մեջ պետք է մահմեդականություն ընդունեն»:[3]

Հատկանշական է, որ հրեաների սպանության ժամանակ ևս հիտլերականներն օգտագործում էին տեղահանության կեղծ պատճառաբանությունները: Այսպես, Կիևում զանգվածային գնդակահարություններից առաջ հրեաներին հավաքելու նպատակով ընտրվեց էվակուացիայի պատրվակը. ուկրաինական միլիցիան քաղաքի փողոցներում հայտարարություններ փակցրեց, որոնցում ասվում էր. «Կիևի քաղաքի և նրա շրջակայքի բոլոր ջհուդները 1941թ. սեպտեմբերի 9-ի առավոտյան ժամը 8-ին պետք է ներկայանան Մելնիկովյան և Դոխտուրովյան փողոցների անկյունը: Նրանք պարտավոր են իրենց հետ վերցնել փաստաթղթերը, թանկարժեք իրերը, ինչպես նաև տաք հագուստներ, սպիտակեղեն և այլ անհրաժեշտ պիտույքներ... Այն բոլոր քաղաքացիները, որոնք կներթափանցեն հրեաների կողմից լքված բնակարանները և իրեր կսեփականացնեն,

[1] Փիրանեան Ն., նշված աշխ., էջ 225:
[2] Նույն տեղում, էջ 225:
[3] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 212:

կենթարկվեն գնդակահարության»:[1] Մեկ այլ դեպքում, Ուկրաինայի Լուցկ քաղաքի 20 հազար հրեաները հավաքվել և գնդակահարվել էին «վերագրանցման» պատրվակով:[2]

Նացիստներն իրենց զոհերին մոլորեցնելու համար դիմում էին նաև այլ միջոցների: Օրինակ՝ այն բանից հետո երբ բնակչության շրջանում լուրեր էին տարածվել «դուշեգուբկաների» իրական նշանակության մասին, ՍՍ-ականները՝ զոհերին մեքենաները նստեցնելու ժամանակ ըմբոստության դեպքեր էին արձանագրել: Այդ իսկ պատճառով, «մահվան մեքենաների» հայտնագործող դոկտ. Բեկկերը 1942թ. մայիսին հրամայել էր դրանց խցիկների երկու կողմից գյուղական տների պատուհաններ հիշեցնող բացվածքներ անել, ինչը պետք է մոլորեցներ զոհերին:[3]

Ավելի խորամանկ ձևով էր մտածված համակենտրոնացման ճամբարներում գազահարման նախապատրաստվող զոհերի մոլորեցումը: Օրինակ՝ Տրեբլինկայի «մահվան ճամբար» ժամանած հրեաներին «հանգստացնելու» համար այստեղ կառուցվել էր ոչ իրական երկաթուղային կայարան, որտեղ զոհերը կարող էին հանդիպել «բուֆետ», «դրամարկղ», «սպասասրահ» և այլ կարգի ցուցանակների: Ինչպես և մյուս տեղերում, այս ճամբարում ևս մերկ տղամարդկանց, կանանց և երեխաներին քշում էին դեպի գազախցերը՝ հայտարարելով, որ նրանց տանում են լողանալու: Զոհերին անգամ ստիպում էին «լոգարան» մտնելուց առաջ ձեռքում ունենալ մեկական զլոտի՝ որպես լողանալու վճար:[4] Բելզեց ճամբարում գազախցի մուտքի մոտ հրեաներին կարգադրում էին ներսում խորը ներշնչել լոգարանի օդը, քանի որ դրանով տեղի էր ունենալու թոքերի վարակազերծում:[5]

[1] Круглов А., "Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.?". *Холокост и соучастность.* 2002, N 4, стр. 7.
[2] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 683.
[3] Там же., Том 1, стр. 600.
[4] Там же. Том 4, стр. 654.
[5] Grunberger R., նշված աշխ., էջ 83:

Գետտոներում գտնվող հրեաների առաքումը դեպի «մահվան ճամբարներ» ավելի հեշտացնելու համար նացիստները դիմեցին ևս մեկ խորամանկության: Օսվենցիմ ժամանած հրեաներին գեղեցիկ պատկերներով բացիկներ էին հանձնվում որոնց վրա տպագրված էր. «Մենք շատ լավ ենք, ունենք աշխատանք, և մեզ լավ են վերաբերվում: Սպասում ենք ձեր գալստյանը»: Խաբված մարդիկ պետք է անմիջապես ստորագրեին այդ բացիկները և ուղարկեին իրենց բարեկամներին:[1] Հետաքրքիր է, որ միևնույն նպատակին միտված մոլորեցման համանման մեխանիզմ էր կիրառվել Յոզկաթի իշխանությունների կողմից, թեև ավելի պրիմիտիվ եղանակով: Քաղաքի բոլոր հայ տղամարդկանց տեղահանելուց և սպանելուց երկու ամիս անց մունետիկը մնացած հայերին հայատարարել էր, թե տղամարդիկ հաջող տեղավորվել են Հալեպում և կուսակալից թույլտվություն են ստացել իրենց ընտանիքներին ևս տեղափոխելու համար:[2]

Իթթիհատական և նացիստ հանցագործների համար, ինչպես ասվեց, ոչ պակաս կարևոր էր իրենց ոճիրները գաղտնի պահել նաև օտարներից, հատկապես՝ իրենց հակառակորդ երկրներից: Այս զգուշավորությունը պետք է կանխեր ավելորդ աղմուկի բարձրացումը և ամենակարևորը՝ հետագայում ազատեր պատասխանատվությունից: Այս իմաստով ոճրագործների ամենամեծ խնդիրը, թերևս, զոհերի դիակները թաքցնելու գործն էր: Այս հարցում, պետք է ասել, զգալի տարբերություն է նկատվում թուրքերի և գերմանացիների՝ միևնույն նպատակին ուղղված գործելակերպի մեջ:

Թուրքերը սպանված հայերի դիակները թաքցնելու հարցում այնքան էլ աչքի չեն ընկնում իրենց հետևողականությամբ: Չնայած իշխանությունների՝ դիակները թաղելու հրահանգներին, սպանությունների անմիջական կազմակերպիչները ոչ միշտ է, որ կատարում էին այս պահանջը: Դրա փոխարեն՝ հայերի դիակները թաքցնելու համար հաճախ օգտագործվում էր ցանկացած բնական և արհեստական միջոց. դրանք նետ-

[1] Shirer W., նշված աշխ., էջ 262:
[2] Պալաքյան Դր., նշված աշխ., էջ 207:

վում էին ձորերի, քարայրների, լճերի, գետերի մեջ, թաքցվում էին անտառներում: Բիթլիսում, օրինակ, սպանվածներին պարզապես լցնում էին ցորենի համար նախատեսված խոր հորերի մեջ:[1]

1915թ. հուլիսին Դիարբեքիրի վալին հետևյալ հեռագիրն էր ուղարկել 4-րդ բանակի հրամանատար Ջեմալին, որն անհանգստություն էր հայտնել Եփրատ գետի հարավային մասում ջրի երեսին հայտնվող դիակների կապակցությամբ. «Եփրատն առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից: Այստեղ, ապստամբության ընթացքում սպանվածների դիակները նետվում են ամայի վայրերում գտնվող քարայրները կամ էլ այրվում են: Թաղելը բացառված է»:[2]

Հաճախ էլ հայերի դիակները պարզապես թողնում էին տարագրության ճանապարհների վրա: Այդ է պատճառը, որ նման գործելակերպն անհանգստացրել էր թուրքական իշխանություններին: Այսպես, 1915թ. սեպտեմբեր ամսին Թալեաթը Հալեպի կուսակալությանն ուղղված ծածկագրում ասում էր. «Մեզ տեղեկություններ են հասնում, թե օտար սպաները, տեսնելով ճանապարհների երկայնքով դիզված ծանոթ անձնավորությունների (հայերի) դիակները, լուսանկարում են դրանք: Հանձնարարում եմ, որպեսզի անմիջապես թաղեք այդ դիակները և այլևս այդ կերպ մեջտեղ չձգեք»:[3]

Գաղտնիք չէ, որ սպանվածների դիակների չեզոքացումը թուրքական իշխանությունների համար կարևորություն էր ներկայացնում նաև հանրային առողջության տեսանկյունից: Սա է պատճառը, որ Կ.Պոլսում հատուկ հանձնաժողով էր կազմվել ներքին գործերի փոխնախարար Ալի Մունիֆի ղեկավարությամբ և ուղարկվել երկրի խորքերը: Այս հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել էին նաև մի քանի բժիշկներ, շրջում է զանգվածային կոտորածների վայրերով, կարգադրում անթաղ դիակները լցնել հորերը, ծածկել կիրով (որը նախապես ձեռք էր

[1] Геноцид армян в Османской империи, էջ 462:
[2] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի..., էջ 32:
[3] Անտոնյան Ա., նշված աշխ., էջ 154:

բերվել հազարավոր կիլոգրամներով), այնուհետև՝ հողի շերտով: Այս աշխատանքը հանձնաժողովից խլում է վեց ամիս ժամանակ:[1]

Ի տարբերություն թուրքերի՝ նացիստներն իրենց հանցանքների հետքերը քողարկելու նպատակով օգտագործեցին և՛ իրենց բնորոշ գերմանական հետևողականությունը, և՛ տեխնիկական հնարավորությունները: Խորհրդային Միության տարածքում կատարվող զանգվածային գնդակահարությունները և թունավորումները մեքենաների մեջ բացառապես կատարվում էին բնակավայրերից դուրս՝ հակատանկային խրամատների, ձորերի կամ հատուկ փորված հորերի մոտ. սպանությունից հետո դիակները պարտադիր ծածկվում էին հողով: Համակենտրոնացման ճամբարներում գազահարված հրեաների դիակներն սկզբնական շրջանում նույնպես թաղվում էին իսկ հետո պարզապես այրվում հսկայական դիակիզարաններում կամ խարույկների մեջ:

Պատահական չէ, որ ավելի ապահով զգալու համար, արդեն 1942թ. աշնանից Հիմլերի հրամանով ՍՍ-ի շրջանակներում ստեղծվեց «1005» աշխատանքային շտաբը՝ շտանդարտենֆյուրեր Բլոբելի ղեկավարությամբ: Վերջինիս առջև նպատակ դրվեց հայտնաբերել և չեզոքացնել արևելյան օկուպացված տարածքներում գտնվող զանգվածային թաղումների բոլոր տեղերը: Իմիջիայլոց, բոլոր այդ աշխատանքները կատարվում էին հրեաներից կազմված ջոկատների կողմից, որոնց անդամները պարբերաբար ոչնչացվում էին:[2] Գործն ավելի կատարյալ դարձնելու նպատակով գերմանացի ինժեներներն անգամ հատուկ մեքենա էին ստեղծել, որը պետք է աղալով մանրացներ նախապես խարույկների վրա այրված դիակների ոսկորները և վերածեր ոսկրափոշու:[3]

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ինչպես հայերի, այնպես էլ հրեաների ցեղասպանության ժամանակ, զգուշու-

[1] Dadrian V.N., The Role of Turkish Physicians..., p.190.
[2] Мельников Д., Черная Л., նշված աշխ., էջ 445:
[3] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 391.

թյան անհրաժեշտությունից ելնելով, ոճրագործները՝ սպանելու մասին իրենց կարգադրությունները հաղորդում էին բանավոր կերպով. բացի այդ, նրանց միջև գործածվում էր հատուկ «գաղտնի» լեզու:

Այսպես, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում օգտագործվող «տեղահանություն» և «վերաբնակեցում» բառերի իսկական իմաստը հայկական բնակչության լրիվ ոչնչացումն էր: Բացի այս ընդհանուր հասկացություններից, տեղերում ևս գործածվել է հատուկ լեզու: Ներքին գործերի նախարարության և Հալեպի կուսակալության միջև տեղի ունեցող գրագրության մեջ, օրինակ, հայերն անվանվում են «ծանոթ անձնավորություններ»[1] կամ «ծանոթ տարրեր»:[2] Շատ հաճախ էլ ծածկագրերի և գաղտնի հեռագրերի մեջ սպանելու բացահայտ հրամանի փոխարեն օգտագործվում են ծածուկ իմաստ ունեցող արտահայտություններ, ինչպես «նախապես հաղորդված ծանոթ եղանակով հարկ եղածը անել»,[3] «նույն արդյունքին հասնել տակավին ողջ եղողների հանդեպ»,[4] «հարկ եղած գործողությունները կատարել»[5] և այլն: Գրիգորիս Վարդ. Պալաքյանը նշում է նաև, որ թուրք քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների շրջանում ընդունված էր «հայերից մաքրել» արտահայտությունն օգտագործել նրանց սպանելը ակնարկելու համար:[6]

Նացիստները ևս հրեական հետապնդումների ժամանակ լայնորեն օգտագործել են փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություններ և մեղմասություններ: Օրինակ՝ Եվրոպայի հրեաների ոչնչացումը գաղտնագրված էր նացիստների կողմից օգտագործվող «վերջնական լուծում», «էվակուացիա», «հատուկ վերաբերմունք» հասկացությունների մեջ:[5] «Գործողություն» տերմինը գերմանացիների գրագրության մեջ

[1] Անտոնյան Ա., նշված աշխ., էջեր 23, 103, 203:
[2] Նույն տեղում, էջ 137:
[3] Նույն տեղում, էջ 160:
[4] Նույն տեղում, էջ 165:
[5] Նույն տեղում, էջ 171:
[6] Պալաքյան Գր., նշված աշխ., էջ 202:
[5] Arendt H., նշված աշխ., էջ 85:

օգտագործվում էր որևէ ժամանակահատվածում կատարված զանգվածային սպանությունների համար, իսկ «հրեաներից մաքրված» բառակապակցությունը նշանակում էր, որ տվյալ աշխարհագրական սահմաններում բոլոր հրեաները ոչնչացվել են:[1] Անգամ համակենտրոնացման ճամբարների գազախցերին այլ անուններ էին տրվում՝ «հատուկ հարմարանքներ» կամ պարզապես «բաղնիք»:[2]

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի բնորոշ հատկանիշներից է եղել **արդյունավետությունը**, այն է՝ իթթիհատականների և նացիստների կողմից հայերի և հրեաների զանգվածային սպանություններն ավելի քիչ ծախսատար և առավել շահավետ դարձնելու ձգտումը: Այս իմաստով հրեաների զանգվածային թունավորումը գազախցերում և հայերի սպանությունը սառը զենքերով և ոչ հրազենային այլ միջոցներով կարելի է դիտել որպես պատերազմական պայմաններում գտնվող երկրի կողմից ցուցաբերվող խնայողության դրսևորում:

Սրա կողքին լայն ծավալներով տեղի էր ունենում զոհերի կողոպուտ՝ ինչպես պետության, այնպես էլ սպանությունների անմիջական մասնակիցների կողմից:

Հայտնի է, որ հայերի տեղահանությունների ժամանակ ստեղծվել էին կառավարական չորս հանձնաժողովներ՝ կայսրության տարբեր մասերում հայերի ունեցվածքը սեփականացնելու համար:[3] Արդեն 1915թ. հունիսի 10-ին թուրքական կառավարության ընդունած օրենքով տարագրված հայերի ունեցվածքը հայտարարվում էր «լքյալ» և դրվում էր կալանքի տակ, իսկ նույն թվականի սեպտեմբերի 13-ի սեփականացման և բռնագրավման մասին Ժամանակավոր օրենքը, փաստորեն, օրինականացնում էր տեղահանված հայերի ունեցվածքի թալանը:[4]

Բացի այդ, բազմաթիվ ականատեսների պատմություններից հայտնի է դառնում, որ տարագրության ճանապարհին

[1] Strom M., Parsons W., նշված աշխ., էջ 190:
[2] Նույն տեղում:
[3] Геноцид армян в Османской империи, էջ 427:
[4] Барсегов Ю.Г., նշված աշխ., էջ 191:

հայերն անընդհատ ենթարկվում էին հարձակումների և թալանի, իսկ զանգվածային սպանդից անմիջապես առաջ տեղի էր ունենում զոհերի խուզարկում և կողոպուտ: Շատ հաճախ զոհերի հագուստին տիրանալու նպատակով՝ սպանելուց առաջ կամ հետո նրանց մերկացնում էին: Հայտնի է նաև, որ զանգվածային կոտորածների վայրերում սովորաբար ներկա էր լինում կառավարությունից լիազորված անձնավորություն, որի պարտականությունների մեջ էր մտնում իշխանությունների բաժին ավարի հավաքումը և հանձնումը:[1] Բանը հասել էր այնտեղ, որ Թալեաթը ԱՄՆ դեսպան Մորգենթաուի հետ զրույցում վերջինիցս պահանջել էր միջամտել ամերիկյան ապահովագրական ընկերություններում հայերի պահ դրած ավանդներն ստանալու հարցում, քանի որ դրանց տերը, ըստ Թալեաթի, այսուհետև թուրքական պետությունն էր՝ մահացածների «օրինական» ժառանգորդը:[2]

Հրեաների ցեղասպանության ողջ ընթացքը ևս ուղեկցվում էր հրեական ունեցվածքի կողոպուտով: Գերմանացիների կողմից օկուպացված տարածքներում անմիջապես ուժի մեջ էին մտնում «հրեաների հետ վարվելու» ժամանակավոր օրենքները, ըստ որոնց պարտադիր էր համարվում բռնագրավել տվյալ տարածքի հրեա բնակչության ունեցվածքը:[3]

Ֆաշիստական Գերմանիայի վասալ և դաշնակից երկրներից հրեաների արտաքսումն արագացնելու նպատակով նացիստները գործում էին ըստ իրենց կողմից հռչակած «տարածքային սկզբունքի». յուրաքանչյուր հրեայի՝ դեպի համակենտրոնացման ճամբար փոխադրման ծախսը հոգալու դիմաց, գերմանացիները համաձայնվում էին այդ հրեայի ունեցվածքը թողնել տվյալ երկրի կառավարությանը:[4]

[1] Геноцид армян в Османской империи, էջ 424:
[2] Morgenthau H., նշված աշխ., էջ 339:
[3] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 701.
[4] Arendt H., նշված աշխ., էջ 183:

Օրինակ՝ Սլովակիայի իշխանությունները յուրաքանչյուր արտաքսված հրեայի դիմաց 500 գերմանական մարկ էին վճարում: Խորվաթիայի իշխանությունները վճարում էին 30 մարկ: (Hilberg R., նշված աշխ., էջեր 468-469:)

Ինչպես և հայերի սպանության ժամանակ, այնզացխմբերի հետ մահապատժի վայրեր էին ուղարկվում հատուկ տեսուչներ՝ գնդակահարություններին հետևելու և զոհերի թանկարժեք իրերի յուրացումը բացառելու նպատակով:[1] Նույն Օհլենդորֆի տված ցուցմունքներից պարզ է դառնում, որ հրեաների թանկարժեք իրերը բռնագրավվում էին նրանց գրանցման ժամանակ: Դրանք հավաքվում և «Կայսերական անվտանգության գլխավոր վարչության» կողմից հանձնվում էին ֆինանսների նախարարությանը: Զոհերի ժամացույցները զինվորականության պահանջով հանձնվում էին բանակին:[2] Հատկանշական է, որ հրեա զոհերին գնդակահարություններից և գազախցեր մտցնելուց առաջ պարտադիր մերկացնում էին:

Հետաքրքիր է, որ հայերի և հրեաների սպանության և նրանց ունեցվածքին տիրանալու եղանակներն այնքան էին կատարելագործվել, որ այս հարցում ևս թուրքական և գերմանական գործելակերպերը հաճախ համընկնում էին: Օրինակ՝ երկու դեպքերում էլ սովորական երևույթ էր ողջ կամ մահացած զոհերի բերաններից ոսկյա ատամներ հանելը: Հատկապես ուշագրավ է դահիճների կողմից արդեն մահացած մարդկանց մարմիններից թանկարժեք իրերը կորզելու եղանակը:

1915թ. Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեվիսը Գյոլջուկ լճի մոտ հայերի բազմաթիվ ածխացած դիակներ էր տեսել: Ինչպես պարզել էր հյուպատոսը, դրանք այրվել էին խարույկների վրա՝ զոհերի մարմիններից թանկարժեք մետաղներ գտնելու մոլուցքով տարված դահիճների կողմից (կանխազգալով վտանգը՝ հաճախ հայերը կուլ էին տալիս իրենց ոսկեղրամները):[3]

Հետաքրքիր է, որ մոտավորապես նույն կարգի գործարքներ էին կնքվում հայերի ոչնչացման ժամանակ: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեվիսի հաղորդմամբ՝ թուրք դահիճները հաճախ որոշակի գումարի դիմաց քրդերին էին վաճառում հայերի քարավանները կողոպտելու իրավունքը: (Davis L., նշված աշխ., էջ 82:)

[1] Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Том 4, стр. 640.
[2] Նույն տեղում, էջ 632:
[3] Davis L., նշված աշխ., էջ 80:

Նույն արարողակարգը տեղի էր ունենում, օրինակ, Օսվենցիմում, որտեղ դիակիզարաններից դուրս բերված մարդկային աճյունը «քննվում» էր, և այնտեղից առանձնացվում էին զոհերին պատկանող և մինչև այրելն աննկատ մնացած ոսկյա ատամները:[1]

Անդրադառնալով մարդասպանների՝ զանգվածային ոչնչացումն արդյունավետ դարձնելու գործելակերպին՝ ճիշտ կլիներ խոսել ևս մեկ ընդհանրության մասին: Բանն այն է, որ հայերը և հրեաները, հատկապես քաղաքներում, լինելով հմուտ արհեստավորներ և այլ մասնագիտությունների տեր անձինք, հաճախ կենսական դեր էին կատարում տվյալ բնակավայրի զարգացման համար: Սա է պատճառը, որ ինչպես թուրքերը, այնպես էլ գերմանացիները, այն բոլոր դեպքերում, ուր հայերի և հրեաների ներկայությունն անառարկելի անհրաժեշտություն էր, վերջիններիս կյանք էին շնորհում: Սակայն հաճախ դա միայն ժամանակավոր բնույթ էր կրում:

Օրինակ՝ հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դեպքերի, երբ հայերի ընդհանուր տեղահանության ժամանակ այս կամ այն բնակավայրի մի քանի հայ արհեստավորներ մահմեդականություն ընդունելու պայմանով չտարագրվելու իրավունք են ստանում: Սեբաստիա քաղաքի մոտակայքում գտնվող Դավրայ գյուղը, որի բնակչությունը ջաղացպանությամբ էր զբաղվում, չի տարագրվում, փոխարենը՝ նրա բնակիչները մահմեդականացվում են:[2] Հաճախ էլ, հայերին սպանում են տարբեր աշխատանքներում օգտագործելուց հետո: Թուրքերը, մասնավորապես, այդպես էին վարվել աշխատանքային գումարտակների հայ զինվորների հետ: Այդպիսի ճակատագիր բաժին հասավ նաև Բաղդադի երկաթուղու հատվածներից մեկում՝ Ինթիլլիում, թունելի կառուցման մեջ ներգրավված հազարավոր հայ արհեստավորներին:

Նույնը կարելի է ասել նացիստական գործելակերպի կապակցությամբ: Հրեական համայնքների այն ներկայացուցիչները, որոնք տնտեսական և այլ նկատառումներով անփոխարինելի էին դառնում գերմանացիների համար, որոշ ժամանակով կարողանում էին երկարացնել իրենց կյանքը: Այսպես, Գերմանիայում գտնվող հրեաների այն հատվածը, որն իր մասնագիտական կարողությունների շնորհիվ օգտագործվում էր ռազմարդյունաբերության մեջ, «մահվան ճամբարներ» ուղարկվեց ամենավերջին հերթին՝ 1943թ.:[1]

Երկու ցեղասպանությունների կազմակերպիչների այս գործելակերպը հատկապես աչքի է զարնում հետևյալ երկու օրինակներում: Սեբաստիայի վիլայեթի բոլոր գյուղերը տեղահանվել էին 1915թ. ամռանը, բացի Բրգընիք, Ռիլաշ և Դդմաճ գյուղերից: Վերջիններիս բնակիչները տեղահանվեցին միայն աշնանը, այն բանից հետո, երբ հավաքեցին այդ տարվա հարուստ հունձքը:[2]

Ուկրաինայի Ռովենյան շրջանի Տուչին շրջկենտրոնում մոտ երեք հազար հրեաներ էին ապրում, որոնք մեծ դերակատարություն ունեին տեղի արհեստագործության, մասնավորապես՝ կաշեգործության, կարի և կոշկակարության, մահուդագործության, սվիտերների արտադրության բնագավառում: Տեղի հրեական համայնքի ոչնչացումն իրականացվեց միայն 1942թ. ամռանը. սրա պատճառն այն էր, որ գերմանացիներն օկուպացիայի սկզբանական շրջանում վերոհիշյալ ապրանքների մեծ պահանջ ունեին:[3]

Ոչնչացման գործընթացն արդյունավետ դարձնելու թուրքական և գերմանական եղանակների մասին խոսելիս, այնուամենայնիվ, չի կարելի չնկատել նաև այն տարբերությունները, որոնք կրկին պայմանավորված էին գերմանացիների գիտատեխնիկական զարգացման աստիճանով: Օրինակ՝ «մահվան ճամբարների» դիակիզարաններից ստացված մարդկային աճյունը նացիստներն օգտագործում էին գյուղատնտեսության մեջ՝ որպես պարարտանյութ: Դիակների մի մասն ուղարկվում էր օճառի արտադրության համար: Սպանված զոհերի (հատկապես կանանց) մազերը կիրառվում էին արտա-

[1] Shirer W., նշված աշխ., էջ 1267:
[2] Գաբիկեան Կ., նշված աշխ., էջ 106:

[1] Dawidowicz L., նշված աշխ., 375:
[2] Գաբիկեան Կ., նշված աշխ., էջ 106:
[3] Шульмейстер Ю.А., նշված աշխ., էջ 64:

դրության տարբեր ճյուղերում (դրանք, մասնավորապես, օգտագործվում էին սուզանավերի ջերմամեկուսացման նպատակներով):[1]

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի վերոհիշյալ ընդհանրություններից բացի, որոնք վերաբերում էին դահիճների կիրառած սպանության եղանակներին և վերջիններիս ուղեկցող միջոցառումներին, կցանկանայինք նշել ևս մեկ ընդհանրության մասին: Երկու ցեղասպանությունների համատեղ ուսումնասիրման ժամանակ բացահայտվում է նացիստների և իթթիհատականների համանման վերաբերմունքը զոհ հանդիսացող ժողովուրդների մտավորականության հանդեպ: Երկու դեպքերում էլ վերջիններիս նկատմամբ առավել դաժան վերաբերմունքը, ըստ երևույթին, պետք է բացատրել դահիճների՝ հայ և հրեա ժողովուրդների ընդհանուր զանգվածն իրենց առաջնորդներից զրկելու, հետևաբար՝ քիչ թե շատ կազմակերպված դիմադրության հավանականությունը բացառելու նկատառումներով:

Ինչպես արդեն նշվեց, 1915թ. ապրիլից սկսվեց Կ.Պոլսում և հայաշատ այլ բնակավայրերում ապրող հայ մտավորականության, ազգային, կուսակցական գործիչների, հոգևորականների, երևելի անձանց ձերբակալելու և սպանելու գործընթացը, որին հաջորդեցին զանգվածային տեղահանությունները:

Հատկանշական է, որ համանման դիրքորոշում էին որդեգրել նացիստները հրեա և այլ «թշնամի» ժողովուրդների մտավորականության նկատմամբ: Պետք է կարծել՝ այստեղ ևս գլխավոր նպատակը հրեա ժողովրդին կազմակերպելու և առաջնորդելու կարողություն ունեցող մարդկանցից զրկելն էր:[2]

---

[1] Мельников Д., Черная Л., նշված աշխ., էջ 338: Տե՛ս նաև СС в действии, стр, 355-356.

Իմիջիայլոց, Ռաս-ուլ-Այնում սպանված հայ կանանց և աղջիկների մազերից չերքեզները 25 մետր երկարությամբ և 8 սմ տրամագծով պարան էին հյուսել և նվիրել Տիգրանակերտի պատգամավոր Ֆեյզի բեյին. վերջինս այն տեղադրել էր իր հյուրանոցում՝ որպես զարդ: (Մկրտիչեան Թ.Գ., նշված աշխ., էջեր 77-78:)

[2] Պետք է նշել, որ Հոլոքոստին վերաբերող մեզ ծանոթ գրականության մեջ հատուկ շեշտ չի դրվում հրեա մտավորականության ոչնչացման խնդրի

Այսպես, Խորհրդային Միության տարածքում այնզգաստմբերի ծավալած գործողություններից ակնհայտ երևում է, որ գերմանացիներն առաջին հերթին նպատակ են ունեցել հայտնաբերել և ոչնչացնել կոմունիստ գործիչներին և հրեա մտավորականներին: Օրինակ՝ Թեոդոսիայի Չեռնովցի քաղաքի հրեաների ոչնչացումը սկսվել էր տեղի 100 մտավորականների և քաղաքի ռաբբի դոկտ. Աբրաամ Մարկի գնդակահարությամբ:[1] Գերմանացիներն այդ կերպ էին գործել նաև այլ վայրերում:[2]

Բուլղարիայի իշխանությունների հետ բանակցությունների ժամանակ նացիստները պահանջել էին, որպեսզի առաջին հերթին իրենց հանձնվեն Բուլղարիայի 6000 ազդեցիկ հրեաները:[3] Ողջ պատերազմի ընթացքում նացիստները ոչնչացրել էին Լեհաստանում կենտրոնացված հրեա մտավորականության մեծ մասին[4] (պետք է նաև նշել, որ նացիստները մտադրվել էին ոչնչացնել լեհ, չեխ, ռուս մտավորականությանը):[5]

Արևմտյան Եվրոպայի հրեա մտավորականներին Հիմլերը նույնիսկ փորձել էր օգտագործել որպես պատանդ՝ ռազմագերիների և հակառակորդ պետությունների կողմից ներկալված Գերմանական քաղաքացիների հետ փոխանակելու համար:[6] Օրինակ՝ 1941 թ. դեկտեմբերին և 1942թ. հուլիսին Փարիզում տեղի էին ունեցել շուրջկալներ հրեա մտավորականությանը ձերբակալելու նպատակով:[7]

պարզաբանմանը, ինչպես դա արվում է, օրինակ, հայերի ցեղասպանությանը նվիրված ուսումնասիրություններում:

[1] Гольденберг М., "Холокост и Феодосия". *Холокост и Соучастность.* 2002, N 5, стр. 8.

[2] Տե՛ս Hilberg R., նշված աշխ., էջեր 200, 202, 204, 207:

[3] Նույն տեղում, էջ 482:

[4] Arendt H., նշված աշխ., էջ 123:

[5] Shirer W., նշված աշխ., էջ 1225:

[6] Arendt H., նշված աշխ., էջ 123:

[7] Нюрнбергский процесс. Том 1, стр. 295.

Այստեղ ճիշտ կլիներ նշել այն փաստը, որ հրեա ազգային գործիչներից շատերը, ճանաչված լինելով իրենց համայնքների կողմից, հաճախ, հանուն հրեական ազգաբնակչության շատ չնչին հատվածի, ստիպված են եղել համագործակցել նացիստների հետ՝ իրենց իսկ ժողովրդի ոչնչացման գործում: Ինչպես նշում է ամերիկացի պրոֆ. Հաննահ Արենդտը, «որտեղ էլ

Այսպիսով, Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի գործընթացների քննությունը ցույց տվեց, որ դրանց միջև ընդհանրություններ կային ոչ միայն զանգվածային սպանությունների իրականացման եղանակների, այլև ցեղասպանությունների նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների կազմակերպման տեսանկյունից:

Խոսելով հայերի և հրեաների հանդեպ կիրառված սպանության եղանակների մասին՝ նախ և առաջ պետք է հաշվի առնել հիտլերյան Գերմանիայի և իթթիհատական Թուրքիայի տնտեսական, գիտատեխնիկական զարգացման աստիճանները, որոնք էլ, անկասկած, իրենց հետքը պիտի թողնեին յուրաքանչյուր դեպքում տեղ գտած ոչնչացման մեթոդների վրա:

ապրեին հրեաները, ամենուր կային ճանաչված հրեա առաջնորդներ, և վերջիններս, գրեթե առանց բացառության, այս կամ այն ձևով, այս կամ այն պատճառով համագործակցում էին նացիստների հետ: Իրականությունն այն է, որ հրեաները որքան քիչ կազմակերպված լինեին և քիչ առաջնորդներ ունենային, այնքան ցրված և քաոտիկ վիճակում կլինեին և զոհերի թիվն էլ երբեք չէր տատանվի 4,5 և 6 միլիոնի միջև»: (Arendt H., նշված աշխ., էջ 125:)

Այս իմաստով, թերևս, կարելի է հեռավոր զուգահեռներ անցկացնել հրեա ազգային գործիչների վերոհիշյալ գործելակերպի և որոշ հայ ազգային առաջնորդների, հատկապես՝ հոգևորականության կողմից ցուցաբերված առավել քան զգույշ վարքագծի հետ: Այս կապակցությամբ տեղին է Թեոդիկի հետևյալ դիտարկումը. «...նշանակելի պիտի մնային ջանքերը գավառի հայ Կղերին՝ որ ստուգիւ կարեւոր դեր մը կատարեց՝ խոհեմութեան ճամբէն երբեք չշեղեցնելու համար իր ժողովուրդը: Ամեն տեղ ան էր որ նոյն յորդորը կարդաց եւ շարունակեց մշակել (մանաւանդ պաշտօնական շրջանակներու հետ) գոնէ երեւութապէս բարւոք յարաբերութիւններ՝ զորս խոհականութեան լաւագոյն միջոց կ'ենթադրէր, ափսոս, այնքան միամտօրեն: Հարիւրէն մին յիշենք միայն եւ բաւականանանք: Այն օրերուն երբ զինահաւաքութիւնը կ'սկսէր՝ որ Աղէտին պայթման ազդանշանն էր արդեն, Պաֆրացիք կը դժկամակէին գլուխ ծռելու կառավարական այդ դաժան տնօրինութեան, երբ Ճանիկի առաջնորդ Համազասպ վրդ. պէտք եղած լուրը կը դրկեր խէոճերուն, այսինքն համակերպիլ օրենքին: Եւ գիտենք թե ինչպես ճղակտոր եղան Պաֆրացիք՝ իրենց ինքնապաշտպանութեան գործիքներուն յանձնումի վաղորդայնին: Գիտենք նաեւ թէ «Ճերմակ կոտորած»ի ինչ սոսկումներէ անցան հերոս Զէյթունցիք, Սսոյ Կաթողիկոսին համանման հրահանգին անսալով, իբրեւ թէ ի փրկութիւն Կիլիկիոյ հանուր Հայութեան»: (Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության..., էջ 3:)

Չնայած սրան՝ ավելի խորը քննությամբ ակնհայտ է դառնում իթթիհատականների և նացիստների զանգվածային սպանության հիմնական բանաձևը՝ «առավել նվազ ջանքերով՝ առավել շատ մարդկային կյանքեր»:

Ինչ վերաբերում է սպանություններից առաջ և դրանց ընթացքում կիրառված քաղաքականությանը, ապա պետք է ասել, որ երկու աշխարհամարտերի ժամանակ էլ դահիճներն իրենց գործը հեշտացնելու համար կազմակերպել են ակտիվ քարոզչական աշխատանքներ՝ զոհերին շրջապատող հասարակական կարծիքն ուղղորդելու և անմիջական դահիճների զգացմունքները գրգռելու նպատակով: Երկու դեպքում էլ իթթիհատականները և նացիստները հետևել են գաղտնիության պահպանմանը, հայերի և հրեաների ոչնչացման գործընթացներին բնորոշ է եղել նաև արդյունավետության հատկանիշը: Դահիճներն աշխատել են զոհերի սպանությունը որքան հնարավոր է շահավետ դարձնել: Նման դիրքորոշման արդյունք պետք է համարել երկու գործընթացների ժամանակ կիրառված սպանության եղանակները, ինչպես նաև զոհերին թալանելու, նրանց ունեցվածքը յուրացնելու իրողությունը:

* * *

Թեև մեր աշխատանքը չէր անդրադարձել Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի հետևանքների համեմատությանը, այնուամենայնիվ, պատեհ է նշել, որ այդ համադրման արդյունքում ուրվագծվում են երկու հիմնական տարբերությունները: Ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը, փաստորեն, կորցրեց իր պատմական *հայրենիքը*, մինչդեռ Հոլոքոստից հետո հրեական սփյուռքը կարողացավ ստեղծել Իսրայել պետությունը: Դրանից հետո հրեաները հնարավորություն ունեցան վերադառնալ և բնակություն հաստատել իրենց հայրենիքում. սրան հակառակ՝ առ այսօր ճանաչված չէ տարագիր հայության հայրենիք վերադառնալու և փոխհատուցում ստանալու իրավունքը: Երկրորդ ամենացայտուն տարբերությունը վերաբերում է արդարադատության խնդրին: Եթե Երկ-

որդ աշխարհամարտից հետո ամբողջ աշխարհը դատապարտեց նացիստական ոճիրները, իսկ Գերմանիան մինչ օրս շարունակում է փոխհատուցել հրեաներին, Հայոց ցեղասպանությունից հետո ոճրագործները մնացին անպատիժ, աշխարհի մեծագույն մասը լուռ մնաց, իսկ Թուրքիան մինչ օրս շարունակում է ժխտել ցեղասպանության փաստը և զբաղվել պատմության նենգափոխմամբ:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, հանրագիտարաններ

- Անտոնյան Ա., Մեծ Ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, Արևիկ, 1990:
- Հայ ժողովրդի պատմություն: Հատոր IV (Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972:
- Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. Առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա.Հ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:
- Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Составитель, ответственный редактор Вардгес Микаелян. Ереван, Гитутюн, 1995.
- Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Сб. материалов и документов. Т. 1, Москва. Гос. изд. полит. лит-ры, 1946.
- Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М.Г. Нерсисяна. Ереван, Айастан, 1982.
- Германские источники о геноциде армян (период первой мировой войны). Сборник документов и материалов в 2-х томах. Том 1. Под редакцией профессора С.С. Степаняна, Ереван, Айастан, 1991.
- Лагери смерти. Сборник документов о злодеяниях немецко-фашистских захватчиков в Белоруссии. Москва, Госполитиздат, 1944.
- Нюрнбергский процесс. Сборник материалов в 8-ми томах. Под общ. редакцией А.М. Рекункова. Том 1, Москва, Юрид. лит., 1987.

- Нюрнбергский процесс. Сборник материалов в 8-ми томах. Под общ. редакцией М.Ю. Рагинского. Том 2, Москва, Юрид. лит., 1988.
- Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сб. материалов в семи томах. Под общ. редакцией Р.А. Руденко. Том 3, Москва, Госюриздат, 1958.
- Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сб. материалов в семи томах. Под общ. редакцией Р.А. Руденко. Том 4, Москва, Госюриздат, 1959.
- Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916. Сборник документов и материалов. Под редакцией Г.А. Абраамян, Т.Г. Севан-Хачатрян, Ереван, Арересум, 1995.
- СС в действии. Документы о преступлениях СС. Под редакцией М.Ю. Рагинского, Москва, Прогресс, 1969.
- Судебный процесс о зверствах немецко-фашистских захватчиков на территории города Харькова и Харьковской области в период их временной оккупации. Москва, Госполитиздат, 1943.
- The Armenian Genocide. News Accounts from the American Press (1915-1922). Compiled by Richard D. Kloian. Berkley, Calif.: Anto Printing, 1985.
- Bryce J., Toynbee A., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Edited and with an introduction by Ara Sarafian. Princeton, New Jersey: Taderon Press, 2000.
- Encyclopedia of Genocide. Volume I. Israel W. Charny editor in chief. Jerusalem: Institute on the Holocaust and Genocide, 1999.
- Encyclopedia of Genocide. Volume II, Israel W. Charny, Editor in chief. Jerusalem: Institute on the Holocaust and Genocide, 1999.
- United States Official Documents on tne Armenian Genocide. Compiled and Introduced by Ara Sarafian. Volume II, Watertown: The Arm. Review Inc., 1994.

2. Մենագրություններ

- Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, Հայ ազգ. հիմնադրամ «Նոր աստղ», 1950:
- Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, Հայաստան, 1969:

- Բինոն Ռ., Հայերու բնաջնջումը: Գերմանական մէթոտ – թրքական գործելակերպ, Կ.Պոլիս, տպ. Կ.Արծագանքի, 1919:
- Գաբիկեան Կ., Եղեռնապատում փոքուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսքրն, Սեբաստիոյ վերաշինության միություն, 1924:
- Գասպարյան Ե.Ա., Ֆրանսիան և Մեծ Եղեռնը, Երևան, Հայինֆո, Հայաստան, 1997:
- Գյումճյան Վ., Թուրք բժիշկների ոճրագործությունները Մեծ եղեռնի ժամանակ, Երևան, ՀՀԳԱԱ ՀՅԹԻ, 2001:
- Զաւեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս: Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, Մտավորական սպասարկությանց գրասենյակ, 1947:
- Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, Հայաստան, 1993:
- Զեյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, մաս Բ, Բարիզ, տպ. Մխիթար. միաբան., 1903:
- Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
- Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարիին, Նիւ Եորք, St. Vardan Press, 1985:
- Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երևան, ՀԿԿ Կենտկոմի հրատ., 1985:
- Կիրակոսյան Ջ.Կ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, Հայաստան, 1967:
- Հայկական ջարդերը: Տոքթ. Եոհանէս Լեփսիուսի տեղեկագիրը, Պեյրութ, Ազդակ, 1965:
- Ղազարյան Հայկազն, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, «Համազգային» հայ մշ. ընկ., 1968:
- Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, Տիգրան Մեծ, 2001:
- Ղոսեյն էլ Ֆայեզ, Հերոսական հայութեան անցեալէն: Ջարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, տպ. Նոր աստղ, 1960:
- Միսքճեան Ստ., Ես Տէր-Զօրի դժոխքէն փախած եմ, Փարիզ, 1965:

- Մկրտիչեան Թ.Գ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները, Գահիրէ, տպ. Գ.Ճիհանյան, 1919:
- Յուշամատեան մեծ եղեռնի, կազմեց Գերսամ Ահարոնեան, Պէյրութ, տպ. Ատլաս, 1965:
- Շարաֆեան Ե., Տարօնի եղեռնը: Ականատեսի վկայութիւններ, Սան Ֆրանսիսքօ, 1965:
- Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի: Կարինապատում, Պէյրութ, տպ. Մշակ, 1957:
- Պալաքյան Գր., Հայ Գողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն: Բեռլինեն դեպի Զոր, Երևան, Հայաստան, 1991:
- Պողարեան Գր., Ցեղասպան թուրքը: Վկայութիւններ քաղուած՝ հրաշքով փրկուածներու զրոյցներէն, Պէյրութ, Շիրակ, 1973:
- Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հատոր 2, գիրք 1, Երևան, Հր. Աճառյան համալս., 2001:
- Ռեֆիկ Ա., Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, ՀՀԳԱ ՀՅԹԻ, Արևելագիտ. ինստիտուտ, 1997:
- Ռիֆաթ Մեվլան Զադե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, «ԿՓՀ» ֆաքսիմիլային հրտ., 1990:
- Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, Հայաստան, 1990:
- Սիմոնյան Հր.Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, Հայաստան, 1986:
- Տաշեան Յա.Վ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, Մխիթար. տպ., 1921:
- Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը Մերձավոր Արևելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Ա. հատոր, թարգմանեց ի ֆրանսերենէ դոկտ. Հ.Ստեփանեան, Պեյրութ, տպ. Հայ Կաթողիկի, 1960:
- Փիրանեան Ն., Խարբերդի եղեռնը, Պոսթըն, տպ. Պայքար, 1937:

- Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, ՀՀԳԱԱ ՀՅԹԻ, 1997:
- Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений. Ереван, Гитутюн, 1999.
- Акчам Т., Турецкое национальное "я" и армянский вопрос. Москва, Арио-Никс, 1995.
- Барсегов Ю.Г., Геноцид армян-преступление против человечества. О правомерности термина и юридической квалификации. Ереван, Айастан, 1990.
- Барсегов Ю.Г., Геноцид армян - преступление по международному праву. Москва, Издательск. дом XXI век- Soglasie, 2000.
- Безыменски Л., Особая папка "Барбароса". Москва, Новости, 1972.
- Брухфельд Ст., Левин П., Передайте об этом детям вашим... История Холокоста в Европе 1933-1945. Москва, Текст, 2000.
- Бурдерон Р., Фашизм: идеология и практика. Москва, Прогресс, 1983.
- Вольтман Л., Политическая антропология. Исследование о влиянии эволюционной теории на учение о политическом развитии народов. С.-Петербург, Попова, 1905.
- Галкин А.А., Германский фашизм. Москва, Наука, 1989.
- Гасанова Э.Ю., Идеология буржуазного национализма в Турции. Баку, Изд. АН АзССР, 1966.
- Гиббонс Г.А., Последние избиения в Армении. Факты и ответственности. Петроград, Воен. тип. Импер. Екатерины Велик., 1916.
- Голлендорский Л., Восемнадцативековые предрассудки. Санкт-петербург, Тип. т-ва обществ. пользы, 1870.
- Джонсон П., Популярная история евреев. Москва, Вече, 2001.
- Дубнов С.М., Краткая история евреев. Ростов-на-Дону, Феникс, 2000.
- Еремеев Д.Е., Ислам. Образ жизни и стиль мышления. Москва, Политиздат, 1990.
- Зэн Я., Концетрационный лагерь Освенцим-Бжезинка. Варшава, Выдавництво Правниче, 1961.

- Киракосян Дж.С., Младотурки перед судом истории. Ереван, Айастан, 1986.
- Кон Н., Благославление на геноцид: миф о всемирном заговоре евреев и "Протоколах сионских мудрецов". Москва, Прогресс, 2000.
- Мельников Д., Черная Л., Преступник номер 1. Нацистский режим и его фюрер. Москва, Новости, 1991.
- Мельников Д., Черная Л., Тайны гестапо. Империя смерти. Москва, Вече, 2000.
- Миллер А.Ф., Краткая история Турции. Москва, Госполитиздат, 1948.
- Новичев А.Д., Турция. Краткая история. Москва, Наука, 1965.
- Поляков Л., История антисемитизма. Эпоха веры. Москва-Иерусалим, Гешарим, 1997.
- Поляков Л., История антисемитизма. Эпоха знаний. Москва-Иерусалим, Гешарим, 1998.
- Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец XIX– начало XX века). Ереван, Айастан, 1975.
- Тольятти П., Лекции о фашизме. Москва, Политиздат, 1974.
- Трахтенберг Дж., Дьявол и евреи. Средневековые представления о евреях и их связь с современным антисемитизмом. Москва-Иерусалим, Гешарим, 1998.
- Фирбюхер Г., Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Ереван, Изд-во АН Армении, 1991.
- Чамберлен Г.С., Евреи, их происхождение и причины их влияния в Европе. С.-Петербург, Изд. А.С. Суворина, 1910.
- Шульмейстер Ю.А., Гитлеризм в истории евреев. Киев, Политиздат Украины, 1990.
- Ahmad F., The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914. Oxford: Oxford University Press, 1969.
- Akcam T., Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue. Cambridge, Toronto: The Zoryan Institute, 2001.

- Arendt H., Eichmann in Jerusalem. A Report on the Banality of Evil. New York: The Viking Press, 1963.
- Auron Ya., The Banality of Indifference. Zionizm and the Armenian Genocide. New Brunswick: Transaction Publishers, 2000.
- Bardakjian K.B., Hitler and the Armenian Genocide. Cambridge, Massach.: The Zoryan Institute, 1985.
- Berenbaum M., The World Must Know. The History of the Holocaust as Told in the United States Holocaust Memorial Museum. Canada, USA: Little, Brown & Co., 1993.
- Boyajian D.H., Armenia. The Case for a Forgotten Genocide. Westwood, N.J.: Educat. Book Craft., 1972.
- Brady R. A., The Spirit and Structure of German Fascism. London: Victor Gollancz Ltd, 1937.
- Bryce J., Transcaucasia and Anarat. 4-th edition, London: Macmillan & Co ltd, 1896.
- Dadrian V.N., Warrant For Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict. New Brunswick: Transaction Publish., 1993.
- Davis L., The Slaughterhouse Province. An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917. New Rochelle, New York: Aristide D.C. Publisher 1989.
- Dawidowicz L., The War Against the Jews, 1933-1945. New York: Bantam Books, 1986.
- Emin A., The Development of Modern Turkey as Measured by Its Press. New York: Columbia Univ., 1914.
- Fein H., Accounting for Genocide. National Responses and Jewish Victimization during the Holocaust. New York, London: Collier Macmillan Publish., 1979.
- Gokalp Ziya, The Principles of Turkism. Leiden: E.J. Brill, 1968.
- Grunberger R., Hitler's SS. London: Ebenezer Beyl & Son ltd, 1970.
- Heyd U., The Foundations of Turkish Nationalism. London: The Harvil Press Ltd, 1950.
- Hilberg R., The Destruction of the Europen Jews. Chicago: Quadrangle Books, 1967.

- Hitler A., Mein Kampf.
Internet: http//:www.hitler.org/writings/Mein-Kampf/.
- Kaiser H., Imperialism, Racism, and Development Theories. The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians, Ann Arbor, Mich.: Gomidas Institute, 1997.
- Krikorian M.K., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908. London: Routledge & Kegan Paul, 1977.
- Kuper L., Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London: Yale University Press, 1981.
- Melson R., Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust. Chicago: The University of Chicago, 1992.
- Melson R., On the Uniqueness and Comparability of the Holocaust: a Comparison with the Armenian Genocide. Australia, Macquarie University: Centre for Comparative Genocide Studies. 1996.
- Morgenthau H., Ambassador Morgenthau's story. New York: Doubleday, Page & Co., 1918.
- Mosse G.L., The Crisis of German Ideology. Intellectual Origins of the Third Reich. New York: Howard Fertig. Inc., 1998.
- Shirer W., The Rise and Fall of the Third Reich, New York: Crest Book, 1960.
- Staub E., The Roots of Evil. The Origins of Genocide and Other Group Violence. New York: Cambridge University Press, 1989.
- Strom M., Parsons W., Facing History and Ourselves: Holocaust and Human Behavior. Watertown: Int. Education, Inc., 1982.
- Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal. London: Liberty Press, 1917.
- Toynbee A., The Western Question in Greece and Turkey. Boston, New York: Howard Fertig, 1922.
- Toynbee A., The Murder of a Nation. With a Speech Delivered by Lord Bryce in the House of Lords. London: Hodder and Stoughton, 1915.
- Walker Ch.J., Armenia: The Survival of a Nation. London: Croom Helm, 1980.

- Zenkovsky S.A., Pan-Turkism and Islam in Russia. Cambridge, Massachusetts: Harvard Univ. Press, 1960.

3. Հոդվածներ

- Ավագյան Ա., Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», մաս 3, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1997:
- Լիթել Ֆ., Ողջակիզում և ցեղասպանություն. հիմնական զարգացումը, «Հայ ժողովրդի պատմությունից» Գիտահանրամատչելի բյուլետեն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ Հասարակ. գիտ. գիտահանրամատ. կենտրոն, 1990:
- Հնասեր (Գ. Մանուկեան), Կորսուելու ենթակայ վաւերաթուղթեր, «Բազմավէպ», Վենետի-Ս.Ղազար, 1934, հունվար, թիվ 1:
- Մելքոնյան Ա., Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները /XV դարի վերջ-1915թ./, /պատմաժողովրդագրական ակնարկ էրզրումի նահանգի օրինակով/, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», մաս 1, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1995:
- Միքայելյան Վ., Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում (համառոտ ակնարկ), «1915թ. Հայոց ցեղասպանությունը: Պատմության և պատմագրության հարցեր», Երևան, Հայոց ցեղասպանության 80 ամյակին նվիրված միջոցառ. կազմակերպ. պետ. հանձնաժողով, 1995:
- Սահակյան Ռ.Գ., Սաֆրաստյան Ռ.Ա., Միջազգային գիտաժողով նվիրված հայոց ցեղասպանության 80-ամյակին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 1999, համար 1:
- Арад И., Нацизм и уничтожение евреев в Европе в годы второй мировой войны. В кн. "Холокост-Сопротивление-Возрождение". Москва-Иерусалим, Межрегиональный фонд "Холокост" Россия, 2000.

- Бриман Ш., "Мусульмане в СС". *Холокост и соучастность.* Киев, Институт полит. и этнонациональных исслед. НАН Украины, 2002, N 4.
- Гольденберг М., "Холокост и Феодосия". *Холокост и Соучастность.* Киев, Институт полит. и этнонациональных исслед. НАН Украины, 2002, N 5.
- Дятлов В., "Диаспора: попытка определиться в понятиях". *Диаспоры.* Москва, ISPR Institute for Social and Political Research, 1999, N1.
- Елисаветский С., "Освенцим в свете некоторых современных документальных публикаций, мемуаров и зарубежных исследований". *Холокост и соучастность*, Киев, Институт полит. и этнонациональных исслед. НАН Украины, 2002, N4.
- Кохави Е., Еврейский мир в середине XX века накануне Холокоста в Европе. "Холокост - Сопротивление – Возрождение". Москва – Иерусалим, Межрегиональный фонд "Холокост" Россия, 2000.
- Круглов А., "Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.?". *Холокост и соучастность.* Киев, Институт полит. и этнонациональных исслед. НАН Украины, 2002, N 4, стр. 7, N 5.
- Лурье С., "Официальная идеология и сознание народных масс в Турции". *Метаморфозы традиционного сознания.* Санкт-Петербург, Тип. им. Котлякова, 1994, стр. 99-123.
Таланцев А.Д., "Истоки антисемитизма." *Самиздат*, Internet. http://zhurnal.lib.ru/t/talancew_d_ a/antsetxt.shtml.
- Тяглый М., "К вопросу об антисемитской пропаганде на оккупированных территориях СССР: новые источники". *Холокост и соучастность.* Киев, Институт полит. и этнонациональных исслед. НАН Украины, 2002, N 4.
- Филатов Г.С., "Типология фашистских режимов и особенности итальянского фашизма". В сб. *Фашизм и антидемократические режимы в Европе (начало 20-х годов-1945 г.)*, Москва, Наука, 1981.

- Astourian St.H., "Modern Turkish Identity and the Armenian Genocide. From Prejudice to Racist Nationalism". In *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide.* Edited by Richard G. Hovannisian, Detroit, Mich.: Wayne State University Press, 1999.
- Browning Ch.R., "Genocide and Public Health: German Doctors and Polish Jews, 1939-1941". *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1988, Volume 3, Numb. 1.
- Buchler Ye., "Kommandostab Reichsfuhrer-SS: Himmler`s Personal Murder Brigades in 1941". In *Holocaust and Genocide Studies*, Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1986, Volume 1, Numb. 1.
- Dadrian V.N., "The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice". In *The Yale Journal of International Law.* The Yale Jour. of Inter. Law, Inc. Summer 1998, Volume 23, Numb. 2.
- Dadrian V.N., "The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective." Reprinted from *Is the Holocaust Unique? Perspectives on Comparative Genocide.* Edited by Alan S. Rosenbaum, Boulder, Color.: Westview Press, 1996.
- Dadrian V.N., "The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities". Reprinted from *Journal of Political and Military Sociology.* H.F. Guggenheim Foundation Research Project, 1992, Volume 20, Numb. 2.
- Dadrian V.N., "The Convergent Roles of the State and a Governmental Party in the Armenian Genocide". From *Studies in Comparative Genocide*, Macmillan/St.Martin`s Press, 1999.
- Dadrian V.N., "The Determinants of the Armenian Genoide". *Working Paper GS 02.* Yale Center for International and Area Studies. H.F. Guggenheim Foundation, 1998.

- Dadrian V.N., "The Role of Turkish Physicians in the World Wa I Genocide of Ottoman Armenians." In *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1986, Volume 1, Numb. 2.
- Dadrian V.N., "The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War" reprinted from *Minorities in Wartime.* P.Panayi, ed., Oxford and Providence, 1993.
- Dadrian V.N., "The Convergent Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide. A Reinterpretation of the Concept of Holocaust". *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1988, Volume 3, Numb. 2.
- Dadrian V.N., "The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians". In *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1993, Volume 7, Numb 2.
- Dadrian V.N., Children as Victims of Genocide: The Armenian Case. «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, N 7, 2003:
- Dekmejian R.H., "Determinants of Genocide: Armenians and Jews as Case Studies". In *The Armenian Genocide in Perspective.* Edited by Richard G. Hovannisian, New Brunswick: Transaction Books, 1986.
- Headland R., "The Einsatzgruppen: The Question of Their Initial Operations". In *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1989, Volume 4, Number 4.
- Hirschmann I.A., "The Degradation of Culture", in *Nazism: An Assault on Civilization,* New York: Harrison Smith and Robert Haas, 1934.
- Horowitz I.L., "Government Responsibilities to the Jews and Armenians: Nazi Holocaust and Turkish Genocide Reconsidered". In *The Armenian Genocide. Documentation.* Volume 8. Munchen: Institut fur Armenische Fragen, 1991.

- Hovannisian R.G., "The Historical Dimensions of the Armenian Question, 1878-1923". In *The Armenian Genocide in Perspective.* Edited by R. Hovannisian. New Brunswick: Transaction Books, 1986.
- Lengyel E., "The Brown International". In *Nazism: An Assault on Civilization,* New York: Harrison Smith and Robert Haas, 1934.
- Levene M., "The Experience of Genocide: Armenia 1915-16 and Romania 1941-42". In *The Amenian Genocide and the Shoah.* Edited by Hans-Lukas Kieser, Dominic J. Schaller, Zurich: Chronos Verlag, 2002.
- Melson R., "Provocation or Nationalizm: A Critical Inquiry into the Armenian Genocide of 1915". In *The Armenian Genocide in Perspective.* Edited by R. Hovannisian. New Brunswick: Transaction Books, 1986.
- Melson R., "Revolutionary Genocide: On the Causes of the Armenian Genocide of 1915 and the Holocaust". In *Holocaust and Genocide Studies.* Publish. in association with the US Holocaust Memor. Council and Yad Vashem, 1989, Volume 4, Number 2.
- Wyman D.S., "Why Auschwitz Wasn't Bombed." In *Anatomy of the Auschwitz Death Camp.* Edited by Yisrael Gutman and Michael Berenbaum. Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1994.
- Zurcher E.J., "Ottoman Labour Battalions in World War I." In *The Armenian Genocide and the Shoah.* Edited by Hans-Lukas Kieser, Dominik J. Schaller. Zurich: Chronos Verlag, 2002.

SUMMARY

It is well apparent that the Armenians and Jews were both ethnic and religious minorities respectively in the territories of Ottoman Turkey and European states. Their age-old inferior social status caused a range of negative consequences, i.e., social oppression, massacres, pogroms, etc. It is no coincidence that during the First and Second World Wars the perpetrators made use of the ominous legacy of anti-Armenian and anti-Jewish attitudes. The authors of the two genocides, the Ittihadists and Nazis, were governed by extreme ideologies. Pan-Turkism and National-Socialism contained a number of pivotal ideas which were to "justify" the genocidal policy against the "alien elements". Particularly, these worldviews were close by virtue of their sympathetic attitude toward the ideas of "Social Darwinism". Central to the understanding of the main factors of the Armenian Genocide and Holocaust is the realization that these two crimes were committed under the cover of world wars. The perpetrators' calculations proved to be real. In each case the new international situation caused by total war was to rule out the real possibilities for foreign intervention on behalf of the victims.

To commit a total extermination, both the Ittihadists and Nazis used special killing units (Teskilati Mahsusa and SS). Besides, the civic population around the victims was actively involved in the destruction process. A close examination shows that it was done with an aim to support the killing units and to prepare the ground for shifting the blame under the pretext of civic clashes. Although there were considerable differences in the killing methods, the authors of the Armenian Genocide and Holocaust were driven by the same principle of "effectiveness". From the spring of 1942 the Nazis introduced gas chambers as a much more effective murder means compared with the mass shootings. The fact that the use of bullets in the coarse of the Armenian genocide was thrifty and occasional, and that the perpetrators had to resort to killing methods other than shooting - application of cutting, pricking tools, exposing to starvation, diseases, emaciating treks, drowning, etc. – attests to the Ittihadist effectiveness.

Next to others are the striking similarities in the ways of employment of anti-Armenian and anti-Jewish propagandas; in both cases the Armenians and Jews were artificially equaled to the main war enemies, thus being presented as "internal foes" and defined for destruction.